ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Դ

Ուսումնասիրությունն իրականացվել է
Սպահանի հայոց թեմի և թեմական խորհրդի
աջակցությամբ

Գիրքը հրատարակվել է
Մաքքի Մոհամադ Մոհամուդ Շահրազադի (Սիրիա)
հովանավորությամբ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

CONSTANT OF JULFA

THE COMPENDIUM

Critical Text, Study and Commentary by

SARGIS BALDARYAN

Yerevan - 2021

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

КОНСТАНТ ДЖУГАЕЦИ

КОМПЕНДИУМ

Подготовка текста, исследование и комментарии

САРКИСА БАЛДАРЯНА

Ереван - 2021

2(47.925)
Կ-75
Կշ
6382

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ

Աշխատասիրությամբ

ՍԱՐԳԻՍ ԲԱԼԴԱՐՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀՏԴ 339:09
ԳՄԴ 65.42
Կ 755

Տպագրվում է
Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր
Վահան Տեր-Ղևոնդյան

Կոստանդ Ջուղայեցի
Կ 755 *Աշխարհաժողով / Կոստանդ Ջուղայեցի; Աշխատասիրությամբ Ս. Բաղդարյանի.– Եր.: Մաշտոցի անվ. Մատենադարան, 2021.– 216 էջ:*

Գիրքը ներկայացնում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի ուսուցիչ, վաճառական Կոստանդ Ջուղայեցու (1630-ական թթ. – 1702 թ.) «Աշխարհաժողով» խորագիրը կրող վաճառականական ձեռնարկ-դասագրքի գիտաքննական բնագիրը՝ առաջաբան-ուսումնասիրությամբ և դժվարամատչելի բառերի ու եզրույթների բառարանով հանդերձ: «Աշխարհաժողով» երկը, հասցեագրված լինելով հայ վաճառականներին, շարադրվել է որպես տնտեսական համաշխարհային աշխարհագրություն, վաղ արդի դարաշրջանի հայկական յուրօրինակ հանրագիտարան, որում ամփոփված են առևտրական բացառիկ տեղեկություններ Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի բոլոր այն երկրների ու քաղաքների մասին, որոնք ընկած էին Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի շուրջ միավորված հայ վաճառականների հետաքրքրությունների ոլորտում:

Գիրքը կարող է օգտակար լինել պատմաբանների, տնտեսագետների, ինչպես նաև՝ ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 339:09
ԳՄԴ 65.42

ISBN 978-9939-9237-9-6
© Մաշտոցի անվ. Մատենադարան, 2021
© Բաղդարյան Սարգիս, 2021

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դեռևս 1984 թ. լույս տեսած «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի առաջին հատորի իրենց «Երկու խոսք»-ում Լևոն Խաչիկյանն ու Հակոբ Փափազյանը, ուրվագծելով մատենաշարի շրջանակներում կատարվելիք հետագա աշխատանքների ծավալը, նշել են. «Առանձին մի հատորի նյութ է Նոր-Ջուղայի առևտրական դպրոցի նշանավոր վարժապետ Կոստանդ Ջուղայեցու 1685 թ. շարադրած «Աշխարհաժողով» ձեռնարկը, ուր ստույգ տեղեկություններ են գրանցված ջուղահայ վաճառականների գործունեության ոլորտի մեջ մտնող երկրներում կիրառվող չափ ու կշռի սիստեմների, դրամական միավորների, ներմուծվող ու արտածվող ապրանքների, նրանց տեսակների և գների մասին»[1]: Սույն հրատարակությամբ իրականություն է դառնում մեծանուն հետազոտողների ծրագրային պատգամը, և ընթերցողի սեղանին է դրվում Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» առևտրական ձեռնարկ-դասագրքի գիտաքննական բնագիրը՝ մանրամասն ուսումնասիրությամբ ու օտար բառերի ու տերմինների բառարանով հանդերձ:

Պետք է խոստովանել, որ «Աշխարհաժողով»-ի բնագրի հրատարակության գործը վաղուց է հայտնվել հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն այդպես էլ ավարտին չի հասցվել տարբեր հանգամանքների բերումով: Դեռևս 1958 թ. Մատենադարանի ապագա անելիքների ու պատրաստվող բնագրերի հրատարակությունների շարքում Լևոն Խաչիկյանը ներառել է «Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկը (կազմող՝ Հ. Անասյան)»[2]: Եվ իսկապես, Հակոբ Անասյանը, որին, փաստորեն, Մատենադարանի որոշմամբ հանձնարարված է եղել խնդրո առարկա բնագրերի պատրաստությունը, իր ուշադրության կենտրոնում է պահել Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունը: 1979 թ. մայիսին Լևոն Խաչիկյանին ԱՄՆ-ից հղած իր նամակում նա հավաստիացնում էր. «Ես ծրագրել եմ ամբողջացնել Կոստանդ Ջուղայեցու բնագրերի պատրաստութիւնը՝ վերջացնելով N 10704 ձեռագրերի համեմատութիւնները և վերակազմելով միւս ձեռագրերի հիման վրայ նախկինում ստացուած բնագրերը»[3]:

---

[1] *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 6:

[2] **Խաչիկյան Լ.**, «Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին», *Բանբեր Մատենադարանի*, հ. 4, Երևան, 1958, էջ 22:

[3] *Յակոբ Անասեանի նամականի (ընտրանի)*, կազմ.՝ Հենրիկ Անասեան, Երևան, 2004, էջ 344:

5 տարի անց՝ 1984 թ., Մաշտոցի անվան Մատենադարանի հաջորդ տնօրեն Սեն Արևշատյանին ուղղված նամակում ներկայացնելով ապագա ծրագրերը՝ Հակոբ Անասյանն արձանագրում էր. «Հերթը «Կոստանդ Ջուղայեցի» հատորինն է»[1]: Այդուհանդերձ, մեծանուն գիտնականը չի հասցրել ամբողջացնել այս ասպարեզում կատարած իր ուսումնասիրությունները, և Կոստանդ Ջուղայեցու երկերի ուղղությամբ նրա կատարած աշխատանքները այդպես էլ մնացել են բացառապես ձեռագրային վիճակում՝ բացառությամբ երկու փոքրիկ անդրադարձների: «Մանր երկեր» ժողովածուի գրախոսության մեջ անդրադառնալով Հակոբ Անասյանի անավարտ աշխատություններին՝ այդ շարքում Գևորգ Տեր-Վարդանյանը հիշատակել է նաև Կոստանդ Ջուղայեցու բնագրերի մասին նրա անավարտ ուսումնասիրությունները. «Մատենադարանի Դիվանական բաժնում գտնվող՝ Անասյանի թողոնի ծավալուն 7 թղթապանակներից 2-ում այս կիսատ գործի նյութերն են»[2]: Այսպես՝ ավելի քան կես դար առաջ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ը գրավել է հայագիտության երախտավորների ուշադրությունն ու ներառվել ապագա կարևոր անելիքների շարքում:

«Աշխարհաժողով»-ի բնագրի վրա աշխատելու և այն հրատարակելու պատրաստակամություն հայտնել է ևս մեկ հետազոտող՝ Ռաֆիկ Աբրահամյանը: Հնդկաստանի հայկական աղբյուրներին նվիրված իր մենագրության մեջ նա հավաստիացնում է, որ դեռևս 1959 թ. 2 ձեռագրերի հիման վրա պատրաստել է երկի բնագիրը, ծանոթագրություններն ու դրանց ռուսերեն թարգմանությունը[3]: Ըստ էության, ուսումնասիրողին մատչելի են եղել միայն Մաշտոցի անվան Մատենադարանի նյութերը[4], այլապես

---

[1] Նույն տեղում, էջ 323:

[2] **Տեր-Վարդանյան Գ.**, «Գրախոսություն՝ Հ. Ս. Անասյան, Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, ԺԳ, 972 էջ», *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, թ. 4, էջ 241: Հավելեմ, որ Մատենադարանում պահվող Հ. Անասյանի ֆոնդը դեռևս անմշակ է և չի սպասարկվում, ուստի նրա կատարած աշխատանքի բնույթի ու ծավալի մասին որևէ պատկերացում չեմ ունեցել, և Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի ուսումնասիրությունը սկսել եմ զրոյից: Միայն այն ժամանակ, երբ ուսումնասիրությունն ավարտվել էր, իսկ գիրքը լիովին պատրաստ էր հրատարակության, Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանի առաջարկով ու Մատենադարանի տնօրենության սիրալիր օժանդակությամբ ինձ հնարավորություն տրվեց շատ կարճ ժամանակով ծանոթանալու Հ. Անասյանի անմշակ ֆոնդում պահվող քարտարանին: Քարտարանում բազմահմուտ ու մեծանուն հետազոտողն ի մի էր բերել Կոստանդ Ջուղայեցու գործածած բոլոր եզրույթներն ու դժվարամատչելի բառերը՝ կից բնագրային մեջբերումների հղումներով և համառոտ բացատրություններով՝ այն չափով, որչափ հնարավոր էր կատարել արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների բացակայության պայմաններում:

[3] **Տե՛ս Абрамян Р.**, *Армянские источники XVIII в. об Индии*, Ереван, 1968, с. 21:

[4] Կարելի է ենթադրել, որ Ռ. Աբրահամյանը նկատի է ունեցել Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 5994 և 8443 ձեռագրերը, քանի որ Մատենադարանում պահվող ու Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներն ամփոփող երրորդ՝ թիվ 10704 ձեռագիրը միայն 1976 թվականին է ընծայվել ու մուտք գործել ձեռագրական հավաքածու (տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, կազմեց՝ Ա. Մալխասեան, Երեւան, 2007, էջ 10):

նրա պատրաստած բնագիրը հիմնված կլիներ այսօր հայտնի 6 ձեռագրերի վրա: Թե հետագայում ինչն է խոչընդոտել Ռաֆիկ Աբրահամյանի աշխատանքի հրատարակությանը, դժվար է ասել:

2016 թ. ձեռնամուխ լինելով Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրությանն ու «Աշխարհաժողով»-ի բնագրի կազմությանը՝ զգացել եմ բազմաթիվ հետազոտողների խորհրդատվության կարիքը և նրանցից ստացել բազմաբնույթ աջակցություն: Առանց այդ աջակցության այս գրքի շարադրանքը կլիներ անհնարին: Նախևառաջ, ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանին, որը մեծ սիրահոժարությամբ ինձ տրամադրել է «Աշխարհաժողով»-ի բնագրի՝ Նոր Ջուղայում պահվող ընդօրինակության լուսանկարները, Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի գրչագիր օրինակներից մեկի, ինչպես և՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիվի թղթապանակներից մեկի թվային պատկերները: Հետազոտական աշխատանքի տարբեր փուլերում մեծ բարեբախտություն է եղել ստանալու համաշխարհային պատմագիտական մտքին քաջատեղյակ այնպիսի գիտնականի խորհրդատվությունը, ինչպիսին Ս. Ասլանյանն է: Այս գրքի ստեղծումը մեծապես պայմանավորված է նաև պ.գ.դ., պրոֆ. Հայրապետ Մարգարյանի ցուցաբերած աջակցությամբ: Նա ինձ ոչ միայն ծանոթացրել է դասական հայագիտության ավանդույթներին, այլև ազդել պատմության ու պատմագիտության իմ ընկալումների վրա: Իմ շնորհակալական խոսքերն ուղղված են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին, որն ամենայն ուշադրությամբ կարդացել է սույն հրատարակության առաջաբան-ուսումնասիրությունը և տվել խիստ օգտակար խորհուրդներ, ինչպես նաև՝ պ.գ.դ. Քրիստինե Կոստիկյանին, որի անմիջական օգնությամբ ձեռք եմ բերել պարսկերենի որոշ հմտություններ, առանց որոնց՝ այս գրքի ստեղծման հեռանկարը կլիներ կասկածի տակ: Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի դոկտորանտուրայի ուսանող Սոնա Թաջիրյանին, որը սիրահոժար աջակցություն է ցուցաբերել աշխատանքի տարբեր փուլերի ընթացքում՝ սկսած անհրաժեշտ նյութերի թվային օրինակների տրամադրումից մինչև բնագրում հանդիպող օտար բառերի վերծանությունը:

17-18-րդ դդ. հայոց պատմության ցանկացած հարցի ուսումնասիրություն անհնար է պատկերացնել առանց այն հսկայական արխիվային ժառանգության, որը մեր օրերն է հասել և պահվում է աշխարհի տարբեր հաստատություններում: Այս կապակցությամբ ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել բոլոր այն կազմակերպություններին ու անհատներին, որոնք հնարավոր են դարձրել իմ հետազոտական աշխատանքը եվրոպական տարբեր քաղաքների դիվաններում ու գրադարաններում (Վենե-

տիկ, Ֆլորենցիա, Վիեննա, Լոնդոն, Օքսֆորդ և այլն): Մասնավորապես՝ հատուկ ընդգծման կարիք ունեն Եվրամիության Erasmus+ ծրագրից և Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերակցությունից (NAASR) ստացված գիտական դրամաշնորհները, ինչպես և՝ Վենետիկի ու Վիեննայի ձեռագրական հավաքածուներում աշխատելու հնարավորության ընձեռումը Մխիթարյան միաբանության հայրերի կողմից: Հիշատակման արժանի է նաև Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանատան պատասխանատու Թովմա Գալստանյանի օժանդակությունը դիվանի մի շարք կարևոր նյութերի խիստ բարձրորակ լուսանկարները տրամադրելու հարցում:

Այս գրքի շարադրանքի ու ամբողջացման համար առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդին, որը ոչ միայն հղացել է այս ծրագիրը, այլև նյութական աջակցություն ցուցաբերել դրա իրականացման համար: Այս հարցում հատկապես ընդգծման կարիք ունի Սպահանի հայոց թեմի պատգամավորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանյանի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հայ մատենագրության թվանշային գրադարանի գիտական ղեկավար Մերուժան Կարապետյանի դերակատարությունը:

Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենությանն իմ գիտական հետազոտություններին աջակցելու, ինչպես նաև՝ այս հատորը «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի շարքում ներառելու իմ առաջարկն ընդունելու համար: Խորին շնորհակալություն եմ հայտնում նաև Մատենադարանի տնօրեն, սույն գրքի խմբագիր պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյանին խմբագրական մանրակրկիտ աշխատանքի ու բազմաթիվ արժեքավոր դիտարկումների համար, ինչպես նաև՝ Մատենադարանի հրատարակչական բաժնի աշխատակից Հասմիկ Մխիթարյանին գիրքն ամենայն բծախնդրությամբ և ուշադրությամբ էջադրելու և ձևավորելու համար:

Եվ վերջապես, ցանկանում եմ ընդգծել իմ սիրելի ընտանիքի և հատկապես կնոջս՝ Նարինեի դերը ինձ շարունակ ոգեշնչելու, տարատեսակ հոգսերից ազատելու ու այս աշխատանքի վրա կենտրոնանալու հնարավորություն տալու համար:

Սարգիս Բաղդարյան
14 սեպտեմբերի, 2020 թ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մ ՈՒ Տ Ք

1662 թ. հուլիսի 14-ին Նոր Ջուղայից սերող երկու հայ վաճառականներ՝ Ռամազի որդի Կոստանդն ու Պտումի որդի Սիմեոնը, կնքում են կոմենդա *պայմանագիր*[1] *և իրենց կապիտալը դնում համատեղ շրջանառության մեջ*[2]*: Ըստ այդ առևտրական համաձայնագրի՝ Սիմեոնը Կոստանդի տրամադրության տակ էր դնում 1400 մառչիլ՝ ակնկալելով ստանալ այդ գումարի կեսից ստացվելիք շահույթը: Ընդհանուր դրամագլխում Կոստանդի ներդրած մասնաբաժինն անհամեմատ փոքր էր՝ ընդամենը 160 մառչիլ: Առևտրական տերմինաբանությամբ «ընկեր» համարվող ու* կոմենդա *գործակատարի պարտավորություն ստանձնող Կոստանդն այդուհետ անցնելու էր երկար տարածություններ ու շրջագայելու էր առևտրական զանազան շուկաներում՝ պայմանագրով նախատեսված կապիտալը մեծացնելու և այդպիսով հարստանալու հույսով: Վաղ արդի*[3] *դարաշրջանում աշխարհի ցամաքային և ծովային ուղիները հատած ու վաճառաշահ կենտրոնները ներթափանցած հազարավոր հայ վաճառականներից վերոհիշյալ Կոստանդը չէր առանձնանա ոչնչով, եթե այդ պայմանագրի կնքումից տարիներ անց հայտնի չդառնար Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում դասավանդված առևտրական դաշնեթացներով և չշարադրեր մեր օրերը հասած վաճառականական ձեռնարկ-դասագրքեր:*

---

[1] Կոմենդան առևտրական պայմանագիր էր, որը ներառում էր առնվազն 2 կողմ՝ վաճառական, որն ուներ որոշակի կապիտալ կամ ապրանք, և գործակատար, որն իր ներքին ուներ առևտրական անհրաժեշտ հմտությունները երկար տարածություններ հաղթահարելու ու իրեն վստահված կապիտալը կամ ապրանքը շրջանառության մեջ դնելու համար (տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, Berkeley, 2011, p. 122):

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալուածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

[3] Արևմտյան պատմագիտական հետազոտություններում վաղ արդի դարաշրջան եզրույթի ներքո միավորվում է մոտավորապես 1500-1800 թվականները ընդգրկող ժամանակաշրջանը: Վաղ արդի հայոց պատմության՝ որպես առանձին պատմափուլի յուրահատկությունների դիպուկ վերհանման համար տե՛ս **Aslanian S.**, "Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture", *Book History*, 2014, vol. 17, pp. 53-58: Վաղ արդի դարաշրջան եզրույթը հայագիտական հետազոտություններում շրջանառելու, ինչպես և՝ հարցի շուրջ առկա տեսակետների ամփոփ ներկայացման համար տե՛ս նաև մեր աշխատության «Վաղ արդի դարաշրջանն ու հայոց պատմությունը» ներածական մասը՝ **Բաղդասարյան Ս.**, *Նոր Ջուղայից Երևան ու Էրզրում. ճիզվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դարերում*, Երևան, 2018, էջ 9-23:

ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Կոստանդ Ջուղայեցին՝ վաճառական ու վաճառականական ձեռնարկների հեղինակ

Կոստանդ Ջուղայեցին ծնվել է մոտավորապես 1630-ական թթ. Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Ջուղայում: Նա մեկն էր այն ջուղայեցիների ժառանգներից, որոնք Շահ Աբբաս I-ի որդեգրած «այրված հողի» քաղաքականության հետևանքով 1604-1605 թթ. ընթացքում տեղահանվել էին Արաքսի ափին ընկած իրենց հայրենի գյուղաքաղաք Հին Ջուղայից ու վերաբնակեցվել Սպահանի ծայրամասերից մեկում՝ Զայանդեռուդ գետի հարավային կողմում դնելով իրենց նոր բնակավայրի՝ Նոր Ջուղայի հիմքերը:

Սկզբնաղբյուրները պահպանել են նրա ընտանիքի մասին ամբողջական տեղեկատվություն: Այս տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում 2973 թվահամարի ներքո պահվող Հայր Մաշտոց ծիսական ժողովածուն, որը ընդօրինակություն է ավելի վաղ գրված ձեռագրից, ինչպես թույլ է տալիս ենթադրել ընդօրինակող գրիչ Սարգիս Գևորգյանի վկայությունը. «Եւ 1868 թուականի, ի բնագրէն օրինակեցի Պրուսացի աւագ սարկաւագ Սարգիս Գէորգեան»[1]: Վերջինս արտագրել է նաև նախահիմք հանդիսացած ձեռագրի գրիչ Հովհաննես քահանայի հիշատակարանը. «Զստացող սուրբ գրոցս զմահտեսի վարպետ Կոստանդն յիշեցէք ի Քրիստոս, եւ ծնողսն իւր զԹամազն եւ զՋիթանն, եւ զորդին իւր զԱղեքսանդր աստուածաբան վարդապետն, եւ զհանգուցեալ զդուստրն իւր զՄարմարն, եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն. եւ որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ: Նաեւ զմեղապարտ Յովհաննէս քահանայի գրիչս»[2]: Փաստորեն, Կոստանդ Ջուղայեցին ծնվել է Թամազի ու Ջիթանի ընտանիքում և ունեցել 1 որդի ու 1 դուստր՝ Ալեքսանդր ու Մարմար անուններով, ընդ որում՝ խոսքը վերաբերում է հետագայում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդի ու Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռներն զբաղեցրած Ալեքսանդր Ջուղայեցուն: Այլ աղբյուրներից հայտնի է նաև նրա կնոջ անունը՝ Ջեբեղիա, որը մահացել է 1654 թ.՝

[1] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. 9, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղէմ, 1979, էջ 163:

[2] Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք, ձեռ. թիվ 2973, թ. 239: Կարելի է ենթադրել, որ Կոստանդ Ջուղայեցու պատվիրած ձեռագրի այս հիշատակարանը գրվել է 1698 թվականից առաջ, քանի որ նրա որդին՝ նույն այդ տարում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ դարձած Ալեքսանդրը, չէր հիշատակվի որպես սոսկ «աստուածաբան վարդապետ»:

«մանկական տիօք»[1], այն է՝ երիտասարդ տարիքում: Նոր Ջուղայի հայկական գերեզմանատանը պահպանվել է Կոստանդի կնոջ տապանաքարը, որի վրա կարելի է կարդալ. «Այս է տապան աստուածապաշտ հեզ եւ խոնարհ Ջեբեթային, մայր Տէր Աղեքսանդր կաթողիկոսին, ՌՃԳ (1654)»[2]:

Կոստանդ Ջուղայեցու գործունեության առաջին շրջանը մինչ օրս պատված է եղել անորոշության շղարշով. բացարձակապես ոչինչ հայտնի չի եղել մինչ 1680-ական թթ. ընկած ժամանակաշրջանը նրա ծավալած գործունեության մասին: Այս անորոշությունը որոշ ուսումնասիրողների մղել է անհարկի ենթադրությունների: Նոր Ջուղայի հայոց թեմի պատմությանն առնչվող իր արժեքավոր աշխատության մեջ Վազգեն Ղուկասյանը, օրինակ, Կոստանդ Ջուղայեցու համար պատկերել է բացառապես վանականի անցյալ՝ կարծիք հայտնելով, որ կնոջ մահվանից ի վեր նա ընտրել է հոգևորականի ուղին[3]: Այնուամենայնիվ, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում ու Վենետիկի պետական արխիվում պահվող հայկական առևտրական փաստաթղթերը պահպանել են Թամազի որդի Կոստանդի անունը՝ հնարավորություն տալով բացահայտելու նրա վաճառականական անցյալը և հյուսելու նրա առևտրական գործունեության թեկուզև աղոտ պատկերը:

Կոստանդ Ջուղայեցուն հիշատակող առևտրական փաստաթղթերից առաջինը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող և արդեն իսկ քննարկված կոմենդա պայմանագիրն է, որը ստորագրվել է նրա և Պռումի որդի Սիմեոնի միջև 1662 թ. հուլիսի 14-ին.

> «Աստուած խէրն բարին առաջնորդի: Թիվն ռճժա (1662) նախայ ամսին իզ (26) օրն բ (2) շաբաթ ես՝ Կոստանդիլս՝ Թամազի որդի, ենկերացայ, Պռումի որդի պարոն Սիմոնէն մայեայ վեռի մին ռ չոր ճ (1400) մառչիլ, որն կեսն կառի էճ (700) մառչիլ: Իմ կայ Կոստանդիլիս մայեայ մին ճ վացուն (160) մառչիլ, որ կէսն կառի ձ (80) մառչիլ: Ինչ Աստուած շախ տայ, էճ (700) մառչիլի շախն պարոն Սիմոնին, ըճկ (860) մառչիլի շախն ինձ՝ Կոստանդիլիս: Խէրն շառն աստուծոյ:
> Ես պարոն Մուրատն Ոսկանի որդի վկայ,
> Ես պարոն Ալամս վկայ,
> Ես էրվանըցի պարոն Մարգարէս վկայ,
> Ես Յովանես վկայ,
> էս իմ ձեռացայգիրն այ, վեռոյգրեալն ինձ՝ Կոստանդիլս, դարով այ»[4]:

[1] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 12, թ. 221բ: Ձեռագրի մասին տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա., կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 750-752:

[2] **Մինասեան Լ.**, *Նոր Ջուղայի գերեզմանատունը*, Նոր Ջուղա, 1985, էջ 29:

[3] **Ghougassian V.**, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*, Atlanta, 1998, p. 171.

[4] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Զանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

Փաստորեն իր աղայի 1400 մառչիլի կողքին ներդնելով 160 մառչիլ՝ Կոստանդ Ջուղայեցին հավակնում էր ստացվելիք շահույթի մեծ մասին. նա ստանալու էր 860, իսկ Սիմեոնը 700 մառչիլին համարժեք շահույթը: Ըստ հայ վաճառականական միջավայրում գործող իրավանորմերի՝ կոմենդա *գործակատարները ստանում էին շահույթի մեկ չորրորդ, որոշ դեպքերում նաև՝ մեկ երրորդ մասը: Հակառակ միակողմանի* կոմենդայի *այդ տարատեսակին՝ այն գործակալը, որն ընդհանուր դրամագլխում որոշակի*



Նկար 1. Կոմենդա պայմանագիր Կոստանդ Ջուղայեցու
և Պտումի որդի Սիմեոնի միջև, 1662 թ.
(լուսանկարը՝ Սեպուհ Ասլանյանի)
Աղբյուրը՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան

գումար՝ «էնալմալ» էր ներդնում, ստանում էր իրավական ավելի բարձր կարգավիճակ և հավակնում ընդհուպ շահույթի կեսին[1]: Երկկողմանի կոմենդա *անունով հայտնի պայմանագրի հենց այս տեսակն էր ուժի մեջ մտել Կոստանդ Ջուղայեցու ու Պտումի որդի Սիմեոնի միջև: Ապագա Ջուղայեցի դպրապետի ներդրած գումարի չափը՝ 160 մառչիլ, հիշեցնում է իր օրագրական երկով հայտնի Զաքարիա Ագուլեցու՝ 150 մառչիլ եկամուտը, որը նա ստացել էր 1647 թ. իր առաջին առևտրական ճանապարհորդությունից որպես հայրական դրամագլխի մասնաբաժին[2]: Զաքարիա Ագուլեցու համաժամանակյա օրինակը թույլ է տալիս ենթադրել, որ Կոստանդ Ջուղայեցին ևս իր առաջին քայլերն էր անում առևտրական գործունեության ասպարեզում:*

Այս կոմենդա *պայմանագրից շուրջ չորս տարի անց՝ 1666 թ. ապրիլի 25-ին, Վենետիկում գտնվող նույն Սիմեոնը գրում է կտակ, որի հայերեն բնօրինակը պահպանվել է այդ քաղաքի դիվանում՝ նրա գործունեության առնչվող գերազանցապես իտալերեն փաստաթղթերի մի հավաքածուում[3]: Ընդ որում, այդ վավերագրերի՝* Avogaria di Comun *ֆոնդում գետեղված լինելը հուշում է, որ ժամանակին դրանք մաս են կազմել ինչ-ինչ դատավարական նյութերի, ինչը, փաստորեն, ապահովել է դրանց պահպանությունը ցայսօր: Իր կտակում առևտրական գործընկերներից մեկին՝ Դանիելի որդի Իսրայելին[4], Սիմեոնը ճանաչում էր որպես իր* վաքիլ[5], *այն է՝ իրավահաջորդ և ներկայացուցիչ. «Դանիէլի որդի Իսրայէլն ինձ վաքիլ լինի յետ մահուան իմոյ»: Կտակարարն Իսրայելին հանձնարարում էր մեկտեղել իր ամբողջ ունեցվածքը՝ դրամական միջոցներն ու զանազան վայրերից ստացվելիք ապրանքները, այդ թվում «ապրանք, որ Իզմիրոյ գոյ, որ Կոս-*

[1] Այս հարցի, ինչպես և՝ հայ վաճառականների շրջանում կոմենդայի գործածության մասին առհասարակ տե՛ս **Herzig E.**, *The Armenian Merchants from New Julfa: A Study in Premodern Trade*, Ph.D. Dissertation, St. Antony's College, Oxford University, 1991, pp. 213-226, **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 122-136, **Խաչիկյան Շ.**, *Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում*, Երևան, 1988, էջ 121-139:

[2] **Զաքարիա Ագուլեցի**, *Օրագրութիւն*, Երևան, 1938, էջ 159: Հմմտ. տե՛ս նաև **Հովհաննիսյան Ա.**, *Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը*, հրատարակության պատրաստեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2017, էջ 20-21:

[3] Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 3949.

[4] Դանիելի որդի Իսրայելին, որը հայտնի է Վենետիկում ծավալած առևտրական գործունեությամբ, կարելի է հանդիպել Վենետիկի պետական արխիվում պահպանված մի շարք փաստաթղթերում: Հետաքրքիր է, որ նա հանդես է գալիս նաև Վենետիկի Սուրբ Խաչ հայկական եկեղեցու ընծայամատյանում, ընդ որում՝ 2 անգամ. նախ՝ նա գովաբանվում է վանքին «Բ. պղնձե պատկեր. մէկն Փուշպսակ, եւ միւսն Աստուածածնին» նվիրելու համար, իսկ ապա՝ նրա անունը հանդիպում է նաև 1673 թ. «մին արծաթէ բաշտ՝ իւր չամչէկովն» ընծայած 7 ջուղայեցի վաճառականների շարքում (տե՛ս **Տեր-Վարդանեան Գ.**, «Վենետիկի Հայոց Սուրբ Խաչ եկեղեցու Ընծայամատեանը», *Էջմիածին*, 2013, թ. ԺԱ (նոյեմբեր), էջ 72, 75):

[5] Վաքիլի մասին տե՛ս **Herzig E.**, նշվ. աշխ., էջ 235-237:

տանդն կողորկե»: Այն, որ Սիմեոնը նկատի ուներ հենց իր առևտրական գործակատար Կոստանդ Ջուղայեցուն, հաստատվում է կտակում նրա անվան երկրորդ հիշատակությունից. «Բթ (բարաթ՞) Ռամազի որդի Կոստանդին հետ ունիմ, որ Իզմիրէ իմ ընկեր է, բռ (2000) մառչիլ իմ է, էճ (700) մառչիլ Կոստանդին՝ իւրն է. մեր ղարարն այնպէս է՝ Տէր Աստուած ինչ շահ տայ, ռէճ (1700) մառչիլի շահն Կոստանդին լինի, ռ (1000) մառչիլի շահն ինձ՝ Սիմէօնիս»:

*Սիմեոնի կտակի մեզ համար խիստ կարևոր այս մասը թույլ է տալիս պատկերացում կազմել ներդրված կապիտալի փոփոխության մասին կո*մենդա *պայմանագրի կնքմանը հաջորդած ժամանակահատվածում. չորս տարիների ընթացքում այն աճել էր շուրջ 73 տոկոսով՝ 1560 մառչիլից հասնելով 2700-ի: Ընդհանուր դրամագլխի ավելացումից բացի՝ Կոստանդ Ջուղայեցու ներդրած մասնաբաժնի աճը ևս ակնառու է. 160 մառչիլից հասնելով 700-ի՝ այն ապահովել էր 450 տոկոսանոց աճ: Ավելորդ չէ նկատել, որ Սիմեոնը չի վարանել իր ունեցվածքից մաս հանել նաև հայոց հոգևոր հաստատություններին. «Մին իքմին տան սուրբ Երուսաղէմայ, ճ (100) մառչիլ՝ սուրբ Էջմիածնայ, ճ (100) մառչիլ ճ (100) մառչիլ մեր Վէնէտքոյ եկեղեցյն շինելոյ համար, լ (30) մառչիլ՝ մեր Ըսպահանայ Ջուղայոյ վանիցն, լ (30) մառչիլ՝ կանանց յանապատին, մեր Ըսպահանայ Ջուղայոյ եկեղեցյն՝ ի (20) մառչիլ»:*

Սիմեոնի վերջին ցանկությունն արձանագրող այս փաստաթուղթը պահպանվել է նաև իտալերեն թարգմանությամբ՝ հաստատված նոտար Անջելո Մարիա Պիչչինոյի կողմից և թվագրված 1666 թ. մայիսի 5-ով[1]:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունն արտացոլող մեկ այլ փաստաթուղթ կարելի է գտնել Վենետիկի պետական արխիվի հայերեն փաստաթղթերի ֆոնդի առաջին թղթապանակում, որտեղ ի մի են բերված ֆինանսական բովանդակությամբ վավերագրեր՝ ի տարբերություն նույն ֆոնդի՝ նամակագրական հավաքածուներ բովանդակող երկրորդ ու երրորդ թղթապանակների: Խնդրո առարկա փաստաթուղթը, որը բաղկացած է չորս մեծադիր թերթերից, կազմել է Իսրայելը Սիմեոնի մահից հետո[2]*: Ընդ որում, գրառումներից մեկը՝ «6 ջունիոյ 1666 այ Վէնէցի … յետ մահուան ողորմած հոգի Սիմոնին», ցույց է տալիս, որ նա մահացել էր նախքան 1666 թ. հունիսի 6-ը: Փաստաթղթի թվակիր նշումները վերաբերում են միայն 1666 թվականին: Բացառություն է նախավերջին թերթի վրա արված իտալերեն մի կարճ գրառում, որը վկայում է 1671 թ. հուլիսի 29-ին փաստաթուղթը վենետիկյան իշխանություններին հանձնելու մա-*

[1] Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 3949.

[2] Archivio di Stato di Venezia, Documenti Armeni, busta 1.

սին[1]*: Առևտրական այս հաշվեթղթում արձանագրված են Իսրայելի՝ որպես Սիմեոնի վաքիլի գործունեությունն ու վերջինիս թողած դրամական միջոցների ու ապրանքների հետագա շրջանառությունը: Սիմեոնի ունեցվածքի մեջ հիշատակվում է Կոստանդ Ջուղայեցու հետ նրա ունեցած համատեղ կապիտալը, որից նրա մասնաբաժինը՝ «թամասկով սարմայ»-ն, 2000 մառչիլ էր: Այս հիշատակությունից բացի՝ Կոստանդ Ջուղայեցին քանիցս հանդես է գալիս առևտրական այս հաշվեթղթում: Մի դեպքում Իզմիրում նա ստանում է 1060 մառչիլ արժողությամբ «ղումզ, բանաշմ, ֆստկին, օրղնարի բանամչ» տեսակների «չուխայ», որն ուղարկվել էր Վենետիկից «Նավի Սան Ջուզէփումն», մեկ այլ դեպքում՝ հանդես է գալիս որպես Իսրայելի կնքած փոխանցային մուրհակի կողմ («կամպի ամ ղրկել Եզմիրն, որ Դէվաջին տայ պարոն Կոստանդն»): Հատկանշական է, որ «պարոն Կոստանդի» հետ գործակցող «Դէվաջին» ջուղայեցի վաճառական Գրիգորի մականունն էր, որը, որպես առևտրական գործընկեր, հիշատակվում է նաև թե՛ Իսրայելին ուղղված Մինասի որդի Մաթոսի մի նամակում*[2] *և թե՛ Զաքարիա Ագուլեցու հայտնի երկում: Իր «Օրագրության» էջերում ագուլեցի վաճառականը գայրույթով է պատմում «Հնդստան թէ Ֆռնգստան» մեծ հարստություն կուտակած Գրիգոր Դավաջիի սնանկացման ու մահվան և պարտատեր հայ վաճառականներին ձեռնունայն թողնելու մասին. «Դարցեալ, այս տարուս (1667 թվականին – Ս.Բ.) Իզմիր բինադար ոմն ջուղեցի, անունն Գրիգոր, ավել անունն Դաւաջի, որ մեռաւ, դժոխոց բաժին էլաւ, մնաց այս սատակածիս վերայ բազրկանի ապրանք գճռ (300000) մառչիլ: Ոմն փող ին չախով տվել, ոմն ապրիշում կամ այլ ապրանք… Մեռաւ այս Գրիգորս, մնաց Քրիստոսի դաղաստանին սեւ երես»*[3]:

Մեկ տարի անց՝ 1667 թ., Կոստանդ Ջուղայեցին հիշատակվում է մի պարտամուրհակում[4]*, որում նա Հակոբի որդի Հերամպետից պարտք է վերցնում 4000* թիմի *կազմող գումար՝ ամսական 1,5 տոկոս տոկոսադրույքով, ընդ որում՝ 1500-ը՝ իր, իսկ 2500-ը՝ Մկրտչի որդի Սարգսի «կոնթէ», այսինքն՝ հաշվից.*

«Ես՝ Ռամազի որդի Կոստանդս, պարտիմ Հակոբի որդի Հէրամպետին, չոՙ հազար (4000) թիմի, որ կէսն կառի բռ (2000) թիմի, յինՙ առի, որ ամսէն ճ-ին (100) մին կէս (1,5) շախ տամ ուր հասապօվն, որ էստուր բռեճ (2500) թիմին Մկրտիճի որդի Սարգիսին կոնթէ ամ յինՙ առէլ, որ թիվն ռճժզ (1667) յունվարի ե-ումն (5) մին հազար խինկ

[1] Փաստաթղթի այդ գրառումն ունի հետևյալ տեսքը՝ Adi 29 luglio 1671, Presentato per d. [Dominus] Milchun de Egas in ossio ne [osservazione] di ordine Magto [Magistrato] ad in st. [stanza] d. Israel de Daniel:

[2] Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 4033.

[3] **Զաքարիա Ագուլեցի**, էջ 72:

[4] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Զանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

6382

հարիւր (1500) թիմին իմ Կոստանդիս կոնթէ յինէ առի, որ թիվն ռճժզ (1667) փետրվարի է-ումն (7) այ: էս իմ Կոստանդիս ձեռացայգիրս այ: Գիրըս այ ինձ դաբող:

Ես Մարտիրոսի որդի Մուրատխանս վկայ,
Ես Քալըցի Կիրակոսի որդի Թորոսս վկայ,
Ես Հէրապետի որդի Հակոբս վկայ,
Ես Եգզարի որդի Ականդարս վկայ եմ»[1]:

Այս պարտամուրհակը, որը հայ վաճառականական միջավայրում հայտնի էր սանադ կամ թամասուկ անունով[2], կնքվել է 1667 թ. հունվար-փետրվար ամիսներին: Ինչ վերաբերում է թիմիին, *ապա փաստաթղթում նշվող դրամական այս միավորի մասին շուրջ երկու տասնամյակ անց հենց ինքը՝ Կոստանդ Ջուղայեցին, իր վաճառականական դասագրքի Իզմիրին վերաբերող հատվածում պետք է գրեր. «Թէ՛ Իզմիր, թէ՛ Խոռմաց տան ամենայն տեղ, ղէրուշ ավիլայ մառչիլն, բարաթ-բարաթ փող կայ, որ ա (1) բարաթն ասլանլու մառչիլ այ, և ա (1) էլ կայ, որ զլօթայ կասեն, որ գ (3) զլօթէն բ (2) ասլանլու այ, և կայ, որ թլթ կասեն, որ գ (3) թլթն ա (1) ասլանլու այ, և կայ, որ ռուպ կասեն, որ դ (4) ռուպն ա (1) ասլանլու այ, կայ, որ թնկռ կասեն, որ զ-ըն (6) ա (1) ասլանլու այ, կայ, որ թիմի կասեն, որ ժ-ըն (10) ա (1) ասլանլու այ»[3]: Իզմիրում շրջանառվող դրամական միավորների մասին տեղեկատվությունը Ղուկաս Վանանդեցու առևտրական ձեռնարկում ունի հետևյալ պատկերը. «Ասլանլուն 110 ըստակ է, 3 թուլթ, 4 ռուբ, 6 թնկըր, 10 թիմին»[4]: Այս տվյալների համադրումը թույլ է տալիս փաստել, որ Օսմանյան կայսրության դրամական համակարգի կենտրոնական միավորը՝ արծաթե ակչեն կամ սպիտակ-ստակը, որով ներկայացվում էին հարկատեսակների չափերը նահանգային օրենսգրքերում[5], համասար էր թիմիի 1/11 մասին: Հետևաբար՝ հերամպետից Կոստանդ Ջուղայեցու վերցրած պարտքը հասնում էր 44000 ակչեի:*

Կոստանդ Ջուղայեցու ու մեզ արդեն ծանոթ Պոտումի որդի Սիմեոնի առևտրական գործակցության վրա նոր լույս է սփռում Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող մի փաստաթուղթ, որը կազմվել է «Իսպահան Ջուղայ ի թիվ ռճիա (1672) ապրիլի ամսոյ տասնևութն»[6]: Վավերագրի կազմողները՝ խոջա Հայկազի կին Սափուրը և նրա որդիներ Էլիազն ու Նազարը, հաստատում են, որ «Իսպահան Ջուղայ յինք առինք

¹ Տե՛ս նույն տեղում:

² **Herzig E.**, նշվ. աշխ., էջ 240-243:

³ Տե՛ս այս գրքում, էջ 141-142:

⁴ **Ղուկաս Վանանդեցի**, *Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի*, Ամստերդամ, 1699, էջ 26:

⁵ **Pamuk S.**, *A Monetary History of the Ottoman Empire*, Cambridge, 2000, pp. 67-68.

⁶ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

Ռամազի որդի Կոստանդիցն երկու հարիւր երեսուն վեց թուման, որ թէ՛ մեր, թէ՛ Սիմոնին, թէ Իսրէլին ջանիպնդան էլ յախ թալապ խսէպ չմնաց Կոստանդին խետ»: Փաստորեն, Սիմեոնի հետ կնքած կոմենդա *պայմանագրից ուղիղ 10 տարի անց՝ 1672 թ., Կոստանդը վերադարձել էր Նոր Ջուղա և իր առևտրական գործունեության արդյունքներն էր ամփոփում իրեն վարկավորած վաճառականների իրավահաջորդների հետ՝ տալով նրանց ներդրված դրամագլուխն ու շահաբաժինը: Խոջա Հայկազի կինն ու որդիները, որոնք, իրենց առևտրական գործակատար Կոստանդից ստանալով 236 թուման, այլևս ոչ մի պահանջ չունեին նրանից, իրենց կազմած փաստաթղթում ներկայացրել են նաև այս առևտրական գործակցության նախապատմությունը. «Պատճառ գրոյս այս է, որ թիվ ռղզ-ումն (1647) խօջայ Հայկազն Պոտումի որդի Սիմոնին սարմայեայ էր տուէլ երկու հարիւր տասն թուման, գնացէլ էր բազրկանութիւն, յետոյ էս փողէս թիվ ռճժգ-ումն (1664) Ալիկօռնայ տուէլ էր Ռամազի որդի Կոստանդին սարմայեայ երկու հազար մառչիլ, Սիմոնն իւր անմանովն ընկերագիր էր յինք տուէլ Կոստանդիցն»:*

Հատկանշական է, որ ընդամենը մի քանի ամիս առաջ Սափուրն ու նրա որդիները Կոստանդին նշանակել էին իրենց վաքիլ՝ *նրա իրավազորությանը թողնելով խոջա Հայկազի ապրանքների ու դրամական միջոցների հավաքման գործը: Փաստաթուղթը տեղ-տեղ վնասված է, դժվարընթեռնելի, ընդ որում՝ վնասված է նաև վավերագրի կազմության ժամանակն արձանագրող մասը.*

Պատճառ գրոյս այս է, որ մեք ներքոյ գրեալ ջումիաքս, վկայ եմք, որ [...] բճժ (210) թուման սարմայեայ էր տուէլ Պոտումի որդի զօռաք Սիմոնի[...] ցէլ էր Վանատկումն մեռէլ, խօջայ Հայկազն ինչ ունէր՝ թէ՛ տուն, թէ՛ ապրա[...] ընկերանիք, ողջ սօհլ էր արարէլ իւր կողակից Սափուռն: Ես՝ խօջայ Հայկազի կողակից Սափուրս, մեք խօջայ Հայկազի որդիք էլիազս և նազարս, մեզ վաքիլ արարինք Ռամազի որդի Կոստանդն, որ տեղ որ կամ ում խետ որ մեր ընկեր Պոտումի որդի Սիմոնին ապրանք նըրնի՝ թէ՛ նաղդ և թէ՛ վէճ, ողջ խասանի Ռամազի որդի Կոստանդն, որ Կոստանդին խասածն մեզ՝ վերոյ գրեալ Սափուրիս, էլիազիս և Նազարիս [է] խասէլ, մեզ դաբուլ այ, յարզայ էստի յառաջ կամ յետնէ ում որ տուած ն[...] կամ տան, մեզ դաբուլ չէ, որ մեր վաքիլն Կոստանդն այ, որ Սիմոնին ընկերա[...] տվինք Կոստանդն: Գրուեցաւ ի Սպահան Ջուղայ ի թիվն ռճիա (1672) [...][1]:

Նույն՝ 1672 թ. Հայկազի որդիներ Էլիազն ու Նազարը ևս մի փաստաթուղթ են կազմում ու հանձնում Կոստանդին՝ հավաստելով վերջինիս սեփականության նկատմամբ իրենց իրավունքների բացակայությունը[2]: Նախ՝ Էլիազն ու Նազարն արձանագրում են, որ «էն տունն, որ Թարվէզ տուէլ էր Կոստանդն, ինքն իւր անման տուն էր առէլ իւր խմար, էն տա-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

նումն մեք յախ թալապ չունենք, որ, էն տունն Կոստանդին այ, ինքն լէվ գիտէ՝ իւր տունն կուզէ ծախէ, կուզէ պախէ»: Թավրիզում տուն գնելուց բացի՝ Կոստանդը «իգո (23000) դիան» պարտքով գումար էր տվել «Սարգսէ որդի Սողոմոնին», ինչում ևս Էլիազն ու Նազարը ոչ մի մասնաբաժին չունեին, քանի որ մինչ այդ «մեր ռասամն մեք Կոստանդէն յինք առինք»: Ըստ խոջա Հայկազի որդիների հավաստման՝ իրենք իրավունքներ ունեին միայն Կոստանդի հետ համատեղ գնված գրքերի նկատմամբ. «Թ (9) թուման, որ գրքէրին վրայ փող ունինք, էս թ (9) թումանիս զ (6) թումանն ինձ՝ Էլիազիս, Նազարիս այ, գ (3) թումանն՝ Կոստանդին այ, գրքէրն մեր տան այ, որ է լ (30) Աստուածաշունչ, լ (30) Նոր կտակարան, ը (8) Բնաբան, ճ (100) Պատմագիրք, ձդ (84) Ովասափի, է (7) Աշխարհագիրք, էս գրքէրս ոխչ մեր տան այ»: Այս խիստ հետաքրքրական վկայության համաձայն՝ Կոստանդը ներգրավված է եղել հայ հնատիպ գրքի վաճառքի շուկայում և Եվրոպայից Նոր Ջուղա տեղափոխել մեծ քանակությամբ՝ 259 միավոր գրականություն: Տպավորիչ է նաև գրքերի ընդհանուր արժեքը՝ 9 թուման, որից 6 թումանը վճարել էին Էլիազն ու Նազարը, իսկ 3 թումանը՝ Կոստանդը: Ըստ այդմ էլ՝ «էստուր թէ չախ, թէ մայեայ երաց մին Կոստանդին այ», այսինքն՝ այդ գրքերի վաճառքից ստացված շահույթի մեկ երրորդ մասը պատկանում էր Կոստանդին, իսկ մնացածը՝ խոջա Հայկազի որդիներին: Իսկ Եվրոպայում տպագրված հայերեն ո՞ր գրքերն էր Նոր Ջուղա բերել Կոստանդ Ջուղայեցին վաճառքի հանելու նպատակով: Վավերագրում յուրաքանչյուր գրքի համար արված անվանական ցուցումները օգնում են ստանալ հետևյալ պատկերը՝

«Աստուածաշունչ» = Աստուածաշունչ հնոց եւ նորոց կտակարանաց ներ պարունակօղ չարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1666, 834 էջ – 30 օրինակ,

«Նոր կտակարան» - Նոր կտակարան, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668, 934 էջ (30 օրինակ),

«Պատմագիրք» - Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացւոյ, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1669, 650 էջ (100 օրինակ),

«Աշխարհագիրք» - Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668, 312 էջ (7 օրինակ),

«Ովասափի» - Տոմարաց գիրք Հայոց, Հռոմայեցւոց և Պարզատոմար ընդ որոց և Տաղ Յովասափու, Ամստերդամ, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668, 296 էջ (84 օրինակ),

«Բնաբան» - անհայտ (8 օրինակ):

Այս ցանկն ուսումնասիրելիս անմիջապես աչքի է զարնում այն հանգամանքը, որ բոլոր գրքերը լույս են տեսել Ամստերդամում գործող Ոսկանյան տպարանում 1666-1669 թթ.: Դժվարություններ է հարուցում միայն «բնաբան» անունով հիշատակվող գրքի նույնականացումը, թեև սխալ չի լինի ենթադրել, որ այս դեպքում ևս խոսքը Ամստերդամի հայկական տպարանում լույս տեսած հրատարակություններից մեկի մասին է: Փաստորեն, Կոստանդ Ջուղայեցին ներգրավված է եղել հայ հնատիպ գրքի շրջանառության գործում և 1669-1672 թթ. ընկած ժամանակամիջոցում Ամստերդամի հայկական տպարանից Նոր Ջուղա է տեղափոխել 259 օրինակ հայերեն գիրք:

1672 թվականից մեզ հասած այս փաստաթղթերով սպառվում է Կոստանդ Ջուղայեցու առևտրական գործունեության մասին պատմող մեզ հայտնի աղբյուրների շարքը: 3 տարի անց՝ 1675 թ., Մարսելում «Արհեստ համարողութեան» գրքի հրատարակությունը, որի հեղինակային պատկանելության հարցը, ինչպես կտեսնենք, լուծվում է հօգուտ Կոստանդ Ջուղայեցու, ստիպում է մտածել, որ վերջինս կա՛մ փոխել էր իր գործունեության ուղղվածությունը՝ վաճառականական գործունեությունից անցում կատարելով վաճառականական ձեռնարկ-դասագրքերի շարադրանքի, կա՛մ գոնե համատեղում էր երկուսն էլ: Անկախ դրանից՝ ակնհայտ է մի բան. վաճառականական երկի շարադրանքով Կոստանդ Ջուղայեցու գործունեության մեջ բացվում է նոր էջ:

Հայ վաճառականներին հասցեագրված գրականության ստեղծմանը շուտով ավելանում են Ջուղայեցի երիտասարդների համար նախատեսված առևտրական դասընթացները, որոնցով ամբողջանում է Կոստանդ Ջուղայեցու տպավորիչ գործունեությունը հայ վաճառականական կրթության ասպարեզում: Այդ դասընթացները, որոնք անցկացվում էին Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի դպրոցում, հնարավորություն էին տալիս յուրացնելու վաճառականին անհրաժեշտ գիտելիքի պաշարը, ուստի մեծ պահանջարկ էին վայելում առևտրական գործի մեջ մտնել պատրաստվող երիտասարդների միջավայրում: Կոստանդ Ջուղայեցու գործունեության նոր ուղղության տեսանկյունից խիստ արժեքավոր է նրա «Հարցմունք և պատասխանի» խորագրով երկի՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում պահվող 1685 թ. ընդօրինակության հիշատակարանը, որում նա բնորոշվում է որպես «դպրապետ և ուսուցիչ մանկանց երից հարիւրից արհեստից համաբողականաց, ռաղամի և տումարի նորավարժից մանկանցն ուսումնասիրաց»[1]: Այս տեղեկությունն օգնում է պատկերացում կազմել նրա դասավանդած առարկաների մասին: Այսպես՝ նա դասավանդել է համարողական արհեստ՝ թվաբանություն, ինչը նույնանում է մեզ արդեն ծանոթ գրքի վերնագրի հետ՝ «Արհեստ համարողութեան»: «Ռաղամ» անվամբ հի-

[1] Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 10ա (ընդգծումը մերն է – Ս.Բ.):

շատակվող մյուս դասընթացի նպատակը պետք է համարել առևտրական հաշվարկներ կատարելու հմտությունների զարգացումը: Այդ դասընթացը ևս հիշեցնում է Կոստանդ Ջուղայեցու երկերից մեկի խորագիրը՝ «Դռներն ռաղամին»: Եվ վերջապես, ինչպես կարելի է հասկանալ հիշատակարանից, Կոստանդի դասընթացները ներառել են նաև տոմարագիտական գիտելիքներ: Նույն այս հիշատակարանը Կոստանդ Ջուղայեցու ուսուցչական գործունեության մեջ մեծ դեր է վերապահում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցուն, քանի որ նա դարձել էր «դպրապետ և ուսուցիչ» հենց վերջինիս՝ «գերերջանիկ վարդապետին տեառն Ստեփաննոսի արհիեպիսկոպոսի հրամանաւն»[1]:

Սուրբ Ամենափրկիչ վանքում Կոստանդ Ջուղայեցու գործունեության վրա լույս է սփռում նաև Ստեփաննոս Ջուղայեցուց մեզ հասած մի փաստաթուղթ, որը նա գրել է 1696 թ.՝ հավանաբար Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռն զբաղեցնելու համար Նոր Ջուղայից հեռանալուն պես.

«Պատճառ գրոյս այս է, որ թւին ռճլբ (1683) ամին առաջնորդութեամբ իմ Ստեփաննոս վարդապետիս, Ռամազի որդի Կոստանդն եկն ի սպասաւորութիւն սուրբ Ամենափրկչի վանացս և ինքն ընդ իւրն ունէր Խառասուն և հինգ թուման փող իւր հալալ աշխատանքէն և ի զալն իւրում ի սուրբ ուխտս ես՝ Ստեփաննոս վարդապետս, տանս ամենայն եկն և ելն թէ՛ նաղտ փող, թէ՛ եղեալ վէջն և թէ՛ եկեղեցեայց խալչին ջանիպէ ինչ որ փող եկել էր Կոստանդին ձեռն, ես՝ Ստեփաննոս վարդապետս, շարաքէշարաք հաշապն կու տեսնէի, աւել պակասն կու իմանայի մինչև իմ էջմիածին գնալէ օրս ամենայնին հաշապն ողջ տեսայ՝ թէ՛ նաղտի, թէ՛ վէջի, որ կէ հասապ բաղի չմնաց Կոստանդին հետ և իւր եղեալ Խառասուն հինգ թումանին ինքն լաւ գիտէ իւր փողն, թէ իմ Ստեփաննոս վարդապետիս կողմանէ և թէ՛ վանացս Կոստանդին հետ այլ հասապ չկայ: Գրեցաւ ի թուին ռճխե (1696)[2]:

Փաստորեն, Կոստանդ Ջուղայեցին անցել է «ի սպասաւորութիւն սուրբ Ամենափրկչի վանացս» 1683 թ.՝ իր հետ բերելով 45 թումանի հասնող գումար: Փաստաթղթի կազմության նպատակը հավաստելն է, որ այդ գումարը Կոստանդի սեփականությունն է, որը նա վաստակել է «իւր հալալ աշխատանքէն»: Եթե «սպասաւորութիւն» բառի ներքո Ստեփաննոս Ջուղայեցին նկատի է ունեցել Կոստանդի ուսուցչական գործունեությունը, ապա դրա սկիզբը պետք է համարել 1683 թվականը:

Սուրբ Ամենափրկիչ վանքի դպրոցում անցկացվող դասընթացները Կոստանդ Ջուղայեցուն բերեցին մեծ ճանաչում ու համբավ, և նրա անունը սկսեց տեղ գտնել Նոր Ջուղայում ընդօրինակվող ձեռագրերի հիշատակարաններում: Ժամանակագրական առումով դրանցից առաջինը գրել է նրա որդին՝ Ալեքսանդր Ջուղայեցին: Խնդրո առարկա հիշատակարանը, որում գրիչ Հակոբ քահանան խնդրում է հիշել ձեռագիրը ստացող Ալեք-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

սանդր վարդապետին և նրա ծնողներին, պահպանվել է Սուրբ Ամենափրկիչ վանքի թիվ 12 ձեռագրում. «Զստացօղ սորա Աղէքսանդր վարդապետն յիշեցէք ի Քրիստոս եւ զհոգեւոր հայրն իւր եւ զերազմերջանիկ վարդապետն զՏէր Դաւիթ արքեպիսկոպոսն եւ զմարմնաւոր ծնողսն զԿոստանդ միայնակեացն, որ է վարդապետ եւ ուսուցիչ ԲԾ և Ծ (250) մանկանց, այսինքն դպրապետ եւ զմայրն իւր զՋեղերեայ, որ մանկական տիօք փոխեցաւ ի Քրիստոս: Ի թվին ՌՃԼԴ (1685) գրվեցաւ»[1]: «Դպրապետ» Կոստանդի անունը վկայված է նաև Արիստակես ու Աստվածատուր գրիչների՝ Նոր Ջուղայում համապատասխանաբար 1687 թ. և 1699 թ. ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում: Եթե Արիստակեսը բավարարվում է՝ խնդրելով հարգել «մահդասի Կոստանդեայ մանկավարժի եւ դպրապետի» հիշատակը[2], ապա Աստվածատուրն ամենայն բծախնդրությամբ թվարկում է Սուրբ Ամենափրկիչ վանքի շուրջը համախմբված մոտ 40 անձանց անուններ՝ միաբաններ, քահանաներ, սպասարկու անձնակազմ և այլն, որոնք բոլորը «հավաքեալ կան յայսմ համալսարանիս՝ ի վանս, որ կոչի Սուրբ Ամենափրկիչ Նորս Ջուղայու, ի Շօշ քաղաքիս»: Հոգևոր գործիչների մանրամասն թվարկումից հետո գրիչը չի մոռանում հիշատակել թե՛ տնտես Սարգսին ու «հասակաւն Բ (2) կանգուն» ղռնապան Առաքելին և թե՛ դպրապետ Կոստանդին[3]:

Կոստանդ Ջուղայեցու վայելած բարձր հեղինակության մասին է խոսում այն փաստը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռի համար մղված պայքարի շրջանում՝ 1697 թ. փետրվարի 28-ին, Երևանում գրած իր կոնդակը Ստեփանոս Ջուղայեցին, Սուրբ Ամենափրկիչ վանքի բարձրաստիճան հոգևորականներից բացի, հասցեագրել է նաև Կոստանդ Ջուղայեցուն[4]: 1696 թ. նոյեմբերին էջմիածնում Մինաս Ամդեցու ձեռքով կաթողիկոս օծվելուց հետո Ստեփանոս Ջուղայեցին ստիպված էր բախվել իր հակառակորդ Նահապետ Եդեսացու հուժկու դիմադրությանը: 10000 թումանի հասնող հսկայական կաշառքի դիմաց վերջինս ձեռք է բերում Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռին վերահաստատվելու շահական հրովարտակ, ինչից հետո Ստեփանոս Ջուղայեցին ոչ միայն աթոռանկ է արվում ու

---

[1] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 12, թ. 221բ: Ձեռագրի ընդօրինակությունն ավարտվել է հաջորդ տարի՝ 1686 թվականին, ինչպես երևում է վերջին հիշատակարանից (նույն տեղում, թ. 512ա): Ձեռագրի մասին տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, էջ 750-752:

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 682, թ. 13ա: Տե՛ս նաև *Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի*, հ. Բ, խմբագրութեամբ Օ. Եգանեանի, Վիեննա, 1972, էջ 152:

[3] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 593, թ. 263բ-265բ: Տե՛ս նաև *Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի*, հ. Բ, էջ 72-75:

[4] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ստացուած եւ առաքուած գրութիւններ, էջմիածնի կոնդակներ, վավ. 18: Այս փաստաթուղթը հիշատակել է միայն Լևոն Մինասյանը (տե՛ս **Մինասեան Լ.**, *Սպահանի հայոց թեմի առաջնորդները, 1606-1996*, Նոր Ջուղա, 1996, էջ 51, 151):

բանտարկվում, այլև նրա վրա դրվում է 1000 թուման տուգանք[1]: Հենց այս շրջանում էլ Ջուղայեցի հոգևորականը գրել է վերոհիշյալ կոնդակն ու այն հասցեագրել Մովսես ու Դավիթ վարդապետներին և «Առամագի որդի վարպետ Կոստանդին»: Խնդրելով հավաքել 1000 թուման գումար՝ Ստեփանոս Ջուղայեցին տալիս է անհրաժեշտ ցուցումները, իսկ այն դեպքում, երբ «ռ (1000) թումանն թամամէ ոչ», թույլատրում է վաճառել իր ողջ ունեցվածքը:



Նկար 2. Պարտամուրհակ Կոստանդ Ջուղայեցու և Սիմոնի որդի Աղաբեկի ու վերջինիս կնոջ՝ Նազլուխանի միջև, 1698 թ.
(լուսանկարը՝ Թովմա Գալստանյանի)
Աղբյուրը՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան

[1] Հովհաննիսյան Ա., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 300-302:

Նույն՝ 1697 թվականին «Սուրբ Ամենափրկչի վանացս միաբանք» Ալեքսանդր, Միքայել, Մովսես և Դավիթ վարդապետները 500 թուման պարտք են վերցնում Փանոսի որդի խոջա Մինասից: Ընդ որում, ի դեմս խոջա Մինասի՝ գործ ունենք Նոր Ջուղայի 3 ամենաազդեցիկ ընտանիքներից մեկի՝ Մինասյանների նահապետի հետ: Հատկանշական է, որ այս պարտամուրհակի ներքևում կարդում ենք. «Ես՝ վարպետ [...]տանդս վարդ[...]եսաց եղբարօվն վկայ եմ»[1]: Թեև փաստաթղթի այդ հատվածը որոշ չափով վնասված է, այնուհանդերձ կասկածից դուրս է, որ խոսքը վերաբերում է մեզ ծանոթ Կոստանդին, որը 1680-1690-ական թթ. հաճախ է հիշատակվում վարպետ պատվանունով:

1698 թ. առևտրական պայմանի համբավ ունեցող Կոստանդի անունը դարձյալ շրջանառվում է պարտամուրհակներից մեկում: «Փոքր թիվն ձբ (82) արամ ամսոյն իզ (26)-ումն», այսինքն՝ 1698 թվականի հունվարի 10-ին Սիմոնի որդի Աղաբեկը և Աղաբեկի կին Նազլուխանը Կոստանդ Ջուղայեցուց ստանում են 16 թուման գումար դրամական փոխառություն: Պարտքը տրամադրվում էր «թումանին ամսէն մին ճ (100) դիան չախ» տալու պայմանով, այսինքն՝ ամսական 1 % տոկոսադրույքով: Պարտապանները պարտավորվում են գումարը վերադարձնել այն ժամանակ, «յեփ որ ուզի» Կոստանդ Ջուղայեցին[2]: Սրանով եզրափակվում է Ջուղայեցի վաճառական-հեղինակին հիշատակող առևտրատնտեսական բովանդակությամբ վավերագրերի մեզ հայտնի շարքը, որը, անշուշտ, դեռ կարող է համալրվել հատկապես Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքում կատարվելիք արխիվային նորանոր հետազոտությունների արդյունքում:

Կոստանդ Ջուղայեցին մահացել է 1702 թ.: Նոր Ջուղայի գերեզմանատանը մինչ օրս պահպանված նրա տապանաքարին կարելի է կարդալ. «Տապանս է միայնակաց դպրապետ Կոստանդին, որ փոխեցաւ առ ի Ք(րիստո)ս թվ(ին) ՌՃԾԱ (1702)»[3]:

Բ. Կոստանդ Ջուղայեցու ձեռագիր ու տպագիր երկերը

Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգության վերաբերյալ առկա պատկերացումները նույնքան աղոտ են և կարոտ համակողմանի քննարկման, ինչպես նրա գործունեության դեպքում էր: Թեև Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներից մեկը՝ «Աշխարհաժողովը», պարբերաբար հիշատակվել է հայ վաճառականության պատմությանը նվիրված հետազոտու-

[1] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Զանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Մինասեան Լ., Նոր Ջուղայի գերեզմանատունը, էջ 40:

թյուններում, այնուհանդերձ առաջ եկած որոշակի հետաքրքրությունը բավարարվել է միայն զուտ նկարագրական տեղեկատվությամբ, որն էլ անցել է գրքից գիրք: Դա, մասնավորապես, հանգում է հետևյալին. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում առևտրական դասընթացներ վարած Կոստանդ Ջուղայեցին 1680-ական թթ. շարադրել է վաճառականական դասագիրք՝ «Աշխարհաժողով» անունով: Բազմիցս ընդգծվել է, որ հեղինակը հարուստ տվյալներ է ներկայացրել տարբեր երկրների չափի ու կշռի համակարգերի, դրամական միավորների մասին՝ կարևոր տեղեկություններ հայտնելով նաև զանազան ապրանքների շուկաների վերաբերյալ[1]: Հպանցիկ ծանոթության շրջանակները չգերազանցող այս նկարագրությունը թույլ չի տվել գոնե քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու առևտրական այս ձեռնարկի բովանդակության մասին, իսկ բնագրի անտիպ լինելու հանգամանքը զգալիորեն խոչընդոտել է նրա պարունակած հարուստ տեղեկությունների օգտագործմանը[2]: Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու երկրորդ՝ «Դռներն ռաղամին» երկին, ապա այն ևս պատշաճ ուշադրության չի արժանացել: Ասվածը հավաստելու համար բավական է նկատել, որ այն անգամ չի տարանջատվել «Աշխարհաժողով»-ից և դիտարկվել է որպես առևտրական միևնույն դասագրքի մաս: Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունն ամբողջացնող «Արհեստ համարողութեան» երկն էլ միշտ չէ, որ ներառվել է Ջուղայեցի այս հեղինակի աշխատությունների ցանկում: Արդյունքում՝ Կոստանդ Ջուղայեցին բոլոր իրավունքներն ունի հավակնելու 17-րդ դարի հանիրավի անտեսված ու մոռացված հայ հեղինակներից մեկի կոչմանը:

[1] Կոստանդ Ջուղայեցու ու նրա «Աշխարհաժողով»-ի հպանցիկ նկարագրություններից տե՛ս, օրինակ, **Տեր-Յովհաննեանց Յ.**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 159-160, հ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 253-254, **Բայբուրդյան Վ.**, *Համաշխարհային առեւտուրը եւ իրանահայութիւնը 17-րդ դարում*, Թեհրան, 1996, էջ 55-56, **Մինասեան Լ.**, *Սպահանի հայոց թեմի առաջնորդները*, էջ 149-151, **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 136-137, **Hovhannisyan S.**, "Examination of Armenian Trade Capital (16th-18th centuries) in Light of Fernand Braudel's Civilization Theory", *Armenian Review*, vol. 54, no. 3-4 (spring-summer), 2014, pp. 52-53 ևն: Ակնհայտորեն օգտվելով Լ. Խաչիկյանի նշանավոր հոդվածներում (**Khachikian L.**, "The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi", *Journal of the Asiatic Society*, vol. 8, no. 3, 1966, p. 178, idem, "Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693)", *Annales: Économies, sociétés, civilisations*, 22e année, no. 2 (mars-avril), 1967, p. 266) բերված տեղեկությունից՝ Կոստանդ Ջուղայեցու երկը հպանցիկ հիշատակել է նաև դանիացի նշանավոր պատմաբան Նիլս Սթենսգորն իր դասական հետազոտության մեջ՝ **Steensgaard N.**, *The Asian Trade Revolution of the Seventeenth Century: The East India Companies and the Decline of the Caravan Trade*, Chicago-London, 1974, p. 23, n. 4:

[2] «Աշխարհաժողով» առևտրական ձեռնարկի միակ հրատարակված փոքրածավալ հատվածը տե՛ս **Փափազյան Վ.**, «Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հալեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1985, թ. 6, էջ 80-85, նույնի, *Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում*, Երևան, 1990, էջ 160-163:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել նաև, որ Վահան Փափազյանի՝ 1985 թ. արված այն դիպուկ դիտարկումը, թե 17-18-րդ դդ. հայ վաճառականների գործունեության վերաբերյալ աղբյուրագիտական «հսկայական նյութը փաստորեն կուսական վիճակում էր գտնվում»[1], շարունակում է կիրառելի մնալ Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկ-դասագրքերի վերաբերյալ:

Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգությունը նպատակահարմար է տրոհել տպագիր և ձեռագիր մասերի: Ընդ որում, ձեռագիր աշխատությունները ունեն քանակական առավելություն, քանի որ նրա հեղինակած երկերից ցայսօր հրատարակվել է միայն մեկը: Խոսքը վերաբերում է «Արհեստ համարողութեան» գրքին, որը տպագրվել է Մարսելում՝ Ոսկան Երևանցու տպարանում, 1675 թվականին «ի վայելումն հանուրց Հայկազունեաց վաճառականաց»[2]: Այս երկն առևտրական թվաբանության ամփոփ ձեռնարկ է, որում հայ վաճառականները կարող էին գտնել առևտրական գործունեության համար անհրաժեշտ թվաբանական գիտելիքների ողջ պաշարը: Գրքում մաթեմատիկական սահմանումները մղվել են հետին պլան՝ իրենց տեղը զիջելով պարզեցված ձևակերպումներին, իսկ մաթեմատիկական տերմինաբանությունը մնացել է առևտրական բառապաշարի ստվերի ներքո: Տեղին է հիշել այս գիրքը «խոշոր նորություն» բնորոշած Լեոյի պատկերավոր նկարագրությունը. «Հայ մամուլն առաջին անգամ էր տալիս այսպիսի գործնական հրապարակություններ, որոնց արժեքը հասկանալի է ըստ ինքյան... Վաճառականության պահանջներն էին շարունակում ազդել այս փոքրիկ հրատարակությունների թե՛ բովանդակության և թե՛ լեզվի վրա: Դրանք փոքրադիր գրքույկներ էին՝ հարմար ծոցում կամ գրպանում պահելու համար, և նրանց վրա էլ հատկապես նշանակվում էր, թե վաճառականների համար են տպված»[3]: Իսկապես, այս գիրքը, որը լիովին արժանի է հայկական վաճառականական տպագիր գրականության առաջնեկի կոչմանը, մտահղացվել ու հրատարակվել է մի նպատակով՝ «որպէսզի սովաւ վարժեցեալք (հայ վաճառականները — Ս.Բ.) կարիցեն դիւրապէս պարապել ի գործս իւրեանց»[4], այսինքն՝ հեշտությամբ զբաղվեն առևտրական գործունեությամբ:

«Առաջաբանութիւն գրգոյս» խորագրի ներքո բերված ներածական խոսքում հեղինակը հարկ է համարել ընդգծել, որ գիրքը շարադրված է «աշխարհականաւ ոճիւ», այն է՝ դեռևս ձևավորվող աշխարհաբար հայերե-

[1] **Փափազյան Վ.**, «Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հալեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը», էջ 80:

[2] *Արհեստ համարողութեան ամբողջ եւ կատարեալ*, Մարսել, 1675, էջ 145:

[3] **Լեո**, *Հայոց պատմություն*, երրորդ հ., գիրք առաջին, «Երկերի ժողովածու», երրորդ հ., Երևան, 1969, էջ 450:

[4] *Արհեստ համարողութեան*, առաջաբանութիւն գրգոյս (առանց էջահամարի):

նով, կամ, ինչպես այժմ ընդունված է ասել մասնագիտական գրականության մեջ, վաղ աշխարհաբարով: Ինչպես ցույց է տալիս գրքի լեզվաբանական ուսումնասիրությունը, «երկում զուտ գրաբարյան ձևերը փոքրամասնություն են կազմում, տիրապետող են ժողովրդախոսակցական և բարբառային լեզվական երևույթները, իշխում է նոր գրական լեզվի քերականական հիմքը»[1]: Գրաբար են շարադրված միայն գրքի առաջաբանն ու հիշատակարանը: Այսպիսով՝ «Արհեստ համարողութեան»-ը իրավամբ համարվում է առաջին աշխարհաբար գիրքը հայ գրատպության պատմության մեջ:

Այս առևտրական երկի լեզվական նկարագրի հարցը սերտորեն շաղկապված է այն սուր քննարկումների հետ, որոնք ծավալվել են գրքի հեղինակային պատկանելության շուրջ: Խնդիրն այն է, որ աշխատությունը տպագրվել է առանց հեղինակի անվան հիշատակման, իսկ գրքում հանդիպող մի քանի ցուցումներն էլ շփոթության տեղիք են տվել: Այսպես՝ երկի տիտղոսաթերթին կարելի է տեսնել «Թարգմանեցեալ ի պէտս Հայկազունեաց եւ մանաւանդ վաճառականաց» արձանագրումը, որը հեղինակը լրացնում է առաջաբանում նշված «վայելուչ վարկաք զգիրգս զայս թարգմանել ի մերս բարբառ» խոսքերով: Հետևելով այս ցուցումներին՝ գրքի թարգմանչի ուղղությամբ առաջին փնտրտուքները կանգ են առել 17-րդ դարի նշանավոր քերական ու թարգմանիչ Հովհաննես Հոլովի վրա: Մասնավորապես՝ իր «Հայկական մատենագիտութիւն» դասական աշխատության մեջ Գարեգին Զարբհանալյանը ուշադրություն է հրավիրել «Արհեստ համարողութեան»-ի տիտղոսաթերթում հանդիպող 6 սկզբնատառերի վրա՝ «Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ.»: Այս անորոշ շարքի երկրորդ, երրորդ ու չորրորդ տառերը վերծանելով որպես «Յակովբ Հոլով Բիւզանդեան»[2]՝ նա, այդպիսով, սկիզբ է դրել գրքի հեղինակային պատկանելության շուրջ գիտական քննարկումներին: Գրքի թարգմանչի հարցը լուծված համարելով՝ Գարեգին Պետրոսյանը, իր հերթին, այն համոզմունքն է հայտնել, թե հայերեն թվաբանական այս ձեռնարկը գերմանացի Քրիստափոր Կլավիուսի (1538-1612) «Գործնական թվաբանության համառոտ ձեռնարկ» լատիներեն աշխատության թարգմանությունն է[3]: Հակառակ մեծ տարածում ստացած լինելուն՝ երկու տեսակետներն էլ համոզիչ չեն: Նախ՝ Գարեգին Զարբհանալյանն իր իսկ վերծանության կողքին դրել է հարցական նշան, իսկ Գարեգին Պետրոսյանը, ինչպես հետագայում նկատել է Ասատուր

[1] **Պողոսյան Թ.**, «Արհեստ համարողութեան» երկը՝ որպես աշխարհաբար առաջին տպագիր գիրք», *Էջմիածին*, 2015, թ. Թ (նոյեմբեր), էջ 96:

[2] **Զարբհանալեան Գ.**, *Հայկական մատենագիտութիւն*, Վենետիկ, 1883, էջ 70:

[3] **Պետրոսյան Գ.**, «Հայերեն առաջին տպագիր մաթեմատիկական գիրքը», *Բնագիտության և տեխնիկայի պատմությունից (Գիտական աշխատությունների ժողովածու)*, հ. 5, Երևան, 1973, էջ 37-48:

Փաշայանը, նրբանկատորեն փորձել է շրջանցել բովանդակային այն ակնհայտ տարբերությունները, որոնք առկա են խնդրո առարկա երկու աշխատությունների միջև[1]:

Ի վերջո, 1976 թ. իր կոթողային մատենագիտական աշխատության «Արհեստ համարողութեան» բառահոդվածում Հակոբ Անասյանը եզրակացրեց, որ «այս դասագիրքը պիտի կազմված լինի Նոր-Ջուղայում և ամենայն հավանականությամբ հեղինակությունն է հայտնի մանկավարժ Կոստանդ Ջուղայեցու, որը 1680-ական թթ. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ուսումնարանում առևտրական մասնագիտական դասընթաց էր վարում՝ սեփական դասագրքերով»[2]: Հետազոտողի այս եզրակացությունը հիմնված էր երկու փաստարկի վրա: Առաջին՝ երկում զգալի է Նոր Ջուղայի բարբառի «տիրական դիրքը», ուստի «բնագրի աշխարհաբար լեզուն իր հիմնական հատկանշով մեզ առաջնորդում է դեպի Նոր Ջուղա», որտեղ էլ պետք է փնտրել առևտրական թվաբանության այս ձեռնարկի հեղինակին[3]: Եվ երկրորդ՝ այս գիրքը «շատ բան ունի Կոստ. Ջուղայեցու ոչ միայն բառապաշարից ու տերմինաբանությունից, այլև ոճական առանձնահատկություններից», ինչն ակնհայտ է դառնում Ջուղայեցի հեղինակի գրչին պատկանող երկերի հետ համեմատության արդյունքում՝ այդպիսով նրան դարձնելով ամենահավանական հեղինակը[4]: Հակոբ Անասյանի դիտարկմամբ՝ «Արհեստ համարողութեան» գիրքը, իր տեղը զբաղեցնելով Կոստանդ Ջուղայեցու մյուս՝ պատմական ու գործնական բնույթի ձեռնարկների կողքին, այդպիսով նրա դասագրքերն ամբողջացնում է տեսական հատորով[5]: Ինչ վերաբերում է «թարգմանության» խնդրին, ապա սկզբնապես շարադրված լինելով Նոր Ջուղայի բարբառով՝ գիրքն այնուհետ «թարգմանվել է», այն է՝ լեզվական սրբագրության է ենթարկվել՝ հասկանալի լինելու համար ոչ ջուղայեցի ընթերցողներին: Այսպիսով՝ բոլոր հիմքերը կան հաստատապես պնդելու, որ «Արհեստ համարողութեան» գրքի հեղինակային իրավունքները պատկանում են Կոստանդ Ջուղայեցուն, որի շարադրած առևտրական թվաբանության դասագիրքն անանուն խմբագրողը ենթարկել է լեզվական, գուցե նաև՝ բովանդակային ինչ-ինչ փոփոխությունների[6]: Ավելորդ չէ նշել նաև, որ թեև «Արհեստ համարո-

[1] **Փաշայան Ա.**, «Արհեստ համարողութեան»-ը հայ հնատիպ գրքի պատմութեան հոլովոյթում», *Հանդէս ամսօրեայ*, 2005, թ. 1-12, էջ 351:

[2] **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.)*, հ. Բ, Երևան, 1976, էջ 876: Հմմտ. **Անասեան Յ.**, «Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար, Ա. «Արհեստ համարողութեան», Բ. «Արիթմետիկայ»», *Մանր երկեր*, Լոս Անջելես, 1987, էջ 671-674:

[3] **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն*, հ. Բ, էջ 875-876:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 877:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 876:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 874:

ղութեան» գրքի հեղինակային իրավունքի հարցը Կոստանդ Ջուղայեցու օգտին է լուծվել հետագայում ևս՝ Աստուր Փաշայանի հետազոտության մեջ[1], մասնագիտական գրականության մեջ, այնուհանդերձ, շարունակում է շրջանառվել նախկին տեսակետը՝ անգամ առանց հիշատակելու հարցի հետագա քննարկումները[2]:

Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու ձեռագիր աշխատություններին, ապա դրանցում կենտրոնական տեղ են զբաղեցնում երկու վաճառականական ձեռնարկ-դասագրքեր՝ «Աշխարհաժողով» ու «Դոներն ռաղամին» վերնագրերով: Ճշգրտման ու համակեցման կարիք ունեցող մի շարք հարցերից է, օրինակ, դրանց շարադրման թվականի խնդիրը: Մի քանի ուսումնասիրություններում այս երկերը վերագրվել են 1685 թ.[3], մինչդեռ ձեռագրերում կարելի է գտնել ուշադրության արժանի մի քանի ուղղակի ցուցումներ, որոնք վկայում են 1687 թվականի օգտին: Այսպես՝ «Աշխարհաժողով»-ի առաջաբանի «ՌՃԼԶ (1687), որ թիւն է մեր Փրկչին, գրվեցաւ գիրքս այս»[4] խոսքերը հաստատվում են նաև երկի հիշատակարանի արժեքավոր վկայությամբ. «Շարադրեցաւ բանքս այս աշխարհաժողով... որ եղեւ Ըսպահան՝ Ջուղայու վանք Սուրբ Ամենայփրկչումն, թիւն Փրկչին ՌՃԼԶ (1687)»[5]: Այս ամենին գումարվում է «Աշխարհաժողով»-ը եզրափակող խրատական բանաստեղծությունը, որում հեղինակն ինքն իրեն դիմել է այսպես. «Դուան բացիր ռաղամին, լազաթ տեսար, ընկար խամին// ՌՃԼԶ (1687) ամին վաճառ ցուցեր դու ղամենին»[6]: Մյուս ձեռագիր երկը չունի ոչ մի հիշատակարան, սակայն այն հանգամանքը, որ դրա առաջին ընդօրինակությունները մեզ են հասել նույն՝ 1687 թվականից, վկայում է երկու ձեռնարկների համաժամանակյա շարադրման մասին: Հատկանշական է, որ հենց 1687 թվականին են վերաբերում Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ընդօրինակությունները պարունակող ձեռագրերից միանգամից երեքը, ինչը ցույց է տալիս, որ հենց շարադրման պահից սկիզբ է առել ձեռնարկ-դասագրքերը բազմաթիվ օրինակներով արտագրելու գործը:

[1] **Փաշայան Ա.**, նշվ. աշխ., էջ 345-364:

[2] Տե՛ս, օրինակ, **Հովհաննիսյան Ս.**, «Հայ առևտրական կապիտալն իբրև «աշխարհ-տնտեսություն» և արդյունաբերական դարաշրջանի մարտահրավերները», *ՎէՄ*, 2017, թ. 1, էջ 60, Raveux O., "Les marchands orientaux et les langues occidentales au XVIIe siècle: l'exemple des Choffelins de Marseille", G. Buti, M. Janin-Thivos, O. Raveux (éd.), *Langues et langages du commerce en Méditerranée et en Europe à l'époque moderne*, Aix-en-Provence, 2013, pp. 110-111, **Պողոսյան Ն.**, «Միջին հայերենից աշխարհաբարի անցման շրջանի (ԺԷ.-ԺԸ. դարեր) հայերեն աղբյուրների բնութագիրը», *Էջմիածին*, 2017, թ. Է (հուլիս), էջ 56, **Պողոսյան Թ.**, նշվ. աշխ., էջ 83-84 և այլն:

[3] Տե՛ս *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, էջ 6, **Հովհաննիսյան Ս.**, նշվ. աշխ., էջ 59:

[4] Տե՛ս այս գրքում, էջ 101:

[5] Նույն տեղում, էջ 158:

[6] Նույն տեղում, էջ 159:

«Աշխարհաժողով» ու «Դոներն ռաղամին» ձեռնարկ-դասագրքերը գրեթե միշտ ներկայացվել են մեկ միասնական երկի շրջանակում «Աշխարհաժողով» խորագրի ներքո: Հակոբ Անասյանը միակ ուսումնասիրողն է, որ դրանք դիտարկել է առանձին երկեր՝ առաջինը համարելով Կոստանդ Ջուղայեցու պատմական, իսկ երկրորդը՝ գործնական բնույթի աշխատությունը: Ի՞նչն է շփոթության տեղիք տվել: Խնդիրն այն է, որ պահպանված գրեթե բոլոր ձեռագրերում երկու երկերը ընդօրինակված են հաջորդաբար և իրարից բաժանվում են միայն հետևյալ խոսքերով՝ «կատարեցաւ աշխարաժողով չափի և գազի, քարի և կշեռի, և հառաջ ածեմք զդոներն ռաղամին»[1]: Այս խոսքերին նախորդում է վաղ արդի դարաշրջանի համաշխարհային առևտրի շուկաների նկարագրությունը, իսկ դրանց հաջորդող շարադրանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ առևտրական խնդիրների ժողովածու: Հենց այս հատվածների բովանդակային տարբերությունն ու բաժանումն էլ շեշտում է ինքը՝ հեղինակը, երբ «չափի և գազի, քարի և կշեռի աշխարաժողով»-ն ավարտելուց հետո ազդարարում է «զդոներն ռաղամին», այն է՝ թվաբանության հիմունքներին անցնելու մասին: Այս երկու հատվածներն ինքնուրույն երկերի տպավորություն են թողել նաև Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 5994 ձեռագիրն ընդօրինակող գրչի վրա, որը «Աշխարհաժողով»-ի բնագիրն արտագրելուց հետո բաց է թողել 3 թերթ[2], իսկ խնդիրների ժողովածուն ներկայացրել որպես առանձին երկ՝ այն վերնագրելով «Դուան համարողական արհեստին արարեալ ի Կոստանդ դպրապետէ Ջուղայեցւոյ»[3]: Հենց այդ վերնագիրն էլ ընդունելի է համարել Հակոբ Անասյանը, մինչդեռ ամենևին սխալված չենք լինի, եթե այդ խորագիրը համարենք բացառապես ընդօրինակող գրչի մտքի արգասիքը, որքան էլ որ այն համապատասխանում է երկի բովանդակությանը: Առևտրական խնդիրները ներկայացնելուց առաջ Կոստանդ Ջուղայեցու հակիրճ ցուցումը՝ «հառաջ ածեմք զդոներն ռաղամին», հիմք է տալիս երկը «Դոներն ռաղամին» վերնագրելու համար, ինչն առավել հարազատ ենք համարում հեղինակային բնագրի ոգուն:

Պարզաբանման կարիք է զգում նաև այն հարցը, թե ինչու Կոստանդ Ջուղայեցու այս ձեռնարկ-դասագրքերն այդպես էլ չեն հրատարակվել մի դարաշրջանում, երբ հայկական տպարանները սփռված էին Եվրոպայի հայաբնակ քաղաքներում՝ Վենետիկից մինչև Ամստերդամ, իսկ, որ ավելի կարևոր է, գրատպությունը նորություն չէր Նոր Ջուղայում, ուր ապրում ու գործում էր հեղինակը: Անտիպ մնալու պատճառը, հավանաբար, պետք է որոնել այն տպագրական դժվարությունների մեջ, որոնց բախվում էին

[1] Տե՛ս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 47բ:

[2] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. թիվ 5994, թ. 45ա-47բ:

[3] Նույն տեղում, թ. 48ա:

հրատարակչական գործի կազմակերպիչները Նոր Ջուղայում: Թեև Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը՝ որպես մերձավորարևելյան առաջին տպարան, գրքերի հրատարակությունն սկսել էր դեռևս 1638 թվականին, սակայն պարզունակ սարքավորումների առկայության պայմաններում տպարանի աշխատանքները կանգ էին առել 1640-ական թթ. վերջին: Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցու ջանքերով տպարանի վերագործարկումը 1680-ական թթ. համընկավ հենց Կոստանդ Ջուղայեցու գործունեության ժամանակաշրջանի հետ, սակայն տպագրական սարքավորումների ու թղթի սուր կարիքը խոչընդոտում էին հրատարակչական բուռն աշխատանքների ծավալմանը:

Տպարանի գործունեության այս դժվարությունները արտացոլված են Ստեփանոս Ջուղայեցու 5 նամակներում, որոնք ուղարկվել են Վենետիկում, Լիվոռնոյում ու Ջենովայում բնակություն հաստատած հայ վաճառականներին 1686 թ. սեպտեմբեր – 1690 թ. ապրիլ ժամանակահատվածում[1]: Ֆլորենցիայի պետական արխիվում պահպանված հիշյալ նամակներից առավել խոսուն է հինգերորդը, որը Ստեփանոս Ջուղայեցին հղել է անձամբ Աղա դի Մաթուսին՝ Լիվոռնոյի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու ապագա հիմնադրին, 1690 թ. ապրիլի 24-ին: Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդը նրանից ակնկալում էր ստանալ 300 մաշիլ արժողությամբ թուղթ («մինչեւ երեք հարիւր մաշիլ թուղթ առնուս»), ինչպես նաև՝ եվրոպական տպագրական սարքավորումներ («Դ. ղաստ գիր, Բ. երկաթէ չամպար, մէկ գրի չարչու» են)[2]: Դրանով հանդերձ, Ստեփանոս Ջուղայեցին բացահայտորեն արտահայտում է իր վրդովմունքն ազգակից վաճառականներից, որոնք անտեսել էին Եվրոպայից Նոր Ջուղա տպագրական պարագաներ ուղարկելու իր նախորդ խնդրանքներն ու անպատասխան թողել նամակները. «Կրկին և երեքկին անգամ աւրհնութեան թուղթ գրեցաք քեզ և տեղոյդ ջուղայեցոց պարոնացն, ոչ թէ միայն զմեր խնդիրն չհոգացիք, այլև մատիկ թղթոյ միոյ արժան չարարիք»[3]: Հետևաբար, ինչպես եզրակացնում է Սեպուհ Ասլանյանը, տեխնիկական դժվարությունները պայմանավորեցին Նոր Ջուղայի տպարանի գործունեության այս երկրորդ փուլի սահմանափակ բնույթը[4]. 1687-1693 թթ. ընկած ժամանա-

[1] Տե՛ս Archivio di Stato di Firenze, Acquisti e Doni, busta 123, Documenti Armeni Inserto 1, 1-38: Նամակներից երկուսի բնագրերի ու անգլերեն թարգմանության համար տե՛ս **Aslanian S.**, "The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636–1650, 1686-1693)", *Handes Amsoreay*, 2014, no. 1-12, pp. 453-468:

[2] **Aslanian S.**, *The Early Arrival of Print in Safavid Iran*, pp. 462-463, **Կարապետյան Մ.**, **Թաջիրյան Է.**, «Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմությունից», *Բանբեր Երևանի համալսարանի*, 1998, բ. 2, էջ 81, **Թաջիրյան Է.**, *Նոր Ջուղայի հայ վաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում*, մաս I, Երևան, 2012, էջ 68-69:

[3] **Aslanian S.**, "The Early Arrival of Print in Safavid Iran", p. 462.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 447-448:

կահատվածում լույս տեսան միայն մի քանի կրոնական գրքեր՝ Նոր Ջուղան հեղեղած կաթոլիկ քարոզիչների գրոհին դիմակայելու համար[1], ինչպես նաև՝ երկու մեծադիր փաստաթղթեր[2]: Այս պայմաններում ջուղայեցի հեղինակներն ըստ էության զրկված էին իրենց գրական ստեղծագործությունները առանձին գրքերի տեսքով լույս ընծայելու հնարավորությունից: Ասվածը վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու վաճառականական դասագրքերին, որոնք շարադրման ժամանակից՝ 1687 թվականից ի վեր, փաստորեն, այդպես էլ ընթերցողներին հասանելի են մնացել միայն ձեռագիր վիճակում:

Վաճառականական գործունեությունից հետո վաճառականների համար նախատեսված գրականության ստեղծմանն անցնելով՝ Կոստանդ Ջուղայեցին փաստորեն դարձավ վաճառականական գրականության ժանրի հիմնադիրը հայ իրականության մեջ: Առևտրի ոլորտում ունեցած փորձառությունը նրան զինել էր գիտելիքների անհրաժեշտ պաշարով՝ հիմքեր ստեղծելով վաճառականներին հասցեագրված մասնագիտական երկեր շարադրելու համար: Հարկ է նշել, որ վաճառականական փորձառությունն ամենևին էլ հազվադեպ հանդիպող երևույթ չէր առևտրական երկերի հեղինակների պարագայում: Դա հատկապես ակնառու էր վաղ արդի Եվրոպայում, երբ մեծ պահանջարկ ունեցող վաճառականական ձեռնարկ-դասագրքերը շարադրվում էին երբեմնի վաճառականների կողմից: Ինչպես եվրոպացի հեղինակների մասին նկատել է Դանիել Ռաբուզզին, առևտրական ձեռնարկների շարադրանքը «դարձել էր տնային գրադարանի տարեց վաճառականների ու իրավաբանների համար»[3]: Վաղ արդի դարաշրջանի եվրոպական վաճառականական գրականությունն առատ է նախկին վաճառականների շարադրած դասագրքերով: Օրինակ՝ Հնդկաստանի Բոմբեյ քաղաքում շուրջ 20 տարի անցկացրած անգլիացի վաճառական Ռոբերտ Սթիվենսը, իր հայրենակիցների համար շարադրելով Հնդկաստանի առևտրի մասին ուղեցույց, կարևորում էր հենց հեղինակի անձնական փորձառությունը. «Միայն կյանքը, անցկացված առևտրի այս ճյուղերում, մար-

[1] Գրքերի մասին տե՛ս **Մինասեան Լ.**, *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)*, Նոր Ջուղա, 1972, էջ 81-83:

[2] Խոսքը վերաբերում է 1693 թվականի մայիսի 1-ին Ս. Ամենափրկիչ վանքի տպարանի լույս ընծայած երկու փաստաթղթերին, որոնք դրանց հայտնաբերող Լևոն Մինասյանը համարել է կոնդակներ (տե՛ս **Մինասեան Լ.**, «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը եւ մի քանի նորայայտ գրքեր ու այլ ծանօթութիւններ», *Հասկ*, 1970, թիվ 9-10, էջ 380), մինչդեռ Արմեն Այվազյանի եզրահանգմամբ՝ դրանցից մեկը 1665 թվականին աշխարհիկ ու հոգևոր մի շարք գործիչների ժողովի որոշումն է, իսկ մյուսը՝ 1693 թվականին ջուղահայության անունից ուղղված շրջաբերական (տե՛ս **Այվազյան Ա.**, *Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քաղաքականում*, Երևան, 2003, էջ 174):

[3] **Rabuzzi D.**, "Eighteenth-Century Commercial Mentalities as Reflected and Projected in Business Handbooks", *Eighteenth-Century Studies*, vol. 29, no. 2, 1995, p. 170.

դուն կարող է ամբողջովին ծանոթացնել առևտրի հետ»[1]: Այսպիսով՝ վաճառականական անցյալը հիմք է տալիս Կոստանդ Ջուղայեցուն դիտարկելու ավելի լայն՝ վաղ արդի Եվրոպայում շարադրված համանման առևտրական երկերի հեղինակների համապատկերում:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական կենսագրությունը թույլ է տալիս նրան դասելու նաև 17-րդ դարի հայ վաճառական-հեղինակների շարքին: Դեռևս շատ տասնամյակներ առաջ «Հայ վաճառականների գրականությունը» հմտորեն սահմանած ու բնութագրած Լեոն հանդես է եկել հետևյալ նկատառմամբ. «17-րդ դարում մենք միայն մի հատ վաճառական հեղինակ տեսանք – Զաքարիա Ագուլեցին, որ, սակայն, բոլորովին հավակնություն չի ունեցել հեղինակ երևալու, այլ բարի կամք է ունեցել իր ընտանեկան-առևտրական հիշատակարանը գրելու իր և իր ժառանգների համար»[2]: Առնվազն 1660-70-ական թթ. առևտրական գործունեություն ծավալած Կոստանդ Ջուղայեցին, փաստորեն, 1680-ական թթ. շարադրված իր վաճառականական ձեռնարկներով համալրում է իրենց ձեռքը գրիչ վերցրած 17-րդ դարի հայ վաճառականների խիստ նոսր շարքը:

Եվս մի հետաքրքրական հարցադրում. ի՞նչ աղբյուրներ են եղել հեղինակի ստեղծագործական զինանոցում վաճառականական դասագրքեր շարադրելիս: Այս կապակցությամբ շրջանառվել է երկու տեսակետ: Նախ՝ «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատության՝ Հնդկաստանին նվիրված գլխում Ռաֆիկ Աբրահամյանը, կարևորելով հնդկահայերի առևտրական գործունեության մասին Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի տվյալները, դրա սկզբնաղբյուր է համարել «Հնդկաստանում ապրող և այնտեղ այցելող հայրենակիցների օրագրերն ու հաշվեմատյանները»[3]: Եվ երկրորդ՝ հայ ազատագրական պայքարին նվիրված իր կոթողային աշխատության մեջ քանիցս վկայակոչելով Կոստանդ Ջուղայեցուն ու նրա «Աշխարհաժողով»-ը՝ Աշոտ Հովհաննիսյանն այն համարել է «Նոր-Ջուղայի վաճառականներին հարցուփորձ անելով կազմված»[4]: Այս գնահատականներին հակառակ՝ Նոր Ջուղայի և Վենետիկի դիվաններում

[1] Robert Stevens, *The New and Complete Guide to the East-India Trade*, London, 1775, p. A2, հղումն ըստ՝ **Harreld D.**, "An Education in Commerce: Transmitting Business Information in Early Modern Europe", ed. by J. Ojala and L. Müller, *Information Flows: New Approaches in the Historical Study of Business Information*, Helsinki, 2007, p. 67.

[2] **Լեո**, *Հայոց պատմություն*, երրորդ հ., գիրք երկրորդ, «Երկերի ժողովածու», երրորդ հ., Երևան, 1973, էջ 523:

[3] **Աբրահամյան Ա.**, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, գիրք Ա, Երևան, 1964, էջ 437: Թեև գրքի հեղինակը Աշոտ Աբրահամյանն է, սակայն Հնդկաստանի հայկական գաղթավայրին վերաբերող գլուխը գրել է Ռաֆիկ Աբրահամյանը (տե՛ս նույն տեղում, էջ 436, ծան. 1):

[4] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք երկրորդ, էջ 446:

պահպանված առևտրական վավերագրերը, որոնց արդեն ծանոթացանք, արմատապես փոխում են Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների շարադրման հանգամանքների վերաբերյալ մեր պատկերացումները: Վաճառականական անցյալը նրան զինել էր առևտրական գործի վերաբերյալ «առաջին ձեռքից» վերցրած տեղեկատվությամբ, ինչն իր վճռական ազդեցությունն է թողել երկերում բերված տվյալների հավաստիության ու ճշգրտության վրա: Պատահական չէ, որ անգլիացի վաճառական Լյուիս Ռոբերտսը առևտրական փորձառությունը համարում էր «գիտելիքի իսկական մայրը»[1]: Օրինակ, վաճառականներին ուղղված խրատները, որոնք «Աշխարհաժողով»-ի կարևոր մասն են կազմում[2], այնքան դիպուկ ու հստակ են արտացոլում առևտրական առօրյան ու կենսակերպը, որ դրանք միայն վաճառականի կենսափորձ ունեցող հեղինակի գրչի արդյունք կարող էին լինել: Աշխարհի զանազան վայրերում գործածվող չափի, կշռի, դրամական միավորների, հարկատեսակների և այլնի վերաբերյալ փաստական տեղեկատվությունը ևս բնորոշվում է ճշգրտությամբ, իսկ այս տվյալների համեմատությունը հայկական առևտրական հաշվեմատյանների հետ ի հայտ չի բերում զգալի տարբերություններ[3]: Նշենք նաև, որ վաճառականական անցյալն ու կենսափորձը նրա համար տեղեկատվության ամենից առաջնային աղբյուրը լինելով հանդերձ, չէին բացառում հայկական առևտրական փաստաթղթերի՝ որպես սկզբնաղբյուրի օգտագործումը, հատկապես եթե նկատի ունենանք, որ Կոստանդ Ջուղայեցին հիշատակվում է միջերկրածովյան նավահանգիստներում ծավալած իր գործունեությամբ, ուստի Արևելյան Միջերկրածովյան ավազանի «առևտրի գաղտնիքներից»[4] բացի՝ դժվար թե նա հավակներ առևտրական այլ շուկաների փայլուն իմացության: Եվ վերջապես, նրա համար տեղեկատվության կարևոր աղբյուր կարող էին լինել նաև Եվրոպայում վաղուց ի վեր հրատարակվող առևտրական նմանաբնույթ երկերը:

1778 թ. Լիվոռնո քաղաքում բնակվող հրեա վաճառական Դավիթ Աթիասը, իսպանա-հրեական լադինո լեզվով շարադրելով «Ոսկե պարտեզը» գիրքը, բողոքում էր, որ հրեաները, ի թիվս գրականության այլ ժանրերի,

[1] **Lewes Roberts**, *The Merchants Mappe of Commerce*, London, 1638, title page, հղումն ըստ՝ **Leng T.**, "Epistemology: Expertise and Knowledge in the World of Commerce", *Mercantilism Reimagined: Political Economy in Early Modern Britain and Its Empire*, ed. by P. Stern and C. Wennerlind, Oxford, 2014, p. 101.

[2] Տե՛ս այս գրքում, էջ 101-103, 128-130:

[3] Տե՛ս *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանը*, էջ 38-39:

[4] Բնորոշման համար տե՛ս **Markovits C.**, *The Global World of Indian Merchants, 1750-1947: Traders of Sind from Bukhara to Panama*, Cambridge, 2000, p. 25.

չունեն «աւետրական դասագրքեր իրենց առօրյա լեզվով»[1]: Դրանից մոտ 100 տարի առաջ Նոր Ջուղայից սերող հայ վաճառականներն արդեն հնարավորություն ունեին օգտվելու աւետրական-մասնագիտական գրականությունից, որի առաջին նմուշները՝ «Արհեստ համարողութեան», «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամին» խորագրերով, հեղինակել էր Կոստանդ Ջուղայեցին: Դրանք գրված էին ջուղայեցի վաճառականների խոսակցական լեզվով՝ Նոր Ջուղայի բարբառով, մի հատկանիշ, որը կարևորում էր նաև Դավիթ Աթիասն իր ազգակից հրեա վաճառականների դեպքում:

Բացի վաճառականական ձեռնարկ-դասագրքերից՝ Կոստանդ Ջուղայեցու ձեռագիր աշխատությունների շարքում է նաև «Հարցմունք եւ պատասխանի» վերնագրով մի երկ: Այն գրված է դեռևս վաղ միջնադարի քրիստոնեական մատենագրության մեջ տարածված հարցուպատասխանի ժանրով՝ հիմնված լինելով Աստվածաշնչի ու եկեղեցու հայրերի երկերի վրա: Գերազանցապես կրոնական հարցեր ընդգրկող այս երկում երբեմն կարելի է հանդիպել ընդհանուր աշխարհաճանաչողությանը վերաբերող նյութեր: Այդպիսի հարցերից են, օրինակ, «Գիտե՞ս է (7) մոլորականքն», «Գիտե՞ս կենդանայկերպն», «Գիտե՞ս այս աշխարհիս որպիսութիւնն»[2] և այլն: Հետաքրքիր է, որ հեղինակը հարկ է համարել երկում ներառել նաև հարց հենց իր մասին՝ «Հարց-Գիտե՞ս չարայդրող բանիս: Պատասխան-Գիտեմք և ասեմք: Աստուած ողորմի մեր վարպետ Կոստանդին և իւր ծնողացն՝ Ըռամազին և Ջիթանին և իւր վարպետացն և մեր ամենեցուն ծնողացն և մեր վարպետին: Ամէն»[3]: Ըստ երևույթին, «Հարցմունք և պատասխանի»-ն ներառված է եղել Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի ուսումնական ձեռնարկների շարքում: Այս ենթադրությունը պայմանավորված է երկի հիշատակարանին հաջորդող մի բանաստեղծությամբ, որում Կոստանդ Ջուղայեցին դիմում է երեխաներին ու կոչ անում լավ սովորել. «Կարդայ մանուկ, ուսիր սիրով// Ջարմանազան բանքս ասելով...»[4]: Ինչ վերաբերում է «Հարցմունք և պատասխանի»-ի շարադրման ժամանակի հարցին, ապա երկի թե՛ երկար վերնագրում ու թե՛ հիշատակարանում այդ մասին նշված է՝ «ՌՃՁԵ», այսինքն՝ 1685 թվական[5]:

[1] Bunis D., Chetrit J., Sahim H., "Jewish Languages Enter the Modern Era", *The Jews in the Middle East and North Africa in Modern Times*, ed. by R. Simon, M. Laskier and S. Reguer, New York, 2002, pp. 119-120.

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 268ա-269բ, Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 23ա-24ա:

[3] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 273բ: Հմմտ. Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 27ա:

[4] Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 30բ-31ա:

[5] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 252ա, 278ա, Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 10ա, 30բ: Նշենք նաև, որ թեև Նոր Ջուղայի գրչագիր

Կոստանդ Ջուղայեցու թողած գրավոր ժառանգության մաս են կազմում նաև մի քանի փոքրածավալ չափածո ստեղծագործություններ: Թե՛ «Աշխարհաժողով»-ը և թե՛ «Հարցմունք եւ պատասխանի»-ն ավարտվում են աշակերտներին ուղղված բանաստեղծություններով: Դրանցից բացի՝ ըստ երևույթին Կոստանդ Ջուղայեցու գրչին է պատկանում նաև մի «մեղայական ոտանաւոր»[1], ինչպես բնորոշել է ձեռագիրը նկարագրած Սմբատ Տեր-Ավետիսյանը[2]: Քառատողերից մեկում կարծես ինքն իրեն դիմելով՝ երբեմնի վաճառական Կոստանդ Ջուղայեցին գրում է. «Ի վաճառէտ ինչ չահեցայր// Քանըզ պատանքտ աւելի// Սուտ ասելով, քուֆր տալով// Ազայութիւնտ աւելի»[3]: Սմբատ Տեր-Ավետիսյանը Կոստանդ Ջուղայեցու գրչին է վերագրել նաև «մի ոտանաւոր այբուբենի վրայ»[4], սակայն այդ բանաստեղծության վերջին տողերն այլ ենթադրության տեղիք են տալիս. «Քեզ առ յինէն խրատ բարի// Ո՛վ դու, մանու՛կ սիրող բանի// Եւ ասացե տէր ողորմի// Ինձ Առաքել վարդապետի»[5]: Հավանաբար, հենց այդ Առաքել վարդապետն էլ բանաստեղծության հեղինակն է, հատկապես որ ձեռագրում հաջորդիվ ընդօրինակվել են Առաքել Սյունեցու չափածո երկերը:

Այսպիսով՝ Կոստանդ Ջուղայեցին բոլոր իրավունքներն ունի պատվավոր տեղ զբաղեցնելու վաղ արդի դարաշրջանի հայ հեղինակների շարքում: 17-րդ դարի հայ գրավոր մշակույթը կամ, ինչպես Նորայր Պողոսյանն է բնորոշել, «հայկական երկրորդ վերածնունդը»[6] Կոստանդ Ջուղայեցին հարստացրեց աւետրական երկերով՝ դրանով իսկ ստեղծելով ու կայացնելով հայկական վաճառականական գրականությունը: Նրա մատենագրական ժառանգության գերակշիռ մասը հենց աւետրական ձեռնարկ-դասագրքերն են՝ «Արհեստ համարողութեան», «Աշխարհաժողով», «Դռներն ռաղամին»: Դրանցից բացի՝ Կոստանդ Ջուղայեցուց մեզ են հասել «Հարցմունք և պատասխանի» գերազանցապես կրոնական բնույթի ոչ մեծածավալ երկը, ինչպես նաև՝ մի քանի չափածո ստեղծագործություններ:

օրինակի հիշատակարանում կա այլ տվյալ՝ ՌՃԹ (1680), սակայն դա չպետք է շփոթության տեղիք տա, քանի որ հենց նույն ձեռագրում երկի վերնագրի մեջ հաստատվում է 1685 թվականը:

[1] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 279բ-281բ:

[2] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա., էջ 857:

[3] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 281ա:

[4] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա., էջ 857:

[5] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 286ա:

[6] **Պողոսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 58:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ «ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ»-ՈՒՄ

Ա. Առևտրական տեղեկատվությունը, վաճառականները ու նրանց ձեռնարկ-դասագրքերը

1751 թ. առևտրի ոլորտի անգլիացի փորձագետ Մալաքի Պասթլթուայթը, պատկերավոր նկարագրության մեջ ամփոփելով տեղեկատվության ու վաճառականների սերտ առնչությունները, նշում էր, որ «անտեղյակների համար առևտուրը լոկ պատահականության խաղ է» ու նրանց նմանեցնում «ճանապարհագուրկ օվկիանոսի վրա առանց կողմնացույցի թափառողների»: Մինչդեռ կրթված վաճառականի համար, որը հաստատակամորեն գնում է առաջ՝ դեպի «հարստություն ու պատիվ», «առևտուրը գիտություն է, որտեղ հմտությունը գրեթե երբեք ձախողման չի տանում»[1]: Անգլիացի հեղինակը, փաստորեն, առևտրական գործունեության հաջողության գաղտնիքը որոնում է տեղեկատվության մեջ, որը վաճառականը պետք է հետևողականորեն ձեռք բերեր և իր գործունեությունը պատահականության խաղից վերածեր գիտության:

Վաճառականական գործունեության համար տեղեկատվության կարևորությունն առավել քան ընդգրկուն ու համապարփակ է արտացոլում այսպես կոչված «շրջանառության տեսությունը», որն առաջ է քաշել ֆրանսիացի պատմաբան Կլոդ Մարկովիցը հնդիկ վաճառականներին նվիրված իր աշխատության մեջ[2]: Հենց այս մոտեցման վրա է հիմնվել Սեբուհ Ասլանյանը Նոր Ջուղայի հայ վաճառականների համաշխարհային ցանցի իր ուսումնասիրության մեջ[3]: Այսպես՝ ըստ Կլոդ Մարկովիցի՝ առևտրական ցանցերը կազմված են կենտրոն(ներ)ից ու դրա հետ փոխկապակցված մի շարք բնակավայրերից, որոնց միջև տեղի է ունենում «ապրանքների ու մարդկանց» շրջանառություն[4]: Այդ շարքում են վաճառականները, կանայք, ապրանքները, կապիտալն ու տեղեկատվությունը, որոնց անդադար շրջանառությունը ապահովում է ցանցի ամբողջականությունն ու կայուն գործունեությունը: Սեբուհ Ասլանյանը, այս շարքից բացի, հայկական առևտրական ցանցին բնորոշ է համարում նաև վեցերորդ տարրի՝ քահանաների շրջանառությունը[5]:

[1] **Malachy Postlethwayt**, *The Merchant's Public Counting-House, or New Mercantile Institution*, London, 1750, pp. 5-6, հղումն ըստ՝ **Hoock J.**, "Professional Ethics and Commercial Rationality", ed. by M. Jacob and C. Secretan, *The Self-Perception of Early Modern Capitalists*, New York, 2008, p. 156.

[2] Տե՛ս **Markovits C.**, նշվ. աշխ.:

[3] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 13-15:

[4] Տե՛ս **Markovits C.**, նշվ. աշխ., էջ 25:

[5] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 13, 55:

Պետք է նկատի ունենալ, որ «շրջանառությունը տարբեր է պարզ շարժունությունից, քանի որ այն ենթադրում է առաջ գնալու ու հետ գալու կրկնակի շարժում, որը կարող է կրկնվել անվերջ»[1]: Մյուս բնութագրական հանգամանքն այն է, որ շրջանառության գործընթացն ունի սոցիալական ու ֆիզիկական սահմանագծեր: Մասնավորապես, այս մոտեցումը զարգացրած հնդիկ գիտնական Կապիլ Ռաջի դիտարկմամբ՝ շրջանառությունը տեղի է ունենում «սահմանագատված ու անհավասար գծագրված տարածքներում», որոնց կարելի է տալ «շրջանառության տարածքներ» պայմանական անվանումը[2]: Վերջիններս իրարից տարանջատող սահմանները թե՛ սոցիալական են ու թե՛ ֆիզիկական, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ մի կողմից շրջանառությանը մասնակցում են հասարակության միայն որոշակի խմբեր, իսկ մյուս կողմից այդ գործընթացն ընթանում է կոնկրետ աշխարհագրական միջավայրում[3]: Եթե ասվածը տեղայնացնենք ու դիտարկենք հայկական օրինակի վրա, ապա կարող ենք արձանագրել, որ «հայկական շրջանառության տարածքներն» էին մի դեպքում հայ հասարակության վաճառականական շերտը, իսկ մյուս դեպքում՝ այն բոլոր բնակավայրերը, որոնք մտնում էին Նոր Ջուղայի առևտրական ցանցի մեջ:

Կարևոր է ընդգծել նաև, որ շրջանառվող «ապրանքներն ու մարդիկ» միևնույն կարևորությունը չունեին առևտրական ցանցերի համար: Ինչպես եզրակացնում է Կլոդ Մարկովիցը, «ամենաէականը հավանաբար տեղեկատվության շրջանառությունն է... [քանի որ] ամենահաջողակ առևտրական ցանցերը եղել են նրանք, որոնք ամենից ընդունակն էին տեղեկատվությունը շարունակական մշակման ենթակա գիտելիքի փոխակերպելու հարցում»[4]: Այս գնահատականը լիովին արտացոլում է առևտրական շուկաների վերաբերյալ թարմ տեղեկատվություն ունենալու անհրաժեշտությունն ու մտահոգությունը, որը դարձել էր վաճառականի կյանքի անբաժան մասը: Առևտրական գործարքների հաջողությունը կամ ձախողումը մեծապես կախված էին հենց տեղեկատվության այն պաշարից, որ իր ձեռքի տակ ուներ տվյալ վաճառականը: Տեղին է հիշել ֆրանսիացի նշանավոր պատմաբան Ֆեռնան Բրոդելի դասական ձևակերպումը առևտրական լուրերի մասին՝ «նորությունը՝ շքեղ ապրանք»[5]: Իսկ այժմ տես-

[1] **Markovits C., Pouchepadass J., Subrahmanyam S.**, "Introduction: Circulation and Society under Colonial Rule", ed. by Markovits C., Pouchepadass J. and Subrahmanyam S., *Society and Circulation: Mobile People and Itinerant Cultures in South Asia, 1750-1950*, London, 2003, pp. 2-3.

[2] **Raj K.**, "Networks of Knowledge, or spaces of circulation? The birth of British cartography in colonial south Asia in the late eighteenth century", *Global Intellectual History*, vol. 2, no. 1, 2017, p. 52.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

[4] **Markovits C.**, նշվ. աշխ., էջ 25:

[5] **Braudel F.**, *The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II*, vol. 1, London, 1972, p. 335.

նենք, թե այդքան նշանակալի դերակատարություն ունեցած առևտրական տեղեկատվությունն ինչ ուղիներով էր տարածվում ուշ միջնադարում, իսկ ապա՝ վաղ արդի դարաշրջանում, և այդ գործընթացում ինչ տեղ էին զբաղեցնում առևտրական ձեռնարկները:

Նամակագրությունը, որը խլում էր ուշմիջնադարյան վաճառականի ժամանակի մեծ մասը, ամենից արդյունավետ միջոցն էր հեռավոր տարածությունների վրա տեղեկատվություն փոխանակելու համար: Առևտրական նամակագրության հարյուր հազարավոր օրինակները, որոնք մեզ են հասել 14-15-րդ դարերից, վկայությունն են այն ջանքերի, որ գործադրել են վաճառականները նամակների միջոցով տեղեկատվություն փոխանակելու համար: Այս իմաստով բնութագրական է Ֆրանչեսկո Դատինիի (մոտ 1335-1410 թթ.) օրինակը: Ֆլորենցիայի մոտ գտնվող Պրատո քաղաքից սերող այս վաճառականի անձնական արխիվը, որը պատահաբար հայտնաբերվել է 1870 թ., պարունակում է մոտ 300 տարբեր վայրերից ստացված 126.000 առևտրական նամակ՝ չհաշված անձնական թղթակցության նմուշներն ու հազարավոր հաշվապահական էջերը: Այս «միջնադարյան տվյալների բազան»[1] առևտրական նամակագրության այսօր հայտնի ամենամեծ հավաքածուն է:

Նամակագրության միջոցով փոխանցվող առևտրական տեղեկատվությունը կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խումբը, որը ներառում է տնտեսական նորություններ, վերաբերում էր չափի ու կշռի միավորներին, տարադրամի փոխարժեքին, տարբեր վայրերում առկա ապրանքների քանակին, որակին, գներին և այլն: Տվյալների երկրորդ խումբն ընդգրկում էր քաղաքական ու ռազմական իրադարձությունների մասին նորություններ, որոնց քաջատեղյակությունն անհրաժեշտություն էր առևտրական որոշումներ կայացնելիս: Եվ վերջապես, նամակներով փոխանցվող տեղեկատվության երրորդ խումբն առնչվում էր հենց իրենց՝ վաճառականներին: Անվստահելի գործընկերոջ համբավ վաստակող վաճառականներն անմիջապես հայտնվում էին նամակների էջերին՝ այդպիսով կորցնելով իրենց հեղինակությունն ու զրկվելով հետագա առևտրական գործունեության հնարավորությունից[2]:

Վաճառականների համար նամակների նշանակությունը հիանալի է արտացոլում Ջեսիկա Գոլդբերգի դիտարկումը, որը թեև վերաբերում է Հին Կահիրեի սինագոգի գենիզայից՝ գրապահոցից հայտնաբերված 11-րդ դարի հրեական նամակներին, սակայն բնութագրական է հետագա դա-

[1] **Marks S.**, *The Information Nexus: Global Capitalism from the Renaissance to the Present*, New York, 2016, p. 75.

[2] Տե՛ս **Trivellato F.**, "Merchants' Letters across Geographical and Social Boundaries", ed. by F. Bethencourt and F. Egmond, *Cultural Exchange in Early Modern Europe, vol. III, Correspondence and Cultural Exchange in Europe*, New York, 2007, pp. 87-88.

րաշրջանների համար ևս. «Գենիզա վաճառականներն ակնկալում էին, որ նամակներ կգան իրենց թղթակիցներից: Նրանք շատ ավելի մեծ ակնկալիքներ ունեին նամակների, քան թե ապրանքների շրջանառությունից»[1]:

Մյուս տարբերակը, որով ուշ միջնադարում առևտրական տեղեկատվությունը տարածվում էր վաճառականների շրջանում, մասնագիտական երկերն էին, որոնք անցել են զարգացման մի քանի փուլ: Նախևառաջ, դրանք համառոտ տեղեկատուներ էին, որոնցում ի մի էր բերված տարբեր երկրների վերաբերյալ առևտրական հիմնական տեղեկատվությունը: Դրանց ծագման ակունքները պետք է որոնել ուշմիջնադարյան իտալական առևտրական ընկերություններում, որոնք հովանավորում էին համանման տեղեկատուների շարադրանքը իրենց գործակալներին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար: Ավելին՝ որպես առևտրական գաղտնիքներ՝ դրանք շրջանառությունը սահմանափակված էր հեղինակների անմիջական շրջապատով՝ բացառելու համար դրանց գործածությունը մրցակիցների կողմից[2]: Ժամանակի ընթացքում այս տեղեկատուների բովանդակությունն ավելի ու ավելի հարստացավ, իսկ մոտ 1340 թվականին Բարդի առևտրական տան համար Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտին շարադրեց «Երկրների նկարագրության գիրքը»՝ այս ժանրի նշանավոր նմուշներից մեկը: Հետաքրքիր է նշել, որ մինչև 15-րդ դարը այսպիսի երկեր «կազմելը կամ գոնե ընդօրինակելը առևտրական կրթության գործընթացի կանոնավոր մաս էր դարձել հավակնոտ վաճառականների համար»[3]: Առևտրական գրականության հետագա զարգացումը հանգեցրեց դրանում շրջանառվող տեղեկատվության ստանդարտացմանը, և ինչպես նշում է հետազոտողներից մեկը, «ընդօրինակելու համար մի ստանդարտ տեքստ ի հայտ եկավ... և այս կրթական ստանդարտ տեքստի համար պատշաճ կլինի օգտագործել ոչ թե տեղեկատու, այլ դասագիրք տերմինը՝ տարբերելու համար անհատական անձնական շարադրանքներից»[4]: Այսպես՝ տեղեկատվական գրականության զարգացումը հանգեցրեց վաճառականական ձեռնարկ-դասագրքերի առաջացմանը, որոնք հսկայական քանակությամբ պիտի ողողեին առևտրի աշխարհը հետագա դարերում: Փաստորեն, ուշմիջնադարյան վաճառականները, դեմ առ դեմ խոսակցություններից բացի, ունեին առևտրական տվյալներ ստանալու 2 տարբերակ՝ նամակագրություն ու համառոտ տեղեկատուներ, որոնց զարգացումը ընթացավ ձեռնարկ-դասագրքերի վերածվելու ճանապարհով:

[1] **Goldberg J.**, *Trade and Institutions in the Medieval Mediterranean: The Geniza Merchants and Their Business World*, Cambridge, 2012, p. 193.

[2] Տե՛ս **Larner J.**, *Marco Polo and the Discovery of the World*, New Haven, 1999, pp. 73-74:

[3] **Spufford P.**, *Profit and Power: The Merchant in Medieval Europe*, London, 2003, p. 53.

[4] Նույն տեղում:

Վաղ արդի շրջանում վաճառականների կողմից առևտրական տեղեկատվության օգտագործման հնարավորությունները շատ ավելի բազմազան էին: Ճիշտ է, հաղորդակցության արագության մեջ էական փոփոխություն չարձանագրվեց և ինչպես Ֆրանչեսկա Տրիվելլատոն է նկատել, «նախքան հեռագրական կապի հայտնագործումը տեղեկատվությունը հազվադեպ էր ճանապարհորդում ավելի արագ, քան մարդիկ ու ապրանքները»[1]: Այնուհանդերձ, նկատելիորեն աճեց համաշխարհային առևտրական շուկաների մասին տվյալների հասանելիությունը, քանի որ մի կողմից երևան եկան տպագիր տեղեկատուներն ու ֆինանսական լրագրությունը, իսկ մյուս կողմից վաճառականներն ստացան իրենց համար շարադրված բազմաթիվ ձեռնարկ-դասագրքերից առատորեն օգտվելու հնարավորություն: Ի դեպ, Եվրոպայում այս տեղեկատվական տեղաշարժերի ազդեցությունն այնքան մեծ էր, որ, ըստ Սթիվեն Մարքսի, հենց «տեղեկատվություն հավաքելու արևմուտքի բարձր ունակություններն» են, որ պայմանավորել են Եվրոպայի ու Ասիայի պատմական զարգացման անհամաչափությունը[2]: Այս փոփոխություններն իրենց հետքը թողեցին նաև մի երևույթի վրա, որը հայտնի է «գործարքային ծախսեր» անունով:

«Գործարքային ծախսեր» հասկացությունը, որը շրջանառության մեջ է դրել բրիտանացի տնտեսագետ Ռոնալդ Քոուզը դեռևս 1937 թ., ներառում է բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են ցանկացած տնտեսական գործարք կատարելիս[3]: Որքան նպաստավոր են տնտեսական գործունեության արտաքին ու ներքին պայմանները, այնքան ավելի քիչ են «գործարքային ծախսերը»: Դուգլաս Նորթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղ արդի շրջանում վաճառականների «գործարքային ծախսերը» զգալիորեն նվազել են 3 նորարարությունների շնորհիվ: Քննարկվող հարցի կապակցությամբ կարևոր է նշել, որ այդ նորամուծություններից մեկը՝ տնտեսական թերթերի ու առևտրական դասագրքերի տարածումը[4], փաստորեն, վերաբերում էր տեղեկատվությանը:

Նախ՝ տնտեսական թերթերի մասին: Տպագրության գյուտի ընձեռած հնարավորություններն օգտագործելով՝ եվրոպացի հրատարակիչներն սկսեցին լույս ընծայել ապրանքների գների ու տարադրամի փոխարժեքների ցուցակներ: Այս միաթերթ ցանկերը, որոնք արդեն 16-րդ դարում մեծ տա-

[1] Trivellato F., "The organization of trade in Europe and Asia, 1400-1800", ed. by J. Bentley, S. Subrahmanyam and M. Wiesner-Hanks, *The Cambridge World History, vol. 6: The Construction of a Global World, 1400-1800 CE, part 2: Patterns of Change*, Cambridge, 2015, p. 165.

[2] Տե՛ս Marks S., Նշվ. աշխ., էջ 78:

[3] Տե՛ս Coase R., "The Nature of the Firm", *Economica*, vol. 4, no. 16, 1937, pp. 386-405:

[4] Տե՛ս North D., "Institutions, Transaction Costs, and the Rise of Merchant Empires", ed. by J. Tracy, *The Political Economy of Merchant Empires: State Power and World Trade, 1350-1750*, New York, 1991, p. 28.

րածում ունեին վաճառականների շրջանում, աստիճանաբար համալրվեցին առևտրական տվյալներ ամփոփող նոր բաժիններով, ինչը ճանապարհ հարթեց տնտեսական թերթերի առաջացման համար: Դիպուկ է Սթիվեն Մարքսի դիտարկումը՝ «Ավելացրեք քաղաքական տեղեկություններ և դուք կունենաք լրագրերի ծնունդը»[1]: Հետաքրքիր է, որ այս տարբերակով շրջանառվող տեղեկատվությունն ավելի արագ կամ էժան չէր: Այն, ինչ այս տնտեսական թերթերը դարձնում էր շահեկան, դրանցում ամփոփված առևտրական նորությունների վստահելիությունն էր. դրանք վերցված էին պաշտոնական աղբյուրներից և կարող էին ճշգրտվել ու լրացվել թերթի հաջորդ համարում[2]:

Վաղ արդի շրջանի երկրորդ նորամուծությունը՝ առևտրական դասագրքերի տարածումն ու հրատարակությունների աննախադեպ քանակը, լավագույնս փաստագրված է մի բազմահատոր մատենագիտության մեջ, որում ներառված են 15-րդ դարավերջից մինչև 19-րդ դարասկիզբը Եվրոպայում տպագրված բոլոր վաճառականական ձեռնարկները[3]: Այսպես՝ այդ ժամանակահատվածում տպագրված ձեռնարկների թիվը հասնում է 12.000-ի, որից 2000-ը՝ 17-րդ դարում, իսկ միանգամից 8000-ը՝ 18-րդ դարում: Վաճառականական միջավայրում այս դասագրքերի պահանջարկը լավ պատկերացնելու առումով բավարար է ասել, որ միայն 1700-1750 թթ. միջակայքում վերահրատարակվել է նախկինում տպագրված շուրջ 700 անուն գրականություն[4]: Ինչպես նկատել է հետազոտողներից մեկը, վաճառականական ձեռնարկները Եվրոպայի մեծ մասում նպաստեցին գիտելիքի ստանդարտացմանը և միահյուսված առևտրական միջակույթի ստեղծմանը[5]: Դոնալդ Հարելդն, իր հերթին, առանձնացնում է վաճառականական ձեռնարկների երեք առավելություն: Նախ՝ դրանք ընդգրկում էին թեմաների լայն շրջանակ, որոնք փոփոխվում էին վաճառականների տեղեկատվական կարիքներին համընթաց: Երկրորդ՝ դրանք ապահովում էին ավելի մեծ թվով վաճառականների փորձառությանը հաղորդակից լինելու հնարավորություն, քանի որ, օրինակ, քչերը կարող էին անձամբ շփվել Ժակ Սավարիի հետ, սակայն նրա ձեռնարկի միջոցով նրանից սովորել կարող էին բո-

[1] Marks S., Նշվ. աշխ., էջ 83:

[2] Տե՛ս McCusker J., "Information and Transaction Costs in Early Modern Europe", ed. by G. Gommel and M. Denzel, *Weltwirtschaft und Wirtschaftsordnung: Festschrift fur Iurgen Schneider zum 65. Geburtstag*, Stuttgart, 2002, p. 82:

[3] Տե՛ս Hoock J. and Jeannin P. (eds.), *Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, 1470-1820: eine analytische Bibliographie = Ars Mercatoria: manuels et traités à l'usage des marchands, 1470-1820*, 3 vols., Paderborn: Schöningh, 1991-2001:

[4] Տե՛ս Jeannin P., "La diffusion des manuels des marchands: fonctions et stratégies éditoriales", *Revue d'histoire moderne et contemporaine*, tome 45, no. 3 (juillet-septembre), 1998, p. 548:

[5] Տե՛ս Trivellato F., "The Organization of Trade", pp. 165-166:

լորը: Եվ վերջապես, դրանք կրթական հիմնայի գործիքներ էին՝ անկախ այն բանից՝ հասցեագրված են սկսնակ, թե փորձառու վաճառականներին[1]:

Չնայած առևտրական տեղեկատվության տարածման այս նոր տարբերակների արդյունավետությանը՝ նամակագրությունը, որ վաճառականների կյանքում իր ունեցած նշանակությամբ հայտնի էր դեռ նախորդ շրջանից, շարունակում էր պահպանել իր կարևորությունը նաև վաղ արդի դարաշրջանում: Առևտրական նամակների կենսունակության գաղտնիքը պետք է փնտրել մի քանի առավելությունների մեջ: Նախ՝ ի տարբերություն հաղորդակցության մյուս միջոցների՝ միայն նամակագրական ցանցի միջոցով էր հնարավոր տարածել այնպիսի կարևոր նորություն, ինչպիսին վստահելիությունն ու համբավը կորցրած վաճառականների մասին լուրն էր: Երկրորդ՝ նամակները շարունակում էին մնալ միակ արդյունավետ միջոցը առևտրական գործընկերների հետ գործնական, երբեմն՝ գաղտնի տեղեկատվություն փոխանակելու համար: Եվ երրորդ՝ համաշխարհային առևտրի ընդլայնման պայմաններում իրենց գործակալների գործունեությունը հսկելու այլ միջոց, քան նամակագրությունը, վաճառականները չունեին[2]: Նամակագրությունն, այսպիսով, ամենևին էլ ետին պլան չմղվեց տեղեկատվության հանրային տարածման եղանակների առաջացման պայմաններում:

Այս ամփոփ անդրադարձից հետո ծագում է հետևյալ հարցադրումը՝ տեղեկատվության տարածման ո՞ր ուղիներն են գործել Նոր Ջուղայի առևտրական ցանցում: Ինչպես Սեբուհ Ասլանյանի ուսումնասիրությունն է ցույց տալիս, գլխավոր եղանակը, որով հայ վաճառականները փոխանակել են «առևտրի գաղտնիքները», նամակագրությունն էր[3]: Ընդ որում, հենց իրենք՝ վաճառականներն էլ ժամանակին փորձել են արժևորել նամակները: Այսպես՝ 1711 թվականին Նոր Ջուղայում բնակվող Շահրիմանյան ընտանիքի ներկայացուցիչներից մեկը նամակ է ուղարկում Լիվոռնո՝ իր տոհմակից Պետրոսին և գանգատվում, որ վերջինիս նախորդ նամակում «ոչ առքի խաբար կայ, ոչ ծախսի»: Ակնկալելով ստանալ իրենց ընտանիքի առևտրական գործարքներին վերաբերող նորություններ՝ նամակագիրը հատուկ ընդգծում է. «Սովդագարին գրին այն առքն եւ ծախին այ»[4]: Թեև ուշադրությունից դուրս մնացած, սակայն խիստ հետաքրքրական ու տպավորիչ են նաև Եղիա Կարնեցու դիտարկումները վաճառականի «գրին այի», այն է՝ նամակի էության մասին: Եղիան, որը

[1] Տե՛ս **Harreld D.**, նշվ. աշխ., էջ 82-83:

[2] Տե՛ս **Trivellato F.**, "Merchants' Letters", pp. 81-89:

[3] Տե՛ս **Aslanian S**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 86-120:

[4] Archivio di Stato di Venezia, Documenti Armeni, busta 2. Նամակի վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Սեբուհ Ասլանյանը (տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 99):

տարիներ շարունակ զբաղվել էր առևտրական գործունեությամբ, իսկ ապա աշխատանքի էր անցել ֆրանսիական Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղում, 1718 թվականի հուլիսի 5-ին իր եղբայր Հարությունին հղած նամակում խորհուրդներ է տալիս նամակներ կարդալու ու շարադրելու տեխնիկայի մասին: Խորհուրդներից առաջինը վերաբերում է ստացված յուրաքանչյուր նամակը պարբերաբար՝ 2-3 օր շարունակ ընթերցելուն. «Մին էլ քո հրամանուցն մին պատուէր տամ, լաւ միտըտ պահէ, շատ շահէ և օգուտ. թէ իմն, թէ այլոց բարեկամաց, որ մին գիր գուգայ քեզ, մին երկու անգամ կարդայ երկու երեք օրն մին անգամ, դերա ամեն մի կարդալուց մին ուրիշ պարաթ խոսք գիմանաս»[1]: Պատասխան նամակը շարադրելու ընթացքը ներկայացնելուց հետո էլ Եղիան տալիս է հետևյալ հրահանգը. «Եւ էն գրին պատասխանն արիր, վրան գրէ թէ՝ էս գրէ պատասխանն գրկեցի, յետո գիրն պահէ»[2]:

Նամակագրության կանոնները, որոնք Եղիա Կարնեցին արծարծում էր իր խորհուրդներում, վաղուց ի վեր դարձել էին հայ վաճառականների առօրյա գործունեության անբաժան մասը: Նամակագրական հավաքածուները, որ մեզ են հասել 17-18-րդ դարերում ապրած հայ վաճառականներից, ոչ միայն հաստատում են ասվածը, այլև հավելյալ հետաքրքրական դիտարկումների հնարավորություն տալիս: Այսպես՝ Հայրապետ դի Մարտինից, որը սերում էր Նոր Ջուղայից Վենետիկ տեղափոխված Վելիջանյանների տոհմից, մեզ են հասել բազմաթիվ նամակներ, որոնց քանակը մոտավոր հաշվարկներով հասնում է 2000-ի: Թվում է, թե սա ամենամեծ անհատական նամակագրական հավաքածուն է հայկական առևտրական աղբյուրների շարքում: Գերազանցապես Վենետիկի պետական արխիվում պահպանված այս վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայրապետ դի Մարտինը ոչ միայն խնամքով հավաքել է ստացված նամակները, այլև 12 առանձին մատյաններում ընդօրինակել 1694-1709 թթ. ընթացքում իր ուղարկած բոլոր նամակների պատճենները: Այս տեսանկյունից բնութագրական օրինակ է նաև հենց իր՝ Եղիա Կարնեցու դիվանը, որը պահպանվել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: Տարբեր անձանցից ստացված նամակները Եղիան խմբավորել է 25 թղթապանակների մեջ, իսկ 1718-1724 թթ. իր ուղարկած նամակները արտագրել 4 մատյանների մեջ: Անձնական նամակագրական արխիվ ստեղծելու վաճառականների այս ջանքերի հետևում թաքնված էր 2 հանգամանք: Նախ՝ այդպիսով նրանք ստեղծում էին առևտրական տվյալների իրենց բազան, և երկրորդ՝ նամակներն ունեին իրավական ուժ՝ անկախ նոտարական վավերացումից:

[1] *Եղիա Կարնեցու դիվանը (Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության)*, կազմ.՝ Ա. Աբրահամյան և Ռ. Աբրահամյան, Երևան, 1968, էջ 32 (ընդգծումը մերն է – Ս.Թ.):

[2] Նույն տեղում:

Առևտրական ձեռնարկ-դասագրքերը հայ վաճառականների տեղեկատվության երկրորդ կարևոր աղբյուրն էին: Վաճառականական տպագիր գրականության առաջնեկը 1675 թվականին Մարսելում հրատարակված «Արհեստ համարողութեան» գիրքն էր: Հաջորդ նշանավոր հրատարակությունը Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» ձեռնարկն էր՝ հրատարակված 1699 թվականին Ամստերդամում: 17-18-րդ դդ. սահմանագծին հայկական տպարաններում լույս ընծայվեցին նաև տոմարացույցներ, բառարաններ և այլ գրքեր, որոնց տիտղոսաթերթերին հայ հրատարակիչներն ամրագրում էին համանման ձևակերպումներ՝ «ի պէտս Հայկազունեաց վաճառականաց»: Տպագիր գրականությունից բացի՝ հայ վաճառականներն ունեին ձեռագիր առևտրական ձեռնարկներից օգտվելու հնարավորություն: Դրանց ամենահայտնի օրինակները Կոստանդ Ջուղայեցու դասագրքերն էին:

Նամակագրությունը և տպագիր ու ձեռագիր ձեռնարկ-դասագրքերն այն երկու առանցքներն էին, որոնց շուրջ կայանում էր տեղեկատվության կամ, ինչպես Կլոդ Մարկովիցն է բնորոշել, «ամենաթանկ ապրանքի»[1] շրջանառության համակարգը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում, մի դարաշրջանում, երբ «լավ տեղեկացված լինելը նույնիսկ ավելի կարևոր էր, քան լավ կրթված լինելը»[2]: Հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարար»-ը, որը սկսեց հրատարակվել Մադրասում 1794 թվականից, ծրագրային նպատակ ուներ իր էջերում ամփոփելու նաև առևտրական տեղեկատվություն[3]: Դրանով, փաստորեն, տեղայնացվում էին տնտեսական թերթերի ու դրանց հիման վրա երևան եկած լրագրերի եվրոպական ավանդույթները, սակայն այդ ժամանակ Նոր Ջուղայի ցանցն արդեն մի քանի տասնամյակ է, ինչ անկում էր ապրել:

Բ. Վաճառականական էթիկան ու խորհուրդները «Աշխարհաժողով»-ում

Կոստանդ Ջուղայեցին իր վաճառականական ձեռնարկ-դասագրքերից մեկում՝ «Աշխարհաժողով»-ում, հետևյալ խորհուրդն էր տալիս հայ վաճառականներին. «Զամենայն առուտ և տուրտ գրեա՛յ, գրեա՛յ և գրեա՛յ, էս օրէն վաղն մի՛ ձգեր և հմիկէս պախն մի՛ ձգեր»[4]: Առևտրական գործարքների մասին ամբողջ տեղեկատվությունը գրի առնելու Կոստանդ Ջուղայեցու այս հորդորը արձագանքն էր վաճառականական միջավայրում ձևա-

[1] Բնորոշման համար տե՛ս Markovits C., նշվ. աշխ., էջ 82, 219:
[2] **Braudel F.**, Civilization and Capitalism, 15th-18th Century, vol. 2, p. 409.
[3] Տե՛ս *Ազդարար*, 1794 թվական, թիվ 1, «Առաջաբանութիւն», էջ 4: Հմմտ. տե՛ս **Միքայելյան Մ.**, *Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը*, Երևան, 2016, էջ 24, 49:
[4] Տե՛ս այս գրքում, էջ 103:

վորված այն սովորույթային նորմի, որի համաձայն՝ հատուկ հաշվեմատյաններում վաճառականը պարտավոր էր գրանցել իր կատարած գործարքների, նույնիսկ՝ առօրյա ծախսերի ամեն մի մանրուքը: Բարոյագիտական ու առևտրական բնույթի համանման մի շարք խորհուրդներ մեկտեղելով իր ձեռնարկ-դասագրքում՝ Կոստանդ Ջուղայեցին հայ վաճառականներին ապահովում էր «առևտրական գիտության»[1] մի այնպիսի ոլորտի մասին համապարփակ տեղեկատվությամբ, որը կարելի է բնորոշել որպես վաճառականական էթիկա:

«Աշխարհաժողով» առևտրական երկի խրատական հատվածների ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցել վաճառականի բարոյական նկարագրի թեմատիկայի խորքերը, ինչի քննարկումները սկիզբ են առել դեռևս 14-րդ դարի իտալական ու իսպանական առևտրական ձեռնարկներում: Սքոլաստիկայի նշանավոր ներկայացուցիչ Թովմա Աքվինացին վաճառականներին համարում էր արհեստավորների ու գյուղացիների նկատմամբ ստորադաս խավ՝ իր մոտեցումը հիմնավորելով սուրբգրային մեջբերումներով[2]: Ընդամենը 1-2 հարյուրամյակ անց հասարակական կյանքում ունեցած գերակատարության շեշտակի մեծացումը վաճառականների համար ապահովեց սոցիալական ավելի բարձր դիրք: Ինչպես դիպուկ կերպով արձանագրել է Պիեռ Ժուանիքը, ուշ միջնադարում «կեղտոտ ոտքերով վաճառականին փոխարինում էր գրիչը ձեռքին գործարարը»[3]: Ժակ Սավարին, որն իր առևտրական դասագիրքը[4] շարադրել է Լուի XIV-ի դարաշրջանում՝ ֆինանսների նախարար Ժան Բատիստ Կոլբերի պատվերով ու հովանավորությամբ, արձագանքելով ընթացող փոփոխություններին, իր երկի թե՛ վերնագրում ու թե՛ բուն տեքստում շրջանառության մեջ դրեց բոլորովին նոր հասկացություն՝ բնորոշելու համար իր ժամանակների վաճառականներին. նախորդ դարերի վաճառականներին հիշեցնող marchand գործածական բառի փոխարեն նա նախապատվությունը տվեց négociant բառին, քանի որ վերջինս վերաբերում էր միմիայն հեռագնա առևտրով զբաղվող վաճառականներին[5]: Պատահական չէ, որ արդեն «Վերածննդի ժամանակաշրջանում ոչ ոք չէր հիշում մասնագիտությունների

[1] Բնորոշման համար տե՛ս Hoock J., նշվ. աշխ., էջ 148:
[2] Տե՛ս **Aurell J.**, "Reading Renaissance Merchants' Handbooks: Confronting Professional Ethics and Social Identity", ed. by J. Ehmer and C. Lis, *The Idea of Work in Europe from Antiquity to Modern Times*, London, 2009, pp. 86-87:
[3] **Jouanique P.**, "Three Medieval Merchants: Francesco di Marco Datini, Jacques Coeur, and Benedetto Cotrugli", *Accounting, Business and Financial History*, vol. 6, no. 3, 1996, p. 273.
[4] Տե՛ս **Savary J.**, *Le parfait négociant ou Instruction générale pour ce qui regarde le commerce des marchandises de France et des pays étrangers*, Paris, 1675:
[5] Տե՛ս **Trivellato F.**, *The Promise and Peril of Credit: What a Forgotten Legend about Jews and Finance Tells Us about the Making of European Commercial Society*, Princeton, 2019, p. 100:

ստորճանակարգությունը՝ հաստատված Թովմա Աքվինացու կողմից»[1]: Ուշ միջնադարի եվրոպական հասարակություններում վաճառականների սոցիալական դիրքի աննախադեպ բարձրացումն իր արտահայտությունն էր գտնում առևտրական երկերում, որոնցում էլ ստորճանաբար ծավալվում էր բարոյագիտական քննարկում վաճառականի կերպարի մասին: Այդ քննարկումներն ուղեկցվում էին յուրատեսակ բարոյական կոդեքսի ձևավորմամբ, որը շարունակեց արդիական թեմա մնալ նաև այն հեղինակների համար, որոնք առևտրական ձեռնարկներ էին շարադրում ավելի ուշ շրջանում 17-18-րդ դարերում: Այս տեսանկյունից Կոստանդ Ջուղայեցին բացառություն չէր: Ընդհակառակը, «Աշխարհաժողով» ձեռնարկում, ինչպես կտեսնենք ստորև, նա ոչ միայն կարևոր տեղ է հատկացնում վաճառականի կերպարի բարոյափիլիսոփայական ընկալումներին, այլև ներկայացնում վաճառականական էթիկայի միևնույն նորմերը, որոնք հանդիպում են եվրոպական համանման աշխատություններում:

Բացի այդ, առևտրական ձեռնարկները դիտարկվել են որպես գերազանցապես տնտեսական պատմության աղբյուրներ, ինչի հետևանքով, ըստ ուսումնասիրողներից մեկի ձևակերպման, դրանց «արտատնտեսական» բովանդակությունը մնացել է ստվերում[2]: Նույնը վերաբերում է նաև Կոստանդ Ջուղայեցու երկերին, որոնց հետազոտությունը պահանջում է համալիր մոտեցում ու պատշաճ ուշադրություն այդ տնտեսական աշխատությունների ոչ տնտեսական հատվածների նկատմամբ:

Եվ վերջապես, Կոստանդ Ջուղայեցու խրատական խորհուրդներն անհրաժեշտաբար պետք է ուսումնասիրվեն վաճառականի բարոյական նկարագրի՝ դեռևս ուշմիջնադարյան աշխատություններում սկիզբ առած քննարկումների հենախորքի վրա: Դա, իր հերթին, հնարավորություն է տալիս հայկական վաճառականական ձեռնարկի հետազոտությունը տեղափոխելու 14-18-րդ դարերի եվրոպական առևտրական երկերի հետ համադրության ու համեմատության հարթություն:

Վաճառականական խորհուրդները «Աշխարհաժողով»-ի կառույցում:
«Աշխարհաժողով» առևտրական դասագիրքը վաճառականների համար առավել գրավիչ և ընկալելի դարձնելու Կոստանդ Ջուղայեցու ցանկությունն իր կնիքն է դրել կառուցվածքի վրա: «Աշխարհաժողով»-ը շարադրված է երկու վաճառականների միջև ընթացող երկխոսության ձևաչափով: Իր կուտակած առևտրական հսկայական տեղեկատվությունը Կոստանդ Ջուղայեցին ներկայացնում է որպես պատասխան այն հարցերին, որոնք իրար տալիս են զրուցակից վաճառականները: Ընդ որում, երկի առաջին կեսում պատասխանողի դերում հայտնված վաճառականը երկրորդ

[1] Aurell J., նշվ. աշխ., էջ 86-87:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 76:

հատվածում հանդես է գալիս որպես ունկնդիր: Այդպիսով՝ մատուցվող նյութը գրեթե հավասարաչափ կիսվել է հեղինակի կողմից, և վաճառականներից յուրաքանչյուրը դարձել է երկխոսության լիարժեք մասնակից: Ֆրանչեսկա Տրիվելլատոյի դիտարկումն այն մասին, որ «չնայած ամեն նամակի անհատական բնույթին՝ առևտրական նամակագրությունն իրականում պետք է կարդացվի որպես բազմաձայն խոսակցություն, ոչ թե երկխոսություն»[1], ամբողջովին վերաբերում է նաև Կոստանդ Ջուղայեցու շարադրած վաճառականական զրույցին, որի երևակայական մասնակիցը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում ներգրավված ողջ հայ վաճառականությունն էր:

«Աշխարհաժողով»-ն անմիջապես սկսվում է զրուցակից վաճառականներից մեկի հարցով՝ «Ո՛վ եղբայր, վաճառակա՞ն ես, թէ՞ կուզես վաճառական լինել»[2]: Պատասխանն արդեն իսկ թույլ է տալիս հեղինակին անցնել ծրագրված նյութի ներկայացմանը. «Այո՛, եղբայր, վաճառականի որդի եմ, կամիմ վաճառական լինիմ: Ունե՞ս ինչ մի խրատ օգտի վասն իմոյ շահաւէտութեան»[3]: Դրան հետևում են «սուրբ գրոց և բազմայշրջիկ ծերոց» բարոյախրատական խորհուրդները, որոնք մեծ ծավալ չեն զբաղեցնում: Զրուցակիցը, սակայն, չի բավարարվում ստացած պատասխանով և անմիջապես հղում է հաջորդ հարցը՝ «Բարի հրամայեցեր, եղբա՛յր բարի և հիմաստուն: Այլ եւ ունե՞ս ինչ մի խրատ վասն ի պէտս գնելոյ և վաճառելոյ»[4]: Այս անգամ վաճառականն իր պատասխանում ներկայացնում է այնպիսի խորհուրդներ, որոնք անմիջականորեն առևտրական գործունեության են առնչվում:

Բարոյական ու առևտրական բնույթի խորհուրդներից հետո վաճառականների զրույցը կենտրոնանում է համաշխարհային առևտրի շուկաների մասին զուտ առևտրական տեղեկատվության վրա, որի կարիքն ունեին հեռագնա առևտրում ներգրավված վաճառականները: Երկի երկրորդ մասում խոսքը փոխանցվում է զրույցի մասնակից մյուս վաճառականին: Վերջինս շարունակում է տեղեկատվության ներկայացումը՝ բարոյախրատական խորհուրդներից հետո նկարագրելով առևտրական շուկաները[5]: Այսպիսով՝ «Աշխարհաժողով»-ը շարադրված է որպես երկու վաճառականների զրույց, որի ժամանակ նրանք փոխանակում են ինչպես խրատական խորհուրդներ, այնպես էլ՝ զանազան երկրների մասին բացառիկ տվյալներ: Հատկանշական է, որ վաճառականներից յուրաքանչյուրն իր խոսքն

[1] Trivellato F., “Merchants' Letters”, p. 89.

[2] Տե՛ս այս գրքում, էջ 101:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, 102:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 128-157:

սկսում է խրատական խորհուրդներով, ապա անցնում առևտրի առավել ծավալուն մասին՝ համաշխարհային առևտրական շուկաներին: Սա հիշեցնում է եվրոպական վաճառականական ձեռնարկների բավականին տարածված կառուցվածքը, որոնց ներածական հատվածները ևս նախատեսված էին բարոյագիտական խորհուրդների համար:

Բարոյախոսական խորհուրդները «Աշխարհաժողով»-ում: Ինչպես եվրոպական, այնպես էլ հայկական վաճառականական ձեռնարկներում բարոյախոսական խորհուրդների առկայությունը պայմանավորված էր վաճառականական գործի՝ որպես արհեստի ընկալումներով, ինչը ենթադրում էր ոչ միայն գիտելիք, այլև հմտություններ ու անձնական որակներ: Պատահական չէ, որ 14-րդ դարի մի իսպանական ձեռնարկում վաճառականական գործը սահմանվում էր որպես «արհեստ, որ նախորդում է բոլոր արհեստներին»[1]: Անձնական հատկանիշներն ու առաքինությունները դիտարկվում էին որպես առևտրական հաջողության նպաստող գործոններ, ուստի ձեռնարկներում կարևոր տեղ էր հատկացվում բարոյական արժեքների արմատավորմանը վաճառականների մտածողության մեջ: Հետազոտողներից մեկի դիպուկ դիտարկման համաձայն՝ առևտրական ձեռնարկներում տարածված էր ուղերձ այն մասին, որ «բարոյական առաքինությունն ու մասնագիտական առաքինությունը նույն մետաղադրամի երկու կողմերն են վաճառականական գործի մեջ»[2]: Համապատասխանաբար՝ տնտեսական անհաջողություններն ուշմիջնադարյան աշխարհընկալմամբ բացատրվում էին վաճառականի բարոյական անկմամբ[3]:

Իր բարոյական խրատներում Կոստանդ Ջուղայեցին երբեմն տալիս է աստվածաշնչյան հղումներ: Ավածի օրինակներ են նրա բարոյագիտական պատգամները «կայ խրատ ի սուրբ գրոց»[4] և «քանզի Սողոմոն խրատէ զամենեսեան»[5] արտահայտություններից հետո: Ինչո՞վ է պայմանավորված վաճառականական երկում սուրբգրային մեջբերումների առկայությունը: 18-րդ դարի սկզբին շարադրված 'Speranders Negotiant' խորագրով գերմանական առևտրական ձեռնարկում նույնպես հեղինակը, ընդդիմանալով հանդերձ դրամական շահը մերժող եկեղեցական մոտեցմանը, օգտագործում է կրոնական երևակայություն՝ հիմնավորելու համար առևտրական այս կամ այն վարքագիծը[6]: Ինչպես նշում է Դանիել Ռաբուցցին, տվյալ դեպքում «կրոնական երևակայությունը ծառայում է վաճառական-

[1] Aurell J., նշվ. աշխ., էջ 77:
[2] Նույն տեղում, էջ 78:
[3] Տե՛ս Todeschini J., "Theological Roots of Medieval/Modern Merchants' Self-Representation", ed. by M. Jacob and C. Secretan, *The Self-Perception of Early Modern Capitalists*, New York, 2008, p. 32:
[4] Տե՛ս այս գրքում, էջ 101:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 129:
[6] Տե՛ս Rabuzzi D., նշվ. աշխ., էջ 175:

ների շահերին»[1]: Նույնը պետք է ասել նաև Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի մասին: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ կրոնական մտածողությունը չէր նահանջել իր ազդեցիկ դիրքերից, ու կրոնական երկերն էլ ամենևին խորթ չէին վաղ արդի դարաշրջանի հայ վաճառականների համար: Իր առևտրական, ապա նաև՝ դիվանագիտական գործունեությունը 18-րդ դարի առաջին քառորդին ծավալած Եղիա Կարնեցու գրադարանի ցուցակները հիանալի հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հայ վաճառականի մտավոր ու գրական նախընտրությունների մասին: Նրա գրքերի ցանկում, մեծաքանակ բառարաններից, տոմարական ու առևտրական աշխատություններից բացի, փոքր թիվ չեն կազմում նաև կրոնական գրքերը[2]: Այնպես որ՝ աստվածաշնչական մեջբերումները լիովին տեղավորվում էին 17-18-րդ դարերի վաճառականական ընկալումների տիրույթում:

Ինչ վերաբերում է բուն բարոյախոսական խրատներին, ապա դրանց մեջ առաջին հերթին ուշադրություն է գրավում հետևյալ շարքը. «Մի՛ լինիր ստայխօս, մի՛ լինիր քուֆրատու, մի՛ լինիր զրկող, մի՛ լինիր ուխտազանց, որ է եղբարազանց, մի՛ լինիր երդումնակեր, մի՛ լինիր բարկացող, մի՛ լինիր ինքնակամ և ինքնահաճ»[3]: Փաստորեն, վաճառականի բարոյական նկարագրից, ըստ հեղինակի, պետք է բացառվեն որոշակի հատկանիշներ, որոնք թվում է, թե վերցված են Աստվածաշնչից Կոստանդ Ջուղայեցու որոշակի բնորոշմամբ: Հատկանշական է, որ աստվածաշնչյան պատվիրանների նմանողությամբ հեղինակն իր պատգամները ներկայացնում է արգելական հրամայական եղանակով և ձևակերպում դրանք որպես յուրօրինակ «վաճառականական պատվիրաններ»: Պետք է նկատել, սակայն, որ դրանք մեծ մասամբ համատեղելի չէին վաճառականական կյանքի հետ: Միջնադարյան զրույցներում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դիպաշարեր, որոնցում վաճառականները հանդես են գալիս վերոհիշյալ մերժելի հատկանիշներով: Դրանցում վաճառականի կերպարի անբաժան մաս են համարվում ստախոսությունն ու սուտ երդվելը, որոնք «վասն սովորութեան առ վաճառականս թեթև համարին և կամ թէ ոչինչ»[4]: «Ազնիւ վաճառականք» զրույցում քահանային իրենց մեղքերը խոստովանելիս երկու վաճառականներ բացատրում են, որ ճշմարտախոսությունն ամենևին չի տեղավորվում առևտրի սահմաններում. «Ո՜վ հայր, եթէ ի առ և տուրս

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս **Զուլալյան Մ.**, նշվ. աշխ., էջ 69-74:
[3] Տե՛ս այս գրքում, էջ 101-102:
[4] **Սրապյան Ա.**, *Հայ միջնադարյան զրույցներ*, Երևան, 1969, էջ 160:

ոչ երդումք և ոչ սուտ ասեմք, չկարեմք բնաւ ապրել... Քանզի կկորուի աշխատանքն մեր, թէ ոչ սուտ ասեմք երդում չուտեմք և սուտ չասեմք»[1]:

Կոստանդ Ջուղայեցին իր ձեռնարկի հասցեատեր վաճառականությանը պատգամում է լինել խոնարհ, իմաստուն ու համբերատար. «Լե՛ր հեզ և խոնարհ, երկայնամիտ և համբերող: Եւ որչափ որ գիտուն լինես, հարց և ուսիր, որ աւելի ես գիտենաս, և որչափ որ բարձրանաս, դու քեզ խոնարհ կալ, քան զամենայն»[2]: Այս անձնական որակները վաճառականի նկարագրի պարտադիր բաղադրիչներ են դիտարկվում նաև եվրոպական առևտրական գրականության մեջ: Այս տեսանկյունից դիտելի է, որ «Չորս ընկերք ճանապարհորդք» հայերեն միջնադարյան զրույցում «վասն գալեայ և պատահարաց» քննարկման ժամանակ վաճառականը հետևյալ միտքն է արտահայտում. «Իմաստութիւնն ու խելքն ի վեր է, քան զամէնն»[3]: 1632 թ. հոլանդացի Կասպար վան Բերլեն «Իմաստուն վաճառականը» ճառում նկատում էր, որ վաճառականը կարողանում է առաքինությունը չարիքից տարբերել այնպես, ինչպես լավ ապրանքը վատից[4]:

«Աշխարհաժողով»-ի խորհուրդներից մեկը վերաբերում է գինու չափավոր օգտագործմանը. «Եթէ գինի ամէնևին ոչ ըմպես, լավ ես, քան զամենայն ըմպող, բայց եթէ ըմպես, սակաւ ըմպեա՛յ, քանզի բազումք են կորեալ ի արբեցութեան»[5]: Գինու չարաշահման պատճառով առևտրական գործերը ձախողած «բազումք»-ի մեջ է, օրինակ, իր օրագրական երկով հայտնի Զաքարիա Ագուլեցու եղբայր Շմավոնը: Վերջինս Թավրիզում կորցնում է իր գումարը, քանի որ, ինչպես պատմում է Զաքարիան, «խանս այս Շմաւոնս կու տանի, գինի խմեցնել կու տայ»[6]: Եվրոպական առևտրական ձեռնարկները հորդորում են հեռու մնալ նաև որկրամոլությունից, քանի որ, ինչպես օրինակ 14-րդ դարի իսպանական ձեռնարկում է նշված, «որկրամոլությունը մի կաթսա է, որտեղ եփվում են բոլոր չարիքները»[7]: Բենեդետտո Կոտրուլյին ևս իր իտալերեն ձեռնարկում հորդորում է չափավոր լինել ուտելու ու խմելու մեջ[8]:

[1] **Մելիք-Օհանջանյան Կ.**, *Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից*, Երևան, 1957, էջ 40-41:

[2] Տե՛ս այս գրքում, էջ 102:

[3] **Մելիք-Օհանջանյան Կ.**, նշվ. աշխ., էջ 48:

[4] Տե՛ս **Barlaeus C.**, *The Wise Merchant*, Critical text and translation by Corinna Vermeulen, Amsterdam, 2019, p. 89:

[5] Տե՛ս այս գրքում, էջ 129:

[6] **Զաքարիա Ագուլեցի**, էջ 160-161: Հմմտ. **Խաչիկյան Շ.**, *Նոր Ջուղայի հայ վաճառականությունը*, էջ 122-123:

[7] **Aurell J.**, նշվ. աշխ., էջ 79:

[8] Տե՛ս **Cotrugli B.**, *The Book of The Art of the Trade*, Translated by John Francis Phillimore, Cham, 2007, p. 137:

Վաճառականներին ուղղված խորհուրդներում կարևորվում է նաև եկեղեցական արարողություններին ու հանգանակություններին եռանդուն մասնակցությունը. «Ժամի և աղօթքի միր կացի՛ր, ուրախ և ողորմութենէ մի՛ ձանձրանալ»[1]: Այս իմաստով որպես կրոնապաշտ ու առատաձեռն վաճառականների տիպական օրինակներ («գլուխ և փիր վաճառականաց»[2])՝ Կոստանդ Ջուղայեցին իր երկի վերջում հիշատակում է Մարխաս և Կասպար անուններով հայտնի վաճառականներին, որոնց մասին միջնադարյան զրույցը բազմիցս է հանդիպում հայերեն ձեռագրերում: Ավելին՝ նրանց պատմության հիման վրա Հակոբ Արծկեցին գրել էր նաև չափածո ստեղծագործություն դեռևս 15-րդ դարի երկրորդ կեսին[3]:

Այդ զրույցի գլխավոր խիստ համառոտ գծերով ներկայացնելու դեպքում կստանանք հետևյալ պատկերը. Մարխասը, որը ծագումով Սսից էր ու զբաղվում էր վաճառականությամբ, մահից առաջ իր ունեցվածքը կտակում է Քրիստոսին: Նրա ընկեր Կասպարը, որը, հակառակ գործընկերոջ եկեղեցասիրության, կռապաշտ էր, գնում է Անտիոք, որտեղ եկեղեցում Քրիստոսը նրան «երևեցաւ տեսլեամբ» ու վերցրեց իր հասանիքը: Այդուհետ Կասպարը ևս մկրտվում է ու ջերմեռանդորեն հարում քրիստոնեական դավանանքին[4]: Կոստանդ Ջուղայեցին այս պատմության մանրամասների մեջ ամենևին չի խորանում, այլ բավարարվում է նշելով, որ Քրիստոսի գալուստից առաջ վաճառականական գործը չէր արժանացել աստծո հավանությանը և միայն «յետ Քրիստոսի Աստուծոյ մերոյ գալըստեան Մարխաս և Կասպար հաճուցին Աստուծոյ վասն միայմտութեան և պարկեշտութեան, որ և ամ յամէ ամենայն վաստակոց իւրեանց տասանորդս տային քահանայից և աղքատաց կարօտելոց»[5]: Առանձին ուսումնասիրության կարիք ունեցող այս պատմության նպատակը թվում է պարզ՝ քրիստոնեության ու վաճառականության յուրատեսակ հաշտեցումը: Դրա հիմնական ուղերձն այն է, որ վաշխառության, դրամական շահի հետապնդման, այդպիսով նաև՝ առևտրական գործի նկատմամբ մխտական վերաբերմունք

[1] Տե՛ս այս գրքում, էջ 103:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 158:

[3] Տե՛ս **Ակինեան Ն.**, *Մատենագրական հետազօտութիւններ: Քննութիւն եւ բնագիր*, հ. Դ, Վիեննա, 1938, էջ 129-130:

[4] Տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Դ, Երևան, 1946, էջ 263-264: Այս պատմությունը հանդիպում է նաև Հայսմավուրքում՝ Մինաս եգիպտացու վարքի հետ միասին (տե՛ս, օրինակ, ՄՄ, ձեռ. թիվ 1511, թ. 149ա-151բ): Դա պատահական չէ, քանի որ միջնադարում Մինասը համարվում էր ճանապարհորդների ու վաճառականների հովանավորը: Հետաքրքիր է, որ լեհահայոց Աստվածատուր պատրիարքը 1589 թվականի մի կոնդակում մաղթում էր. «Յիսուս Քրիստոս օրհնեսցէ զճանապարհորդս ձեր՝ ընդ Մարխասայ և Կասպարայ՝ շահավետաւ և արդիւնաւոր արասցէ» (**Ալիշան Ղ.**, *Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաքեալք յաւելուածովք*, Վենետիկ, 1896, էջ 232):

[5] Տե՛ս այս գրքում, էջ 157-158:

ունեցող քրիստոնեությունը[1] բոլորովին այլ դիրքորոշում ունի եկեղեցասիրությամբ ու եկեղեցական առատաձեռնությամբ աչքի ընկնող վաճառականների նկատմամբ: «Բաշխանայից ու աղքատաց կարօտելոց» համար առևտրական եկամտից մասնաբաժին սահմանելով, փաստորեն, լեգիտիմացվում էր դրամական շահի ցանկությունը: Ինչպես նկատում է Մայքլ Էնդրյուսը, վաճառականական շրջանակների համար «բարեգործությունը ծառայում էր որպես միջոց լեգիտիմացնելու իրենց հարստությունը ու հաստատելու իրենց նոր կարգավիճակը»[2]:

Կոստանդ Ջուղայեցու այս խորհուրդը դրված է եղել հայ վաճառականության առօրյա գործունեության հիմքում: Վենետիկի Սուրբ Խաչ եկեղեցու ընծայամատյանը, որում պարբերաբար կրկնվում է «Աստուած ողորմի հայոց վաճառականացն, որ եառուն...» հավաքական արտահայտությունը, ինչպես նաև՝ թվարկվում են անհատական ընծաներով հանդես եկած վաճառականների անունները, հնարավորություն է տալիս լիարժեք պատկերացում կազմելու հայ վաճառականության եկեղեցական առատաձեռնության մասին մի եկեղեցու օրինակով[3]:

«Աշխարհաժողով»-ի առևտրական խորհուրդները: Իտալացի Բենեդետտո Կոտրուլյին 15-րդ դարում հետևյալ խորհուրդն էր տալիս վաճառականներին. «Հիշիր՝ ինչպես շատերն են ասել՝ առևտուրը չի փնտրում ոչ մի խորհուրդ, և ես ինքս որդեգրել եմ այս նշանաբանը»[4]: Նա բացատրում է նաև, որ առևտրական որոշումները հիմնված են այնպիսի տեղեկատվության ու հաշվարկի վրա, որը տարածման ենթակա չէ, ուստի տնտեսական գործարքների միակ պատասխանատուն տվյալ վաճառականն է, իսկ առևտրական խորհուրդները կարող են միայն համընդհանրական բնույթ կրել: «Աշխարհաժողով»-ի խրատական հատվածներում ամփոփված են նաև այնպիսի առևտրական խորհուրդներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել վաճառականի առօրյայի ու գործունեության որոշակի սկզբունքների մասին:

Կոստանդ Ջուղայեցին, ինչպես տեսանք, իր դասագրքի ընթերցողներին հորդորում է գրի առնել բոլոր տեսակի գործարքները. «Զամենայն առքն և տուրն գրեա՛յ, գրեա՛յ և գրեա՛յ, էս օրէն վաղն մի՛ ձգեր և հմէկէս

---

[1] Միայն 16-րդ դարում աստվածաբաններից Ժան Կալվինը, մի քանի սահմանափակումներով հանդերձ, դրամական փոխառություններում ընդունեց շահի գաղափարը (տե՛ս Graafland J., "Calvin's Restrictions on Interest: Guidelines for the Credit Crisis", *Journal of Business Ethics*, vol. 96, no. 2, 2010, p. 233-248):

[2] Andrews M., *The Culture of Commerce Compared: A Comparative Study of the Ideal of the Businessman in China and England, c. 1600-1800*, Thesis, London School of Economics and Political Science, p. 104 (http://etheses.lse.ac.uk/151/, մուտքումը՝ 04.01.2020).

[3] Տե՛ս **Տեր-Վարդանեան Գ.**, *Վենետիկի Հայոց Սուրբ Խաչ եկեղեցու Ընծայամատեանը*, էջ 70-81:

[4] **Cotrugli B.**, նշվ. աշխ., էջ 56:

պախն մի՛ ձգեր»[1]: Հայ վաճառականները խստորեն հետևում էին այս կարգին՝ առևտրական գործառնությունները ամփոփելով մի քանի տեսակի հաշվեմատյաններում: Ինչպես Լևոն Խաչիկյանի ու Հակոբ Փափազյանի՝ Հովհաննես Ջուղայեցու հաշվեթղթերի վրա հիմնված ուսումնասիրությունն է ցույց տալիս, հայ վաճառականները պահում էին արագ գրառումների համար նախատեսված հուշատետրեր, ամենօրյա գործարքներն արտացոլող օրհաշվի մատյաններ ու առանձին ապրանքների կամ անհատների վերաբերող հաշվեթերթեր: Հովհաննես Ջուղայեցին դրանք համապատասխանաբար անվանում է «եայդաշտ», «ռուզնամայ» և «քաթա»: Դրանց հիման վրա գործակատարը պատրաստում էր խոջային ներկայացվելիք մայր մատյանը կամ, Հովհաննես Ջուղայեցու խոսքով, «կարմիր չիլաւոր դըֆտար»-ը[2]: Այս հաշվապահական փաստաթղթերի թվարկումից հետո պատահական չի թվում Ռոբերտ Լոպեսի պնդումը վաճառականներին «թղթի ու թանաքի ամենամեծ սպառողները» համարելու մասին[3]: Նրա համոզմամբ՝ XIII դարից Իտալիայում, իսկ մի փոքր ավելի ուշ ժամանակներից սկսած՝ այլ երկրներում առևտրական գրությունները գերազանցում էին ցանկացած այլ նպատակով գրված տեքստերին[4]: Այս գնահատականը կարելի է վերաբերելի համարել նաև հայոց պատմության համար, միայն թե ժամանակային հստակ սահմանափակմամբ՝ 17-րդ դարի երկրորդ քառորդից մինչև 18-րդ դարի կեսերը:

Թե՛ տնտեսական ու թե՛ առօրյա բոլոր ծախսերը գրանցելու կանոնը, որը վաճառականական գործունեության պարտադիր պայման էր սովորութային իրավունքի ուժով, մի քանի տասնամյակ անց պետք է ստանար նաև իրավական կոնկրետ ձևակերպում՝ տեղ գտնելով Աստրախանի հայոց դատաստանագրքի մեջ: Դրա 14-րդ գլուխը, որն ուներ «Վասն վաճառականական կարգաց» խորագիրը, նվիրված էր խոջաների ու նրանց գործակատարների փոխհարաբերությունների իրավական կարգավորմանը: Մասնավորապես՝ գործակատարների համար 11-րդ հոդվածը սահմանում էր բոլոր տեսակի առևտրական գործարքներն արտացոլող հաշվեմատյաններ կազմելու պահանջ. «Ամենայն ընկեր պարտաւորի վասն իւրաքանչիւր առևտրոյ գրել մի ըստ միոջէ օրինաւոր գիրք հաշուի... ճշմարտութեամբ, առանց զանցառութեան ժամանակի»[5]:

---

[1] Տե՛ս այս գրքում, էջ 103:

[2] *Հովհաննես Տէր-Դաւթեան Ջուղայեցու հաշուետումարը*, էջ 58-59: Այս անվանումները համագործածական չեն եղել. Եղիա Կարնեցին, օրինակ, իր հաշվապահական մատյանների մի տեսակն անվանել է «ձեռցանոց» (**Դանեղյան Լ.**, «Բացառիկ ժառանգություն (Դիվան Եղիա Մուշեղյանի. գիտական նկարագրություն)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ*, հ. XX, Երևան, 2001, էջ 253):

[3] Տե՛ս **Lopez R.**, "Stars and Spices: The Earliest Italian Manual of Commercial Practice", *Explorations in Economic History*, vol. 7. no. 1-2, p. 35:

[4] Տե՛ս **Lopez R.**, "The Culture of the Medieval Merchant", *Medieval and Renaissance Studies*, vol. 8, 1979, p. 54:

[5] **Պողոսյան Ֆ.**, *Դատաստանագիրք Աստրախանի հայոց*, Երևան, 1967, էջ 132:

Հատկանշական է, որ Կոստանդ Ջուղայեցու այս հորդորն իր զուգահեռը պետք է ունենար նաև Եվրոպայում շարադրված առևտրական երկերում: Այսպես օրինակ՝ արդեն հիշատակված Բենեդետտո Կոտրուլյին նկատել է, որ եթե «վաճառականի համար գրիչը ծանրություն է», ապա նա վաճառական չէ[1]: Իսկ Դինո Կոմպանյին «խնամքով ու մրիպումներից զերծ հաշիվներ գրելը» համարում էր վաճառականի ամենաբարձր առաքինությունը[2]:

«Աշխարհաժողով»-ում արձանագրված առևտրական խորհուրդներից մյուսը վերաբերում է վաճառականական միջավայրում այնպիսի վճռորոշ գործոնի, ինչպիսին վաճառականի համբավն էր. «Անփորձ մարդի փոխ և ամանաթ մի՛ տալ, եթէ դու ըստուքիւ գիտենաս, թէ լէվ ախտիբարի մարդ այ, ա (1), բ (2), գ (3) հոգի էլ հարց և փորձ, թախսիս արա՛յ, ապայ թէ խոյ փոխ տուր, խոյ ամանաթ թամարկով և վկայիւ»[3]: Կոստանդ Ջուղայեցու մատնանշած «լէվ ախտիբար»-ը, այն է՝ լավ համբավն անձի նույնականացման արդի տեխնոլոգիաների բացակայության պայմաններում այն անհրաժեշտ պայմանն էր, որ հիմք էր ստեղծում առևտրական համատեղ գործունեության համար: Անվստահելի գործընկերոջ համբավ ունեցող վաճառականները մեկընդմիշտ զրկվում էին առևտրական գործարքների մաս կազմելու հնարավորությունից: Լիովին օրինաչափ է, որ նամակագրական հոսքերով տարածվող տեղեկատվության կարևոր խումբ էին կազմում այն առևտրականների մասին տվյալները, որոնք հանդես էին եկել որպես զանազան խարդախությունների դերակատարներ[4]:

Վաճառականական կյանքի անբաժան մաս կազմող կողոպուտի ու ավազակության վտանգների առնչությամբ է «Աշխարհաժողով»-ի մյուս խորհուրդը. «Մի՛ երթիցես միայն ի ճանապարհ, անփորձ և անճանաչ ընկերի հետ մի՛ նստիցես և մի՛ քնիցես. զուշէ սպանցէ քեզ և տայէ պինչս քո»[5]: Դրամական միջոցների ապահովության մասին ևս Կոստանդ Ջուղայեցին հարկ է համարում հիշեցնել իր ընթերցողներին. «Եւ քիսակիտ բերանն բաց մի՛ թողուլ, կապէ՛ և մրէ՛»[6]: Վաճառականի ապրելակերպի ու գործունեության նրբերանգների այս ծանոթությունը պայմանավորված էր առևտրական փորձառությամբ, որը Կոստանդ Ջուղայեցին կուտակել էր առնվազն 1660-1670-ական թթ.՝ իր ձեռնարկը շարադրելուց երկու տասնամյակ առաջ:

[1] Cotrugli B., նշվ. աշխ., էջ 70:
[2] Lopez R., "The Culture of the Medieval Merchant", p. 58.
[3] Տե՛ս այս գրքում, էջ 103:
[4] Տե՛ս Aslanian S., *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 97, idem, "The Salt in a Merchant's Letter": The Culture of Julfan Correspondence in the Indian Ocean and the Mediterranean", *Journal of World History*, vol. 19, no. 2, 2008, pp. 150-154:
[5] Տե՛ս այս գրքում, էջ 102:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 103:

Այսպիսով՝ «Աշխարհաժողով» ձեռնարկում ուշադրություն են գրավում վաճառականներին ուղղված խորհուրդները: Ֆրանսիական այդպիսի հատվածները մեծ տարածում ունեին եվրոպական առևտրական երկերում՝ նպատակ ունենալով ձևավորելու վաճառականական էթիկայի ու բարոյական կոդեքսի նորմեր և այդպիսով նաև՝ ճանապարհ հարթելու Ժակ Սավարիի բնորոշած «պատվարժան առևտրի» ("commerce honorable") համար[1]: Կոստանդ Ջուղայեցին իր բարոյախոսական խորհուրդներով միանում է ուշմիջնադարյան եվրոպական առևտրական ձեռնարկներում սկիզբ առած այն քննարկումներին, որոնք ծավալվում էին վաճառականական էթիկայի նորմերի ու վաճառականի բարոյական նկարագրի ընկալումների շուրջ: Հայկական ձեռնարկ-դասագրքի հեղինակը հստակ ծանոթություն է հանդես բերում այդ քննարկումներին: Աստվածաշնչյան պատգամների նմանողությամբ նա իր բարոյախոսական խորհուրդների մի մասը ձևակերպում է որպես յուրատեսակ «վաճառականական պատվիրաններ»: Ունենալով վաճառականական կենսագրություն ու հիմնվելով սեփական փորձառության վրա՝ իր առևտրական բնույթի խորհուրդներում Կոստանդ Ջուղայեցին հմտորեն ներկայացնում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին հաջող առևտրական գործունեություն ծավալելու համար:

Գ. Համաշխարհային առևտրի կենտրոնների նկարագրությունը «Աշխարհաժողով»-ում

«Աշխարհաժողով»-ում վաճառականների երկխոսությունը, ինչպես արդեն նշվեց, բարոյախոսական ու առևտրական խորհուրդներից հետո կենտրոնանում է համաշխարհային առևտրի կենտրոնների թեմատիկայի վրա: Դրա համար ուղի է հարթում վաճառականներից մեկի հետևյալ խնդրանքը՝ «Լաւ և ըստուգ չոյեցայ ի խրատոց քոց, եղբա՛յր: Կու խնդրեմ, որ քաղաքէ քաղաք, երկրէ յերկիր ապրանաց ապրանքի ուպչուեթիւնն՝ չափէրն, քաշէրն, փողէրն և ըստակնէրն և ամենայն ինչ ես սասացես»: Ի պատասխան այդ խնդրանքի՝ ներկայացվում են համաշխարհային առևտրական ուղիների վրա գտնվող տարբեր երկրների «չափէրն, քաշէրն, փողէրն, ըստակնէրն»՝ չափի, կշռի, դրամական համակարգերը, ինչն ուղեկցվում է նաև այլ թեմաների ընդգրկմամբ, այդ թվում՝ տեղի ժողովուրդների էթնոմշակութային պատկերի նկարագրությամբ: Ընդ որում, եթե վաճառականներից մեկը հանդես է գալիս Մանիլայից ու Հնդկաստա-

[1] Hoock J., "Le phénomène Savary et l'innovation en matière commerciale en France aux 17e et 18e siècles", *Innovations et renouveaux techniques de l'Antiquité à nos jours, Actes du colloque international de Mulhouse (septembre 1987)*, Mulhouse, 1989, pp. 113-123, Trivellato F., *The Promise and Peril of Credit*, p. 105.

նից մինչև Իրան ընկած առևտրական կենտրոնների ծավալուն նկարագրությամբ[1], ապա մյուսը շարունակում է տեղեկատվության ներկայացումը՝ անդրադառնալով Ռուսաստանից մինչև Ամստերդամ ու Լոնդոն ձգվող առևտրական ուղիներին[2]: Այսպես՝ զրուցակից վաճառականների միջոցով Կոստանդ Ջուղայեցին հերթով ներկայացնում է Հեռավոր Արևելքից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած երկրների մասին բազմաթիվ տեղեկություններ և այդպիսով իր ձեռնարկը վերածում վաղ արդի շրջանից մեզ հասած յուրատեսակ հայկական հանրագիտարանի:

Համաշխարհային առևտրի կենտրոնների նկարագրությունը Կոստանդ Ջուղայեցին սկսում է մի ցանկով, որում ներառված են 72 երկրներ ու քաղաքներ: Այդ ցուցակում ընդգրկված բնակավայրերը ոչ միայն ծանոթ էին Ջուղայեցի վաճառականներին, այլև դրանց մի մասում արդեն իսկ հաստատվել էին հայկական առևտրական համայնքներ: Այդ ցանկում ներառված էին Ջուղայեցի վաճառականների համար առևտրական հետաքրքրություն ներկայացնող երկրներն ու քաղաքները, որոնք մեկ անգամ չէ, որ նրանք այցելել էին գործնական նպատակներով: Այլ կերպ ասած՝ «Աշխարհաժողով»-ում բերված բնակավայրերի այդ ցանկը ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ Նոր Ջուղայից սերող հայ վաճառականների ստեղծած համաշխարհային առևտրական ցանցի աշխարհագրությունը: Ինչպես այս կապակցությամբ եզրակացնում է Հ. Տեր-Հովհանյանցը, «բազում վաճառականութեանն Ջուղայեցւոց ձգեցաւ ընդ ամենայն աշխարհ»[3]: Հենց նա էլ առաջին անգամ հրատարակել է խնդրո առարկա ցուցակը՝ որոշակի փոփոխություններով ու կրճատումներով հանդերձ[4]:

Կոստանդ Ջուղայեցու մատնանշած այդ 72 բնակավայրերը արտացոլում են այն 4 ուղղությունները, որոնցով ծավալվել էր Նոր Ջուղայի հայ վաճառականությունը՝ Հնդկական օվկիանոսի ավազան, միջերկրածովյան նավահանգիստներ, Հյուսիսարևմտյան Եվրոպա ու Ռուսական կայսրություն[5]: Ջուղայեցի հեղինակի ներկայացրած ցուցակի ամենաարևելյան կետը Մանիլա քաղաքն է, որը 1571 թվականից անցել էր Իսպանիայի վերահսկողության տակ և դարձել իսպանական արևելահնդկական գաղութների կենտրոնը: Մանիլայի հետ հայ վաճառականների առևտրական կապերը սկիզբ էին առել առնվազն 1660-ական թթ.: Մասնավորապես՝ խոջա Մինասի Hopewell նավի ուղևորությունը Հնդկաստանից դեպի Մանիլա 1668 թվականին սկիզբ դրեց իսպանական այդ գաղութում հայերի հաստա-

[1] Տե՛ս այս գրքում, էջ 107-127:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 130-157:

[3] **Տէր-Յովհանեանց Յ.**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 159:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 159-160: Հատվածական հրատարակության ու քննարկման համար տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 56, **Herzig E.**, նշվ. աշխ., էջ 150:

[5] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 2-3:

գա առևտրական գործունեությանը[1]: Կոստանդ Ջուղայեցու ցուցակագրած բնակավայրերի շարքում ծայր արևմուտքում գտնվում էր «Ենգիդունիէ» երկիրը, այն է՝ «Նոր աշխարհը», որով հայտնի էր ամերիկյան աշխարհամասը[2]: Այս անունը ծանոթ էր նաև Զաքարիա Ագուլեցուն. «Դարցեալ Ժէյգիդունի նավերն Կալիս կու բառնան, Կալիս կու դադարկացնին. այլ տեղ չկայ. այս քաղաքս Իսպանօյի այ, մեծ կղզի է»[3]: Հայկական վաճառականական ձեռնարկի հեղինակը Նոր աշխարհի կողքին հարկ է համարել ավելացնել «ոսկին տեղն դուս գկոյ» արտահայտությունը՝ ակնարկելով ոսկու պաշարների այն հսկայական քանակությունը, որ ամերիկյան աշխարհամասից հոսում էր դեպի Եվրոպա սկսած 16-րդ դարի կեսերից: Մանիլայից մինչև Ամերիկա ձգվող հայ վաճառականության առևտրական կապերի այս նկարագրությունը հիշեցնում է շուրջ 50 տարի առաջ՝ 1630-ական թթ., հայ պատմագիր Գրիգոր Դարանաղցու արած դիտարկումը «ընդ ամենայն երեսս երկրի» ջուղայեցիների տարածված լինելու մասին[4]:

Առանձնակի ուշադրության ու պարզաբանման կարիք ունեն նաև Կոստանդ Ջուղայեցու այն խոսքերը, որոնք անմիջապես հաջորդում են ջուղայեցիների առևտրական հետաքրքրության կիզակետում գտնվող բնակավայրերի թվարկմանը. «Նումրայ հը (72)-ըս կու նմանի հը (72) արմաւենի ծառոյն և երկոտասան աղբիւրաւն, որ Մովսէս մարգարէն և իսրայէլացիքն նովաւ անցուցանէին մինչև խ (40) ամ»[5]: Այսպես՝ հեղինակն իր ներկայացրած 72 բնակավայրերը համեմատության մեջ է դնում այն 72 արմավենիների ու 12 աղբյուրների հետ, որոնց կողքով անցել են հրեաները Մովսես մարգարեի առաջնորդությամբ: Այս համեմատությունը հիշեցնում է Հին Կտակարանի Ելից գրքի այն հատվածը, որում պատմվում է եգիպտական գերությունից հրեաների ազատվելու ու վերադարձի ճանապարհին Էլիմ կոչվող տարածքում հանգրվանելու մասին (Ելից, 15:27): Այդ տարածքում ժամանակավորապես ապաստանելու հրեաների ցանկությունը պայմանավորված էր նպաստավոր բնական պայմաններով. շրջակայքում առկա էին 70 արմավենիներ ու 12 աղբյուրներ: Այլ կերպ ասած՝

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 59:

[2] Հմմտ. տե՛ս **Մատթէոսեան Վ.**, «Դրուագներ ԺԵ-ԺԹ. դարերու հայ-սպանական պատմամշակութային կապերէն», *Բազմավէպ*, 2003, թիւ 1-4, էջ 203:

[3] **Զաքարիա Ագուլեցի**, էջ 16:

[4] Տե՛ս *Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ*, հրատ.՝ Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 457-458: Պատմագիրը, աշխարհի զանազան մասերում ջուղայեցի վաճառականների սփռվածությունը շեշտելով ու մանրամասն ներկայացնելով հանդերձ, հավանաբար անձնական դրդապատճառներով պայմանավորված, բացահայտորեն արգահատելի վերաբերմունք է հանդես բերում նրանց հանդեպ՝ նրանց գործունեությունը փնովելով «ի պատճառս ագահութեան ախտից եւ մթերման գանձուց յաւելուածութեան» (տե՛ս նույն տեղում, էջ 458):

[5] Տե՛ս այս գրքում, էջ 106-107:

Էլիմը, ուր ապաստանեցին հրեաները, օազիս էր շրջակա անապատի պայմաններում: Հետաքրքիր է, որ Հին Կտակարանի 70 արմավենիները Կոստանդ Ջուղայեցու երկում դարձել են 72՝ համապատասխանեցվելով հեղինակի ներկայացրած բնակավայրերի թվաքանակին: Իսկ ի՞նչ էր թաքնված Կոստանդ Ջուղայեցու այս համեմատության ու ակնարկի ներքո: Ըստ երևույթին, Ջուղայեցի հեղինակի այս դիտարկման կապակցությամբ հավանական է կարծել, որ ինչպես հրեաները ազատվեցին եգիպտական գերությունից ու գտան ժամանակավոր հանգրվան, այնպես էլ Շահ Աբբաս I-ի բռնագաղթի հետևանքով «իրանական գերության» մեջ հայտնված հայերը ազատվեցին գերությունից՝ իրենց առևտրական ցանցով տարածվելով գրեթե ողջ աշխարհում: Եթե հրեաները հանգրվանեցին Կարմիր ծովի արևելյան ափին տեղորոշվող Էլիմ երկրում, ապա հայերը սփռվեցին 4 աշխարհամասերի վրա ընկած 72 քաղաքներում ու երկրներում:

Հայերի ու հրեաների միջև համեմատության անցկացումը, պատմական հիմքերից բացի, պայմանավորված էր նաև այն իրավիճակով, որ առկա էր հեղինակի ապրած շրջանում: Երկու ժողովուրդները, զրկված լինելով պետականությունից ու սեփական պետության հովանավորությունից, ստեղծել էին վաղ արդի դարաշրջանի ամենամեծ ու ամենահաջողակ առևտրական ցանցերը[1]: Այսպես՝ «առևտրական սփյուռք» հասկացությունը, որ մեծ տարածում ստացավ հատկապես Ֆիլիպ Քըրթընի «Միջմշակութային առևտուրը համաշխարհային պատմության մեջ» հանրահայտ աշխատության լույսընծայմամբ[2], լավագույնս բացատրվում ու մեկնաբանվում էր հենց հայկական ու հրեական օրինակների վրա:

Եգիպտական գերությունից հրեաների ազատումը հայկական առևտրական ցանցի տարածման հետ համադրելու Կոստանդ Ջուղայեցու մոտեցումն իր հետաքրքրական զուգահեռն ունի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում: Այսպես՝ 17-րդ դարում ընդօրինակված պատմական նյութերի մի ժողովածուում գրիչը, որպես կարևոր աղբյուր, արտագրել է նաև նախագաղափար ձեռագրի՝ 1608 թ. վերաբերող հիշատակա-

[1] Համաշխարհային առևտրում երկու ժողովուրդների գերիշխող դիրքերի առթիվ կարևոր է նշել, որ Ֆեռնան Բրոդելն հայերին ու հրեաներին համարում էր «ժամանակին ամբողջ Միջերկրական ծովը վերահսկած հարուստ իտալացի բուրժուազիայի իրավահաջորդները» (**Braudel F.**, *The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II*, vol. 2, London, 1972, p. 728): Սրանով հանդերձ, պետք է նկատել, որ ինչպես հրեաների, այնպես էլ այլ ժողովուրդների հետ հայերի առևտրական առնչությունների հարցը դեռևս սպասում է իր հետազոտողներին, քանի որ, նյութի առատությամբ պայմանավորված, հայ վաճառականության պատմության ուսումնասիրությունը դեռևս կենտրոնացած է «ներհայկական» երևույթների պարզաբանման վրա: Ինչպես իրավացիորեն նկատել է Ֆրանչեսկա Տրիվելլատոն, «քիչ բան է հայտնի հայերի ու օտարների առևտրական հարաբերությունների մասին» (**Trivellato F.**, *The Familiarity of Strangers: The Sephardic Diaspora, Livorno, and Cross-Cultural Trade in the Early Modern Period*, New Haven, 2009, p. 151):

[2] Տե՛ս **Curtin Ph.**, *Cross-Cultural Trade in World History*, Cambridge, 1984:

րանը, որի հեղինակը, ըստ Ներսես Ակինյանի, Ներսես եպիսկոպոս Բաղիշեցին է[1]: Հիշատակարանում ներկայացվում է 17-րդ դարասկզբին հայերի բռնագաղթը դեպի Սեֆյան Իրանի տարբեր շրջաններ իր բոլոր մանրամասներով: Հայերին բռնագաղթեցնելու Շահ Աբբաս I-ի հրամանը հեղինակը համեմատության մեջ է դնում ավելի քան 2000 տարի առաջ Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի հրամանով կատարված հրեաների գաղթի հետ. «(Շահ Աբբասը – Ս.Բ.) հրաման ետ անօրէն գաւրաց իւրոց, թէ զազգն Հայոց վարեցէ՛ք յերկիր Պարսից, որպէս ի հնումն Նաբուգոդոնոսոր զհրէն Իսրաէլ ի Բաբելոն»[2]: Հիշատակարանում հայկական ու հրեական բռնագաղթերի համեմատությունն ընդգծվում է նաև տարբեր մարգարեների՝ Հին Կտակարանից վերցված մեջբերումներով[3]: Այսպիսով՝ եթե այս հիշատակարանի հեղինակը համեմատություն է անցկացնում հայերին ու հրեաներին պատմական տարբեր դարաշրջաններում պատուհասած գաղթերի միջև, ապա Կոստանդ Ջուղայեցու համեմատությունը վերաբերում է այդ տեղահանությունների հետևանքների հաղթահարմանը:

72 երկրներից ու քաղաքներից կազմված ցուցակը հեղինակի համար ունեցել է նաև ծրագրային նշանակություն, քանի որ առևտրական շուկաները նկարագրելիս նա հետևել է դրանում բերված հաջորդականությանը: Այսպես՝ շարժվելով արևելքից արևմուտք՝ Կոստանդ Ջուղայեցին հերթականությամբ ներկայացնում է այն ամբողջ բազմակողմանի տեղեկատվությունը, որը նա կուտակել էր ջուղայեցի վաճառականների առևտրական հետաքրքրությունների առանցքում գտնվող բնակավայրերի վերաբերյալ: Ավելորդ չէ նշել, որ ըստ առանձին քաղաքների ու երկրների՝ «Աշխարհաժողով»-ում ներկայացված այդ տեղեկատվությունը թողնում է մերօրյա հանրագիտարանային բառահոդվածների տպավորություն՝ միայն թե առանց այբբենական հաջորդականության սկզբունքի պահպանման:

Յուրաքանչյուր բնակավայրի «առևտրական բառահոդվածում» կենտրոնական տեղ են զբաղեցնում առաջին հերթին չափագիտական ու դրամագիտական տվյալները: Դա արձագանքն էր այն առօրեական մտահոգությունների, որ ունեին վաճառականները ցանկացած երկիր գործնական ուղևորություն ձեռնարկելիս: Տվյալ երկրի չափի, կշռի ու դրամի միավորների մասին տեղեկությունների ձեռքբերումը հաջող առևտրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայմաններից էր: Կոստանդ Ջուղայեցին իր երկում ի մի է բերել այս կարգի տվյալները՝ նպատակ

[1] Տե՛ս **Ակինեան Ն.**, *Բաղէշի դպրոցը 1500-1704: Նպաստ մը Հայոց եկեղեցւոյ պատմութեան եւ մատենագրութեան*, Վիեննա, 1952, էջ 184-185:

[2] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա., կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 285:

[3] Տե՛ս **Gureghian A.**, "Eternalizing a Nation: Armenian Hishatakarans in the Seventeenth Century", *Church History*, vol. 79, no. 4, 2010, pp. 790-791:

ունենալով բավարարելու հայ վաճառականների շրջանում առկա տեղեկատվական պահանջարկը: Այսպես՝ Փեգու պատմական անվամբ[1] հիշատակելով ժամանակակից Բուրման (Բիրմա) կամ Մյանմարը՝ Կոստանդ Ջուղայեցին իր ընթերցողներին տեղեկացնում է այդ երկրի քաշի միավորի՝ վիսայի, ապա՝ դրամի գործածության մասին. «Եւ Փէգու և Աւայ, որ է Փէգուայ թագաւորին փէխթախտն, և իւրեանց վայիաթներէն քաշն վէսայ է, որ ա (1) վէսէն ճ (100) թիքալ է, որ ա (1) թիքալն գ (3) մսխալ այ, և ալիշվէրիշ փողն անաքայ ոսկի այ և արծաթ է և պղինձ այ, որ մին թիքալ ոսկուն գինն ծ (50) վէսայքաշ քասայ է, որ էս քաէս անաքայ խուրդայ փող այ՝ լէվի, վաւի գորայ՝ գայ եվել, գայ պակաս»[2]: Հատկանշական է, որ Ջուղայեցի հեղինակն ուշադրություն է հրավիրում նաև Փեգուում շրջանառվող քաշի միավորի ու դրա իրանական համարժեքի՝ հայ վաճառականներին ծանոթ մսխալի հարաբերակցության վրա՝ դյուրացնելու համար իր ընթերցողների առևտրական գործառնությունները: Նույն նպատակն է իր առաջ ունեցել Ժակ Սավարի դը Բրյուլոնը (1657-1716), երբ իր «Առևտրի ընդհանրական բառարան» բազմահատոր գրքի՝ Փեգուին նվիրված բաժնում գրելով վիսայի ու թիքալի մասին՝ դրանք համեմատել է եվրոպացի վաճառականներին ծանոթ կշռի միավորների՝ վենետիկյան լիբրայի ու ունցիայի հետ[3]:

Ինչ վերաբերում է երկրի դրամական համակարգին, ապա «ալիշվէրիշ փողն անաքայ ոսկի այ և արծաթ է և պղինձ այ» տեղեկությամբ Կոստանդ Ջուղայեցին նկատի է ունեցել, որ Փեգուում «սքայ»՝ հատված դրամ չէր գործածվել, և փոխարենը դրամական հարաբերությունները կարգավորվել

[1] Փեգու տեղանունը հիշատակվել է նաև հայկական այլ աղբյուրներում՝ երբեմն շփոթության տեղիք տալով հայ հետազոտողների շրջանում: Մի օրինակ. Տեր Բաղդասար Գասպարյանն իր արժեքավոր ուղեգրության մեջ գրում է. «Չինումաչինու և Մանիլաց, Բաղնաւոց, Պլպլանկաց, *Փէկուց*, Հաւուց, Պրթքալաց, Հապաշաց եւ Մսրաց, Կոստանդնուպօլսաց, և Ռուսաց աշխարհէն, այլ և Պապէյացու աշխարհէն, այսինքն Բաղդատոյ, Բասրաուց և ամենայն Արապացուց աշխարհէն և Պարսիացուց աշխարհէն, այլ և ամենայն բանդարու նաւքն և ապրանքն և մարդիկն գան և բերեն Կալկաթայ» («Տէր Բաղդասար Գասպարյան Ճուշեցի. Մաղկարաղ աշխարհացոյց», տպագրության պատրաստեց՝ **Հ. Քյուրտյան**, *Բանբեր Մատենադարանի*, հ. 9, Երևան, 1969, էջ 332, ընդգծումը մերն է – Ս.Բ.): Բնագրի ծանոթագրություններում Բիրմայի պատմական անունը՝ Փեգուն (Փէկու), ներկայացվել է որպես անհայտանալի տեղանուն, իսկ ինչ վերաբերում է բացառական հոլովով գրված «Հաւուց» անվանը, ապա այն նույնացվել է Ջավայի կամ Ցավայի հետ, մինչդեռ գործ ունենք 1635 թվականից երկրի մայրաքաղաք հռչակված Ավա քաղաքի հետ:

[2] Տե՛ս այս գրքում, էջ 114:

[3] Տե՛ս **Jacques Savary des Brûslons**, *Dictionnaire universel de commerce, d'histoire naturelle & des arts & métiers*, tome 5, Copenhague, 1765, p. 1250: Բառարանի մասին մանրամասն տե՛ս **Perrot J.-C.**, "Les dictionnaires de commerce au XVIIIe siècle", *Revue d'histoire moderne et contemporaine*, vol. 28, no. 1, 1981, pp. 37-40:

են ձուլյլ ոսկով, արծաթով ու պղնձով[1]: Սա հիշեցնում է նույն ժամանակահատվածում Տիբեթում առկա վիճակը, որտեղ ևս առևտուրը կազմակերպվել է կա՛մ ապրանքափոխանակությամբ, կա՛մ ձուլյլ ոսկով ու արծաթով: Թե դա ինչ խոչընդոտներ կարող էր հարուցել առևտրական գործունեության համար, հստակ երևում է Հովհաննես Ջուղայեցու հաշվեմատյանում: Այսպես՝ վաճառականները պետք է հստակ պատկերացում ունենային մետաղի հարգի մասին, այլապես առևտրական գործարքի ժամանակ ցածրորակ արծաթ վերցնելու ու ֆինանսական կորուստ կրելու հավանականությունը մեծ էր, հատկապես որ Տիբեթում (հավանաբար նաև՝ Փեգուում) պետական պաշտոնյաներն իրենք էին ներգրավված մետաղի հարգի տնտեսական մեքենայություններում: Ընդունելով միայն բարձր հարգի արծաթ նրանք տալիս էին ցածրորակը և այդպիսով նյութական կորուստներ էին պատճառում: Հենց դա նկատի ուներ Հովհաննես Ջուղայեցին, երբ Տիբեթի կենտրոն Լհասայի մաքսատան պաշտոնյաների մասին իր հաշվեմատյանում կատարում էր հետևյալ գրառումը. «Արծաթ կը տան պակաս, յինք կառուն ավէլի»[2]:

Ավելորդ չէ նշել, որ Փեգուի մասին տվյալների առկայությունը «Աշխարհաժողով»-ում ոչ միայն պատահական չէր, այլև արձագանքն էր այս երկրում հայ վաճառականների՝ արդեն տասնամյակների պատմություն ունեցող առևտրական կապերի[3]: Փեգուում գործունեություն ծավալած հայերի մասին տեղեկությունները սկիզբ են առնում նույնիսկ Հին Ջուղայի ժամանակներից: Ընդ որում, երկրում բնակություն հաստատած հայ բնակչությունը այնքան ներգրավված էր հասարակության քաղաքական ու ռազմական կյանքին, որ Փեգուի թագավորի խորհրդականի պաշտոնը քանիցս վստահվել է հայերին[4]: 17-րդ դարի երկրորդ կեսին առևտրական հարաբերությունների սերտացման օգտին են վկայում բազմաթիվ փաստեր, ինչպես օրինակ՝ 1676 թվականին վերաբերող մի նամակ, որը Լիվոռնո տեղափոխված Շահրիմանյանների հայ կաթոլիկ նշանավոր ընտանիքի ներկայացուցիչները ստացել են Փեգուում գտնվող իրենց գործակալից[5]:

[1] Կոստանդ Ջուղայեցու երկերի շարադրանքից ավելի քան 100 տարի անց Փեգու այցելած Տեր Բաղդասար Գասպարյանը նույնն է վկայում. «Եւ չարսուի և պազարի և քաղաքի դուքանդարն և սովդաքարն և ատափն և առևտուրն միմեանց միանգամայն կանայք են, և մարդ հրամանն չունի որ առուծախս առնէ պազարումն և արծաթ և ոսկի առանց սիկի և առանց գրի և առանց պատկերի դրամօվ խօսին և բրալ առնեն փողին» («Տէր Բաղդասար Գասպարյան Ճուշեցի. Մաղկարաղ աշխարհացոյց», էջ 341):

[2] *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, էջ 51-52:

[3] Պատմական Փեգուի կամ Բուրմայի հայկական առևտրական համայնքի մասին մանրամասն տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 54-56:

[4] Տե՛ս **Պոլատեան Դ.**, «Բրմանայք», *Սիոն*, նոր շրջան, 1959, թիւ 7-8 (յուլիս-օգոստոս), էջ 170-171:

[5] Տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni, busta 2: Նամակի վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Սեպուհ Ասլանյանը (տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 253):

Փեգուի հայկական առևտրական համայնքի վերաբերյալ մեկ այլ հետաքրքրական փաստ. ֆրանսիական արևելահնդկական ընկերության երկու շրջանային տնօրեններից մեկի՝ Ջուղայեցի վաճառական Մարգարա Ավագշենցի եղբայր Հովհաննեսը 1680-ական թթ. իր կնոջ ու երեխաների հետ Հայդարաբադից տեղափոխվել է Փեգու, ինչպես նշել է նրա մյուս եղբայր Հովսեփն իր կտակում[1]:

Ինչպես Փեգուի օրինակով տեսանք, մնացած երկրների ու քաղաքների դեպքում ևս Կոստանդ Ջուղայեցին հետևողականորեն գրանցել է չափագիտական ու դրամագիտական տվյալների այն ամբողջ պաշարը, որը կարող էր հետաքրքրել հայ վաճառականներին: Մի շարք դեպքերում այդ գրանցումներն արժանի են հատուկ ուշադրության: Այսպես՝ եթե Փեգուում առևտուրը կազմակերպվում էր ձուլյ մետաղով, ապա Եթովպիայում այդ գործառույթը կատարում էր աղը: Ինչպես Եթովպիայի մասին տեղեկությունները «բազում և զարմանալիք» բնորոշելուց հետո գրում է Կոստանդ Ջուղայեցին, «Նոցայ երկրին աւքի ծախսի փող չունին մեզ պէս, որ փողի թանխայ աղով առք ծախս կանեն»[2]: Առևտուրը աղով կազմակերպելու մասին այս տեղեկությունն առաջինը չէր հայ մատենագրության մեջ: 1678-1680 թթ. դեպի Եթովպիա կատարած իր ճանապարհորդությունն ուղեգրության մեջ ամփոփած Հովհաննես Թութունջին այս երկրի մասին թողել էր նույնատիպ վկայություն. «Բնաւ ոսկայ չունի, այլ աղով կանեն ալիշ վէրիշն»[3]: Իտալական Մեսինա քաղաքում գործածվող դրամական միավորները ներկայացնելուց հետո էլ Կոստանդ Ջուղայեցին հարկ է համարում իր ընթերցողներին տեղեկացնել, որ քաղաքային իշխանություններն արգելում են կանխիկ փողի դուրսբերումը քաղաքից՝ փոխարենը պահանջելով հեռանալուց առաջ այդ գումարով որևէ ապրանք գնել. «Ամայ թողման չեն, որ նաղդ փող դուս բերես ուրէնց քաղաքէն, կասեն,

[1] Հովսեփ Ավագշենցի կտակը տե՛ս Տեր-Յովհաննեանց Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 198-201: Մարգարա Ավագշենցի ու նրա դատավարության մասին Ս. Ասլանյանի ծավալուն ուսումնասիրությունը՝ Ս. Ասլանեան, «Միջցամաքամասային կենցաղ մը. Ֆրանսական արեւելահնդկական ընկերութեան տնօրէն Մարտիրոս Մարգարայ Աւագշէնցի համաշխարհային մանրապատմութիւնը (1666-1688)», *Հանդէս ամսօրեայ*, 2016, թ. 1-12, էջ 147-272, Aslanian S., "Une vie sur plusieurs continents: Microhistoire globale d'un agent arménien de la Compagnie des Indes orientales, 1666-1688", *Annales: Histoire, Sciences Sociales*, vol. 73, no. 1, 2018, pp. 19-55:

[2] Տե՛ս այս գրքում, էջ 120: Դեռևս 1620 թվականին մի ֆրանսիացի ճիզվիտ գրել է, որ Եթովպիայում աղի խորանարդները «կտրվում էին այնպես, ինչպես բյուրեղապակին. մատի երկարությամբ»: Նա նաև իր զարմանքն է արտահայտել դրամական միջոցները աղով պահելու կապակցությամբ, քանի որ վերջինս մի օր հեշտությամբ կարող էր «ճայթել ու տարրալուծվել ջրի մեջ» (**Braudel F.**, *Civilization and Capitalism, 15th–18th Century*, vol. 1, *The Structures of Everyday Life: The Limits of the Possible*, New York, 1981, p. 442):

[3] **Ալպօյաճեան Ա.**, *Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հաբէշիստան ԺԷ. դարուն*, Գահիրէ, 1946, էջ 5:

Թէ դու քո իքմինն մեզ ծախէ և դու էլ մեզանէ իքմին առ վեր, տար, յուր կուզես՝ դնայ. լէվ ջիգարդար մարդ այ պիտել, որ զոխտիկ նաղդ փող փախցանի դապի դուս: Թէ բռնեցին, փողն բէկլկայ կու զաֆթեն և փողայտէրն քուրակ կտան»[1]: Այսպիսով՝ հայկական վաճառականական ձեռնարկի հեղինակն իր դրամագիտական տեղեկություններում չի շրջանցել որևէ փաստ, որի իմացությունը կարող էր անհրաժեշտ լինել իր ընթերցողներին:

Համաշխարհային առևտրում ներգրավված երկրների ու քաղաքների՝ Կոստանդ Ջուղայեցու պատրաստած նկարագրություններում, չափագիտական ու դրամագիտական տեղեկությունների կողքին, կարևոր տեղ են զբաղեցնում նաև մաքսատուրքերի մասին տվյալները: Այսպես՝ Սեֆյան Իրանից որևէ ապրանք արտահանելիս կամ երկիր ներկրելիս Բանդար Աբբասում, ինչպես և՝ հարակից նավահանգստում վաճառականները պարտավոր էին վճարել մի շարք հարկեր, որոնց մասին է Կոստանդ Ջուղայեցու հետևյալ գրանցումը. «Եւ Բանդար Հաբասումն և Քունկումն շահբանդարին դալալն ապրանքացն գին կառի՝ թումանին ռ (1000) դիան ուշուրն այ, յծ (350) դիան խուրուջն այ, ճիբ (122) դիան ռուսումն այ, ծ (50) դիան նվիսանդի այ, որ քուլի թումանին ռշիբ (1522) դիան խարջ դուս կելնի»[2]: Հնդկաստան ուղևորվելու ճանապարհին 1683 թ. փետրվարին Բանդար Աբբասում մաքսային վճարումներ կատարած Հովհաննես Ջուղայեցին, ինչպես կարելի է տեսնել նրա հաշվեմատյանում, բոլոր նշված 4՝ ուշուր, խուրուջ, ռուսում և նվիսանդի հարկատեսակներից բացի հիշատակում է նաև հինգերորդի մասին՝ դավգ դառուղակի անունով: Կոստանդ Ջուղայեցու երկում բացակայող այս մաքսատուրքը գանձվում էր դառուղայից՝ ոստիկանապետից սապական ստանալու համար: Մասնավորապես՝ Հովհաննես Ջուղայեցին ապրանքի ամեն հակի դիմաց որպես դավգ դառուղակի վճարել է 100 դիան[3]:

«Աշխարհաժողով»-ում չի շրջանցվել նաև միջերկրածովյան նավահանգիստների մաքսատուրքերի խնդիրը: Վենետիկում առևտրական գործունեություն ծավալող վաճառականներին է ուղղված Կոստանդ Ջուղայեցու հետևյալ տեղեկությունը. «Եւ ինչ ապրանք, որ Վանատիկն կու մտի, գումրրուկ չունի՝ ղէրաղ նազարաթին խալջն կտան, և ինչ ապրանք, որ Վանատրկէն դուս կելնի, ճ-ին (100) ժ (10) գումրրուկ կտան ամենայն խալջով»[4]: Ըստ այդմ՝ Վենետիկ ներմուծվող ապրանքներն ազատված էին մաքսավճարներից՝ բացի «նազարաթին խալջ»-ից, մինչդեռ արտահանվող ապրանքների վրա դրված էր 10 % մաքսատուրք: Ի՞նչ էր «նազարաթին

[1] Տե՛ս այս գրքում, էջ 146-147:

[2] Նույն տեղում, էջ 122-123:

[3] Տե՛ս *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, էջ 72:

[4] Տե՛ս այս գրքում, էջ 153:

խալՋ»-ը: Այդ հաստատության ներքո Կոստանդ Ջուղայեցին նկատի է ունեցել բոլոր այն ծախսերը, որոնք վաճառականները ստիպված էին կատարել նախքան Վենետիկ մտնելը «Նազարաթ»-ում, այն է՝ Հին կամ Նոր Լազարետտո կղզիներից մեկում որոշակի ժամանակ արգելափակվելիս[1]: Դրա նպատակը Վենետիկ այցելողներին նախապես բժշկական հսկողության տակ գնելն ու այդպիսով քաղաքը վարակիչ հիվանդություններից զերծ պահելն էր: Այս կարգն այնքան խստորեն էր պահպանվում, որ անգամ «Թագաւորն ալ գայ Թուրքաց՝ պիտոր նազարէթ քաշէ»[2]: Դեռևս 1587 թ. Վենետիկ այցելած Սարգիս արեղան գրում էր. «Հասա ի Նազարաթ. Լ (30) օր Նազարաթ կեցա, անկից ելա, մտա ի Վանտիք»[3]: «Նազարաթի խալՋ»-ի մասին շատ ավելի մանրամասն է 1611 թ. քաղաք այցելած ու 40 օր բժշկական հսկողության տակ վերցված Սիմեոն Լեհացու պատկերավոր նկարագրությունը: Հայ ուղեգրողը դառնությամբ ու զայրույթով է հիշում վենետիկյան լազարետտոյում անցկացրած օրերն ու կրած դժվարությունները: Շատերի նման նա նույնիսկ անգամ չի կարողացել հաղորդակցվել տեղի աշխատակիցների հետ. «Մեք զլեզուս նոցա ոչ գիտէաք եւ ոչ նա զմերն, այլ ձեռօք եւ իշմարով հասկցնէաք, որպէս համր»[4]: Միայն 40 օր անց Սիմեոն Լեհացուն թույլատրել են դուրս գալ կղզուց ու մուտք գործել Վենետիկ. «Եւ իբրեւ կատարեցան աւուրքն սրբոյ քառասուն օր, հանին զմեզ ի դուրս»[5]: Ինչ վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու հիշատակած «Նազարաթի» ծախսերին, ապա դրանցից մեկի մասին է Սիմեոն Լեհացու՝ որպես ականատեսի հետևյալ վկայությունը. «Եւ թէ կերակուր կամ եմիշ ուզէաք, ընդ պատուհանն տային մեզ. եւ մեք զդրամն ընկենուաք»[6]: Ուտելիքի վրա ծախսվող դրամական միջոցներից բացի՝ իրենց հետ տարատեսակ ապրանքներ բերող վաճառականներն ստիպված էին նաև որոշակի գումար տալ տեղի աշխատակիցներին՝ իրենց գույքը ապահով պահելու ու գողության տարածված դեպքերը կանխելու նպատակով[7]:

[1] Վենետիկի հանրային առողջապահության քաղաքականության մեջ կենտրոնական տեղ զբաղեցնող աշխարհում առաջին համաճարակային հիվանդանոցների մասին տե՛ս Crawshaw J., *Plague Hospitals: Public Health for the City in Early Modern Venice*, Farnham, 2012, p. 3:

[2] *Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 50:

[3] Խաչիկյան Լ., «Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը»», *Աշխատություններ*, հ. Ա, Երևան, 2012, էջ 407:

[4] *Սիմեոն Լեհացի*, էջ 50-51:

[5] Նույն տեղում, էջ 53:

[6] Նույն տեղում, էջ 51:

[7] Վենետիկյան լազարետտոներում հայտնված վաճառականների գույքի ու գողության վտանգների մասին մանրամասն տե՛ս Crawshaw J., նշվ. աշխ., էջ 209-228:

Մաքսատուրքերի հետ մեկտեղ վաճառականները նույնքան շահագրգռված էին տեղեկացված լինելու նաև այն ապրանքների մասին, որոնք ապահովում էին եկամտաբեր առևտուր իրենց այցելած երկրներում: Պատահական չէ, որ Ֆեռնան Բրոդելի բնորոշած «շուկայի կարճաժամկետ հետանկարի»[1], այն է՝ ապրանքների առատության կամ սակավության մասին տեղեկությունները կարևոր տեղ են զբաղեցնում «Աշխարհաժողով»-ի համաշխարհային առևտրի կենտրոնների նկարագրություններում: Հաշվի առնելով վաճառականների տեղեկատվական կարիքները՝ Ռուսաստանին նվիրված բաժնում Կոստանդ Ջուղայեցին մանրամասնորեն թվարկել է ապրանքների տեսակներին, որը պահանջարկ էր վայելում Սեֆյան Իրանի ու Ռուսաստանի միջև առևտրում: Այսպես՝ Ռուսաստանում վաճառվող «Աջամըստանայ իքմին»-ի, այն է՝ իրանական ապրանքների թվում էին «Գիլանայ լաքի ղարային և Թարվիզու կարմիր և սեւ նիմռանգ թիմաջն և Թարվիզու հիւած թելն, որ կէսն ալ և կէսն յաճէն ռանգէ և Շամախու ներկած թելն, որ կէսն զամզ և կէսն ճարմակ, գեղին, կանանչ և սեւ»[2]: Ռուսաստանից Իրան արտահանվող ապրանքները, Կոստանդ Ջուղայեցու տեղեկացմամբ, հիմնականում մորթեղեն ու կաշվեղեն էին. «Եւ Մոսկովումն այս ինչս բահամ գկոյ՝ սամրուրն, որ ի (20) ջուխտն ա (1) տօնլուղ այ, և սէվ աղվէսն և զօջանն և սնջէֆն և թլաթինն, որ է բուլղարն, և թալխն և ձկան կեռիքն և ղունդուզ ղարէն և միպակն»[3]: «Աշխարհաժողով»-ի շարադրանքից 2-3 տասնամյակ անց՝ 1711-1718 թթ., Ռուսաստանում առևտրական գործունեություն ծավալած Շահվելու որդի Սարհադը ռուսական տարբեր քաղաքներից իր հետ Իրան էր տանում նույն այն ապրանքները, ինչ ներկայացրել է Կոստանդ Ջուղայեցին[4]: Նույն հետևողականությամբ արձանագրելով նաև այլ երկրներում առքուվաճառքի ենթակա ապրանքները՝ իր երկի վերջում Ջուղայեցի հեղինակը գալիս է այն եզրահանգման, թե թվարկված բոլոր ապրանքներից պահանջարկի առումով ամենաառաջնայինը «աբրիշումն» է՝ մետաքսը, ապա «լօնդրէն»՝ անգլիական մահուդը, և հետո՝ լեղակը. «Այսչափ երկիր և այսչափ ապրանք և այսչափ քար և կշեռք, որ յիշեցինք, ինձ այսպէս թվի, թէ ամենայն ապրանքոց պրիմն, որ է գլուխն, աբրիշումն այ, և թէքրան, որ մէջն, լօնդրէն այ, և սզօնդն, որ է ոտն, լեղակն»[5]: Նկատենք նաև, որ Կոստանդ Ջուղայեցին չի խուսափում նաև տարբեր վայրերի «ամենայն ապրանքոց պրիմ»-ի՝ մետաքսի միջև համեմատություն անցկացնելուց: Օրինակ՝ ներկայացնելով Մեսինայում արտադրվող մետաքսը՝ նա ընդգծում է դրա որակական

[1] Braudel F., *Civilization and Capitalism, 15th–18th Century*, vol. 2, p. 411.

[2] Տե՛ս այս գրքում, էջ 132:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս *Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը*, աշխատասիրությամբ Շ. Խաչիկյանի, Երևան, 1994, էջ 20:

[5] Տե՛ս այս գրքում, էջ 157:

առավելությունը Գիլանի մետաքսի համեմատ. «Ուրընց միջումն հինց լէվ աբրիշում բաշամ գևոյ, որ քանց Գիլանայ աբրիշումն լէվ այ»[1]:

Թե որքան ճշգրիտ է հայկական առևտրական ձեռնարկում ի մի բերված առևտրական տեղեկատվությունը, հստակ երևում է հայ վաճառականների հաշվեմատյաններում ամբարված հարուստ տվյալների հետ համեմատության արդյունքում: Այս առումով լավագույն օրինակը 1682-1693 թթ. Հնդկաստանում, Տիբեթում ու Նեպալում Հովհաննես Ջուղայեցու ծավալած առևտրական գործունեությունն ամփոփող հաշվեմատյանն է: Այսպես՝ 1683 թ. փետրվարին Բանդար Աբբաս նավահանգստով նա Իրանից արտահանում էր 18 ճոթ կամ 738 մետր մահուդ: Ինչպես արդեն տեսանք, ըստ Սեֆյան Իրանի հարկատեսակների մասին Կոստանդ Ջուղայեցու հաղորդած տեղեկատվության՝ նա պետք է վճարեր ապրանքի ընդհանուր արժեքի 15,22 %-ը, տվյալ դեպքում՝ 22 թուման 6017 դիան, մինչդեռ նրա հաշվեմատյանում արձանագրված է շուրջ 1,5 թումանով ավելի գումար՝ 24 թուման 240 դիան[2]*: Ինչո՞վ է պայմանավորված այս անհամապատասխանությունը: Խնդիրն այն է, որ ինչպես նկատել են Լևոն Խաչիկյանն ու Հակոբ Փափազյանը, «հարկային պաշտոնյաները հօգուտ իրենց հաճախ խախտում էին սահմանված հարկային սակագները»*[3]*: Մաքսային աշխատողների կողմից պաշտոնական սակագները կամայականորեն խախտելուց բացի՝ պետք է ուշադրություն դարձնել նաև առևտրական տեղեկատվության հարափոփոխության վրա, քանի որ այն անընդհատ փոփոխվում էր՝ կարիք ունենալով թարմացման ու ճշգրտման: Հենց դրա մասին ահազանգում էր նաև ինքը՝ Կոստանդ Ջուղայեցին, բազմիցս գործածած իր հետևյալ արտահայտությամբ՝ «վախտի զօրայ՝ գայ եվել, գայ պակաս»*[4]*: Սրա զուգահեռ հայկական առևտրական մյուս ձեռնարկի հեղինակի՝ Ղուկաս Վանանդեցու պատկերավոր գնահատականն է. «Ալիշվերիշի բանն աստուածագիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է՝ եւ մարդագիր կանոն, եւ ժամանակաւոր»*[5]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 146: Մետաքսի արտադրությունն ու արտահանումն առանցքային դեր ունեին Մեսինայի ու Սիցիլիայի տնտեսության մեջ և, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, ի հաշիվ մետաքսի արտահանումից ստացվող եկամտի՝ Սիցիլիայի հարավային ու արևմտյան շրջաններից Մեսինան ներկրում էր մեծ քանակությամբ ցորեն, որի պակասն ուներ (տե՛ս **Bottari S.**, "The Port of Messina, 1591-1783", ed. by M. D'Angelo, G. Harlaftis and C. Vassallo, *Making Waves in the Mediterranean, Proceedings of the 2nd MMHN Conference*, Messina, 2010, p. 634): Ինչ վերաբերում է Գիլանի մետաքսին, ապա այն հայտնի էր լեգի կամ լահիջանի անունով և արտադրվում էր հսկայական քանակությամբ՝ ըստ Ադամ Օլեարիուսի՝ տարեկան 800,000 կգ, իսկ ըստ Ժան Շարդենի՝ տարեկան արտադրությունը հասնում էր 1 միլիոն կգ-ի (տե՛ս **Herzig E.**, "The Volume of Iranian Raw Silk Exports in the Safavid Period", *Iranian Studies*, vol. 25, no. 1/2, 1992, p. 61, 75):

[2] Տե՛ս *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, էջ 72:

[3] Նույն տեղում, էջ 38:

[4] Տե՛ս այս գրքում, էջ 111, 125, 130, 138 և այլն:

[5] **Ղուկաս Վանանդեցի**, *Գանձ չափոյ*, էջ 53:

Համաշխարհային առևտրի շուկաների նկարագրությունների հավաստիությունն ավելի տեսանելի կլինի, եթե որոշակի պատկերացում ունենանք Կոստանդ Ջուղայեցու՝ որպես հեղինակի ստեղծագործական աշխատանոցի առանձնահատկությունների մասին: Ամենակարևոր խնդիրը, որ այս տեսանկյունից ծառանում է մեր առաջ, աշխարհի 72 երկրների ու քաղաքների մասին նրա ունեցած տվյալների աղբյուրների հարցն է: Երիտասարդ տարիներին առևտրական գործունեություն ծավալելով միջերկրածովյան նավահանգիստներում՝ Կոստանդ Ջուղայեցին կուտակել էր համապատասխան գիտելիք ու փորձառություն և կարող էր դրա հիման վրա շարադրել Միջերկրական ծովի քաղաք-նավահանգիստների առևտրական նկարագրությունը: Աշխարհի մնացած տարածաշրջանների վերաբերյալ տեղեկությունները հայթայթելիս նա հավանաբար դժվարին խնդիրների պետք է բախվեր: Թե ինչ աշխատանք է նա կատարել այս առումով, հստակ երևում է մի երկրի օրինակով՝ Եթովպիայի «բառահոդվածի» աղբյուրի բացահայտումից: Այսպես՝ Հովհաննես Թութունջիի ուղեգրության հետ «Աշխարհաժողով»-ի բնագրային համեմատությունը կասկածի տեղիք չի թողնում, որ Ջուղայեցի հեղինակը որևէ տարբերակով օգտվել է նշված ուղեգրությունից՝ որպես Եթովպիայի մասին առատ տեղեկությունների աղբյուր.

Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով[1]	*Հովհաննես Թութունջի, Ուղեգրութիւն*[2]
Ամայ երկիրն հինգ տաք այ, որ ամենեքեան մերկ կու շրջեն, բայց մեծամեծերն ա-ա (1-1) ֆութայ կու կապեն:	Մարդիկ ամենեքեան են մերկ եւ բոպիկ, զատ ի մեծամեծացն որ մին ֆութայով ծածկեն:
Ուրէնց երկրումն արծաթ, պղինձ, երկաթ և կլեկ և առհին ոչ գտանվի բնաւ, բայց ոսկի անչափ և անհամար գտանվի, որ ոսկին գ (3) կերպի կու բուսանի, ա (1)՝ որպէս կարմիր աւազ և ա (1)՝ որպէս սիսեռն և բակլայ և ա (1)՝ որպէս ծնեպեկ կու բուսանի ի մէջ ղամշոց:	Ի Հապաշի երկիրն ոչ գոյ բնաւ արծաթ, պղինձ, կլայէկ, արճէն, բայց ոսկի շատ, որ 3 կերպ է. Մինն իբրև զաւազ, 2 որպէս բակլայ և սիսեռն. 3 բուսուն ոսկի որպէս ծնեբեկ ի մէջ ղամիշի:
Նոցայ թագաւորին որպէսութիւնն ասեմ, որ օրէն բ (2) անգամ դիւան կու նստի ժբ (12) ղազով և բ (2) վազիրով, և ինչ դատաստան որ	Իսկ թագաւորն է յոյժ բարեպաշտ և աստուածասէր, և ամէն օր երկու անգամ ի դիւան կու նստի առաւօտ և երեկոյ. 12 ղատով և 2 մեծ վէ-

[1] Տե՛ս այս գրքում, էջ 120-122:

[2] **Ալպօյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 3-11:

լինի, ա (1) օրումն կու կտրեն, որ վաղն չեն գնում:	գիրով, 2 մեծ թուր ի ձեռաց երկու վէգրին: Դատաստանագիրքն առաջեներն, այս օրէն դատաստանն վաղն չեն ձգել:
Առհի ծախսի փող չունեն մեզ պես, որ փողի թանխայ աղով առն ծախս կառնեն:	Բնաւ սխալ չունի, այլ աղով կանեն ալիշվէրիշն:

Այն, որ Եթովպիան ներկայացնելիս Կոստանդ Ջուղայեցու աղբյուրը եղել է Հովհաննես Թութունջիի ուղեգրությունը, հաստատվում է Ջուղայեցի հեղինակի մի անուղղակի ցուցմամբ: Եթովպիայի կշռի միավորների մասին որևէ տեղեկություն չգտնելով՝ նա խոստովանում է, որ «Նոցայ երկրին քաշին որպիսութիւն ոչ կարացաք գտանել»: Եվ իսկապես, հայ հոգևորականի ուղեգրությունը թեև Եթովպիայի մասին ականատեսի հաղորդած տեղեկությունների հարուստ ժողովածու է, սակայն չունի որևէ տվյալ այն մասին, թե ինչ քաշի միավորներ էին գործածվում երկրում: Փաստորեն, բնագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ Եթովպիայի մասին իր տվյալները Կոստանդ Ջուղայեցին քաղել է մեկ այլ հայկական աղբյուրից: Տրամաբանական է, որ նա որոշակի հետազոտական աշխատանք է կատարել նաև մյուս երկրների ու քաղաքների առևտրական նկարագրությունը շարադրելիս, ինչը բարձրացնում է «Աշխարհաժողով»-ի՝ որպես առևտրական տեղեկատվության շտեմարանի վստահելիության աստիճանը:

Այսպիսով՝ իր «Աշխարհաժողով» ձեռնարկը Կոստանդ Ջուղայեցին իսկապես վերածել է աշխարհի մասին տեղեկությունների ժողովածուի: Նա հերթականությամբ ու մանրամասնորեն ներկայացնում է համաշխարհային առևտրում ներգրավված այն երկրներն ու քաղաքները, որոնք ընկած էին Ջուղայեցի վաճառականության անմիջական հետաքրքրությունների կիզակետում, ու որոնց մի զգալի մասում արդեն իսկ հաստատվել էին հայկական առևտրական համայնքներ: Հեղինակի ուշադրությունը սևեռված է գերազանցապես առևտրական տեղեկատվության վրա՝ իր ընթերցողներին ապահովելով աշխարհի տարբեր երկրների չափերի, կշիռների, դրամների, ապրանքների ու մաքսատուրքերի մասին տվյալներով: Մանիլայից մինչև Եվրոպայի ծայր արևմուտք ու ամերիկյան աշխարհամաս ձգվող այդ բնակավայրերից յուրաքանչյուրի նկարագրությունը՝ հիմնված որոշակի հետազոտական աշխատանքի վրա, թողնում է առևտրական հանրագիտարանի բառահոդվածի տպավորություն, իսկ ձեռնարկ-դասագիրքը, ընդհանուր առմամբ, հիշեցնում է աշխարհի մասին յուրօրինակ հայկական հանրագիտարան:

«ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ»-Ը ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. «Աշխարհաժողով»-ը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում և հայկական առևտրական կրթությունը

Ֆրանսիացի հետազոտող Օլիվիե Ռավոն, հիմնվելով Մարսելի առևտրական դատարանի վավերագրերի ու ծխական գրանցամատյանների վրա, ցույց է տվել, որ 17-րդ դարի վերջին քառորդին ֆրանսիական այդ քաղաքում գործունեություն ծավալած Ջուղայեցի վաճառականներից միայն մեկը «չգիտեր գրել»: Ընդ որում, նրանց գրագիտության մակարդակը գերազանցում էր հայկական մյուս բնակավայրերից Մարսել ժամանած վաճառականների գրանցած ցուցանիշը. վերջիններիս պարագայում տարրական գիտելիքներ չունեցողների տեսակարար կշիռը հասնում էր շուրջ 30 %-ի[1]: Փաստորեն, Մարսելի հայ առևտրական համայնքի օրինակն ակնհայտ է դարձնում, որ Հայաստանի այլ շրջաններից սերող առևտրականների համեմատությամբ Ջուղայեցի վաճառականները նկատելիորեն տարբերվում էին իրենց գիտելիքների պաշարով: Նոր Ջուղայից սերող վաճառականների գիտելիքների հարստությունն արդյունքն էր առևտրական գործի հմտությունների ձեռքբերման այն հնարավորությունների, որոնք առկա էին Սպահանի հայկական արվարձանում: Այսպես՝ Ջուղայեցիներն առևտրական կրթություն ստանալու 3 ճանապարհ ունեին՝ Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը, կաթոլիկ քարոզիչների ուսումնական հաստատությունները ու տանը կրթությունը: Ստորև կուսումնասիրենք Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի պատմությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով հայ առևտրական կրթության երևույթն առհասարակ, մի հարց, որ հատուկենտ անդրադարձների է արժանացել մասնագիտական գրականության մեջ[2]:

Համաշխարհային առևտրի շուկաների բնագավառում Ջուղայեցի վաճառականներին հարուստ գիտելիքներով զինող կրթության համակարգում, որը տասնամյակներ շարունակ հաջողությամբ գործում էր Նոր Ջուղայում, կենտրոնական տեղ էր զբաղեցնում Ս. Ամենափրկիչ վանքում գործող դպրոցը: Կրթական այս հաստատության բացումը Խաչատուր Ջուղայեցու արդյունավոր գործունեության արգասիքն էր 1620-ական թթ.:

[1] Տե՛ս **Raveux O.**, նշվ. աշխ., էջ 102:

[2] Ջուղայեցի վաճառականների կրթության հարցի շուրջ համառոտ դիտարկումների համար տե՛ս **Baghdiantz-McCabe I.**, *The Shah's Silk or Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750)*, Atlanta, 1999, pp. 217-218, **Kévorkian R.**, "Le négoce international des Arméniens au XVIIe siècle", éd. R. Kévorkian, *Arménie entre Orient et Occident: trois mille ans de civilisation*, Paris, 1996, pp. 149-150: Ավելի հանգամանալից է Սեբուհ Ասլանյանի անդրադարձը՝ **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 136-138:

Ավելորդ չէ մեջբերել դպրոցի հիմնադրման մասին պատմագիր Խաչատուր Ջուղայեցու հայտնի վկայությունը. «Սա յօրինեաց զհամալսարանն՝ յորում ուսուցանէր և մարզէր զհամբակազոյնսն ի գիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս ազատականս, և զգերընտրազանցականս»[1]: «Համալսարան» բնորոշված այս հաստատության առաջին շրջանավարտների շարքում էին հոգևոր-մշակութային կյանքի այնպիսի երևելի գործիչներ, ինչպիսիք էին Հակոբ, Դավիթ, Սիմեոն Ջուղայեցիները: Դպրոցի տևական գործունեությունը նկատի ուներ Նոր Ջուղայի պատմաբանի համարում ունեցող Հարություն Տեր-Հովհանյանցը՝ արձանագրելով, որ դեռևս «ի սկզբանն հիմնարկութեանն Ջուղայու ի վանին Ամենափրկչի եղեալ է դպրատուն»[2]:

Դպրոցի գործունեության մասին հնարավորինս ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է փորձել տեղեկություններ գտնել ուսուցչական անձնակազմի, առարկայացանկի, գործածված դասագրքերի, աշակերտների թվաքանակի վերաբերյալ: Սկզբնաղբյուրներում այս մասին պահպանված վկայությունները խիստ սակավ են, ինչով էլ պայմանավորված է դպրոցի մասին շրջանառվող հայտնի տեղեկատվության նկարագրական բնույթը: Այս խնդիրների առնչությամբ առանձին ուսումնասիրողների դիտարկումները, ինչպես և՝ մի քանի անուղղակի փաստեր, սակայն, հնարավորություն են տալիս գոնե նախնական պատկերացում ունենալու նախանշված հարցերի վերաբերյալ: Առանց դրա իր բուն համատեքստից կտրված կլինի ու անհասկանալի կմնա այն հարցը, թե ինչպես առևտրական դասընթացներն ու դասագրքերն ի հայտ եկան այդ դպրոցում:

Նախ՝ ուսուցչական անձնակազմի մասին: Կրթական այս հաստատության դասավանդողների՝ Հարություն Տեր-Հովհանյանցին հայտնի շրջանակը լայն չէ՝ Խաչատուր, Դավիթ, Ստեփանոս, Կոստանդ Ջուղայեցիներ[3]: Ընդ որում, եթե առաջին երեքը նախևառաջ հայտնի էին որպես վանքի հոգևոր առաջնորդներ, ապա Կոստանդի համբավը պայմանավորված էր առևտրական դասագրքերի ստեղծմամբ ու համապատասխան դասընթացների անցկացմամբ: Ս. Ամենափրկիչ վանքի ուսուցչական անձնակազմի այդ շարքը պետք է համալրել ևս 2 գործիչներով՝ Սիմեոն ու Հովհաննես Ջուղայեցիներով: 17-րդ դարի մշակութային նշանավոր գործիչ Սիմեոն Ջուղայեցին իր մանկավարժական ընդգրկուն գործունեության ընթացքում, ըստ Առաքել Դավրիժեցու հաղորդման, դասավանդել է նաև Նոր Ջուղայում. «Մինչև էր ի Սպահան քաղաքին, երեք անգամ զարտաքինն և

---

[1] **Խաչատուր Ջուղայեցի**, *Պատմութիւն Պարսից*, աշխատութեամբ՝ Բ. Աղաւնեանցի, Վաղարշապատ, 1905, էջ 116:

[2] **Տէր-Յովհանեանց Յ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 253:

[3] Տե՛ս նույն տեղում:

զքերականութիւնն դաս ասաց ընկերաց իւրոց աշակերտակցացն»[1]: Նախքան 1641 թ. վարդապետական գավազան ստանալը Ջուղայեցի այս գործիչը Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում ուսուցանում էր քերականություն ու փիլիսոփայություն[2]: Ուսուցչական անձնակազմի մեջ հայտնի վեցերորդ ներկայացուցիչ Հովհաննես Ջուղայեցու մասին տեղեկության աղբյուրը Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 3669 ձեռագրի՝ 1668 թ. ուշագրավ հիշատակարանն է. «Զայս իմ ձեռաց գիրնայ, որ գրեցի, որ զայս տոմարս կարդացի, որ սրբայզան սրբոց կրցն (կրոնաւորա՞ցն) դպրոցատան վարպետ տէր Ոհանին քշտին կարդացի»[3]: Տոմարական նյութերի ժողովածու հիշեցնող այս ձեռագրի մաս կազմող դասագրքի դատարկ էջի վրա է, որ այս հիշատակարանն է թողել Սիմոնը՝ Ոհանի՝ Հովհաննես Ջուղայեցու աշակերտը: Դիպուկ է բացառիկ այս հիշատակարանի տեղեկատվությունը շրջանառության մեջ դրած Հակոբ Անասյանի՝ ուշադրությունից դուրս մնացած եզրահանգումը. «Հիշատակարանից երևում է, որ գիրքը որպես դասագիրք էր ծառայում Հովհաննես Ջուղայեցու մոտ, որն այս թվականներին դասատու էր Նոր-Ջուղայի հայոց ուսումնարանում»[4]:

Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի առարկայացանկի, ինչպես և՝ ժամանակի ընթացքում դրա փոփոխության մասին որոշակի պատկերացում կազմելու հնարավորություն են ընձեռում Խաչատուր Ջուղայեցու արդեն մատնանշված վկայությունն ու 1686 թ. մի հիշատակարան: Պատմագրի տեղեկությունը վերաբերում է միայն Խաչատուր Կեսարացու առաջնորդության տարիներին, այն է՝ մինչև 1646 թ. դպրոցի տրամադրած գիտելիքի պաշարին՝ «գիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս ազատականս, և զգերընտրազանցականս»[5]: 1650-1670-ական թթ. Ս. Ամենափրկիչ վանքի կրթական այս հաստատության առարկայացանկի ընդլայնման մասին կարելի է կռահել Ալեքսանդր Ջուղայեցու՝ 1686 թ. հիշատակարանի շնորհիվ: Նոր Ջուղայի դպրոցական կյանքին նոր շունչ հաղորդելու Դավիթ Ջուղայեցու ջանքերն արձանագրելուց պատ հիշատակարանն ամփոփում է դասավանդված առարկաների մասին տեղեկատվությունը. «(Դավիթ Ջուղայեցին – Ս.Բ.) ժողովեաց բազում աշակերտս եւ ձեռնասուն իւր արարեալ զնոսա լուսաւորեաց հոգով եւ զարդարեաց գիտութեամբ եւ զանազան ուսմամբ, այսինքն հոգէնուագ սաղմոսիւք,

---

[1] **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 321:

[2] Տե՛ս **Միրզոյան Հ.**, *Սիմեոն Ջուղայեցի*, Երևան, 1971, էջ 34, Ghougassian V., նշվ. աշխ., էջ 170:

[3] ՄՄ, ձեռ. թիվ 3669, թ. 60բ: Հմմտ. **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.)*, հ. Ա, Երևան, 1959, էջ 277:

[4] Նույն տեղում:

[5] **Խաչատուր Ջուղայեցի**, էջ 116:

քաղցրեղանակ շարականիւք, երաժշտական ձայնաւորօք, տաղիւք, մեղեդիւք, համարողական թուականիւք, քերթողական քերականիւք, փիլիսոփայական հանճարիւք եւ արտաքին ուսմամբք, բնագանցական աստուածաբանութեամբ եւ ճշմարտութեամբ աստուածաշունչ գրոց»[1]: Հատկանշական է, որ կրթական այս հաստատությունը, փաստորեն, իր ուսումնական ծրագրում արդեն ներառել էր նաև «Համարողական թուականք»-ը, այն է՝ թվաբանական հմտությունները:

Ինչ վերաբերում է Նոր Ջուղայի նշանավոր այս դպրոցում շրջանառության մեջ դրված դասագրքերին, ապա մեզ հայտնի տվյալներով փաստվում է 4 հեղինակների երկերի գործածությունը: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ Սիմեոն Ջուղայեցին հենց Նոր Ջուղայում իր մանկավարժական գործունեության ընթացքում գիտակցում է քերականության դասագրքի անհրաժեշտությունը. «Յաղագս անկիրթ և անհմուտ մանկանց և բռնամիտ արանց, արար նոր քերականութիւն դիւրաւ հասկանալի»[2]: «Քերականութիւն»-ը, որ նա շարադրել է 1637 թ.՝ դեռևս Նոր Ջուղայում դասավանդելիս, եղել է Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի դասագրքերի շարքում[3]: Ենթադրելի է, որ ավելի ուշ՝ 1649 թ. գրված «Տրամաբանութիւն»-ը ևս, որպես դարաշրջանի հայկական դպրոցների հիմնական դասագիրք, կարող էր գործածվել Նոր Ջուղայի ուսումնական հաստատությունում:

17-րդ դարի առաջին կեսին ի հայտ եկած մաթեմատիկական 2 աշխատություններ՝ Էվկլիդեսի Երկրաչափության հայերեն ընդարձակ թարգմանությունն ու «Գործառութիւնք երկրաչափութեան» երկը, Գարեգին Պետրոսյանն ու Աշոտ Աբրահամյանը վերագրել են Գրիգոր Կեսարացու գրչին: Ուշագրավ է, որ հետազոտողներն աշխատությունների ստեղծման հնարավոր նպատակ են համարել գործածությունը «Նոր Ջուղայի բարձրագույն դպրոցում»[4]: Թեև հավանական, բայց ոչ հաստատված այս ենթադրությունը որոշակի հիմք է տալիս այս երկերը ներառելու Նոր Ջուղայի նշանավոր դպրոցի դասագրքերի շարքում:

1668 թ. հիշատակարանում առկա տեղեկության քննությամբ արդեն պարզեցինք, որ աշակերտ Սիմոնի գրությունը պարունակող այդ տոմարագիտական դասագիրքը գործածվել է Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում: Աշխատության հեղինակը, ինչպես Հ. Անասյանն է մատնանշում, Ազարիա

[1] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, էջ 751:

[2] **Առաքել Դաւրիժեցի**, էջ 321:

[3] Տե՛ս **Միրզոյան Հ.**, նշվ. աշխ., էջ 37-42:

[4] **Պետրոսյան Գ.**, **Աբրահամյան Ա.**, «Էվկլիդեսի երկրաչափության հայերեն նոր բնագիրը», *Պատմա-բանասիրական հանդես*, 1962, թ. 1, էջ 168-169, նույնի, «Գործառութիւնք երկրաչափութեան» երևանյան հայկական ձեռագիրը», *Բնագիտության և տեխնիկայի պատմությունից (Գիտական աշխատությունների ժողովածու)*, հ. 3, Երևան, 1964, էջ 47-48:

Ջուղայեցին էր[1]: Եվ վերջապես, չորրորդ հեղինակը, որի դասագիրքը գործածվել է Նոր Ջուղայի ուսումնական այս հաստատությունում, Կոստանդ Ջուղայեցին է:

Սկզբնաղբյուրներն ընձեռում են նաև Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի աշակերտների թվաքանակի մասին դատողություններ անելու հնարավորություն[2]: Ուշագրավ է, որ մեզ հասած տեղեկություններն արձանագրվել են նախևառաջ Կոստանդ Ջուղայեցու երկերն ամփոփող ձեռագրերում: «Աշխարհաժողով»-ի՝ Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուում պահվող ընդօրինակությունը 1685 թ. հիշատակարանում երկի հեղինակին համարում է «դպրապետ և ուսուցիչ մանկանց երից հարիւրից»[3]: Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրական հավաքածուի մաս կազմող մյուս գրչագիր օրինակը «Հարցմունք և պատասխանիք» երկի սկզբում Կոստանդ Ջուղայեցուն բնորոշում է որպես «դպրապետ բծ (250) մանկանց»[4]: Ալեքսանդր Ջուղայեցու՝ 1686 թ. հիշատակարանը հաստատում է այդ տեղեկությունը՝ Կոստանդ Ջուղայեցուն համարելով 250 աշակերտների ուսուցիչ՝ «Կոստանդ միայնակեացն, որ է վարդապետ եւ ուսուցիչ Բճ ու Ծ (250) մանկանց»[5]: Պատահական չէ, որ դպրապետի մասին տեղեկություններ հաղորդելիս այս նույն թվաքանակն է մատնանշել նաև Հարություն Տեր-Հովհանյանցը՝ «որոյ լեալ են հետ պհեալ երկերիւր եւ յիսունաչափ աշակերտք»[6]: Այսպիսով 1680-90-ական թթ. վերաբերող 3 աղբյուրներում Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասընթացին հետևող աշակերտների թվաքանակը հասցվում է 250-300-ի: Ի դեպ, Բոդլեյան գրադարանի վերը նշված ձեռագրի՝ ուշադրությունից դուրս մնալու պատճառով առավել տարածում է ստացել Կոստանդի՝ 250 աշակերտ ունենալու փաստը, ինչը հաճախ թյուրիմացաբար ներկայացվել է որպես Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի շրջանավարտների ընդհանուր թվաքանակ[7]: Հատկանշալի է, որ 1620-ական թթ. սկիզբ առած կրթական այս հաստատության գործունեության տարիներին նրա շրջանավարտների թվաքանակը եղել է անհամեմատ ավելի շատ, քան Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասընթացի ունկնդիրների քանակը հիշատակարանների գրության ժամանակ:

[1] Տե՛ս **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն*, հ. Ա, էջ 277: Հմմտ. **Անասեան Յ.**, «Ազարիա Ջուղայեցիներ (համանուն երկու գիտնականների մասին)», *Մանր երկեր*, Լոս Անջելես, 1987, էջ 651-666:

[2] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 136:

[3] Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 10ա:

[4] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 252ա: Ձեռագրի մի մասը գրվել է 1687 թ., իսկ ավելի ընդարձակ հատվածը՝ 1695 թ. (*Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, էջ 857):

[5] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, էջ 752:

[6] **Տէր-Յովհանեանց Յ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 253:

[7] Տե՛ս, օրինակ, *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, էջ 13, **Հովհաննիսյան Ս.**, նշվ. աշխ., էջ 59 և այլն:

Առկա տվյալների ամբողջացումից հետո կարելի է եզրակացնել, որ 1620-ական թթ. հիմնված այս դպրոցում 17-րդ դարի կեսերից դասավանդվել է թվաբանություն, որն առևտրական համապարփակ դասընթացի է վերածվել առնվազն 1680-ական թթ.: Այդ դասընթացը սեփական դասագրքերով վարող Կոստանդ Ջուղայեցին միակն էր Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի ուսուցիչների շարքում, որին աղբյուրները տալիս են դպրապետ կոչումը: Ջուղայեցիների շրջանում նրա դասընթացի ունեցած պահանջարկի լավագույն արտահայտությունը 300-ի հասնող աշակերտների մեծ թիվն էր:

Նոր Ջուղայի այս հայտնի կրթական հաստատության գործունեության մասին որոշակի պատկերացում կազմելուց հետո տեղին է անցնել այդ դպրոցի ու առևտրական կրթության մյուս ուղիների՝ կաթոլիկ քարոզիչների դպրոցական ցանցի ու առտնին կրթության հարաբերակցության հարցին: Հատկապես ասիացի վաճառականների շրջանում մեծ տարածում ունեցած ոչ ֆորմալ կամ, ինչպես Վարդան Հացունին է բնորոշել[1], առտնին կրթությունը կարևոր դեր է խաղացել նաև հայ առևտրականների համար: Դրա էությունը ընտանիքի կամ տոհմի որևէ ավագ ներկայացուցչի հետ առևտրական ուղևորության մեկնելու ու տեղում «առաջին ձեռքից» առևտրական գործին ծանոթանալու մեջ էր: Եթե ջուղայեցի վաճառականների համար սա մասնագիտական կրթության հերթական օղակներից մեկն էր, ապա հայկական մյուս բնակավայրերից սերող երիտասարդների համար առևտրական գործի մեջ մտնելու միակ ճանապարհն էր:

Բնութագրական է իր օրագրական երկով հայտնի Զաքարիա Ագուլեցու օրինակը: 1647 թվականին, երբ 17 տարեկան Զաքարիան ցանկություն է հայտնում «կամիվն Աստծոյ ուսանել վաճառականութիւն»[2], հայրն, մայրն ու ավագ եղբայրը նրան ուղարկում են Իզմիր՝ հորեղբորորդի Նիկողոսի առաջնորդությամբ առաջին քայլերն անելու ու հմտանալու առևտրական գործի մեջ. «Ես Զաքարէս էի ԺԷ ամաց, նախ և առաջի իմ ճանապարհ գնալն այս է, որ մին բէռն խամ ապրիշմով, իմ հօր, մօր, իմ եղբայր Շմաւոնի, սոցայ կամով ինձ գրին իմ հօր եղբօր որդի պարոն Նիկողոսին յետ, գնացի Իզմիր»[3]: Առաջին առևտրական փորձառությունից ընդամենը 2 տարի անց Զաքարիան բավականաչափ հմտություն էր կուտակել, ուստի նրան են դիմում Ագուլեցի Մարգարի որդի Արզանուն Կոստանդնուպոլիս ուղեկցելու խնդրանքով. «Արզանին կարդացել չէ, դու որայ յետ գնայ, որայ ալիշ-վերիշն գրես»[4]: Համանման ճանապարհ է անցել նաև

[1] Տե՛ս **Հացունի Վ.**, *Դաստիարակութիւնը հին հայոց քով*, Վենետիկ, 1923, էջ 133-180:
[2] **Զաքարիա Ագուլեցի**, էջ 5:
[3] Նույն տեղում, էջ 159:
[4] Նույն տեղում, էջ 160:

Հովսեփ Դահրաշյանը, ինչպես կարելի է մանրամասն տեսնել նրա տոհմի պատմություն-տարեգրության մեջ: 8-ամյա Հովսեփը հորից սովորում է ոսկերչություն, տեր Մկրտչից՝ սաղմոսերգություն, նրա եղբայր Գրիգորից՝ Աղարիա Ջուղայեցու թվականը, Ղուկաս վարդապետից՝ շարականերգություն, մի պարսիկից՝ պարսկերեն, քրոջ ամուսնուց էլ՝ ջուլհակություն և այլն: Ի վերջո, տարբեր հմտություններ սովորելուց հետո 20 տարեկան Հովսեփը սկսում է Էմնիազի որդի Հարություն Մինասյանի մոտ «զգործ վաճառականի» սովորել. «Եվ գնացի առ Էմնիազի որդի աղայ Յարութիւնն՝ ի գրագրութեամբ ծառայել նմա և ուսանիլ զգործ վաճառականի և նորին շնորհիւն արգինաւորիլ»[1]: Ուշագրության է արժանի նաև Եղիա Կարնեցու օրինակը, որը Երզրումցի քահանայի մոտ դրագիտություն սովորելուց, ինչպես և՝ ճիզվիտ քարոզիչների դպրոց հաճախելուց հետո իր հորեղբորորդի Ղազարի հետ որոշել էր «գնալ ի ճանապարհ ի գործս վաճառականութեան»[2]: Հասուն տարիքում Եղիան շարունակում է իր գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների կուտակումը՝ առավելապես կենտրոնանալով լեզվական հմտությունների վրա: Այս տեսանկյունից ուշագրավ են մինչ օրս նրա դիվանում պահպանվող պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն ու ռուսերեն բառացանկերը[3], որոնք այս հայ վաճառականը կազմել էր լեզուների ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Քննարկվող հարցի տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել նաև վաճառական Հովհաննեսի օրինակը: Սանտյագո լատինականացված անունով հանդես եկած այս ջուղայեցու գործունեության ողջ նկարագրությունը մեզ է հասել այն հարցաթերթի[4] շնորհիվ, որը կաթոլիկությանը հարելիս նա լրացրել է ինկվիզիցիայի համակարգում գործող Մանիլայի տեղական գրասենյակում: Առաջին անգամ Սեբուհ Ասլանյանի ուշադրությանն արժանացած այս փաստաթուղթը հարուստ նյութ կարող են մատակարարել նաև վաճառականների կրթության հարցը պարզաբանելու առումով. անցած ողջ ճանապարհը մանրամասն թվարկելու թեմայից բացի՝ հարցարանն ընդգրկում էր նաև վաճառականի գիտելիքները մասնանշելու պահանջ: Սանտյագոն իր պատասխանում պատմել է, որ իր մայրենի լեզվով միայն կարդալ ու հաշվարկներ անել է սովորել, իսկ

[1] **Տեր-Վարդանյան Գ.**, «Պարսկա-հնդկական մի ընտանիքի՝ Դահրաշյան տոհմի պատմություն-տարեգրությունը (ԺԷ-ԺԹ դարեր)», *Բանբեր Մատենադարանի*, հ. 16, Երևան, 1994, էջ 218, 241:
[2] Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. թիվ 980, թ. 6ա-9ա: Հմմտ. **Ոսկեան Հ.**, *Եղիա Աստուածատուրեան Մուշեղեան և իր գրական աշխատութիւնները*, Վիեննա, 1927, էջ 7-12: Վիեննայի Մխիթարյան միաբանությունում մեր հետազոտություններին աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Հայր Սիմոն վ. Բայեանին:
[3] Տե՛ս **Եղիա Մուշեղյան Կարնեցի**, *Թուրքերէն-հայերէն բառարան*, աշխատասիրությամբ՝ Բ. Զուլալյանի, Երևան, 1986, էջ 19-20:
[4] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 140-141:

մնացած գիտելիքները ըստ երևույթին կուտակել է առևտրական գործունեության ընթացքում: Այսպես՝ նա խոսում էր հոլանդերեն, որոշ չափով իտալերեն, գրում ու կարդում իսպաներեն: Հենց իսպաներենի միջոցով նա առևտրական հաշվապահության դասընթաց էր յուրացրել Մանիլայում[1]:

Կաթոլիկ քարոզիչների դպրոցական ցանցը, որպես առևտրական կրթության մյուս կարևոր միջոց, յուրօրինակ հնարավորություն էր տալիս ձեռք բերելու այնպիսի հմտությունների պաշար, որը անհրաժեշտ էր վաճառական դառնալու նպատակ հետապնդող երիտասարդների համար: Եվրոպացի հոգևորականների կրթական այս ծառայությունների լավագույն միջավայրը Նոր Ջուղան էր: Ճիզվիտ, կարմելյան ու կապուչինյան քարոզիչները Ջուղայեցի երիտասարդներին առաջին հերթին հրապուրում էին իրենց լեզվական գիտելիքներով: Նրանց օգնությամբ եվրոպական լեզուների մեջ հմտանալու Ջուղայեցիների ցանկությունն է արձանագրել, օրինակ, կարմելյան քարոզիչ Բալթազարը 1653 թ. օգոստոսի 9-ի իր նամակում. «Առևտրով զբաղվող հարուստ վաճառականները... ցանկանում են, որ իրենց որդիները սովորեն մեր լեզուները»[2]: Ուշադրության է արժանի նաև կապուչինյան հոգևորական Ամբրուազի մասին Տավերնիեի հետաքրքիր վկայությունը. «Ֆրանսիայի հետ մեծ առևտրի հիմք դնելու հույս ունեցող հայերը ֆրանսերեն սովորելու համար իրենց երեխաներին ուղարկում էին ինչպես այս հոր, այնպես էլ ճիզվիտների մոտ»[3]: Ֆրանսերենի ուսուցումը շարունակելու ձգտումն այնքան մեծ էր, որ Նոր Ջուղայից Ամբրուազի հեռացվելուց հետո վաճառականների որդիները նրան այցելելու համար չէին վարանում անցնել 5-6 լյո տարածություն[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 141: Բերենք ևս մի ճանաչողական օրինակ ավելի ուշ շրջանից՝ 19-րդ դարի առաջին կեսից, երբ Նոր Ջուղայի առևտրական ազդեցությունն ու հռչակն արդեն անցյալում էր: 1828-1829 թթ. զմյուռնիացի 4 նամակագիրներ Ամստերդամում բնակվող Ստեփան Գաբրիելյանին ուղղված նամակում խնդրում են իրենց ընկեր Ազարիայի որդի Կարապետի համար ապահովել վաճառականական կրթություն՝ Հոլանդիայի «պատկառելի ոմն վաճառականի» մոտ նրան տալով մինչև ութ ամսվա կրթություն: Այս մասին տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 2637, թ. 76բ: Հավելենք նաև, որ այս ձեռագրում ի մի են բերված գերազանցապես 1826-1828 թթ. գրված 70-ից ավելի նամակներ, որոնք կարևոր նյութեր կարող են տրամադրել Ամստերդամի՝ այդ ժամանակվա հայկական համայնքի պատմության հետազոտողներին:

[2] **Anon [Herbert Chick]** (ed.), *A Chronicle of the Carmelites in Persia, the Safavids and the Papal Mission to Persia of the 17th and 18th Centuries*, vol. 1, London, 1939, p. 378. Կարմելյան քարոզիչների դպրոցների համար տե՛ս, օրինակ, **Բայբուրդյան Վ.**, «Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները», *ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների*, 1964, թ. 9, էջ 41-42:

[3] **Jean Baptiste Tavernier**, *Les six voyages... en Turquie, en Perse et aux Indes*, tome I, The Hague, 1718, p. 478.

[4] Տե՛ս նույն տեղում: Ավելորդ չէ նշել, որ մինչև 1674 թ. գործածության մեջ եղած երկարության միավոր լյոն հավասար էր մոտ 3,2 կմ-ի: Դրան փոխարինած «փարիզյան նոր լյո»-ն գրեթե 4 կմ էր:

Ավելի մանրամասն պատկերացում կարելի է կազմել կաթոլիկ քարոզիչներից ճիզվիտների ընձեռած կրթական հնարավորությունների մասին: 1660-ական թթ. Մերսիեի հիմնած դպրոցն իր գործունեությունը շարունակեց առնվազն չորս տասնամյակ[1]: Այն հրապուրում էր բազմաթիվ Ջուղայեցի երիտասարդների, որոնք դրանում տեսնում էին եվրոպական լեզուների մեջ հմտանալու և կիրառական գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն: 1674 թ. ճիզվիտների այս դպրոցն արժանացել է Նոր Ջուղայով անցնող վենետիկցի ճանապարհորդ Ամբրոսիո Բեմբոյի ուշադրությանը. նա հիշատակում է այնտեղ պարսկերեն գրել ու կարդալ սովորող հայ երիտասարդների[2]: Մոտ 1 տարի անց դպրոցական այս հաստատության ականատես է լինում նաև Ֆրանսուա Պետի դը լա Կրուան, որը թարգմանիչ էր ֆրանսիական արքունիքում և արևելք էր ուղարկվել առաջին նախարար Կոլբերի կողմից: «Հայ երիտասարդների կրթության համար» նախատեսված այս դպրոցը հիշատակելուց բացի՝ նա պատմում է այնտեղ դասավանդող ճիզվիտ դը լա Մագից հայերեն սովորելու առաջարկ ստանալու ու այդ լեզվի բարդության մասին[3]: 17-րդ դ. վերջին դպրոցը հիշատակվում է նաև գերմանացի Շիլինգերի կողմից, որը վկայում է ֆրանսերեն, լատիներեն ու հայերեն սովորող շուրջ 100 աշակերտների մասին[4]:

Ճիզվիտ քարոզիչների ուսումնական հաստատությունում հայ վաճառականների ստացած կրթության, մասնավորապես՝ ուսուցման համակարգի մասին բացառիկ է Վիլլոտի ծավալուն վկայությունը: Հիսուսյան այս քարոզչի տեղեկությունները նախևառաջ պատկերացում են տալիս լեզուների մեջ հմտանալու այն հնարավորությունների վերաբերյալ, որ ապահովում էր այս դպրոցը: «Իրենց ծնողների կողմից Հնդկաստանի առևտրի համար նախատեսված» պատանիները ճիզվիտական դպրոցում սովորում էին պորտուգալերեն, իսկ հայ երիտասարդների մեկ այլ խումբ էլ «ցանկանում էր սովորել իտալերեն այն վայրերի համար», ուր այդ լեզուն գործածվում էր: Թվաբանությունն ու աշխարհագրությունը ևս հատուկ տեղ էին զբաղեցնում դպրոցի ուսումնական ծրագրում: Վիլլոտն անգամ հատուկ խաղ էր պատրաստել ուսուցման գործընթացն առավել գրավիչ ու արդյունավետ դարձնելու համար[5]:

---

[1] Տե՛ս **Բաղդասարյան Ս.**, *Նոր Ջուղայից Երևան ու Էրզրում*, էջ 81-82:

[2] Տե՛ս **Ambrosio Bembo**, *The Travels and Journal of Ambrosio Bembo*, ed. A. Welch, Berkeley, 2007, p. 358:

[3] Տե՛ս **Pétit de la Croix**, "Extrait du journal du sieur Pétit, Fils, Professeur en Arabe...", L. Langlès (éd.), *Relation de Dourry Efendi, Ambassadeur de la porte othomane auprès du roi de Perse...*, Paris, 1810, p. 127, համմտ. **Vartoogian J.**, *The Image of Armenia in European Travel Accounts of the Seventeenth Century*, Ph.D. Dissertation, Columbia University, 1974, pp. 73-74:

[4] Տե՛ս **Franz Caspar Schillinger**, *Persianisch und Ost-Indianische Reis*, Nuremberg, 1707, s. 244.

[5] Տե՛ս **Anon [Villotte]**, *Voyages d'un missionnaire de la Compagnie de Jésus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie, & en Barbarie*, Paris, 1730, pp. 424-427:

Լեզվական հմտությունների ձեռքբերման հարցի տեսանկյունից սեղին կլինի նշել, որ ջուղայեցիներն ունեին մի «բնածին առավելություն»[1]. նրանք ապրում էին բազմալեզու միջավայրում: Հայերենից բացի՝ առօրյա կյանքում նրանք խոսում էին նաև պարսկերեն ու թուրքերեն, լեզուներ, որոնք գրեթե հավասարապես տարածված էին Սեֆյան Իրանում: Կաթոլիկ քարոզիչների միջոցով գոնե նախնական պատկերացում ունենալով եվրոպական առանցքային լեզուների մասին՝ ջուղայեցիները լեզվական հիմնալի պատրաստություն էին ստանում նախքան մտնելը առևտրական գործի մեջ: Հայ վաճառականների լեզվական հմտությունները նրանց ազատում էին զանազան դժվարություններից: Մի հետաքրքրական օրինակ. 1650 թվականի մարտի 9-ին Վենետիկի սենատը ստանում է «Հայ ազգի», այն է՝ քաղաքի հայության դիմումը terzo (մեկ երրորդ) կոչվող հարկից ազատվելու խնդրանքով[2]: Որպես հիմնավորում նշված էր այն հանգամանքը, որ բոլոր հայ վաճառականները շատ լավ խոսում են իտալերեն, ուստի նրանք թարգմանիչների կարիք չեն զգում, որոնց ֆինանսավորելու համար էլ մտցվել էր նշված հարկատեսակը:

Սխալված չենք լինի, եթե նշենք, որ ջուղայեցիների միջավայրում Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցն իր կարևորությամբ ու գերակատարությամբ գերազանցում էր վաճառականական գիտելիքի ընձեռման մյուս ուղիները: 250-300 աշակերտ ունեցող այդ դպրոցը նաև քանակական առումով էր անմրցելի եվրոպայի հոգևորականների ուսումնական հաստատությունների համար, որոնցից մեկում, ինչպես տեսանք, հիշատակվել է միայն 100 երիտասարդ: Բացի այդ՝ կաթոլիկների դեմ պարբերաբար սրվող պայքարը Նոր Ջուղայում ծանր կացություն պետք է ստեղծեր նաև նրանց հետ առնչություններ ունեցող ջուղայեցիների համար, ինչը բացասաբար պետք է ազդեր ուսուցման գործընթացի վրա: Ինչ վերաբերում է առանձին կրթությանը, ապա վերջինիս դերը ըստ երևույթին ընդգծված է եղել այլ բնակավայրերից սերող հայ վաճառականների դեպքում: Պատահական չէ, որ փորձելով բացատրել հայ վաճառականների աննախադեպ հաջողությունները առևտրի ասպարեզում վաղ արդի շրջանում՝ Սեֆյան Իրանի պատմության նշանավոր հետազոտող Ռուդի Մաթին իր մատնանշած պատճառների շարքում ներառել է «շուկաների ու ճանապարհների նրանց (հայերի – Ս.Բ.) գերազանց իմացությունը»[3]: Այդ իմացության հիմքում կանգնած էր առևտրական կրթության այն ինստիտուցիոնալ համակարգը, որում կենտրոնական տեղ էր զբաղեցնում հենց Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը:

[1] Raveux O., նշվ. աշխ., էջ 101-102:

[2] Տե՛ս Archivio di Stato di Venezia, Collegio, Risposte di dentro, busta 41, չհամարակալված (9 մարտի, 1650): Հմմտ. Rothman N., *Brokering Empire: Trans-Imperial Subjects between Venice and Istanbul*, Ithaca, New York and London, 2012, pp. 196-197:

[3] Matthee R., "Merchants in Safavid Iran: Participants and Perceptions", *Journal of Early Modern History*, vol. 4, no. 3-4, 2000, pp. 237-238.

Կարևոր է նշել նաև, որ Նոր Ջուղայում վաճառականների համար ստեղծված կրթական հնարավորությունները լիովին բավարար էին առևտրական գործի մեջ մտնելու համար, որը պահանջում էր «ավելի շատ գիտելիք, քան ցանկացած այլ մասնագիտություն», ինչպես 17-րդ դարում անգլիացի Թոմաս Մանն էր նշում իր առևտրական ձեռնարկում[1]: Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը» դասագիրքը (1675 թ.)՝ գրված Լուի XIV-ի արքունիքում մեծ ազդեցություն ունեցած Կոլբերի ցուցումով[2], ուրվագծում է անհրաժեշտ հմտությունների շրջանակը: Հետաքրքիր է, որ ըստ Սավարիի՝ վաճառականի կրթությունը պետք է սկսվեր դեռևս 7-8 տարեկանից տարրական գիտելիքների ձեռքբերմամբ՝ «լավ գրել, լավ իմանալ թվաբանություն»: Սրան զուգահեռ՝ վաղ տարիքում ապագա վաճառականը պետք է հմտանար նաև պարզ կամ կրկնակի հաշվապահության ու լեզուների մեջ[3]: Նրա ստացած հետագա կրթության՝ Սավարիի նկարագրությունը[4] լիովին համապատասխանում է առևտրական գիտելիքի այն պաշարին, որը կուտակելու հնարավորություն ունեին ջուղայեցի վաճառականները:

Նոր Ջուղայի դպրոցական կյանքի հետաքրքրական էջ է նաև ուսումնարանի բացումը Շահրիմանյանների եկեղեցում: Մեզ հայտնի աշխատություններում ուշադրության չարժանացած ու չուսումնասիրված այս դպրոցը հիշատակում է Մելքոն քահանան Եղիա Կարնեցուն ուղղված իր նամակում. «Եւ եթէ նուաստիս որպիսութիւնն հարցանես, նուաստս քո աղօթիւն, հրամանուցդ պարոն Շահրիմանի եկեղեցումն եմ, շատ սիրով գիս ընդունեց պարոն Շահրիմանն. դպրոցատուն բացեր եմ և երեխայից վարժապետ եմ»[5]: Ինչպես երևում է, Եղիան սերտ հարաբերություններ է ունեցել այս քահանայի հետ՝ նամակագրական կապի մեջ լինելով նրա հետ: Իր թղթապանակներից մեկում նա ի մի էր բերել Մելքոն քահանայից ստացած ու նրան հասցեագրած 8 նամակները[6]: Ինչ վերաբերում է «պարոն Շահրիման»-ին, ապա նշանավոր այս ջուղայեցի ընտանիքի ներկայացուցիչ Մուրադի որդի Շահրիման Շահրիմանյանը նախևառաջ հայտնի է Վիեննայում դրած իր կտակով[7]: Այս վաճառականն Ավստրիայի մայրաքաղաքում էր նաև այն ժամանակ, երբ կայսրը նրա ընտանիքին շնորհում

[1] Hall B., *Creating Economy: Merchants in Seventeenth Century England*, Thesis, Georgia State University, 2017, p. 34 (https://scholarworks.gsu.edu/history_theses/116/, մուտքումը՝ 01.12.2019):

[2] Տե՛ս Soll J., *The Information Master: Jean-Baptiste Colbert's Secret State Intelligence System*, Ann Arbor, 2009, pp. 86-87:

[3] Տե՛ս Jacques Savary, p. 40:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 40-54:

[5] *Եղիա Կարնեցու դիվանը*, էջ 10:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ XXXIII:

[7] Տե՛ս Ալիշան Ղ., *Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ, 1893, էջ 461:

էր կոմսության տիտղոս[1]: Անցնելով 1717 թ. նոյեմբերի 16-ի այդ նամակին՝ նշենք, որ այն փաստում է Ջուղահայ միջավայրում նոր դպրոցի բացումը դեռևս 1690-ական թթ. սկզբին կառուցված Շահրիմանյանների եկեղեցում: Թե ինչ ուսուցում է ապահովել այն կամ աշակերտների ու դասավանդողների ինչ ընդգրկում է ունեցել, այլ աղբյուրների բացակայության պայմաններում դժվար է ասել: Բացառված չէ, որ այն կարող էր հետապնդել վաճառականական այս ընտանիքի առևտրական կարիքները սպասարկելու նպատակ: Թեև Շահրիմանյանների այս դպրոցի գործունեության ավարտի մասին ևս ոչինչ հայտնի չէ, այնուհանդերձ 2 հանգամանք մղում են մտածելու դրա կարճատև գոյության մասին: 1718 թ. սեպտեմբերի 17-ի իր նամակում Մելքոն քահանան խիստ բացասաբար է արտահայտվում Շահրիմանյանների մասին. «Շարիմանեցիք մին փայտէ չուն կուզեն, որ իւրեանց դուռն հաչէ և հաց չուտէ»[2]: Նախկին ջերմ վերաբերմունքի փոփոխությունը, հավանաբար, չէր կարող առնչություն չունենալ Շահրիմանյանների դպրոցում նրա գործունեության հետ: Նույն՝ 1718 թ. դպրոցի հիմնադիր Շահրիման Շահրիմանյանի մահը[3] ևս կարող էր բացասական ազդեցություն թողնել այդ ուսումնական հաստատության գործունեության շարունակության վրա:

Այսպիսով՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցն առանցքային տեղ է զբաղեցրել հայ վաճառականության ստացած առևտրական-մանկավարժական կրթության համակարգում: Դպրոցի առևտրական դասընթացը, որն անցկացնում էր Կոստանդ Ջուղայեցին իր սեփական ձեռնարկ-դասագրքերով, իր շուրջն էր համախմբում Ջուղայեցի հարյուրավոր երիտասարդների, որոնք պատրաստվում էին զբաղվելու վաճառականական գործունեությամբ և ունեին անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու կարիք: Հայկական առևտրական ցանցի կենտրոն Նոր Ջուղայում Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկները, փաստորեն, կատարում էին դասագրքերի գործառույթ՝ հանդիսանալով առևտրական տեղեկատվության վստահելի աղբյուրներ:

Բ. «Աշխարհաժողով»-ը Նոր Ջուղայի առևտրական ցանցում

1720 թվականի ապրիլի 30-ին հայ վաճառական Եղիա Կարնեցին, որն այդ ժամանակ արդեն աշխատանքի էր անցել ֆրանսիական Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղում, ձեռնամուխ է լինում իր գրադարանի ցուցակագրմանը ու կազմում իր գրքերի ամբողջական ցուցակը: Այդ ցանկի տասներորդ համարի ներքո Եղիան արձանագրել է.

[1] Տե՛ս **Խաչիկյան Շ.**, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը, էջ 73-74:
[2] Եղիա Կարնեցու դիվանը, էջ 335, ծան. 6:
[3] Aslanian S., *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 152.

«Ունէյի Գիրք արհեստի չափոց և կշռոց բոլոր աշխարհի. համար Ժ»[1]: Կասկածից դուրս է, որ նա նկատի է ունեցել Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը, որը հրատարակվել էր Ամստերդամում մոտ երկու տասնամյակ առաջ՝ 1699 թվականին: Եղիա Կարնեցին մեկն էր այն հազարավոր հայ վաճառականներից, որոնք, հատելով արևելքի ու արևմուտքի առևտրական ուղիները, կարիք ունեին վաճառականական գործի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության, որը բավարարում էին մասնագիտական գրականության առկա օրինակներով:

Եղիա Կարնեցու գրադարանում առևտրական դասագրքի առկայությունը մղում է մտածելու հարցերի այնպիսի խմբի մասին, որոնց առանցքում առևտրական գրականության շրջանառությունն է հայ վաճառականների միջավայրում. ի՞նչ գրքերից էին օգտվում 17-18-րդ դդ. համաշխարհային առևտրում ներգրավված հայ վաճառականները, ի՞նչ դեր էին կատարում առևտրական երկերը նրանց գործունեության ասպարեզում և, ի վերջո, ինչպե՞ս էին դրանք տարածվում Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում: Ստորև կքննարկենք Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի և մյուս վաճառականական ձեռնարկ-դասագրքերի շրջանառությունը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում՝ հիմնվելով Կլոդ Մարկովիցի առաջ քաշած «շրջանառության տեսության»[2] վրա: Երբևէ համակողմանիորեն չուսումնասիրված այս հարցի վերաբերյալ արժեքավոր տվյալներ կարելի է ստանալ երկու ճանապարհով: Առաջին՝ ձեռնարկների ձեռագրերում վաճառականները թողել են հիշատակարաններ՝ պատմելով իրենց ուղևորությունների ու, դրանով իսկ նաև, ձեռնարկների շրջանառության մասին: Եվ երկրորդ՝ ձեռնարկների ձեռագրերը հատել են Եվրոպայի ու Ասիայի տարբեր բնակավայրեր՝ հայ գրիչների ու հեղինակների համար ծառայելով որպես ընդօրինակման աղբյուր: Առաջին անգամ մեկտեղելով հարցի վերաբերյալ մեր ունեցած տվյալները՝ հնարավորություն կունենանք որոշակի պատկերացում կազմելու Կոստանդ Ջուղայեցու դասագրքերի շրջանառության մասին, ընդ որում՝ առևտրական տեղեկատվության փոխանցման ավելի լայն համապատկերի վրա:

Վաճառականները և Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ձեռագրերը: Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերի ձեռագրերից երկուսը հարուստ են դրանց երբեմնի օգտագործողների՝ հայ վաճառականների թողած հիշատակարաններով: Ինչպես արդեն տեսել ենք, երբեմն

[1] **Զուգասզյան Բ.**, նշվ. աշխ., էջ 70: Այդ գրքերի ցուցակը վերցված է Եղիա Կարնեցու դիվանից, որը պահպանվել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: 18-րդ դարի առաջին կեսի վերաբերյալ հարուստ նյութեր պարունակող այս դիվանը դեռ սպասում է մանրամասն հետազոտության (դիվանի ցիտական նկարագրությունը տե՛ս **Դանեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 246-264):
[2] Տե՛ս **Markovits C.**, նշվ. աշխ., էջ 25:

օրագրական գրառումների տպավորություն գործող այս հիշատակարանները, որոնք թողնվել են ձեռագրերի դատարկ էջերին, վերաբերում են ինչպես դրանց հեղինակների ընտանեկան կյանքին, այնպես էլ առևտրական-գործնական ուղևորություններին:

Հիշատակարանների հարստության առումով Կոստանդ Ջուղայեցու երկերի գրչագիր օրինակներից առաջին հերթին առանձնանում է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի թիվ 64 ձեռագիրը: Ավետը, ում ըստ երևույթին սկզբնապես պատկանել է ձեռագիրը, թողել է 4 հիշատակարան իր առևտրական ուղևորությունների մասին: Դրանցից մեկը չի նշում ուղևորության նպատակակետը[1], մինչդեռ մյուս երեք հիշատակարաններն ամփոփում են Ավետի անցած երթուղու մասին ամբողջական տվյալներ: Այսպես՝ 1697 թ. Ավետը ճանապարհ է ընկել Սպահանից դեպի Սուրաթ՝ Հնդկաստանի առևտրական կենտրոններից մեկը. «Աստուծով փոքր թիւն ձը (82+1615=1687) նադար ժա (11)-ումն արեամբ գնել՝ Քրիստոսի ծառայ Աւետս Ըսպահանայ վերկացի դայլի Սուրաթն: Տէր Աստուած բարի ճանապահր տայ, որ բարով սալամաթ գնանք գուք»[2]: Մի քանի տարի անց՝ 1701 թ., Ավետն իր գործընկեր Հովհանի հետ իր առևտրական գործունեությունը շարունակել է «Ֆռանգըստան»-ում, այն է՝ Եվրոպայում, ու այդ մասին նորից հիշատակարան է թողել Կոստանդ Ջուղայեցու դասագրքի դատարկ էջերին. «Աստուծով թիվն ռճծ (1701) գամար ժգ (13) Յովանն որն ուրբաթ գնացին դայլի և Աւետոն Ֆռանգըստան: Աստուած ուրէնց բան, աջն աջողի: Աստուած յերկար ումրը տայ և ամենեցուն: Ամէն»[3]: 1705 թ. նույն վաճառականի թողած մեկ այլ հիշատակարանում էլ պատմվում է դեպի Մաշհադ՝ Հյուսիսարևելյան Իրան ուղևորվելու մասին[4]: Ավելի քան երկու տասնամյակ անց՝ 1729 թ., ձեռագրի հետագա օգտագործողներից Վարդանը ևս թողել է համանման հիշատակարան՝ չնշելով, սակայն, իր ուղևորության վերջնակետը. «Աստուծով փոքր թիվն ճժդ (114+1615=1729) շբ(ա)թ իբ (22)-ումն ես՝ Վարդանս, Ըսպայհանայ վերկացի: Ամէն»[5]:

Այս կարգի հիշատակարաններով հարուստ է նաև Կոստանդ Ջուղայեցու երկերի մի այլ ընդօրինակություն՝ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 8443 ձեռագիրը: Այն ընդօրինակվել է 1687 թ., և դրանից մի քանի տարի անց արդեն ձեռագիրը հայտնվում է իրանական Շիրազ քաղաքում, ինչպես երևում է Սաֆարի հիշատակարանում. «Ի թուականիս հայոց հազար հարիւրորդի քառասուն և մէկն աւելի (1692)՝ ի համախանն համիրայ,

[1] Տե՛ս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 251բ:

[2] Նույն տեղում, թ. 2բ:

[3] Նույն տեղում, թ. 6ա:

[4] Տե՛ս նույն տեղում, թ. 6ա:

[5] Նույն տեղում, թ. 251բ:

որ էր օր երրորդի, ի քաղաքին, որ և Շիրազ կոչի, գրեցի գիրս վասն յիշման ժամանակի անուամբս Սաֆար, որ եմ որդի Սէթի»[1]: Այս ձեռագրի մյուս հիշատակարաններն ավելի մեծ հետաքրքրություն են առաջ բերում: Այսպես՝ ձեռագրի պահպանակի հայերեն գրություններն ընդմիջվում են վրացերեն ու վրացատառ հայերեն հիշատակարաններով[2]: Վրացատառ հայերեն հիշատակարանում հեղինակը հակիրճ արձանագրում է իր՝ Թիֆլիս ժամանելը, իսկ անմիջապես դրա ներքևում փոքր-ինչ ավելի բաց թանաքով գրի առնված վրացերեն գրությունը Թավրեզ ժամանելու մասին է: Այս երկու հիշատակարաններից հետո հեղինակը թողել է երկու թվական՝ 1746 և 1747, որոնք գուցե արտացոլում են իր վերոհիշյալ ուղևորությունների ժամանակագրությունը: Ձեռագրի պահպանակի վրա թողնված այս գրությունները համահունչ են այն վրացերեն գրչափորձերի հետ, որոնք կարելի է հանդիպել ձեռագրի տարբեր էջերին: Ըստ երևույթին, 18-րդ դարի կեսերին ձեռագրից օգտվել ու այս գրությունները թողել է վրացական միջավայրում առևտրական գործունեություն ծավալած հայ վաճառականներից մեկը:

Այսպիսով՝ բոլոր այս դեպքերում գործ ունենք մի երևույթի հետ, երբ վաճառականներն իրենց առևտրական ճամփորդություններն արձանագրում են իրենց ձեռքի տակ եղած մասնագիտական դասագրքերի ամփոփ ձեռագրում: Ինչպես առաջին անգամ դիպուկ կերպով նկատել է Սեբուհ Ասլանյանը, հենց այդ հիշատակարանները ցույց են տալիս, որ վաճառականները ձեռագիրը որպես արժեքավոր ուղեցույց իրենց հետ տարել են բոլոր այն ուղղություններով, որոնք արձանագրել են այդ ձեռագրի դատարկ էջերին[3]: Դա նշանակում է, որ Նոր Ջուղայի առևտրական ցանցում վաճառականների շրջանառությունն ուղեկցվել է ձեռնարկ-դասագրքերի շրջանառությամբ, որոնք, ցանցի կենտրոն Նոր Ջուղայում կատարելով դասագրքի գործառույթ, ցանցի այլ բնակավայրերում վաճառականների համար հանդես են եկել որպես օգտակար ուղեցույցներ: Հայ վաճառականների շրջանում մասնագիտական գրականության պահանջարկը, փաստորեն, Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների համար ապահովեց գործածության շատ ավելի լայն դաշտ, քան հեղինակի սկզբնական նպատակադրումն էր՝ գործածությունը վանքի դպրոցում կրթական նպատակներով: Հիշատակարանները անփոխարինելի տեղեկություններ են տրամադրում նաև Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների շրջանառության ուղղությունները բացահայտելու տեսանկյունից:

[1] ՄՄ, ձեռ. թիվ 8443, թ. 137բ:

[2] Տե՛ս նույն տեղում, պահպանակ Բ:

[3] Տե՛ս Aslanian S., *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 137:

Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ազդեցությունը հայկական վաճառականական գրականության վրա: Կոստանդ Ջուղայեցու՝ վաճառականական շրջանակներին հասցեագրված երկերի շրջանառությունը կարելի է փաստագրել նաև այն գրիչների կամ հեղինակների միջոցով, որոնք զանազան վայրերում ընդօրինակել են դրանք կամ որպես աղբյուր օգտագործել իրենց իսկ աշխատություններում: Կոստանդ Ջուղայեցու երկերից օգտված հեղինակներն ամենևին սակավ չեն, ինչը թեև մնացել է ուշադրությունից դուրս, այնուհանդերձ կարևոր եզրակացությունների տեղիք է տալիս ընդհանրապես հայկական վաճառականական գրականության վրա ունեցած ազդեցության առումով:

«Աշխարհաժողով» ու «Դիներն ռազմին» ձեռնարկների շարադրանքից 12 տարի անց՝ 1699 թ., Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանում լույս տեսավ Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» հայտնի գիրքը: Հայ վաճառականությանը՝ «առ հայազուն վաճառաշէր եղբարս»[1] հասցեագրված այս երկը գալիս էր պատվավոր տեղ զբաղեցնելու հայ վաճառականական գրականության ժանրում, որի հիմքերը դրել էր Կոստանդ Ջուղայեցին ոչ վաղ անցյալում: Ընդ որում, Նոր Ջուղայում ու Ամստերդամում ընդամենը 12 տարվա տարբերությամբ ի հայտ եկած այս ձեռնարկները բնորոշվում են աչքի զարնող բովանդակային համանմանությամբ: Երկերի առնչակցության վերաբերյալ հետազոտողների գնահատականները հիմնված են հենց այդ համանմանության վրա: Այսպես՝ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանի վերաբերյալ իր նշանավոր հոդվածներում դեռևս 1966-1967 թթ. Լևոն Խաչիկյանը հպանցիկ կարծիք է հայտնել «Աշխարհաժողով»-ից Ղուկաս Վանանդեցու լայնորեն օգտված լինելու վերաբերյալ[2]: 1975 թ. Գեղամ Գևոնյանը, առանձին հոդված նվիրելով Ղուկաս Վանանդեցու երկին, կրկնել է նույն տեսակետը[3]: Առևտրական երկու երկերի առնչակցության վերաբերյալ այդ տեսակետն ավելի ուշ հաստատել է նաև Էլիզաբեթ Թաջիրյանը[4]: Ի վերջո, 2011 թ. տպագրված իր ուղենշային գրքում Սեբուհ Ասլանյանը Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ»-ն բնորոշել է որպես Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի «խտացված տարբերակ»՝ ամստերդամյան հրատարակությունը բացատրելով ձեռագիր

[1] **Ղուկաս Վանանդեցի**, Գանձ չափոյ, էջ 3:

[2] Տե՛ս **Khachikian L.**, *The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi*, p. 178, idem, *Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693)*, p. 266:

[3] Տե՛ս **Kévonian K.**, *Marchands arméniens au XVIIe siécle*, pp. 200-201:

[4] Տե՛ս **Թաջիրյան Է.**, «Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» աշխատության հայկական աղբյուրների հարցի շուրջ», *ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 19-րդ նստաշրջանի զեկուցումների թեզիսներ*, Երևան, 1985, էջ 7:

օրինակների սակավությամբ և այն դժվարություններով, որոնց կարող էին բախվել հայ վաճառականները ձեռագիր «Աշխարհաժողով»-ը հայթայթելիս[1]: Ընդհանուր առմամբ, այս բոլոր գնահատականների հիմքում ընկած է մի ընդհանուր մոտեցում՝ Ղուկաս Վանանդեցու երկը հիմնված է «Աշխարհաժողով»-ի վրա, այլ կերպ ասած՝ դրա փոխադրված ու համառոտ տարբերակն է: Ավելացնենք նաև, որ լայնորեն օգտվելով Կոստանդ Ջուղայեցու երկերից՝ Ղուկաս Վանանդեցին միևնույն ժամանակ հանդես է բերել ստեղծագործական ինքնուրույնություն՝ փոխառված հատվածների նկատմամբ ցուցաբերելով ընտրողական մոտեցում և իր երկում ներառելով առևտրական մեծաքանակ տեղեկատվություն, որը բացակայում է Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում:

Ղուկաս Վանանդեցին միակ հեղինակը չէ, որն իր երկերը շարադրելիս օգտվել է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներից: Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 9284 ձեռագիրը, որն ընդօրինակվել է Աստրախանում 1753 թ., ընդգրկում է միայն մի բնագիր՝ առևտրական խնդիրների ժողովածու, որի հեղինակը Հակոբջանի որդի Ծատուրն է: Աստրախանի ստվարացող հայկական համայնքի ու հատկապես առևտրական խավի համար շարադրված այս երկը կազմված է ներածական հատվածից ու առևտրական խնդիրներ ներառող 20 էջից, որոնցից յուրաքանչյուրը հեղինակն անվանել է «փարդ»: Հատկանշական է, որ Ծատուրի ուշադրությունից չեն վրիպել այդ ժանրի նախորդ երկերը. նա ոչ միայն ծանոթ է եղել թե՛ Կոստանդ Ջուղայեցու ու թե՛ Ղուկաս Վանանդեցու գրքերին, այլև դրանցից հատվածներ արտագրել իր կազմած ժողովածուում: Այսպես՝ Ծատուրն իր ձեռնարկի տիտղոսաթերթը ձևավորել է «Գանձ չափոյ»-ի ակնհայտ նմանողությամբ՝ չվարանելով կատարել մի քանի անհրաժեշտ փոփոխություններ: Մասնավորապես, հրատարակության վայր Ամստերդամը փոխարինվել է Աստրախանով, 1699 թվականը՝ 1753-ով, իսկ երկի հովանավոր Պետրոս Ջուղայեցու անունը՝ հենց իր՝ հեղինակի անվամբ[2]: Այնուհետև երկի ներածական մասը կազմելիս Ծատուրն օգտվել է Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ից՝ ոչ մեծածավալ հատվածներ արտագրելով դրա տարբեր մասերից[3]:

[1] Տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 137: Այս հարցին ուսումնասիրողն անդրադարձել է նաև իր ավելի վաղ հրատարակված կարևոր հոդվածում՝ **Aslanian S.**, "The Circulation of Men and Credit: The Role of the Commenda and the Family Firm in Julfan Society", *The Journal of the Social and Economic History of the Orient*, 2007, vol. 50, no. 2, pp. 137-138:

[2] Տե՛ս **ՄՄ**, ձեռ. թիվ 9284, թ. 4ա: Որքան մեզ հայտնի է, Ծատուրի այս երկն առաջին անգամ իր աշխատանքներում օգտագործել է Գեղամ Գևոնյանը (տե՛ս **Kévonian K.**, *Marchands arméniens au XVIIe siécle*, p. 201:

[3] Տե՛ս **ՄՄ**, ձեռ. թիվ 9284, թ. 5բ-6ա:

Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2950 ձեռագրում ընդօրինակված է «Արիթմաթիկայ, այսինքն համարողական արհեստ» բնագիրը: Թվաբանական այս երկի հեղինակը հայտնի չէ, սակայն կիրառված եզրերն, չափական միավորներն ու թվաբանական խնդիրները կապված են արևելահայ առևտրական միջավայրի հետ: Ինչ վերաբերում է ժամանակի հարցին, ապա ժամանակագրական միակ ցուցումը ուսումնական նյութի մեջ որպես օրինակ բերված «Թիւ Փրկչին 1738» արտահայտությունն է[1], որը, ինչպես նշում է Հակոբ Անասյանը, «եթէ գրքի շարադրմանը չի վերաբերում, ապա գոնէ ցոյց է տալիս նրա ընդօրինակման ժամանակը»[2]: Ինչպես իրավացիորեն նկատել է նա, «ներքին տուեալներից երեւում է, որ թարգմանական գործ չէ, այլ ուղղակի հայերէն շարադրուած»... «Արիթմաթիկայ»-ի հեղինակը հայ է: Եւ այդ հայ հեղինակին, որը գրաբարով է խմբագրել իր գիրքը, ապահովաբար ծանօթ են եղել Կոստանդ Ջուղայեցու երկերը, ինչպէս վկայում են «Արիթմաթիկայ»-ի հիմքում ընկած լեզուական, տերմինային եւ այլ տուեալներ»[3]: Փաստորեն, «Արիթմաթիկայ»-ի անանուն հեղինակը ևս չի շրջանցել հայ վաճառականական գրականության հիմքերը դրած Ջուղայեցի գլխավոր աշխատությունները:

Եթե Կոստանդ Ջուղայեցուց օգտված վերը նշված երեք հեղինակներն իրենց աշխատություններում արծարծել են առևտրական ինչ-ինչ թեմաներ, ապա տաղարան ընդօրինակած Մինասի որդի Հովհաննես Ագուլեցու օրինակը փոքր-ինչ զարմանալի է: Խոսքը վերաբերում է Մաշտոցյան Մատենադարանի թիվ 3055 ձեռագրին, որում ներկայացված տաղարանը զարմանալիորեն բացվում է վաճառականական խրատներով[4], որոնք ակնհայտորեն վերցված են «Աշխարհաժողով»-ից: Թե երբ և որտեղ է ընդօրինակվել ձեռագիրը, պարզություն է մտցնում Հովհաննես Ագուլեցու հիշատակարանի համապատասխան հատվածը՝ «1831 ՌՄՁ թվին, Յունվարի ԻԶ-ում (26), ի Գունուկ»[5]: Այս օրինակը հատկանշական է հետևյալ առումով՝ Նոր Ջուղայի առևտրական ցանցի անկումից գրեթե մեկ դար անց էլ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները չէին կորցրել իրենց հետաքրքրությունը հայ հեղինակների համար:

Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներից վերը նշված հեղինակների որոշակի կախվածությունը կարևոր եզրակացությունների ուղի է բացում երկու ուղղությամբ: Նախ՝ այդ երկերը 17-րդ դարավերջին հասել են Ամստերդամ, իսկ Նոր Ջուղայի ցանցի անկումից հետո էլ՝ Աստրախան ու Ագուլիս, ինչը կարևոր է դրանց շրջանառությունը փաստագրելու տեսանկյու-

[1] ՄՄ, ձեռ. թիվ 2950, թ. 4ա:

[2] **Անասյան Յ.**, *Հայերէն թուաբանական դասագրքերի պատմութեան համար*, էջ 673:

[3] Նույն տեղում, էջ 673-674:

[4] Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 3055, թ. 2ա-3ա:

[5] Նույն տեղում, թ. 3բ:

նից: Եվ երկրորդ՝ առևտրական այլ բնագրերի վրա Կոստանդ Ջուղայեցու երկերի ազդեցությունը հիշեցնում է վաղ արդի Եվրոպայում դիտված այն երևույթը, երբ վաճառականական լայն շրջանակների համակրանքին արժանացած դասագրքերը չափանիշ էին դառնում համանման ձեռնարկների ապագա հեղինակների համար: Այս առումով լավագույն օրինակն, անկասկած, ֆրանսիացի վաճառական ու հեղինակ Ժակ Սավարիի (1622-1690 թթ.) «Կատարյալ վաճառականը» դասագիրքն է, որն առաջին հրատարակությունից մինչև 1800 թվականն ընկած ժամանակահատվածում ունեցել է ավելի քան 30 հրատարակություն, ներառյալ՝ անգլերեն, հոլանդերեն ու իտալերեն թարգմանությունները[1]: Ինչպես ցույց է տալիս ֆրանսիացի մի հետազոտողի ուսումնասիրությունը, 18-րդ դարում մարսելցի վաճառականներից յուրաքանչյուրն ուներ այս ձեռնարկի իր օրինակը[2]: Ֆրանչեսկա Տրիվելլատոյի նորերս արված դիպուկ գնահատականում ակնհայտորեն արտացոլված է Սավարիի ձեռնարկի ունեցած համբավը ողջ Եվրոպայում. «Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը», որն առաջին անգամ հրատարակվել է 1675 թվականին, 17-րդ դարի ֆրանսիական առևտրական հասարակության մանիֆեստն էր: Այն նաև վաղ արդի Եվրոպայի ամենից շատ վերահրատարակված, թարգմանված ու ընդօրինակված առևտրական դասագիրքն էր»[3]: Հասկանալի է, որ վաճառականական այս ձեռնարկի համաեվրոպական համբավը պայմանավորում էր այն հնարավորինս ընդօրինակելու եվրոպացի հեղինակներից շատերի ձգտումը: Համանման նշանակություն կարելի է վերագրել նաև Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկներին, որոնք, գրական այդ ժանրում առաջին ամբողջական օրինակները լինելով հայ իրականության մեջ, ուղենշային դերակատարություն պետք է ստանային հետագա հայ հեղինակների համար: Կոստանդ Ջուղայեցու երկերը, փաստորեն, հայ իրականության մեջ խաղացել են մոտավորապես այն դերակատարությունը, ինչ Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականն» է ունեցել վաղ արդի Եվրոպայում: Ինչպես եվրոպացի հեղինակներն էին փորձում օգտվել Սավարիի ձեռնարկից ու կրկնել նրա հա-

[1] Ժակ Սավարիի դասագրքի՝ 1675-1800 թթ. վերաբերող բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը տե՛ս *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l'usage des marchands*, pp. 488-497: Սավարիի առևտրական ձեռնարկի մասին մանրամասն տե՛ս **Hauser H.**, "Le 'parfait négociant' de Jacques Savary", *Revue d'historie économique et sociale*, 1925, no. 13, pp. 1-28, **Hoock J.**, *Le phénomène Savary*, pp. 113-123, **Coffman D.**, "Economic Thought and State Practice in the Atlantic World: The 'Phénomène Savary' in Context", ed. by D. Coffman, A. Leonard and W. O' Reilly, *The Atlantic World*, New York, 2015, pp. 618-632: Վերջին հոդվածի կապակցությամբ շնորհակալություն եմ հայտնում հեղինակին իր աշխատանքի էլեկտրոնային տարբերակը սիրալիր կերպով իմ տրամադրության տակ դնելու համար:

[2] Տե՛ս **Carrière C.**, *Négociants marseillais au XVIIIe siècle: Contribution à l'étude des économies maritimes*, Marseilles, 1973, pp. 765-770:

[3] **Trivellato F.**, *The Promise and Perils*, p. 99.

ջողությունը, այնպես էլ հայ հեղինակներն էին հետևում «Հայկական Սավառին»՝ Կոստանդ Ջուղայեցուն, որը վաճառականական գրականության առաջին ամբողջական ու արժեքավոր նմուշների հեղինակն էր հայ իրականության մեջ:

Հայ ընդօրինակող գրիչները ևս հետաքրքրություն են ցուցաբերել առևտրական երկերի նկատմամբ: «Աշխարհաժողով»-ի ու «Դռներն առագամ»-ի վեց ընդօրինակություններից չորսն արվել են Նոր Ջուղայում, մեկի արտագրման տեղը հայտնի չէ, իսկ ինչ վերաբերում է վեցերորդին, ապա այն ընդօրինակվել է «ի քաղաքն մեծին Կոստանդինուպոլսին»[1] 1712 թվականին: Եվս մի օրինակ. Մաշտոցյան Մատենադարանի թիվ 8361 ձեռագրում, որն ընդօրինակվել է Շամախիում 1742 թ., կարելի է հանդիպել «Աշխարհաժողով»-ից արտագրված տեքստի՝ ընդամենը 1 թերթ ծավալով[2]: Ընդ որում, գործ չունենք ամբողջական ընդօրինակությունից պոկված թերթի հետ, քանի որ գրիչ Մարտիրոսը հաջորդաբար արտագրել է այնպիսի հատվածներ, որոնք բնագրում ամենևին իրար չեն հաջորդում: Այսպիսով՝ Կոստանդնուպոլիսն ու Շամախին ևս պետք է ներառել Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների շրջանառության տիրույթում:

Ի՞նչ եզրակացությունների ուղի են հարթում նշված փաստերը: Ինչպես արդեն տեսանք, Կոստանդ Ջուղայեցու երկերը լայնորեն շրջանառվել են Նոր Ջուղայի առևտրական ցանցում ու դրանից դուրս: Դրանք որպես գրպանի ուղեցույց հայ վաճառականների կողմից տարվել են տարբեր ուղևորություններով՝ Սուրաթ, Եվրոպա, Թիֆլիս, Թավրիզ, Իրանի տարածքում՝ Մաշհադ ու Շիրազ: Հայ հեղինակներն ու գրիչներն էլ օգտվել կամ ընդօրինակել են այս երկերը զանազան վայրերում՝ Ամստերդամ, Աստրախան, Ագուլիս, Կոստանդնուպոլիս ու Շամախի, ընդ որում՝ նույնիսկ Նոր Ջուղայի առևտրական ազդեցիկ դիրքերի փլուզումից շատ տասնամյակներ անց: Բոլոր այս փաստերը վկայում են այն մասին, որ Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկները լայնորեն շրջանառվել են Նոր Ջուղայի ցանցում ու իրենց որոշակի դերն են ունեցել «ամենաթանկ ապրանքի»[3], այն է՝ տեղեկատվության փոխանցման ասպարեզում: Իհարկե, այդ դերն անհամեմատելիորեն ավելի նվազ էր, քան նամակագրության խաղացած դերակատարությունը, այնուհանդերձ դա էլ բավական է հայկական առևտրական ձեռնարկները տեղեկատվության շրջանառության եղանակների շարքում ներառելու համար: Այսպիսով՝ նամակագրությունը և ձեռնարկ-դասագրքերը, տարբեր հարաբերակցությամբ, այն երկու առանցքներն էին, որոնց շուրջ կայանում էր տեղեկատվության շրջանառության համակարգը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում:

[1] Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 15, թ. 109բ-110ա:
[2] Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 8361, թ. 145ա-բ:
[3] Բնորոշման համար տե՛ս Markovits C., նշվ. աշխ., էջ 82, 219:

ՆԵՐԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. «Աշխարհաժողով»-ի ձեռագրերը

Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ը մեզ է հասել 6 ձեռագիր ընդօրինակություններով: Վաղագույն օրինակները վերաբերում են 1687 թ.: Հատկանշական է, որ այդ թվականին են գրվել ձեռագրերից միանգամից 3-ը, ընդ որում՝ նույն վայրում՝ Նոր Ջուղայում: Սա, ինչպես արդեն տեսանք, թույլ է տալիս ենթադրել, որ Կոստանդ Ջուղայեցին իր երկերն ամբողջացրել է հենց 1687 թ., և նույն այդ ժամանակ էլ սկիզբ է առել դրանց բնագրերը ձեռագրերում ընդօրինակելու գործը:

ա. Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64: Գրչության թվական՝ 1680-1695 թթ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Ստացող՝ Աւետ: Թերթ՝ 322: Թուղթ, 15 x 10: Տող՝ 15: Միասին: Նոտրգիր: Նկարագրել է Ս. Տեր-Ավետիսյանը 1970 թ.[1]:

Ձեռագրի առաջին մասը (թ. 7ա-156ա) զբաղեցնում են Կոստանդ Ջուղայեցու երկու ձեռնարկները հետևյալ ընդհանուր խորագրով՝ «Վասն նորայլուս մանկանց եւ երիտասարդաց վաճառականաց խրատ»: Երկու ձեռնարկների միջև գրված հիշատակարանում գրիչը նշել է ընդօրինակության վայրն ու ժամանակը՝ «Ըսպահան՝ Ջուղայու վանք Սուրբ Ամենայփրկչումն, թիւն Փրկչին ՌՈՁԷ (1687)»[2]: Ձեռագիր այս մասյանի մնացած մասերն այլ ժամանակի ընդօրինակություն են: «Հարցմունք և պատասխանիք» խորագրով կրոնական հարցուպատասխանը, օրինակ, արտագրվել է 1685 թ., իսկ «Պատմութիւնս Խիկարայ Հիմաստոյ» բնագիրը՝ 1695 թ.:

Հատուկ ընդգծման կարիք ունի այս ձեռագրի հարուստ լինելը բազմաթիվ հետաքրքիր հիշատակարաններով, որոնք այս գրչագիր օրինակն առավել բնութագրական են դարձնում: Այս հիշատակարանները, որոնց թվաքանակը հասում է երկու տասնյակի, հիանալի հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու վաճառականական միջավայրում ձեռագրի, դրանով իսկ՝ ձեռնարկների գործածության մասին: Առևտրական այս ձեռնարկներից օգտվող վաճառականներից մեկը՝ Ավագը, օրինակ, բավարարվել է Սպահանից իր հեռանալն արձանագրելով՝ առանց նշելու ուղևորության նպատակակետը՝ «ես՝ Աւագըս, Ըսպահանայ վերկայի»[3], մինչդեռ Ավետի առևտրական գործունեության երթուղին առավել մանրամասն է պատկերված: Այսպես՝ 1697 թ. վերջերին ճանապարհ է ընկնում դեպի Սուրաթ, 1701 թ. արդեն Հովհանի հետ իր գործունեությունը շարունակում է Եվրոպայում, իսկ 1705 թ. նա ուղևորվում է Հյուսիսարևելյան Իրան՝

[1] Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., էջ 857-858:
[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 46բ:
[3] Նույն տեղում, թ. 2բ:

Մաշհադ[1]: Առևտրական բնույթի հետաքրքիր գրառում է նաև ձեռագրի վերջին թերթին 1764 թ. թողնված խիստ դժվարընթեռնելի գրանցումը, ուր ներկայացված են մի քանի ապրանքների գներ[2]: Իրենց գործունեության առնչվող տվյալների գրանցումից բացի՝ վաճառականները հարկ են համարել ձեռագրում թողնել նաև ընտանեկան գրառումներ: Այսպես՝ գրանցից մեկը վերաբերում է Հովհանի դստեր ծննդյանը 1701 թ. հուլիսի 2-ին՝ «փոքր թիւն ձզ (86+1615=1701) նախ(ա)յ գ (3)՝ օրն շաբաթ, պարոն Յովանին աղջիկ եղաւ՝ անունն Որուզլու»[3]: Հիշատակարաններից մյուսն էլ արձանագրել է Հարությունի հարսանիքը «փոքր թիւն ձէ (87+1615=1702) համիրայ ի (20)-ումն», այսինքն՝ 1702 թ. դեկտեմբերի 16-ին[4]: Այսպիսով՝ այս ձեռագիրը հատկանշական է թե՛ վաղագույն գրչագիր օրինակների շարքում լինելու և թե՛ հիշատակարանային հարուստ նյութ պարունակելու տեսանկյունից:

բ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 8443: Գրչության թվական՝ 1687 թ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Գրիչ՝ Կոստանդին գալըապե"տ: Թերթ՝ 248: Թուղթ: 16,1 x 10,5 – 11: Միասյուն: Նոտրգիր: Նկարագրվել է 1970 թ.[5]:

Ձեռագիրն ընդօրինակվել է 1687 թ., ինչը հաստատում են գրչի թողած 2 հիշատակարանները: Նախ՝ «Աշխարհաժողով»-ում գրիչը հավաստում է, որ երկն ընդօրինակվել է «Ըսպահան՝ Ջուղայու վանք Ս(ուր)բ Ամենափրկչումն, թ(ի)վն Փրկչին ռչձէ (1687)»[6], ապա նույն տարեթիվը հաստատվում է նաև «Վիճաբանութիւն հոգւոյ ընդ մարմնոյ» երկի հիշատակարանում՝ «թ(ի)վն Փրկչին ռչձէ (1687)»[7]: Հետագայի հիշատակարանները թույլ են տալիս որոշ չափով ուրվագծել ձեռագրի անցած ուղին: 1692 թ. Սաֆարի գրանցման մեջ այն արդեն հիշատակվում է Շիրազում[8]: Ավելի քան կես դար անց գրված վրացատառ ու վրացերեն հիշատակարաններում հանդես են գալիս Թիֆլիսն ու Թավրիզը[9]: Հետաքրքրական են նաև ձեռագրի տարբեր մասերում վրացերեն կարճ գրությունները, որոնք կարող են գրված լինել վրացական միջավայրում գործած ու վրացերենը յուրացրած հայ վաճառականներից մեկի կողմից:

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 2բ, 6ա:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 322ա:

[3] Նույն տեղում, թ. 2բ:

[4] Նույն տեղում, թ. 2ա: Հավելենք նաև, որ այս բոլոր հիշատակարանները հրատարակել ենք առանձին ուսումնասիրությամբ՝ Բալդարյան Ս., «Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթը», *Պատմություն և քաղաքականություն*, 2019, թ. 4, էջ 32-47:

[5] *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1970, էջ 745:

[6] ՄՄ, ձեռ. թիվ 8443, թ. 137ա:

[7] Նույն տեղում, թ. 167բ-168ա:

[8] Տե՛ս նույն տեղում, թ. 137բ:

[9] Տե՛ս նույն տեղում, պահպանակ Բ:

Այս ընդօրինակությունը ևս փաստում է առևտրական ձեռնարկների ձեռագրերում վաճառականների կողմից ընտանեկան գրություններ թողնելու սովորույթը: Այսպես՝ Հովանջանը հստակ թվագրությամբ թողել է իր երեխաների ծննդյան մասին արձանագրումներ, որոնք վկայում են 1698-1701 թթ. ծնված նրա 2 որդիների՝ Ծատուրի ու Դիլաքի և 1 դստեր՝ Մերջանի մասին. «Աստուծով փոքր թուին ձգ (83+1615=1698) շբաթ ա (1)-ումն Աստուած պտուղ արետ ինձ՝ Յովանջանիս, առաջնածին, որ էր աղջիկ, անունն Մէրջան դրինք: Թուին ձդ (84+1616=1700) արամ իէ (27)-ումն Ծատուրն եղաւ: Տէր Աստուած երկար ամօք պահեսցէ: Թուին ձզ (86+1615=1701) համիրայ ի (20) Դիլաքն ծնաւ: Աստուած պահէ»[1]: Նշենք, որ այսօրինակ վկայությունները կարևոր կարող են լինել երեխաների անվանակոչության միջոցով հայ վաճառականների էթնոմշակութային դիմապատկերն ուրվագծելու տեսանկյունից:

Կարևոր է նշել նաև, որ այս ձեռագիրը թերի է. ընկած են թերթեր ինչպես սկզբից, այնպես էլ վերջից: Բնագրում բացակայում է «Աշխարհաժողով»-ի սկիզբն ընդգրկող բավական մեծ հատված, ինչի պատճառով այս ընդօրինակությունն սկսվում է Փեգուի (Մյանմար) առևտրական նկարագրությամբ:

գ. Օքսֆորդ, Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14: Գրչության թվական՝ 1685-1687 թթ.: Տեղ՝ Նոր Ջուղա: Թերթ՝ 145: Տող՝ 21: Թուղթ: Միասյուն: Նոտրգիր: Նկարագրվել է 1918 թ.[2]:

Այս ձեռագիրը ևս պատկանում է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների վաղագույն ընդօրինակությունների շարքին՝ արտագրված լինելով 1687 թ.: Ձեռագրի առաջին մասը, սակայն, պետք է ընդօրինակված լինի 2 տարի ավելի վաղ, ինչպես երևում է «Հարցմունք և պատասխանի» երկի հիշատակարանից: Ձեռագիրը թերի է. պակասում են սկզբի մի շարք թերթեր հենց նշված երկից: «Աշխարհաժողով» ու «Դռներն ռազմին» ձեռնարկների բնագրերը, սակայն, արտացոլված են ամբողջությամբ: Ի տարբերություն նախորդ երկուսի՝ այս ընդօրինակությունը հարուստ չէ հիշատակարաններով: Այնուհանդերձ, կարելի է մատնանշել 1798 թվակիր մի հիշատակարան, որը, համահունչ լինելով ձեռագրի բովանդակությանը, արտացոլում է չափի ու կշռի միավորների՝ գազի ու լիտրի մասին տեղեկատվություն[3]:

[1] Նույն տեղում, պահպանակ Ա:

[2] Տե՛ս Baronian S. and Conybeare F., *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library*, Oxford, 1918, pp. 244-245:

[3] Տե՛ս Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 1բ:

դ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 10704: Գրչության թվական՝ 1710 թ.: Գրիչ՝ Յուսէփ որդի Սավարի: Թերթ՝ 229: Թուղթ: 16,4 x 10,3: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 18-20: Կազմ՝ կաշ, Ա փեղկին արձանագրութիւն՝ «Շինեցաւ եւ գրեցաւ ձեռամբն Սավարի որդի Յուսէփին. յիշատակ է իւրն եւ իւր ծնողացն, թվին ՌՃԾԹ (1710)»: Նկարագրվել է 2007 թ.[1]:

Ձեռագրի սկզբում առկա է բովանդակության ցանկ՝ «Ցանգ գրգոյս» խորագրով: Ընդ որում, գրանում ներկայացված երկերի համեմատությունը ձեռագրի բուն բովանդակության հետ ի հայտ է բերում զգալի տարբերություններ, ինչը ցույց է տալիս, որ ձեռագիրն ինչ-որ մի ժամանակ մասնատվել է: Հիշատակարանների առումով գրչագիր այս օրինակը հարուստ չէ: «Աշխարհաժողով»-ի բնագիրը ամբողջությամբ է արտացոլված, գրչի ձեռագիրը գեղեցիկ է և միանգամայն ընթեռնելի, ուստի այս ընդօրինակությունը կարող է դասվել լավագույնների շարքին:

ե. Օքսֆորդ, Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 15: Գրչության թվական՝ 1712 թ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս: Գրիչ՝ Յաղուբ որդի Յովհան: Թերթ՝ 121+8 դատարկ: Թուղթ: Միասյուն: Նոտրգիր: Նկարագրվել է 1918 թ.[2]:

«Աշխարհաժողով»-ի այս օրինակի մասին չկա ոչ մի ցուցում առկա գրականության մեջ՝ բացի, իհարկե, ձեռագրացուցակից, ուստի Կոստանդ Ջուղայեցու դասագրքերի ձեռագրերի շարքում սա բոլորովին նորություն է: Հատկանշական է, որ ընդօրինակող գրիչը ծագումով Նոր Ջուղայից է («որ եմ ջուղայեցի»), թեև ձեռագիրն արտագրվել է «ի քաղաքն մեծին Կոստանդինուպոլսին»[3]: Իր հիշատակարանում ընդգծելով Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների պահանջարկն ու օգտակարությունը վաճառականական շրջանակների համար՝ գրիչը հարկ է համարել ընդգծել, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի պէտս ուսմանց մարդոց արուեստ մեծի և փոքրին, յուժ պիտանացու մանկանց վաճառականին»[4]:

զ. Երևան, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 5994: Գրչության թվական՝ ԺԸ դ.: Թերթ՝ 126: Թուղթ: 15 x 9,5: Միասյուն: Նոտրգիր, շղագիր: Տող՝ 22: Կազմ՝ ստվարաթուղթ: Նկարագրվել է 1970 թ.[5]:

Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ընդօրինակություններից միակն է, որ հստակ թվագրություն չունի: Ելնելով, սակայն, գրչության առանձնահատկություններից՝ նկարագրությունը կազմողներն այն թվագրել են 18-րդ դ.:

[1] Տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, էջ 93:
[2] Տե՛ս Baronian S. and Conybeare F., նշվ. աշխ., էջ 245:
[3] Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 109բ-110ա:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Բ, էջ 228:

Ձեռագրում ընդօրինակված են միայն Կոստանդ Ջուղայեցու առևտրական երկերը: Լուսանցագրերը բաց են թողնված հավանաբար հետագայում լրացնելու նպատակով: Եթե ձեռագիրը չպարունակեր վաճառականական ձեռնարկներին չառնչվող երկու ուշագրավ հատված, ապա այս ընդօրինակությունն արժեքավոր դժվար թե հնարավոր լիներ համարել: Այսպես՝ «Աշխարհաժողով»-ի այն մասը, ուր ներկայացված է Հնդկաստանի՝ որպես առևտրական շուկայի նկարագրությունը, ընդմիջվում է մյուս ձեռագրերում չհանդիպող բոլորովին անծանոթ մի բնագրով՝ «Յաղագս առևտրի մարգարտի Հնտստան, որ վաճառականք չէվայ խսէպ առեն»[1]: Առանձին երկի տպավորություն թողնող այս հատվածը բաժանված է 21 գլուխների, որոնցից յուրաքանչյուրում պատմվում է թանկարժեք քարի մի տեսակի մասին՝ մարգարիտ, ալմաս, կարմիր յաքութ և այլն: Եթե բնագիրը չունենար որևէցե հիշատակարան, այդպես էլ անհայտ կմնար այս երկի հեղինակի հարցը. «Սորա տեսանողն և գրողն խօճայ Մինասեան պարոն Սաֆրազի որդի Աղամալ աղան է եղել, Աստուած լուսաւորէ իւր հոգին, որ յետ վաղճանին իւր դուստր Սօփիայ խանումն ետ ինձ այս օրինակս կամ մարգարտին չէվին հիսապի օրինակն, որ օրինակեցի: Աստուած իւրն արևշատութիւն տայ, Աստուած իւր խնդրուածքն կատարէ: Գծօղ սարին՝ Նազարեթի որդի անպիտան Միքայէլ՝ չնչին ծառայ»[2]: Ինչպես ցույց է տալիս հիշատակարանը, թանկարժեք քարերի առևտրին վերաբերող այս բնագրի «տեսանողն ու գրողն» Մինասյան նշանավոր ընտանիքից Սաֆրազի որդի Աղամալն է, որը 1747 թ. Նադիր շահի հրամանով իր հորեղբայր Էմնիազի հրկիզումից հետո ստանձնել էր Մինասյան առևտրական տան ղեկավարությունը[3]: Աղամալի դուստր Սոֆիան բնագիրը տվել է գրիչ Միքայելին, որն էլ, իր հերթին, այն ներառել է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների իր ընդօրինակության մեջ: Մինասյան առևտրական ընտանիքը[4] Շահրիմանյանների ու Գերաք-Միրմանների հետ մեկտեղ մտնում էր Նոր Ջուղայի այն 3 նշանավոր ընտանիքների շարքը, որոնք ներգրավված էին թանկար-

[1] ՄՄ, ձեռ. թիվ 5994, թ. 4ա-12բ: Այս բնագրի վրա ցայսօր ուշադրություն է հրավիրել միայն Սոնա Թաջիրյանը՝ հիշատակելով Աղամալ Մինասյանի գրչին պատկանող ««Յաղագս վաճառականութեան ուսանելոյ խրատ յոյժ պիտանի եւ օգտակար» Մատենադարանում պահուող անտիպ աշխատանքը մարգարտի եւ այլ թանկարժէք քարերի մասին» (**Թաջիրեան Ս.**, «Խոջա Մինաս Մինասեանի Հաշուեմատեանը», *Հանդէս ամսօրեայ*, 2019, թ. 1-12, էջ 202): Նկատենք սակայն, որ նշված վերնագիրը վերաբերում է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներին, իսկ Աղամալ Մինասյանի գրչին պատկանում է միմիայն «Յաղագս առևտրի մարգարտի Հնտստան, որ վաճառականք չէվայ խսէպ առեն» խորագրով հատվածը:
[2] ՄՄ, ձեռ. թիվ 5994, թ. 12բ:
[3] Մինասյան ընտանիքի տոհմածառը տե՛ս **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, p. 162:
[4] Մինասյան վաճառականական ընտանիքի մասին մանրամասն տե՛ս **Խաչիկյան Շ.**, նշվ. աշխ., էջ 81-100, **Aslanian S.**, *From the Indian Ocean to the Mediterranean*, pp. 159-164, **Թաջիրեան Ս.**, նշվ. աշխ., էջ 195-296:

մեջ քարերի համաշխարհային առևտրի մեջ: Ուստի ոչ միայն պատահական չէր, այլև զուտ գործնական ետնախորք ուներ Աղամալ Մինասյանի հետաքրքրվածությունն այս բնագրով: Այս փաստը ցույց է տալիս նաև, որ հայկական առևտրական ընտանիքները ոչ միայն անտարբեր չէին առևտրական գրականության հանդեպ, այլև անձամբ հավաքում էին իրենց գործունեության ոլորտներին առնչվող առևտրական բնագրեր:

Այս ձեռագիրն առանձնահատուկ դարձնող մյուս բնագրային շեղումն ավելի ընդարձակ է: Նախքան վաճառականական խնդիրների ընդօրինակումն անցնելը «Աստուծով ներքոյ գրեալս Մատրասին մարգարտին չէվայ հիսաբն է» և ապա «Աստուծով ներքոյ գրեալն Սուրաթին չէւայ հասաբին դուռն այ» խոսքերից հետո գրիչը զետեղել է մարգարտի առքուվաճառքի մասին բնագրեր՝ կից աղյուսակներով[1]*: Մինասյան վաճառականական ընտանիքի պատմության տեսանկյունից բացառիկ այս նյութերը, որոնք մինչև այսօր որևիցէ ուշադրության չեն արժանացել, ուշագրավ են դարձնում Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներն ամփոփող այս ձեռագիրը:*

Բ. Բնագրի կազմության հանգամանքները

Քննական բնագիրը պատրաստելիս կատարվել է բնագրագիտական մանրակրկիտ աշխատանք. համեմատվել են «Աշխարհաժողով»-ի բնագիրն ամփոփող բոլոր 6 ձեռագրերը, նշվել են բոլոր ընթերցումները, որոնցից լավագույնները զետեղել ենք բնագրի մեջ, իսկ մյուսները՝ էջերի տողատակ: Որպես ընթերցում չենք նշանակել տողափոխ-էջափոխի հետևանք բառերի կամ վանկերի կրկնությունները և տողադարձի հետևանք գաղտնավանկի ը-երը:

Մի քանի խոսք ընթերցումների նշանակման եղանակի մասին: Նախևառաջ տողատակում նշվում է բնագրային ընթերցումը, ապա դրվում է] պայմանական նշանը, որից հետո՝ ձեռագրի պայմանանիշը և ապա՝ այդ ձեռագրում հանդիպող ընթերցումը: Օրինակ՝ տողատակում կարդում ենք՝ ալմազն] C էլմասն: Սա նշանակում է, որ բնագրային ընթերցումը՝ «ալմազն», C ձեռագրում հանդիպում է «էլմասն» տարբերակով: Եթե ձեռագրում բացակայում է որևէ բնագրային ընթերցում, ապա այդ ձեռագրի պայմանանիշի կողքին դրվում է – նշանը: Եվ ընդհակառակը, եթե որևէ ձեռագրում հանդիպում է մյուս ընդօրինակություններում բացակայող հավելագրություն, ապա ձեռագրի պայմանանիշից հետո դրվում է + նշանը և ապա՝ այդ ձեռագրում հանդիպող հավելագրությունը:

Բնագիրն առավել հասկանալի դարձնելու նպատակով այն օժտել ենք արդի կետադրությամբ:

[1] Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 5994, թ. 27բ-44բ:

Գ. Համեմատված ձեռագրերի պայմանանիշերը

A – *ՄՄ, ձեռ. թիվ 8443, 1687 թ., 149ա-168ա:*

B – *ՄՄ, ձեռ. թիվ 10704, 1710 թ., 25ա-63ա:*

C – *ՄՄ, ձեռ. թիվ 5994, 18-րդ դար, 1ա-27բ:*

J – *Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, 1687 թ., 7ա-47ա:*

O – *Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, 1687 թ., 34ա-59բ:*

X – *Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 15, 1712 թ., 3բ-24բ:*



Նկար 3. Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի առաջին էջը
(լուսանկարը՝ Սարգիս Բալդարյանի)
Աղբյուրը՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարան, հայ. ձեռ. թիվ f 14, թ. 34բ

ԲՆԱԳԻՐ

ՎԱՍՆ ՆՈՐԱՅՑՈՒՍ[1] ՄԱՆԿԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ[2] ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ ԽՐԱՏ[3]

Օգնեա՛յ[4] մեզ[5], մարդասէ՛ր սուրբ հոգի, և հա՛ս ի թիկունս[6] տկարութեան[7] մերում: ՌՃԼԶ[8] (1687), որ թիւն է մեր Փրկչին, գրվեցաւ[9] գիրքս այս, արվեստին[10] խիստ է, բարի՝ հիմանողին[11], դռնէն է սայ[12] ռաղամին[13], անհասանելի է ամենայնին[14], բաւական[15] է այսքան[16] շրջողին, միտն բացրվի ուսանողին: Ես՝ աշակերտ իմ[17] վարպետին, տամ ողորմի յարաժամին[18], արժան լինի նայ[19] դրախտին[20]:

- Ո՛վ եղբայր[21], վաճառակա՞ն ես, թէ՞ կուզես[22] վաճառական լինես[23]:

- Այո՛[24], եղբայր, վաճառականի որդի եմ, կամիմ[25] վաճառական[26] լինեմ[27]: Ունե՞ս[28] ինչ մի խրատ[29] օգտի[30] վասն իմոյ շահաւէտութեան[31]:

- Այո՛[32], փառք ամենապարգև[33] տվողին[34], որ[35] կայ խրատ ի սուրբ գրոց և[36] կայ խրատ բազմաչրջիկ[37] ծերոց[38], որ[39] ասեն[40]. «Երբ կամիցես[41] մարդիք[42] քեզ ինչ[43] արասցեն, արասցես և դու[44] նոցայ»: Մի՛ լինիր[45] ստայխօս[46], մի՛ լինիր[47] քուֆրատու[48], մի՛ լինիր[49] գրկող[1], մի՛ լինիր[2]

---

[1] նորայցուս] B նորահաս, C նորուս
[2] երիտասարդաց] C + քրիստոնէից
[3] վասն... խրատ] OX -
[4] օգնեայ] C օգնեա, OX ազնեայ
[5] մեզ] O + մեզ
[6] թիկունս] O թիգունս
[7] տկարութեան] O տրկարութեան
[8] ՌՃԼԶ] B ՌՃՁԶ-ումն, X հազար զ (6) հարիւր ութսուն և սխանին
[9] գրվեցաւ] B գրեցաւ
[10] արվեստին] O արուեստին
[11] հիմանողին] B յիմանողին, O յիմանիողին, X հիմացողին
[12] սայ] O սա
[13] ռաղամին] BX բողդամին
[14] ամենայնին] X ամենանին
[15] բաւական] X բովական
[16] այսքան] X այսմանց
[17] իմ] CJ եմ
[18] յարաժամին] BX արաժամին, J յարարժամի
[19] նայ] O նա, X + ի
[20] դրախտին] X + Ամէն, ՌՃԼԶ (1687), որ թիւն է... նայ դրախտին] C Յաղագս վաճառականութիւն ուսանելոյ խրատ յոյժ պիտանի և օգտակար

[21] եղբայր] J եղպար, X եխբայր
[22] կուզես] C կամիս
[23] լինես] C լինիլ
[24] այո] B այոյ
[25] կամիմ] JO + որ
[26] կամիմ վաճառական] X վաճառական կամիմ
[27] լինեմ] C լինիլ, X լինել
[28] ունես] BCO ունիս
[29] մի խրատ] X խրատ մի
[30] օգտի] B -
[31] շահաւէտութեան] B շայհաւէտութեան
[32] այո] B այոյ
[33] ամենապարգև] B ամենայպարգևողին, J ամենայպարգև
[34] տվողին] B -, O տրւօղին, X տուողին
[35] որ] X -
[36] և] X -
[37] բազմաչրջիկ] B բազմաչրջիք, C բազմաշրջիկ, O բազմաշրջիք
[38] ծերոց] C + ասացեալ
[39] որ] X -
[40] ասեն] X այս են
[41] կամիցես] O կամեսցես
[42] մարդիք] C մարդիկք
[43] ինչ] C զինչ
[44] դու] B տու
[45] լինիր] B լենել, J լինել
[46] ստայխօս] BCO ստախօս
[47] լինիր] BJ լինել
[48] քուֆրատու] J քուֆատու, X քֆրատու
[49] լինիր] BJ լինել

ուխտազանց, որ է[3] եղբարազանց[4], մի՛ լինիր[5] երդումնակեր[6], մի՛ լինիր[7] բարկացող[8], մի՛ լինիր[9] ինքնակամ[10] և ինքնահաճ[11], այլ լե՛ր[12] հեզ և[13] խոնարհ[14], երկանամիտ[15] և համբերող[16]: Եւ որչափ որ գիտուն լինես[17], հարց և այլոցն[18], որ առաւել[19] ևս[20] գիտենաս[21], և որչափ որ բարձրանաս[22], դու քեզ[23] խոնարհ[24] կալ, քան զամենայն[25]:

- Բարի հրամայեցեր, եղբա՛յր[26] բարի և հիմաստուն[27]: Այլ ես ունե՞ս[28] ինչ մի[29] խրատ վասն ի պէտս գնելոյ[30] և վաճառելոյ[31]:

[1] գրկող] BCX գրկօղ
[2] լինիր] BJ լինել
[3] որ է] X -
[4] եղբարազանց] C իղբարազանց, X իղբարազանց
[5] լինիր] BJ լինել
[6] երդումնակեր] C Երդմնակեր, J երդմնակերպ
[7] լինիր] BJ լինել
[8] բարկացող] BX բարկացօղ
[9] լինիր] BJ լինել
[10] ինքնակամ] J ինքնակամք
[11] ինքնահաճ] JX ինքնայհաճ
[12] լեր] J հեր
[13] և] C -
[14] խոնարհ] J խոնար, X խօնահր
[15] երկանամիտ] BC Երկայնամիտ, O յերկայնամիտ, X յերկանամիտ
[16] համբերող] B համբերօղ
[17] լինես] CO լինիս
[18] այլոցն] C այլոց, J այոցն, X այլոցն
[19] առաւել] X առավել
[20] ևս] BCX -
[21] գիտենաս] C գիտուն լինիս
[22] բարձրանաս] J բաձրանաս
[23] քեզ] C զքեզ
[24] խոնարհ] J խոնար, X խոնահր
[25] զամենայն] X զամենան
[26] եղբայր] J եղբար
[27] հիմաստուն] C իմաստուն, X յիմաստուն
[28] ունես] BCO ունիս
[29] ինչ մի] O -
[30] գնելոյ] B գնալոյ

- Այո՛[32], ահայ[33] տամ քեզ խրատ: Մի՛ երթիցես միայն ի[34] ճանապարհ[35], անփորձ և անճանաչ[36] ընկերի հետ մի՛ նստիցես[37] և մի՛ ճնիցես[38]. զուցէ սպանցէ[39] քեզ[40] և առցէ զինչս քո: Պաշարն[41] ի տաշտէտ վեր[42], ընկերն[43] ի տանէդ, քաղաքն ի ծոցդ[44] պահեայ[45], գրին[46] դամբարն[47] ի ջուպդ[48], դանբարն[49] ի թամբալիքդ[50], կշեռքն[51] ուր[52] դրամերովն[53] ի սխտեանդ[54], կիսազազն[55] ի գոխտիդ[56], խեյքդ[57] ի գլուխդ[58], միտքդ[59] առ Աստուած

[31] վաճառելոյ] B վաճառելու
[32] այո] BX այոյ
[33] ահայ] CO ահա
[34] ի] C -
[35] ճանապարհ] J ճանարհ, X ճանապահր
[36] անճանաչ] CO անճանաչ
[37] նստիցես] B նստցես
[38] ճնիցես] J ճնեցիս, X ճնեսցես
[39] սպանցէ] BC ըսպանանիցէ
[40] քեզ] BCO զքեզ, X -
[41] պաշարն] C պաշար, X պաշարտ
[42] վեր] C վեր առ
[43] ընկերն] BC ընկեր, X ընկերս
[44] ծոցդ] C ծոցդ
[45] պահեայ] C պահեա
[46] գրին] C գրիչ
[47] դամբարն] B դանպարն, C կաղամարդ, OX կղամպարն
[48] ջուպդ] C ճուպդ, X ջուբդ, J + պահեայ
[49] դանբարն] C դանբարդ
[50] թամբալիքդ] B թամպալիքըդ, C թամպալիքդ, O թանբալիքդ, X թամպալիքդ
[51] կշեռքն] B կշեռն, C կշեռքդ, X քըշեռքն
[52] ուր] BX իւր
[53] դրամերովն] BX դրամներովն, C տրամներովն, O դրամանովն
[54] սխտեանդ] BO սախտիանդ, C սախտիանդ, X սախտիանքդ
[55] կիսազազն] BCX կիսայզազն
[56] գոխտիդ] C գօտիդ
[57] խեյքդ] C խեյքդ, X խէյքդ
[58] գլուխդ] C գլուխդ, X գըլուխդ
[59] միտքդ] C միտքդ, X միտկդ

ուղիղ ճանապարհ[1]: Ինչ Աստուած շնորեսցէ[2] քեզ, անօվն[3] շատացի՛ր, այլոցն մի՛ կողոպտեր[4] եւ որքն մի՛ զրկեր, մշակին հախն առ քեզ մի՛ պահեր[5]: Ժամի և աղօթքի[6] ժիր կացի՛ր[7], տուրք[8] և ողորմութենէ մի՛ ձանձրանալ[9], զիր և հասապ[10] պինդ[11] ուսած[12] պիտես[13]: Թէ դու մարդոյ[14] իմին առնուս[15] և[16] թէ դու[17] մարդոյ[18] իմին տաս[19], քաշելու իմինն քաշէ՛, չափելու[20] իմինն[21] չափէ՛, խամբարելու[22] իմինն խամբարէ՛[23] և քիսակիդ[24] բերանն բաց մի՛ թողուլ[25], կապէ՛ և մրէ՛[26]: Անփորձ մարդի[27] փոխ[28] և ամանաթ մի՛

[1] ճանապարհ] X ճանապահր
[2] շնորեսցէ] C շնորհեսցէ, O շնորհէ
[3] անօվն] B այնով, COX այնով
[4] կողոպտեր] B կողոպտիր, X կողոպտել
[5] պահեր] B պախեր: Եւ որքն… պահեր] X -
[6] աղօթքի] BX աղօթկի, C աղօթից, J աոօթի
[7] կացիր] X կաց
[8] տուրք] C տուրքէ
[9] ձանձրանալ] CO ձանձրանար
[10] հասապ] C հիսապ, X հասաբ
[11] պինդ] B պինտ և, O պինտ
[12] ուսած] J յուսած, X ուսաց
[13] պիտես] CO պիտիս
[14] մարդոյ] O մարդուց, X մարդից
[15] առնուս] BC տաս
[16] և] C կամ, X + կամ
[17] դու] BC -
[18] մարդոյ] O մարդու, X մարդինց
[19] տաս] BC առնուս
[20] չափելու] J չափելոյ
[21] իմինն] B իմինըն
[22] խամբարելու] B խանբարելու, C համպարելու, J խամբարելոյ, X խմբարելու
[23] խամբարէ] B խանբարէ, C համպրէ, X խմբարէ
[24] քիսակիդ] C քսակիդ, O քիսակիդ, X քիսակի
[25] թողուլ] COX թողուր
[26] մրէ] X մհրէ
[27] մարդի] BC մարդոյ
[28] փոխ] B փող

տալ[29], եթէ[30] դու ըստուքիւ[31] գիտենաս, թէ լէվ[32] ախտիբարի[33] մարդ այ[34], ա (1), բ (2), գ (3) հոգին[35] կլ հարց և փորձ[36], թախեխ[37] արա՛յ[38], ապայ[39] թէ[40] նայ[41] փոխ[42] տուր, եայ[43] ամանաթ՝ թամասըկով[44] և վկայիւ[45], բայց զամենայն արդտ[46] և տուրտ[47] գրեա՛յ[48], գրեա՛յ[49] և գրեա՛յ[50], էս օրէն[51] վաղն[52] մի՛[53] ձգեր և նմիկլս[54] պախն[55] մի՛ ձգեր:

- Լաւ և բստոմ[56] շայեցայ[57] ի խրատոց[58] քոց, եղբա՛յր[59]: Կու

[29] տալ] CO տար
[30] եթէ] X թէ
[31] ըստուքիւ] BX ըստուգիւ, C ստուգիւ
[32] լէվ] X լավ
[33] ախտիբարի] C հախտիպարի
[34] այ] C է, X յինի
[35] հոգին] C հոգու, X յոգին
[36] փորձ] C փորց
[37] թախեխ] B -
[38] արայ] C արա
[39] ապայ] O ապա
[40] թէ] X -
[41] նայ] C եա
[42] փոխ] B փող
[43] եայ] C եա
[44] թամասըկով] B թամասըկով, C թամասուկով, X թամասկով
[45] վկայիւ] X վկայով
[46] արդտ] C արտ
[47] տուրտ] OX տուրքտ
[48] գրեայ] C գրեա
[49] գրեայ] C գրեա, X-
[50] գրեայ] C գրեա
[51] օրէն] C օրէ
[52] վաղն] C վաղէն
[53] մի] B մին
[54] նմիկլս] BCO նիմիկէս, X յիմիկէս
[55] պախն] BCO պահ, X պահքն
[56] բստոմ] C ստոյգ, X բստոմկ
[57] շայեցայ] B շահեցայ, O շահեցա, X յսեցայ
[58] խրատոց] C խրատուց
[59] եղբայր] J եխպար

խնդրեմ, որ քաղաքէ քաղաք, երկրէ[1] յերկիր ապրանաց ապրանքի ուղէտութիւնն[2] չափերն[3], քաշերն[4], փողերն[5] և[6] բառակներն[7] և ամենայն ինչ[8] ևս ասացես[9]:

- Բարի է, իմ սիրելի՛ եղբայր[10]: Ինչ գիտեմ, ասեմ, բայց[11] ինչ որ[12] ոչ գիտեմ, թողութիւն[13] շնորհեա՛յ[14]:

- Առա՛[15], եղբա՛յր[16], Աստուած շնորհեսցէ[17] քեզ թողութիւն[18]:

- Ասեմ[19] քեզ, եղբա՛յր[20], ըզգուշութեամբ[21] ունկն[22] դիր և ի միտ առ[23] զամենայն ըստ կարգաւ[24]: Որ[25] յարևելից[26] գնամք ի յարևմուտ[27], կայցումք

հառաջ[28] Մլթան[29],

բ[30] (2)՝ Լահոռ[31],

գ (3)՝ Սրհընդն[32],

դ (4)՝ Ջահանապատ[33],

ե (5)՝ Աքպարապատ, որ է Էգրայ[34],

զ (6)՝ Խուրջայ և Հնդվան[35],

է (7)՝ Բանկալայ[36],

ը (8)՝ Բիարփաբանայ[37],

թ (9)՝ Բնարիս[38],

ժ (10)՝ Մօվն[39],

ժա (11)՝ Ղազիփուռ[40],

ժբ (12)՝ Ջալալփուռ[41],

ժգ (13)՝ Շահզատափուռ[42],

ժդ (14)՝ Խէրապատ,

ժե (15)՝ Դարիապատ[43],

ժզ (16)՝ Դօլվաբապատ[44],

ժէ (17)՝ Սրհնջն[45], որ էտոնք դախիլ[46] ի[47] Պուռուպն[48] այ,

ժը (18)՝ Բէռանփուռ[1],

---

[1] երկրէ] BCO յերկրէ
[2] ուղէտութիւնն] X ուղիտութիւնն
[3] չափերն] C չափերն
[4] քաշերն] C քաշերն
[5] փողերն] C -
[6] և] J -
[7] բառակներն] CO բառակներն, X բառակլերն
[8] ինչ] X ինչն
[9] ասացես] C + ինձ
[10] եղբայր] J եղպար, X + բարի
[11] բայց] J բաց
[12] որ] B -
[13] թողութիւն] BJ թողութիւնն
[14] շնորհեայ] B շնորհեայ, CO շնորհեա
[15] առա] B առայ
[16] եղբայր] J եղբար: Առա՛, եղբա՛յր] X բայց
[17] շնորհեսցէ] J շնհորհեսցէ
[18] թողութիւն] J թողութիւնն
[19] ասեմ] J ասեմք
[20] եղբայր] J եղբարք
[21] ըզգուշութեամբ] BX զգուշութեամբ
[22] ունկն] B ունկն, X ունկ
[23] առ] C + մի բառ միոջէ
[24] կարգաւ] X կարժաւ
[25] որ] X -
[26] յարևելից] J յարևերից
[27] յարևմուտ] J յարեմուտ, O յարևմուտն
[28] հառաջ] COX յառաջ
[29] Մլթան] X Մըլթան
[30] բ] C 2
[31] Լահոռ] B Լայհոռ, X Լայոռն
[32] Սրհընդն] B Սրհնդն, C Սարհնդն, O Սարհընդ, X Սըրհընդ
[33] Ջահանապատ] J Ջանապատ, X Ջահնապատ
[34] որ է Էգրայ] CX -
[35] Հնդվան] BC Հնդուան, O Հընդվաան, X Հընդվան
[36] Բանկալայ] X Բընարիս
[37] Բիարփաբանայ] O Բիարփաբանա
[38] Բնարիս] X Հուկլի
[39] Մօվն] BC Մավ
[40] Ղազիփուռ] B Ղազիփուռն, C Ղազփուռ
[41] Ջալալփուռ] B Ջալալփուռն, J Ջառալփուռ
[42] Շահզատափուռ] B Շահզատափուռն, C Շահզադափուռ, O Շահզադափուռն, X Շահզադայփուռ
[43] Դարիապատ] B Դարևայպատ, C Դարևապատ, X Դարիայպատ
[44] Դօլվաբապատ] X Դօլվաբայպատ
[45] Սրհնջն] BO Սըրընջն, C Սրընջ, X Սըրնջն
[46] դախիլ] C տախիլ
[47] ի] JX -
[48] Պուռուպն] X Պռուպն

ժթ (19)՝ Սուրաթն,

ի (20)՝ Գուջրաթն[2],

իա (21)՝ Օվռանկապատ,

իբ (22)՝ Շազառն, որ էտոնք[3] դախիլ[4] ի[5] Դաման այ[6],

իգ (23)՝ Հէդարապատ[7],

իդ (24)՝ Մուշլի բանդարն[8],

իե (25)՝ Փէգու[9] և Աւայ[10], որ է[11] Փէգուայ[12] թագաւորին փայիթախտն,

իզ (26)՝ Բութանդ,

իէ (27)՝ Խաթայ և Խութայ[13],

իը (28)՝ Չիրպատ,

իթ (29)՝ Քօչին[14],

լ (30)՝ Սէլան[15],

լա (31)՝ Մալաղայ,

լբ (32)՝ Ջաքաթրայ, որ ոմանք Բաթավիայ[16] կասեն[17],

լգ (33)՝ Թռնատի[18],

լդ (34)՝ Ամբուն,

լե (35)՝ Մուքասարն,

լզ (36)՝ Թիմուռն,

լէ (37)՝ Սլիօոն[19],

լը (38)՝ Մանիլայ[20],

լթ (39)՝ Շարինօվն[21],

խ (40)՝ Հաբաշըստան[22],

խա (41)՝ դառնամք ի Բանդար Հաբասին[23] և[24] Քունկն[25] և այլ չային[26] բանդարներն[27],

խբ (42)՝ Ըսպահան[28] ու[29] աթրաֆներովն[30],

խգ (43)՝ Մաշատն և Բալխ[31] ու[32] Բխարայ[33], որ է Ոզբէկըստան[34],

խդ (44)՝ Ղանդահարն[35],

խե (45)՝ Ղազնի[36],

խզ (46)՝ Քաբուլն,

խէ (47)՝ Աթակն[37],

խը (48)՝ Փշաւռն[38],

խթ (49)՝ Քիշմիրն[39],

ծ (50)՝ դառնամք զամք[1] Թարվէզ և Յարևան[2],

---

[1] Բէռանփուռ] B Բէռամփուռ, COX Բէռամփուռն
[2] Գուջրաթն] BC Գուջրաթ
[3] էտոնք] O էս
[4] դախիլ] C տախիլ
[5] ի] X -
[6] Դաման այ] BJ Պուռուպն այ
[7] Հէդարապատ] C Հէյտարապատ
[8] բանդարն] C պանտարն
[9] Փէգու] C Փէկու
[10] Աւայ] O Աւա, X Հավայ
[11] է] O -
[12] Փէգուայ] C Փէկուայ
[13] Խութայ] X Խութա
[14] Քօչին] C Քօչինն
[15] Սէլան] O Սէլանն
[16] Բաթավիայ] B Բաթաւեայ, OX Բաթաւիայ
[17] կասեն] C ասեն
[18] Թռնատի] B Թռնայատի
[19] Սլիօոն] O Սլիօռ
[20] Մանիլայ] O Մանիլա
[21] Շարինօվն] BC Շարինօվ, X Շահրինօվն
[22] Հաբաշըստան] C Հապաշստան, X Հապաշըստան
[23] Բանդար Հաբասին] B Բանդար Աբասին, C Բանտար Ապասին, X Բանդարի Աբասին
[24] և] X + բանդարի
[25] Քունկն] X Քունկըն
[26] չային] B չայի, C չահին, X -
[27] բանդարներն] C բանտարներն, OX բանդարներն
[28] Ըսպահան] BCX + և
[29] ու] BC իւր չար
[30] աթրաֆներովն] B աթրաֆներնօվն, X աթրաֆներօվն
[31] Բալխ] B Բալխի, C Պալխի
[32] ու] BCJO -
[33] Բխարայ] C Պուխարայ, O Բխարա, X Բուխարայ
[34] Ոզբէկըստան] C Էօզպէկստան, O Ոզբէկրստան, X Ոզբէկստան
[35] Ղանդահարն] B Ղանդայհարն, C Ղանտահարն
[36] Ղազնի] X Ղազի
[37] Աթակն] X Աթակըն
[38] Փշաւռն] O Փշաւռ, X Փշաւռն: Քաբուլն, Աթակն, Փշաւռն] C Փշաւռն, Քաբուլն, Աթակն
[39] Քիշմիրն] O Քիշմիր

ծա (51)՝ Գիլան[3] և Մազանդարան[4], Գասկառ և Քէմայ և[5] Բոլշա և Լայիջան[6] և[7] Լաշտարնշան,

ծբ (52)՝ Գանջայ ու[8] Ղարաբաղ[9], Շիրվան[10], Շամախի[11],

ծգ (53)՝ Մօսկովն[12],

ծդ (54)՝ Լէհ[13] ու Մաջարն[14],

ծե (55)՝ դառնամք ի[15] Պասրայ և Արապըստան[16],

ծզ (56)՝ Բաղդատ[17],

ծէ (57)՝ Հալապ[18],

ծը (58)՝ Կոստանդինայպօլիս[19], որ է Ըստանբօլ[20],

ծթ (59)՝ Բուրսայ[21] և Ադրանայ[22],

կ (60)՝ Մսր[23],

կա (61)՝ դառնամք[24] Ազռում[25],

կբ (62)՝ Թօղաթ,

կգ (63)՝ Իզմիր[26],

կդ (64)՝ Մսինայ[27],

կե (65)՝ Ալիկոնայ[28],

կզ (66)՝ Վանատիկն[29],

կէ (67)՝ Ալաման,

կը (68)՝ Չէնէվայ[30],

կթ (69)՝ Մառչիլայ[31] և Ֆռանգսայ[32],

հ (70)՝ Ընկըթէլն[33],

հա (71)՝ Մարդամ[34] և Տանձկայ[35],

հբ[36] (72)՝ Ասպանիայ[37] և Ենկիդունիէն[38], որ ոսկին տեղն[39] դուս գկոյ[40]:

Որ նումրայ[41] հբ (72)-ն[42] կու նմանի հբ (72) արմատենի[43] ծառոյն[44] և երկուտասան[45] ախբիւրան[46], որ

[1] գամ] COX + ի
[2] Յարևան] J Հարեվան
[3] Գիլան] C Կիլան
[4] Մազանդարան] C Մազանտարան, X Մազանդրան
[5] և] JX -
[6] Լայիջան] O Լահիջան
[7] և] X -
[8] ու] BC և, O -
[9] Ղարաբաղ] J Ղարայբաղ, C Ղարապաղ, X + և
[10] Շիրվան] BC + և
[11] Շամախի] X Շամբախի
[12] Մօսկովն] BOX Մօսկօվն, C Մօսկօֆն
[13] Լէհ] BX Լէ
[14] Մաջարն] C Մաճառն, X Մաջառն
[15] ի] J -
[16] Արապըստան] C Արապստան, X Արաբըստան
[17] Բաղդատ] J Բաղտադ, X Բաղդադ, C + և Մուսոլ և Տիարբէքիր
[18] Հալապ] X Հալաբ
[19] Կոստանդինայպօլիս] BC Կոստանդնուպօլիս, O Կոստանդինապօլիս
[20] Ըստանբօլ] COX Ըստամպօլ
[21] Բուրսայ] C Պուրսայ
[22] Ադրանայ] C Ատրանայ; Եւ Ադրանայ] X -
[23] Մսր] X Միսր
[24] դառնամք] BCX + ի
[25] Ազռում] BO Ազրում, C Արզրում, X Արզռում
[26] Իզմիր] BX Իզմիր
[27] Մսինայ] CX Միսինայ
[28] Ալիկոնայ] J Աւիկօնայ
[29] Վանատիկն] C Վէնէտիկ
[30] Չէնէվայ] C Չէնէվա, X Չէնըվայ
[31] Մառչիլայ] B Մառշլայ, C Մառչիլեա, O Մառչիլիայ
[32] Ֆռանգսայ] BC Ֆռանկսայ, X Ֆռանկստան
[33] Ընկըթէլն] C Ընկլըթէռն, X Ընկըրթէլն
[34] Մարդամ] B Մարդամն, C Մարտամն
[35] Տանձկայ] C Տանսկայ, O Տանձկա, X Տձնկայ
[36] բ, գ, … հբ] C 2, 3 … 72
[37] Ասպանիայ] C Սպանիեայ, X Ըսպանիայ
[38] Ենկիդունիէն] C Նէնկիտունեն, J Ենգիդունիդունիէն, O Ենգիդունինեն
[39] տեղն] BC տեղըն
[40] գկոյ] BC կգոյ, X կու գայ
[41] նումրայ] C նումրա
[42] հբ (72)-ն] C հբ, J հբ (72)-նու, OX հբ (72)-նը
[43] արմատենի] B արմայվենի, X արմավենում
[44] ծառոյն] X ծառուն
[45] երկուտասան] BO երկոտասան, C ժբ-ան
[46] ախբիւրան] BC աղբիւրան, O աղբիւրան, X աղբերան

Մովսէս[1] մարգարէն[2] և[3] խարայէկացիքն[4] նովաւ[5] անցուցանէին մինչև խ (40) ամ:

Որ էս[6] վերոյգրեալ[7] Հընդուստան[8] թէ Ֆաղաֆանումն[9], թէ Արանկանումն[10], ինչ խրիտ[11] որ առնես[12], ճ-ին (100) գ (3) կէս[13] ուշուրն այ, որ իր[14] Ֆոյի[15] խալչովն[16] ճ-ին (100) ե (5) դուս[17] կելնի[18]: Եւ[19] ալիշվէրիշ[20] փողն ըռուփի այ[21], ամայ[22] գայի[23] անայ[24] կլ կու խօսէն[25], որ ժզ (16) անէն ա[26] (1) ռուփի[27] այ, որ ա[28] (1) ռուփին[29] բ (2) մախալ[30] կիսէն կէս[31] մաս այ պակաս արժաք այ, որ կէս մասէն[32] բ[33] (2) դիրէք[34] կէս[35] այ, որ է[36] ժ (10) գրան[37], որ մին[38] ռուփին[39] լբ (32) փաֆայ[40] փէսայ է[41], որ մին[42] փէսէն դ (4) չդամ է[43], որ մին[44] չդամն[45] բ[46] (2) դմբրի[47] է[48], որ մին[49] դմբրին[50] ը (8) օրոչ[51] է[52], որ ա[53] փաֆայ[54] փէսէն կդ (64) օրոչ[55] է[56]: Եւ[57] ինչ որ[58] ճօթեղէն դամայ՝ յօնդրէն և յօնդրինէն[59], զառբաֆն[60] կամ այլ քանկայզին[61] ճօթէրն[62] գազով[63] կլ, թօփով[64] կլ[65] կու խօսէն[1]: Եւ ինչ որ[2]

[1] Մովսէս] BCX Մօվսէս
[2] մարգարէն] J մարգարէ, O -
[3] և] O -
[4] խարայէկացիքն] B խարալէկացիքն
[5] նովաւ] B նօվաւ, X նաւօվ
[6] էս] C այս
[7] վերոյգրեալ] JO վերուգրեալ
[8] Հընդուստան] C Հնդստան
[9] Ֆաղաֆանումն] O Ֆաղաֆանում, B Ֆաղաֆնումն, X Ֆաղաֆներումն
[10] Արանկանումն] O Արանկանում, X Արանկներումն
[11] խրիտ] C խրիդ
[12] առնես] BC անես, X կառնես
[13] կէս] C //
[14] իր] O ար
[15] Ֆոյի] C Ֆօյի
[16] խալչովն] BX խալնովն, C խարչովն, O խալնովն
[17] դուս] C դուրս
[18] կելնի] O կու ելնէ
[19] Եւ] C Եա
[20] ալիշվէրիշ] C ալիշվէրիշի, X ալիսվէրիշ
[21] ըռուփի այ] O ռուփի ա
[22] ամայ] O ամա, X -
[23] գայի] J գայ, O գանի
[24] անայ] C անէ
[25] կու խօսէն] C կխօսին
[26] ա] B մին
[27] ռուփի] BCX ըռուփի
[28] ա] B մին
[29] ռուփին] BCX ըռուփին
[30] մախալ] C մաղալ
[31] կէս] C //

[32] մասէն] C մասան
[33] բ] C + //
[34] դիրէք] J կիրէք
[35] կէս] C -
[36] որ է] X -
[37] գրան] X գրանն
[38] մին] COX ա
[39] ռուփին] BCX ըռուփին
[40] փաֆայ] C փաֆա
[41] է] X այ
[42] մին] COX ա
[43] է] X այ, C + այ
[44] մին] COX ա
[45] չդամն] C չդամէն
[46] բ] X դ
[47] դմբրի] C թմբրի, X դմրի
[48] է] C այ
[49] մին] COX ա
[50] դմբրին] C թմբրին
[51] օրոչ] B օրօն, COX օրօչ
[52] է] X այ
[53] ա] B մին
[54] փաֆայ] C փաֆա
[55] օրոչ] B օրօն, COX օրօչ
[56] է] X այ
[57] Եւ] B զարձեալ
[58] որ] O օր
[59] յօնդրէն և յօնդրինէն] C յօարէն և յօարինէն, OX յօնտրինէն և յօնտրէն
[60] զառբաֆն] C զառպաֆն, O զարբաֆն, X զառբաֆըն
[61] քանկայզին] CO քանկազին
[62] ճօթէրն] C ճօթերն
[63] գազով] X գազօվ
[64] թօփով] OX և թօփօվ
[65] գազով կլ, թօփով կլ] BC թօփօվ կլ, գազով կլ

խակ[3] կապած[4] բարխանայ[5] լինի, քուռով[6] կու խօսվի[7], որ մին[8] քուռին ի[9] (20) այ[10]: Դարձեալ խալեյին[11] և[12] գողլում և[13] քարաստայն[14] և ճազլու-ղարէն[15] և[16] առնբեօվ[17] ոյունքն[18] ողջ[19] կլ[20] քուռօվ[21] կու ծախվի[22], որ էառոնց[23] քուռին իա (21) այ[24], և[25] թիմանին[26] քուռին[27] ի[28] (20) այ[29], և[30] թլաթինն[31], որ է՝ բուլղարն[32], ջօռ[33] կու խոսեն[34], բ-քն[35] (2) ա[36] (1) ջօռ[37] այ[38]:

Դարձեալ խուռջայ և Հնդվան[39] և կամ այլ[40] տեղ, որ լեղակ առուս[41], ողջ[42] Աքպարի դիտր կու խօսեն[43], որ մին[44] դիտրն խ (40) սէր այ, որ ա (1) սէրն լ (30) փէսարար[45] այ[46], որ մին[47] փլսէն դ (4) մսխալ[48] կէս[49] այ[50], որ մին[51] Աքպարի դիտրն եոդճ (5400) մսխալ[52] այ[53]:

Եւ էգրայ[54] քարբարին[55] և մոջա-մին քաշն ժդ (14) փէսարար[56] այ[57], որ լինի[58] կգ (63) մսխալ[59], և մշկին[60] քաշն ժզ (16) փէսարար[61] այ[62], որ լինի ոբ (72) մսխալ[63], և[64] դոմզին[65] և[66] զֆրանին[1] քաշն[2] սէր կու խօսեն[3], որ մին[4] սէրն խ (40) փէսարար[5] այ[6], որ մին[7] քաշն[8] բ (2) փէսարար[9] կլ[10] դարայ[11] յինք[12] կառուն, որ ճասայջայ[13] խբ (42) փէսարար[14] այ[15], քաշն[16] ճձթ[17] (189) մսխալ[18] է[19]:

Դարձեալ Հընդուստան[20], դէրազ լեղակն[21], կլ ինչ օր[22] դարով[23] կու խօսեն[24], փաքայ և քաչայ դիտր[25] կասեն[26], գրայ[27] լեղակին դիտրն Աքպարի[28] այ[29], որ է[30] գ (3) չարէք փաքայ[31], որ[32] ա[33] (1) փաքայ դիտրն[34] խ (40) փաքայ[35] սէր այ[36], որ մին[37] փաքայ[38] սէրն խ (40) փէսա-բար[39] այ[40], որ[41] մին[42] քաչայ դիտրն ի (20) փաքայ[43] սէր այ[44], որ լինի խ (40) քաչայ[45] սէր[46], որ կառի[47] ա (1) քաչայ դիտրն[48] գոզճ (3600) մսխալ[49] այ[50], և ա (1) փաքայ դիտրն էոբճ (7200) մսխալ այ[51]: Դարձեալ ա (1) բաբաք քաշ կլ կայ[52] Հընդուստան[53], որ բօլայ կասեն, որ մին[54] բօլէն կա (61) դիրէք գ (3) գրան[55] այ[56], որ ա (1) գրանն ա (1) ցորէն[57] այ[58], որ ա (1) բօլէն բ[59] (2) մսխալ[1] կէս[2] և[3] է (7) գրան այ[4]:

---

1 կու խօսեն] C կխօսին
2 որ] O or
3 խակ] C ճակ
4 կապած] J ապած
5 բարխանայ] C պարխանայ
6 քուռով] BX քուռօվ, C քուռօվ կլ
7 կու խօսվի] B կու խօսեն, C կխօսին
8 մին] COX ա
9 ի] BX + բան, C ճառ
10 այ] C է
11 խալեյին] B խայիլին, C ճայելին
12 և] C -
13 և] CX -
14 քարաստայն] X քարաստյն
15 ճազլուղարէն] B ազլուղարէն
16 և] X -
17 առնբեօվ] C առճինով, O առնբնով, X առչնով
18 ոյունքն] B որ էառոնք, C ճիլունն որ էառոնք
19 ողջ] J ոխն, O ոխչ, X ողչն
20 կլ] BC -
21 քուռօվ] OX քուռով
22 կու ծախվի] C կծախվի
23 էառոնց] O էառոցնց, X էռոնց
24 այ] C է
25 և] C -
26 թիմանին] BO թիմաչին, C թիմաչն, որ է սախտիանն, ճորա
27 քուռին] X քոլին կլ
28 ի] X իա, C + ճառ
29 այ] C է
30 և] C -
31 թլաթինն] C թէլաղինն
32 բուլղարն] C պուլղարն
33 ջօռ] X ջօռ այ
34 կու խոսեն] BOX կու խօսեն, C կխօսին
35 բ-քն] C երկուքն, X բ-քըն
36 ա] BC մին
37 ջօռ] X ջօռայ
38 այ] C է
39 Հնդվան] OX Հընդվան
40 այլ] BC + ինչ
41 առուս] O առնուս
42 ողջ] O ոխչ, X ողչ
43 կու խօսեն] C կը խօսին
44 մին] COX ա
45 փէսարար] BX փէսայրար
46 այ] C է
47 մին] COX ա
48 մսխալ] C մսղալ
49 մսխալ կէս] X կէս մսխալ
50 այ] C է
51 մին] CO ա, X -
52 մսխալ] C մսղալ
53 այ] C է
54 էգրայ] X էկրայ
55 քարբարին] X քանբարին
56 փէսարար] B փէսայրար
57 այ] C է
58 լինի] C լին
59 մսխալ] C մսղալ
60 մշկին] X մըշկին
61 փէսարար] BX փէսայրար
62 այ] C է
63 մսխալ] C մսղալ
64 և] C -
65 դոմզին] C դոմզին
66 և] X -

1 զֆրանին] C զաֆրանին
2 քաշն] X + կլ
3 կու խօսեն] C կխօսին
4 մին] COX ա
5 փէսարար] B փէսայրար
6 այ] C է
7 մին] COX ա
8 քաշն] BC քաշին, X սէրին
9 փէսարար] BX փէսայրար
10 կլ] X -
11 դարայ] C տարայ
12 յինք] C ինք
13 ճասայջայ] C ճասայ չէ, X ճասաբջայ
14 փէսարար] BX փէսայրար
15 այ] O ա, որ, B -, C է, X + որ
16 քաշն] BC + որ է
17 ճձթ] CX անձթ
18 մսխալ] C մսղալ
19 է] BC -, X այ
20 Հընդուստան] C Հնդստան
21 լեղակն] X լեղակըն
22 օր] BCX որ, C + կայ, X + կայոու
23 դարով] BX դարօվ
24 կու խօսեն] C կխօսին, O կու խօսվի, X լինի
25 փաքայ և քաչայ դիտր] X դարն քաչափաքայ
26 կասեն] B կու խօսեն, C կխօսին
27 գրայ] O գրա, C գէրայ
28 Աքպարի] X Աֆիկարի
29 այ] C կը խօսին
30 է] X -
31 փաքայ] BC + որ է լ սէր, X + այ
32 որ] X և
33 ա] B մին, X ա-ըն
34 դիտրն] X + այ
35 փաքայ] C -
36 փաքայ սէր այ] BC սէր է փաքայ, X սէր փաքայ այ
37 մին] BC -, OX ա
38 փաքայ] J փաք
39 փէսարար] BX փէսայրար
40 այ] C է
41 որ] X և
42 մին] COX ա
43 փաքայ] X փքայ
44 այ] է C
45 քաչայ] C քաչա
46 սէր] O + այ
47 կառի] C կլինի, X ի (20) քաչայ սէրն կէս դիտր քաչայ, որ
48 քաչայ դիտրն] B քաչայ դիտր, որ, X դիտր քաչէն կառի
49 մսխալ] C մսղալ
50 այ] COX -
51 և ա (1) փաքայ դիտրն էոբճ (7200) մսխալ այ] C -
52 կայ] C կա
53 Հընդուստան] C Հնդստան, X Հունդուստան
54 մին] COX ա
55 գրան] B ցորէն, C ցորեն
56 այ] C է
57 ա (1) գրանն ա (1) ցորէն] B ա (1) ցորէնն մին գրան, C ա (1) ցորենն ա (1) գրան
58 այ] C է Որ ա (1) գրանն ա (1) ցորէն այ] X -
59 բ] C բ//

Եւ Բանդարի Սուրաթումն ֆուրզումն նաղդից[5], որ է[6] ոսկի և արշաֆի, արծաթ և մաոչիլ և արասի[7], որ էատոնցն[8] է[9] ճ-ին[10] (100) բ (2) ուշուրն այ: Եւ կ ինչ ապրանք որ կայ, ֆուրզին դալալն[11] գին կառի[12], որ[13] դոմզին[14] և[15] գֆրանին[16], խալիլուն[17], յօնդրին[18] և յօնդրինուն[19], զառբաֆին[20], չարգազին[21], նագյուղարին[22], հարաստպին[23], առնըճով[24] ուլունֆին[25], պէմանուն[26], սէյանին[27], թիմաչին[28] բուլղարին[29], կխառրին[30], տունիրին[31], զռնեխին, գինուն[32], հացախին, գուլաբին[33] և այլ[34] ինչ[35] սաղատ[36] որ[37] լինի՝ թէ բրթեղէն[38] կամ[39] բանբակեղէն[40] կամ աբրշմինեղէն[41], ողջին[42] գին կառեն[43] ռ-ին (1000) լզ (36) ուշուր յինք կառուն[44]: Եւ մոչամն[45], և[46] հարբարն[47], և[48] մարգարիթն[49], և գողլուն[50], և այլ[51] նման[52] սոցունց[53], որ ջուայիրի[54] դախիլ[55] լինի[56], գին կառեն՝ ռ-ին (1000) լը (38) կէս[57] ուշուր[58] յինք կառուն:

[1] մախալ] C մաղալ
[2] կէս] C -
[3] և] BCO -, X այ
[4] այ] C է
[5] նաղդից] B նաղտիցն, CO նաղդիցն, X նաղտինէն
[6] որէ] X -
[7] արասի] C ապասի
[8] էատոնցն] OX էատոնց
[9] է] X -
[10] ճ-ին] C աճ-ին
[11] դալալն] X դալալանին
[12] կառի] X կառնն
[13] որ] X -
[14] դոմզին] C դրմզին
[15] և] CO -
[16] գֆրանին] C զաֆրանին
[17] խալիլուն] C հալեյուն, X խալեյուն
[18] յօնդրին] O յօնարին, X յօնարինուն
[19] յօնդրինուն] B յօնդրինուն և, O յօնարինուն, X յօնդրին
[20] զառբաֆին] B զառբաֆին և
[21] չարգազին] B չարգազին և, X չարգազուն
[22] նագյուղարին] B ագյուղարին և, X + և
[23] հարաստպին] X հարատպին
[24] առնըճով] C արճնով, O առնըճով
[25] ուլունֆին] C ճիլունին
[26] պէմանուն] X պեմանուն
[27] պէմանուն, սէյանին] B սէյանուն և պէմանուն, C սէյանուն և սոպէյմանուն
[28] թիմաչին] B թիմանին, X թիմանին, BC + և
[29] բուլղարին] C պուլղարին, O բուրղարին
[30] կխառրին] C գխառրին

[31] տունիրին] B -, C տորոնին, J տունդգին, X տոնրին
[32] գինուն] B գինուն և, X գինու և
[33] գուլաբին] BO գուլապին, C կիւլապին
[34] այլ] J այ
[35] ինչ] BCX + որ
[36] սաղատ] C սախատ, J սաղ
[37] որ] BCX -
[38] բրթեղէն] C բրդեղէն, J բրթեղէ
[39] կամ] X -
[40] բանբակեղէն] B բանպակեղէն, C բամպակեղէն, O բամբակեղէն, CX + և
[41] աբրշմինեղէն] BC ապրշմեղէն, O աբրշմեղէն, X ապրիշումեղէն
[42] ողջին] O ոխչին, X -
[43] կառեն] J կառուն
[44] կառուն] J կառեն
[45] մոչամն] BX մոչամին, C մոչանին
[46] և] BCX -
[47] հարբարն] B հարբարին, C հարպարին, X հանրբարին
[48] և] C -
[49] և մարգարիթն] B մարգարթին, C մարգարտին, X մարգարիթին
[50] գողլուն] B գողըլին, C գողլուլին, O գրղլուն
[51] այլ] BC + ինչ որ
[52] նման] BC + է
[53] սոցունց] J սոցունց
[54] ջուայիրի] C ջավահիրի, J ջուարի
[55] դախիլ] C տախիլ
[56] լինի] X + կ
[57] կէս] C //
[58] ուշուր] J ուշու

Եւ[1] Սուրաթումն մարգարըթին[2] հաշն ռաթին[3] կու խօսեն[4], որ ժա (11) ռաթին[5] ժ (10) ղիրէթ այ[6], որ ռաթուն[7] խայեվար[8] թանկ[9] կասեն[10]: Մոչամին[11] և հարբարին[12] և[13] մչկին[14] հաշէրն[15] ժը (18) փէսաբար[16] այ[17], որ լինի[18] ձա (81) մախալ[19], որ էս[20] ժը (18) փէսաբարս[21] լա (31) թօլայ կէս այ[22], դոմզին[23] և[24] գֆրանին[25] հաշն խ (40) փէսաբար[26] այ, որ լինի ճձ[27] (180) մախալ[28], որ ա[29] (1) փաճայ[30] սէր այ: Եւ ա (1) թաբաք կ փող կայ[31], որ մօր[32] կասեն, ոսկի այ[33], որ[34] բ (2) մախալ[35] է (7) ղիրէթ կէս այ[36], գինն է[37] ժգ (13) ռուփի[38] վախտի զօրայ[39] գայ[40] եվել[41], գայ[42] պակաս[43]: Եւ մաոչիլնոց[44] ծախսն[45], թէ որ[46] ճէչուպի[47] լինի ճ (100) լաճոի[48] մաոչիլն, որ է[49] մչկէրն[50], ճ-ըն[51] (100) րճժդ (214) ռուփի[52], և ղարայ[53] ղռուշն[54] և[55] դիրաճլուն[56] և[57] հաղազերթանն[58], որ էատոնց[1] ճ-ին[2]

[1] եւ] O + կ
[2] մարգարըթին] B մարգարթին, C մարգարտին, O մարգարիթին
[3] ռաթին] B րռաթին, X ռայթին
[4] կու խօսեն] C կխօսին
[5] ռաթին] OX ռաթինն
[6] կու խօսեն... այ] B - : Այ] X ա
[7] ռաթուն] B ըռաթուն
[8] խայեվար] BX խայեար, C հայեվար
[9] թանկ] BCX թան
[10] կասեն] C + Եւ
[11] մոչամին] C մոչանին
[12] հարբարին] C հարպարին, X հանրբարին
[13] և] C -
[14] մոչամին և հարբարին և մչկին] B եւ մոչամին, հարբարին, մչկին: Եւ մչկին] X -
[15] հաշէրն] C հաշերն
[16] փէսաբար] BX փէսայբար
[17] այ] CX է, որ փէսէն դ կէս մախալ այ
[18] լինի] X + ա սէրն
[19] մախալ] C մաղալ
[20] էս] J է
[21] փէսաբարս] B փէսայբարս, X փէսայբարն
[22] այ] CX + և
[23] դոմզին] C դրմզին
[24] և] BCX -
[25] գֆրանին] C զաֆրանին
[26] փէսաբար] BX փէսայբար
[27] ճձ] CX աճձօ
[28] մախալ] C մաղալ
[29] ա] B մին
[30] փաճայ] O փաճա
[31] կայ] C կա

[32] մօր] X մօհր
[33] այ] C է
[34] որ] X -
[35] մախալ] C մաղալ
[36] այ] C է, B + որ ա (1) ռուփայ հաչիցն բ (2) ղիրէթ կէս այ, որ է ժ (10) զրան պակաս, որ մօրին, C + որ ա (1) ռուփայ հաչիցն բ (2) ղիրէթ կէս է, որ է ժ (10) զրան պակաս, որ մօրին
[37] է] CX -
[38] ռուփի] BX ըռուփի
[39] վախտի զօրայ] B -
[40] գայ] C երբեմն, X գայի
[41] եվել] C ավել, X կու ելեյանայ
[42] գայ] C երբեմն, X գայի
[43] պակաս] X կու պակասի
[44] մաոչիլնոց] B մաոչլնոց, X մաոչիլընոց
[45] ծախսն] X ծախսըն
[46] թէ] X -
[47] ճէչուպի] X յէչուբի
[48] լաճոի] X լաճրի
[49] է] J -, X + լաճրի
[50] մչկէրն] C մաշկարն, X մըշկէրն
[51] ճ-ըն] OX -
[52] ռուփի] BX ըռուփի, B + և ֆլօրի ճ (100) մաոչիլն, որ է սվիլէն, ճ (100) մաոչիլն րճժա (211) ըռուփի, որ կէսվկէս լաճոին ֆլօրին ճ (100) մաոչիլն րճժբ (212) ըռուփի կէս այ, C + և ֆլօրի մաոչիլն, որ է սիվիլէն, ճ (100) մաոչիլն րճժա (211) ռուփի, որ կէսվկէս լաճոին ֆլօրին ճ (100) մաոչիլն րճժբ (212) ռուփի կէս
[53] ղարայ] O ղարա
[54] ղռուշն] X ղուռուշն
[55] և] X -
[56] դիրաճլուն] C տիրաճլուն
[57] և] X -
[58] հաղազերթանն] C հաղզերթանն, X հաղազէրթանն

(100) կէս մախալ[3] եվել[4] կու գծեն[5] քաշումն[6], ճ-ըն[7] (100)՝ բճժե (215) ռուփի[8], և փուլիէն, որ է վալանդին, ճ-ըն (100)՝ բճժգ[9] (213) ռուփի[10], և ֆլօրին, որ է սվիլն, ճ-ըն (100)՝ բճժա (211) ռուփի[11], և զաքնիէն, որ է փովէնն[12], ճ-ըն[13] (100)՝ բճա (201) ռուփի[14]։

Թէ[15] որ[16] ճէջուպի[17] շիճի[18], որ է թանկաստին[19] խալջն[20], յաքոին՝ ճ-ըն (100) բճի[21] (210) ռուփի[22] ա[23] (1) փայ[24], ֆլօրին[25]՝ ճ-ըն (100) բճժէ[26] (217) ռուփի[27] ա[28] (1) փայ[29], կէսվկէս[30] յաքոի[31] ֆլօրին[32]՝ ճ-ըն (100) բճժը (218) ռուփի[33] գ (3) փայ, դարայ[34] դռուշն[35]՝ ճ-ումն (100) ե (5) մախալ[36] եվել[37], որ[38] ճ-ըն (100) բճիա[39] (221) ռուփի[40] ա (1) փայ[41], փովէնն[42]՝ ճ-ըն (100) բճէ[43] (207) ռուփի[44] ա (1) փայ[45], թիմինն[46]՝ ճ[47] (100) մառշիլաքաշն[48] բճժե[49] (215) ա (1) փայ[50], խին[51] աբասին[52]՝ ֆի թումանն[53] լ[54] (30) ռուփի[55], փանչ[56] շային[57]՝ ֆի թումանն[58] իթ[59] (29) ռուփի[60] գ (3) փայ[61], նոր աբասին[62]՝ ֆի թումանն[63] իը[1] (28) ռուփի[2] գ (3) փայ[3]։

[1] էստանց] X էստանք
[2] ճ-ին] BC ճ-ումն
[3] մախալ] C մաղալ
[4] եվել] C ավել, O ևել, X իևլի
[5] գծեն] C կծգեն, O ծգեն
[6] քաշումն] BC + որ
[7] ճ-ըն] OX -
[8] ռուփի] BX ըռուփի
[9] բճժգ] X բճժդ
[10] ռուփի] BX ըռուփի, X + է
[11] և ֆլօրին… ռուփի] BC - ; Ռուփի] X րուփի
[12] փովէնն] C փոէվէցն, O փովէցն, X փովէնքն
[13] ճ-ըն] X -
[14] ռուփի] X ըռուփի
[15] թէ] BC Եւ թէ
[16] որ] C -
[17] ճէջուպի] X յէջուբի
[18] շիճի] JO չճի, X լիճի
[19] թանկաստին] B թանկայստին, C թանկաստրին, X թանկստին
[20] խալջն] B խալճն, C խարջն, X խալճըն
[21] բճի] X բճիալ
[22] ռուփի] B ըռուփի
[23] ա] B մին, X -
[24] փայ] B + և, X -
[25] ֆլօրին] X ֆըլօրին
[26] բճժէ] X բճժէլ
[27] ռուփի] B ըռուփի, X -
[28] ա] B մին, X -
[29] փայ] BC + և, X -
[30] կէսվկէս] X կէսվէկէս
[31] յաքոի] BCX յաքոին, X + և
[32] ֆլօրին] JO ֆլօրի, X + մինզմինու վերայ
[33] ռուփի] B ըռուփի, X -
[34] դարայ] O դարա
[35] դռուշն] X դուռուշն
[36] մախալ] C մաղալ
[37] եվել] B և կ կու գծեն, C ավել կծգեն, X իվել
[38] որ] X -
[39] բճիա] X բճիալ
[40] ռուփի] BX ըռուփի
[41] ա փայ] X -
[42] փովէնն] BCO փովէջն, X փովէնն
[43] բճէ] X բճէլ
[44] ռուփի] O -, BX ըռուփի
[45] ա փայ] X -
[46] թիմինն] BJO թիմինին
[47] ճ] X ան
[48] մառշիլաքաշն] B մառշայքաշն
[49] բճժե] B + ըռուփի, C ռուփի, X բճժել
[50] ա փայ] X -
[51] խին] C ճին
[52] աբասին] C ապասին
[53] թումանն] J թուման
[54] լ] X իրII
[55] ռուփի] BX ըռուփի
[56] փանչ] BC փանջ, OX փանճ
[57] շային] C շահին
[58] թումանն] BX թումանըն, JO թուման
[59] իթ] X իրIII
[60] ռուփի] B ըռուփի, O -
[61] փայ] O + կէս: Դ փայ] BC ժդ անայ, X -
[62] աբասին] C ապասին
[63] թումանն] J թումանըն

Եւ որ գնաս[4] Գուշրաքն[5] և[6] Օվռանգապատ[7] և[8] Ճագառն[9], առք[10] ծախսն կ ոխչ[11] Սուրաթին պէս այ[12]։

Եւ որ գնաս Հէղարապատ[13], ղէրազ ալմազն[14] կ՝ ինչ առք ծախս[15] որ[16] կայ[17], ոխչ[18] Սուրաթին պէս այ[19], ամայ[20] սէրն կ (60) մախալ[21] այ[22], և շմարայ իքմինն քուռի[23] կ կու խօսէն[24], չօքրայ կ, որ ա[25] (1) քուռին ի (20) այ[26], և ա չօքրէն ը (8) այ[27]։ Եւ փողն[28] յուն կ[29] կու խօսէն[30] և ռուփի[31] կ կու խօսէն[32], որ[33] ա[34] (1) բաբաթ[35] յուն[36] կայ[37], որ ոսկի այ[38], ե (5) ռուփի այ[39], որ[40] անումն կայ[41], ինքն[42] կայ[43] ոչ, և ա[44] (1) բաբաթ յուն[45] կ[46] կայ[47], որ կ ոսկի այ[48], որ[49] գ (3) ռուփի[50] կէս կու խալջվի[51], յամ[52] անումն կայ[53], յամ ինքն[54] կայ[55]։ Եւ քարին, որ է ալմազն[56], քաշն մանջանի[57] այ[58], որ ա[59] (1) մանջանին[60] ա (1) ղիրէթ կէս այ[61], մանջանուն[62] կէսն փայե այ[63], փայուն կէսն փարգայ[64] այ[65], փարգայուն[66] կէսն

[1] իը] X իըl
[2] ռուփի] BX ըռուփի, O -
[3] փայ] C անայ: Դ փայ] X այս էր, որ յիշեցաք վերևն
[4] Եւ որ գնաս] X -
[5] Գուշրաքն] C Գուշրաք
[6] և] CX -
[7] Օվռանգապատ] BCO Օվռանկապատ, X Ովռանկապատ
[8] և] CX -
[9] Ճագառն] X Ճագարըն
[10] առք] X + և
[11] ոխչ] BCX ողջ
[12] այ] C է
[13] Հէղարապատ] C Հէյդարապատ, X Յէղարապատ
[14] ալմազն] C լմասն
[15] առք ծախս] X առ և ծախս
[16] որ] C -
[17] կայ] C կա
[18] ոխչ] BC ողջ, X ողչ
[19] այ] C է
[20] ամայ] C ամա
[21] մախալ] C մաղալ
[22] այ] C է
[23] քուռի] X քուռով
[24] կու խօսէն] C կխօսին, O + և
[25] ա] BC մին
[26] այ] C է
[27] այ] C -
[28] փողն] B փող, X փողերն
[29] կ] X -
դրամանե – դարունաչ, աստղածաղկազգիների ընտանիքի խոտաբույս:

դօթայ, հոլանդ. duit – դոյթ, պղնձե դրամ Հոլանդիայում: Կշռում էր 3-3,8 գրամ: 8 դոյթը հավասար էր 1 ստյուվերի (բատըվար), իսկ 160 դոյթը՝ 1 գուլդենի:

Դօլվաթապատ – Դաուլաթաբադ, քաղաք Հնդկաստանում, Աուրանգաբադի հարևանությամբ:

դօպըլխանայ, պրսկ. tabl-khāna (թմբուկի տուն) – տե՛ս նաղարայխանայ:

դօպլի, իսպ. doblon – իսպանական ոսկե դրամ, որը մեծ տարածում ուներ եվրոպական այլ երկրներում ևս: Անվանումը, որը թարգմանաբար նշանակում է «կրկնակի», բացատրվում է կա՛մ այս դրամի՝ 2 դուկատ արժեքով և կա՛մ դրա վրա առկա Իսաբել I Կաստիլիացու և Ֆերդինանդ II Արագոնացու միացյալ դիմապատկերով: Ըստ «Աշխարհաժողովի»՝ իսպանական դոպլին համարժեք էր 28, իսկ իտալականը՝ 29 լիրայի:

դօպլիկիայ, հոլանդ. dubbeltje – դրամական միավոր Հոլանդիայում: Հավասար էր 2 ստյուվերի (բատըվար):

Ենկիդունիէ, թուրք. Yeni dünya («Նոր աշխարհ») – Ամերիկա:

զանջայֆիլ – աղամաթզերի կարգին պատկանող բույս, որի կծվահամ արմատը գործածվում է ինչպես բժշկության մեջ, այնպես էլ՝ որպես համեմունք, կոճապղպեղ (լատ.՝ zingiber officinale):

զառբաֆ, պրսկ. zarbāft – ոսկեհանվածք, մետաքսյա գործվածք՝ հյուսված արծաթե կամ ոսկե թելերով:

զարիֆ, պրսկ. zarif – բարակ, նուրբ:

զարդքանի – անծանոթ ապրանքատեսակ:

Զիրպատ – ժամանակակից Ինդոնեզիայի ու հարակից տարածքների պայմանական անվանումը միջնադարյան և վաղ արդի դարաշրջանի արևելյան աղբյուրներում: Առաջացել է պարսկերեն zir-e bād՝ «քամուց ներքև» բառից: Ըստ միջնադարյան պատկերացումների՝ Հնդկաստանի ծայր հարավում ընկած Կոմորին կամ Կանյակումարի հրվանդան-նավահանգիստը ջրբաժան էր «քամուց վերև» և «քամուց ներքև» գտնվող տարածաշրջանների համար:

զլօթայ, լեհ. złoty – դրամական միավոր Լեհական թագավորությունում, ապա նաև՝ Ռեչ Պոսպոլիտայում: 14-15-րդ դարերում այս անվամբ կոչում էին բոլոր տեսակի օտար ոսկե դրամները մինչև 1496 թ. Լեհական սեյմի որոշումը զլոթա անվամբ ազգային դրամական միավոր ստեղծելու մասին: Ի սկզբանե համարժեք էր 30 արծաթե դրամի, սակայն ժամանակի ընթացքում արժեզրկվելով՝ զլոթան ինքը վերածվեց արծաթե դրամի: Լայնորեն շրջանառվում էր նաև Օսմանյան կայսրությունում, որտեղ 3 զլոթան հավասար էր 2 ասլանլուի:

զպետ, արաբ. zabād – կատվազգի, որի պոչի տակից հավաքված կեղտից պատրաստում էին օծանելիք:

զռնեխ, պրսկ. zarnikh – հանքանյութ, աուրիպիգմենտ, արսենի սուլֆիդ: Անվանումը ստացել է լատիներեն aurum՝ ոսկի և pigmentum՝ երանգ բառերից՝ իր մուգ դեղին գունավորման պատճառով: Օգտագործվել է դեղին երանգավորում ստանալու համար մինչև 19-րդ դարը, երբ ի հայտ եկան օրգանական ներկանյութերը:

զրայ, *պրսկ.* zerā – *որովհետև:*

զֆրան – *զաֆրան, համեմունք և նարնջագույն ներկանյութ, որ ստացվում է Թրատերևների կարգին պատկանող քրքում ծաղկի առէջներից: Համարվում է աշխարհի ամենաթանկարժեք համեմունքներից մեկը. մոտ 150000 ծաղկից ստացվում է ընդամենը 1 կգ զաֆրան: Օգտագործվել է սննդի արդյունաբերության ու բժշկության մեջ, անգամ՝ արվեստում:*

Էգրայ – *Ագրա: Բացի ընդհատումներով Մեծ Մողոլական կայսրության մայրաքաղաքը լինելուց՝ հայտնի է Շահ Ջահանի (1628-1658 թթ.) կառուցած Թաջ Մահալի դամբարանով:*

Ընկոթել, *ֆր.* Angleterre – *Անգլիա:*

ըռաստայ, *պրսկ.* rāst – *ուղիղ, հարթ:*

Ըռէշտ – *Ռաշտ, քաղաք Կասպից ծովի հարավային ափին, Գիլանի նահանգի կենտրոնը: Վաղ արդի դարաշրջանում մետաքսի առևտրի կարևորագույն կենտրոններից մեկն էր աշխարհում: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ առանցքային դեր է խաղացել Իրանը Ռուսաստանի ու Եվրոպայի հետ կապելու հարցում, ինչի համար կոչվել է «Եվրոպայի դարպաս»:*

ըռէվանդ, *պրսկ.* riwand – *Հնդկացորենազգիների ընտանիքին պատկանող բույս, խավարծիլի արմատ, խաշնդեղ: Օգտագործվում է սննդի և ժողովրդական բժշկության մեջ որպես լուծողական* (rheum):

ըռէվար, *պրսկ.* ravā – *ընթացիկ, շրջանառության մեջ գտնվող:*

ըռըզմ, *արաբ.* rasm – *սովորույթ, սահմանված կարգ:*

ըռըզտալ, *հոլանդ.* rijksdaalder – *ռեյքսդալդեր, դրամական միավոր Հոլանդիայում: Հավասար էր 2,5 գուլդենի կամ 50 ստյուվերի (ըստըրվար):*

ըսկլին, *հոլանդ.* schelling – *դրամական միավոր Հոլանդիայում: Հավասար էր 6 ստյուվերի (ըստըրվար):*

ըսկութ, *իտալ.* scudo – *արծաթե դրամ Իտալիայում: Լիվոռնոյում հավասար էր լիրայի 1/7, իսկ Վենետիկում՝ 1/10 մասին:*

ըստակ – *արծաթե դրամ Օսմանյան կայսրությունում: Թուրքերեն* akçe՝ *սպիտակ բառից, որը հայերենում դարձել է ստակ: 110 ստակը համարժեք էր 1 ասլանլուի: Օսմանյան կայսրության հիմնական դրամական միավորն էր մինչև 17-րդ դարի վերջերը, երբ շրջանառության մեջ դրվեց կուրուշը՝ 1 կուրուշ = 120 ստակ հաշվով:*

ըստիլ – *կշռի միավոր: Ըստ «Աշխարհաժողովի»՝ տարածված էր հատկապես Երևանի, Նախիջևանի խանություններում ու հարակից տարածքներում և հավասար էր մոտ 155 գրամի:*

ըստըրիմ – *մարջանի տեսակ:*

ըստըրվար, *հոլանդ.* stuiver – *ստյուվեր, դրամական միավոր Հոլանդիայում: 20 ստյուվերը հավասար էր մեկ գուլդենի:*

ըստըֆին – *մարջանի տեսակ:*

թադարիք, *պրսկ.* tadārok – *պատրաստություն, պատրաստված ինչ-որ բան:*

թալխ, *արաբ.* talq – *բարակ թել:*

թախնիխ, *պրսկ.* tahqiq – *ուսումնասիրություն, հարցում, այստեղից՝ թախնիխ անել նշանակում է ուսումնասիրել, հարցում անել, իսկ թախնիխ լինել՝ ուսումնասիրված, ճշտված, ստույգ լինել:*

թաղայ – *գործվածքի չափման միավոր:*

թամամ, *արաբ.* tamām – *լրիվ, ամբողջ:*

թամասուկ, *արաբ.* tamassuk – *մուրհակ, պարտավորագիր:*

թամբալիթ, *պրսկ.* tambalit – *ցանկացած բան, որ կախվում է կենդանու փալանից:*

թամպաքու, *պրսկ.* tanbaku – *ծխախոտի թունդ տեսակ, որ օգտագործվում է նարգիլե ծխելիս:*

թայեար, *արաբ.* tayār – *պատրաստություն տեսնել:*

թանխայ, *պրսկ.* tankhāh – *համարժեք:*

թանկ, *պրսկ.* tang – *կշռի մանր միավոր թանկարժեք մետաղներ ու քարեր կշռելու համար: Ըստ Կոստանդ Ջուղայեցու՝ հնդկական կշռի միավորի՝ ռաթիի հայերեն տարբերակն է:*

թանկասալ, *թելուգու* tankasala – *դրամահատարան:*

թասպեհ, *արաբ.* tasbih – *համրիչ:*

Թավրիզի դիտր – *կշռի միավոր Իրանում: Հայտնի էր որպես թերի դիտր՝ ի տարբերություն «Աջամստանայ» դիտրի: Համարժեք էր 3 կիլոգրամի:*

թարադութ, *պրսկ.* taraddot – *շարժում, երթևեկ:*

թարաֆ, *պրսկ.* taraf – *կողմ, սահման, թաղամաս: «Աշխարհաժողով»-ում գործածված է հոգնակի ձևը՝ աթրաֆ:*

թէրս, *իտալ.* terzo – *երրորդ:*

թիմաջ, *պրսկ.* timādj – *ոչխարի կամ այծի բնաիր կաշի, սեկ:*

թիմի – *դրամական միավոր Օսմանյան կայսրությունում: 10 թիմին հավասար էր 1 ասլանլուի:*

Թիմուռ – *Թեմոր, կղզի այսպես կոչված «Ծովային Հարավարևելյան Ասիայի» ծայր հարավում: Անունն առաջացել է մալայերենի* timur՝ *արևելք բառից:*

թիքալ – *կշռի միավոր Հեռավոր Արևելքում: Փեգուում (Մյանմար) համարժեք էր 15,7 գրամի: 1 թիքալ կշռով արծաթը Շարինովում (Թաիլանդ) գործածվում էր իբրև դրամական միավոր:*

թլաթին, *ռուս.* телятина – *հորթի կաշի: Տե՛ս նաև բուլղար:*

թլթ, *արաբ.* thulth – *դրամական միավոր Օսմանյան կայսրությունում: Համարժեք էր ասլանլուի 1/3 մասին:*

թնկռ – *դրամական միավոր Օսմանյան կայսրությունում: Համարժեք էր ասլանլուի 1/6 մասին:*

թոլայ, հնդկ. tola – կշռի միավոր Հնդկաստանում: Տարբեր քաղաքներում ունեցել է տարբեր կշիռ: Ըստ «Աշխարհաժողովի»՝ 1 թոլան Սուրաթում հավասար էր 2,5 մսխալի և 7 գրանի, այն է՝ 12,15 գրամի:

թուխպ – սպունգ: Ձեռագրերից մեկում հիշատակվում է նաև «սունկար» անվամբ, որը ծագում է թուրքերեն sünger՝ «սպունգ» բառից: Ըստ «Աշխարհաժողովի»՝ ստացվում էր «Սարդի ծովէն», այսինքն՝ Էգեյան ծովից, որը հարուստ էր սպունգների անողնաշարավոր կենդանիների տիպով:

թուռնայ – դրամական միավոր Շարինովում (Թաիլանդ): Կազմում էր թիքալի 1/10 մասը:

Թռնատի – Թեռնատե, Մալայան արշիպելագի արևելյան մասի՝ Մոլուքյան կղզիների («Համեմունքի կղզիներ») մաս կազմող կղզի: Ուշ միջնադարում ու վաղ արդի դարաշրջանում հռչակված էր մեխակածառի՝ փոքր մեխի նմանվող ծաղիկներից ստացվող համեմունքով:

թվանգ, պրսկ. tufang – հրացան:

թրաշ – տաշած, հղկված:

թրաշած – տե՛ս թրաշ:

թրիաք, հուն. thēriakē – հակաթույն: Լեգենդներում թրիաքի ստեղծումը վերագրվում է Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորին (Ք.ա. 120-63 թթ.), որը այն ստացել էր՝ խառնելով 40-ից ավելի բաղադրիչներ: Հակաթույնը, որն արդյունավետ էր համարվում բոլոր տեսակի վտանգավոր թույների դեմ, այնուհետև ընկել է հռոմեացիների ձեռքը և ապա տարածվել այլուր:

թօփ, արաբ. thob – մեծաքանակ կտորի չափ:

թօքմայ – տե՛ս մառչիլ:

ժիպակ, արաբ. zabiq – սնդիկ:

ժտութիւն – թախանձանք, խնդրանք:

իքմին, բրբռ. – որևէ բան:

լազաթ, պրսկ. lezzat – հաճույք, բավականություն:

լաթայ – դրամական միավոր Շարինովում (Թաիլանդ):

Լահուռ – Լահոր, քաղաք Հարավային Ասիայում (ներկայիս Պակիստանում): Ծաղկման բարձրակետին հասել է Մեծ Մողոլական կայսրության տարիներին՝ միաժամանակ հանդիսանալով նաև դրա մայրաքաղաքը:

լային – անծանոթ ապրանքատեսակ:

Լայիջան – Լահիջան, քաղաք Կասպից ծովի հարավային ափին: Թարգմանաբար նշանակում է «մետաքսի տեղ», ինչը խորհրդանշում է քաղաքի տնտեսական գերակատարությունը պատմության ընթացքում: Իրանական մետաքսի տեսակներից մեկն այս քաղաքի անունով կոչվել է «լահիջանի»:

լանկ – կշռի միավոր Բութանում: Հավասար էր 10 մսխալի, այն է՝ 37,79 գրամի:

Լաշտարնշան – Լաշտե Նեշա, քաղաք Կասպից ծովի հարավային շրջանում, Ռաշտից ընդամենը 30 կմ հեռու:

լաջվարդ, պրսկ. lāgvard – թանկարժեք քար, որ հնուց ի վեր ուշադրություն է արժանացել իր վառ կապույտ գունավորման համար: Հաճախ փոշիացվել է և օգտագործվել որպես կապույտ ներկանյութ (լատ.՝ lapis lazuli):

լառի – արծաթե դրամ Մերձավոր Արևելքի մի շարք քաղաքներում: Անունն առաջացել է իրանական Լառ քաղաքից, որտեղ էլ, ըստ ավանդության, առաջին անգամ հատվել է այս դրամը: 17-րդ դարում կշռում էր մոտ 4,75 գրամ արծաթ:

լաքայուռի – ալխտակեղեն, որը արտադրվում էր Լաքահուռ քաղաքում:

լաքռի – տե՛ս մառչիլ:

լեղակ, պրսկ. lela – կապույտ ներկանյութ, որը ստացվում է համանուն ծառից:

լիրայ, իտալ. lira – դրամական միավոր Իտալիայում: Վենետիկի Հանրապետության տնտեսական գերիշխանության արդյունքում վենետիկյան լիրան դարձել է ամենից շատ շրջանառվող դրամական միավորն Արևելյան Միջերկրածովյան առևտրում: 1 լիրան հավասար էր 20 սոլդիի:

լտրայ, իտալ. libbra – կշռի միավոր Իտալիայում: 1 լիբրան բաժանվում էր 12 ունցիայի: Համարժեք էր մոտ 373 գրամի:

լօնդրայ – անգլիական մահուդի տեսակ:

լօնդրինայ – անգլիական մահուդի տեսակ:

Խաթայ – Հյուսիսային Չինաստանը արևմտյան աշխարհի ընկալումներում ուշ միջնադարում ու վաղ արդի դարաշրջանում: Ըստ այդ պատկերացումների՝ ցամաքային ուղիներով հասանելի Խաթայ երկիրն արմատապես տարբեր էր Չինաստանից, որտեղ հասնում էին ծովային ճանապարհներով: Հետագայում, երբ ներկայիս Չինաստանի հյուսիսն ու հարավը սկսեցին ընկալվել որպես մեկ միասնական երկիր, Խաթան մնաց որպես էպիկական անվանում, ինչպես նաև՝ դարձավ երկրի պաշտոնական անունը թյուրքական ու սլավոնական մի շարք լեզուներում:

խալելի – հայելի:

խալջ – տե՛ս խարջ:

խակ – հակ, կապոց:

խամ, պրսկ. xām – անփորձ, անվարժ: Գործածվում է «խամով (խամին) ընկնել» բառը՝ ընդարմանալ իմաստով:

խամբարել – հաշվել:

խայեվար, բրբռ. – հայերեն:

խանբարք – հաշիվ:

խաչվառ – *եկեղեցական դրոշակ:*

խառվառի – *անծանոթ ապրանքատեսակ:*

խառե, *պրսկ.* khārā – *մետաքսե թանկարժեք գործվածքի տեսակ:*

խարջ, *արաբ.* kharadj – *հարկ, հողահարկ: Այստեղ գործածված է «ծախս» իմաստով:*

Խերապատ – *Խաիրաբադ, քաղաք Հնդկաստանի հյուսիսում: Վաղ արդի շրջանում հռչակված էր իր գործվածքներով, որոնք հայկական առևտրական աղբյուրներում հիշատակվում են «խէրապատի» անունով:*

խերրական – *Թվաբանական տերմին, որը գործածված է Սեֆյան Իրանի դրամական հիմնական միավորի՝ թումանի 1/100 մասի իմաստով: Ակնհայտորեն առաջացել է հայերեն խէրուր (հարյուր) բառից: Զունի պարսկական համարժեք, իսկ հայերեն տարբերակի առաջացումը կարելի է բացատրել տասնորդական համակարգով թվաբանական գործողությունները կատարելու անհրաժեշտությամբ:*

խոնթկարի – *կշռի միավոր Իզմիրում: Համարժեք էր 6 հողայի կամ մոտ 7,2 կիլոգրամի:*

Խոռմաց տուն – *խոռմաց, այսինքն՝ հռոմ-հռոմեացիների տուն՝ երկիր: Գործածված է Օսմանյան կայսրության տարածքների կապակցությամբ, որոնք ժամանակին պատկանել էին երբեմնի Արևելյան Հռոմեական կայսրությանը (Բյուզանդիա):*

Խուռջայ – *քաղաք Հնդկաստանի հյուսիսում, Դելիից 85 կմ հարավ-արևելք: Տեղանունը ուրդու լեզվից թարգմանաբար նշանակում է «չեղարկված», քանի որ բնակչությունից գանձվող հարկը չեղարկվել էր՝ քաղաքի ճահճաշատ լինելու ու գյուղատնտեսական հնարավորությունների սահմանափակության պատճառով: Համաշխարհային առևտրում հայտնի էր այս քաղաքի հատկապես խեցեգործական արտադրանքը:*

խուրդայ, *պրսկ.* khorda – *մանր:*

խուրդավաթ, *պրսկ.* khordavāt – *մանր-մունր ապրանքներ:*

խուրուջ, *արաբ.* kharadj – *հարկ, հողահարկ: Այստեղ գործածված է Բանդար Աբբաս նավահանգստում ապրանքի արտահանման համար վճարվող մաքսատուրքերի չափքում՝ 1 թումանին 350 դիան հաշվով:*

խրիտ, *պրսկ.* khārid – *գնում, առք:*

ծնեպեկ – *ծներեկազգիների կարգին պատկանող բույս՝ ոլոռի մեծությամբ կլոր կարմիր հատիկներով* (asparagus officinalis):

կաննայ, *իտալ.* canna – *երկարության չափ Եվրոպայում: Ըստ վայրի՝ փոխվում էր մետրական համարժեքը: Օրինակ՝ Սպահանում 107 կանան մեկ գազ էր, իսկ Թավրիզում 109 կանան: Այս հաշվով՝ Սպահանում 1 կանան 93,4 սմ էր, իսկ Թավրիզում 91,7 սմ:*

կատարինա, *իտալ.* quattrino – *դրամական միավոր Իտալիայում: Առաջացել է* quarter denari՝ *«չորս դինարի» բառերից, քանի որ 1 կատարինան հավասար էր 4 դինարի: Իտալիայում տարածված մյուս դրամական միավորը՝ սոլդին, հավասար էր 3 կատարինայի: Շրջանառության մեջ է եղել մինչև Իտալիայի միավորումը 1861 թ.:*

կեսվիսայ – *Կշռի մանր միավոր Հարավային Հնդկաստանում, որը գործածվում էր ադամանդ կշռելիս: Համարժեք էր մանջանու 1/16 մասին, այն է՝ մոտ 0,02 գրամի:*

կեսվկես – *տե՛ս մառչիլ:*

կիսագազ – *հմնրր. երկարություն չափելու համար նախատեսված իր, որի երկարությունը կես գազ էր, և որի առկայությունը Կոստանդ Ջուղայեցին դիտում էր որպես անհրաժեշտություն յուրաքանչյուր վաճառականի համար:*

կլեկ – *կլայեկ, անագ:*

կխտոր – *կաղնու և մի քանի այլ բույսերի վրա առաջացող բոժոժաձև պալար, որից ներկ՝ թանաք էին պատրաստում:*

կորենթ, *իտալ.* corrente – *շրջանառության մեջ գտնվող:*

Կուրծկայ – *Կորսիկա, կղզի Միջերկրական ծովում, Սարդինիայից հյուսիս:*

կօփիկ, *ռուս.* копейка – *արծաթե դրամ Ռուսական կայսրությունում: Մինչև 17-րդ դարի վերջերը կշռում էր 0,48 գրամ, սակայն հետագայում նվազեց մինչև 0,28 գրամ: Հավասար էր ռուսական ռուբլի 1/100 մասին:*

Հաբաշըստան – *Եթովպիա: Տեղանվան հիմքում ընկած է միջնադարում արաբների կողմից եթովպացիներին տրված հաբաշ անվանումը, որի լատինականացված տարբերակից առաջ է եկել երկրի մյուս անունը՝ Աբիսսինիա:*

Հալապի դիտր – *կշռի միավոր Հալեպում: Համարժեք էր 720 գրամի կամ մոտ 2,3 կիլոգրամի:*

հասապ, *պրսկ.* hesāb – *հաշիվ:*

հաֆալ, *պրսկ.* hāl *(հոգն.* ahvāl*)* – *վիճակ, որպիսություն:*

Հեդարապատ – *Հայդարաբադ, քաղաք Հարավային Հնդկաստանում: Քաղաքի անունը թարգմանաբար նշանակում է «Առյուծի քաղաք»՝ խորհրդանշելով Մուհամմեդ մարգարեի զարմիկ և փեսա Ալիին, որը ցուցաբերած քաջության համար մարգարեից ստացել էր «Առյուծ* (haydar)*» պատվանունը:*

հին աբբասի – *արծաթե դրամ Սեֆյան Իրանում: 4 շահիանոց կամ 200 դիանի համարժեք այս աբբասին կոչվում էր հին՝ ի տարբերություն 5 շահիանոց կամ 250 դիանի համարժեք աբբասիների:*

Հնդվան – *Հինդուան, բնակավայր Հյուսիսային Հնդկաստանում:*

հքմաթ, *պրսկ.* hokumat – *իշխանություն, կառավարություն, տիրապետություն:*

ձիքս – *չափ, երկարություն:*

ձքին, *իտալ.* zecchino – *ոսկե դրամ Իտալիայում: Հատվել է Վենետիկի Հանրապետության կողմից 1284-1797 թթ.՝ մինչև Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավը ու քաղաքի գրավումը: Դիմերեսին պատկերված էր Հիսուս Քրիստոսը, իսկ դարձերեսին՝ Սուրբ Մարկոսի առջև ծնկի իջած դոժը: Ի սկզբանե կոչվում էր դուկատ* (ducato), *սակայն 1543 թ. արծաթե դրամների թողարկումից հետո Վենետիկի դրամահատարանի անունով* (Zecca) *կոչվեց ցեխինո* (zecchino), *իսկ դուկատը մնաց արծաթե դրամի հոմանիշ: Իտալիայում համարժեք էր 18 լիրայի, իսկ Սեֆյան Իրանում՝ 1600 դինարի:*

ղարայ, *բրբռ.* – *խոշոր, հաստ:*

ղադար, *պրսկ.* qadr – *չափ, քանակ:*

ղադիմի, *պրսկ.* qadim – *հին:*

ղազ, *պրսկ.* qāzi – *դատավոր:*

ղազբեկի, *պրսկ.* qazbegi – *պղնձե դրամ Սեֆյան Իրանում, որը հավասար էր 10 դինարի: Անունը կապված է 1501-1502 թթ. Շիրվանում իշխած Ղազի բեգի հետ: Սկզբնապես ղազբեկին 0,28 գրամի համարժեք կշռի միավոր էր, իսկ հետագայում օգտագործվեց որպես նույն քաշով պղնձե դրամի անվանում:*

ղազեթայ, *իտալ.* gazzetta – *պղնձե դրամ Վենետիկում: Առաջացել է* gazzetta՝ *«լրագիր» բառից, քանի որ 1 ղազեթայով կարելի էր գնել 1 լրագիր: 2 սոլդին կազմում էր 1 ղազեթա:*

Ղազիփուր – *քաղաք Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում: Հայտնի է 1820 թ. Անգլիական արևելահնդկական ընկերության կողմից հիմնված ափիոնի գործարանով, որն ափիոն արտադրող ամենամեծ օրինական գործարանն է մինչ օրս:*

Ղազնի – *քաղաք Կենտրոնական Ասիայում (ներկայիս Աֆղանստանում): Միջնադարում՝ մոտ 200 տարի շարունակ, Ղազնևինների պետության մայրաքաղաքն էր:*

ղալայի, *թուրք.* kalay – *անագ:*

ղալին, *թուրք.* kalın – *հաստ, թանձր:*

ղամբար – *լամպար, լապտեր:*

ղամիշ, *թուրք.* kamesh – *եղեգ:*

ղայումխանի – *սպիտակեղեն:*

Ղանդահար – *քաղաք Կենտրոնական Ասիայում (ներկայիս Աֆղանստանում): Ք.ա. 330 թ. հիմնել է Ալեքսանդր Մակեդոնացին և կոչել Ալեքսանդրիա: Մեծանուն տիրակալի անվան տեղական բարբառային ձևը՝ Սկանդար, հիմք է դարձել Ղանդահար տեղանվան առաջացման համար: Արևելք-արևմուտք ապրանքափոխանակության մեջ քաղաքը հայտնի էր բրդի, բամբակի, թաղիքի, հացահատիկի արտահանմամբ:*

ղանթար, *արաբ.* qantar – *կշեռք՝ անհավասար բազուկներով ու երկաթե ձողով, որի վրա շարժական կշռաքարը շարժվում է աջ կամ ձախ, մինչև կհավասարակշռի կշռվող բեռը: Գործածվում էր նաև որպես կշռի միավոր, որը համարժեք էր մոտ 44,6 կիլոգրամի:*

ղասնի, *պրսկ.* qasni – *դալբան, հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս, որից ստացվող խեժն օգտագործվում է օծանելիքի ու դեղամիջոցների արտադրության մեջ: Առատորեն աճում է հատկապես Հյուսիսային Իրանի լեռնային շրջաններում:*

ղարայ ղռուշ – *Սրբազան Հռոմեական կայսրության արծաթե դրամի՝ ռայխսթալերի* (Reichstaler) *անվանումն Օսմանյան կայսրությունում:*

ղերազ, *պրսկ.* gheir az – *բացի:*

ղիտր – *կշռի միավոր, որ ընդունված է եղել ինչպես Իրանում ու Հնդկաստանում, այնպես էլ հարևան երկրներում: Պարսկական աղբյուրներում, ինչպես նաև՝ եվրոպական ուղեգրություններում հանդես է գալիս «ման»* (man) *տարբերակով: «Աշխարհաժողովում» հիշատակվում են ղիտրի տարբեր տեսակներ (փուքայ, քաչայ, Աքպարի):*

ղիրէթ, *արաբ.* qirāt - *կշռի միավոր, որը համարժեք էր 0,2 գրամի:*

ղութին, *պրսկ.* quti – *արկղ:*

ղունդուզ ղարէ, *թուրք.* konduz – *կուղբ:*

ղուռս, *արաբ.* qurs – *ձուլք: Գործածվում է «ղուռս ոսկի» կամ «ղուռս արծաթ» արտահայտություններում:*

ղռմզ, *պրսկ.* qermez – *կարմիր ներկ:*

ղսմայ, *պրսկ.* qesm – *տեսակ, մաս, տիպ:*

ղրար, *պրսկ.* qarār – *որոշում, սահմանված կարգ:*

ղօնսուլաթ, *ֆր.* consulat – *հարկատեսակ Մարսելում, որ գանձվում էր կոնսուլի կողմից 1 հակ մետաքսի դիմաց 9 մաուչիլ հաշվով:*

ղօռաքի, *պրսկ.* ghoragi – *մրգի կամ պտղի չհասած լինելը:*

ճովիզգազ – *սպիտակեղեն, որն արտադրվում էր Սեֆյան Իրանում:*

մազադ, *արաբ.* mazād – *աճուրդ:*

Մալաղայ – *քաղաք Մալայզիայում: Իր բացառիկ աշխարհագրական դիրքի շնորհիվ միջին դարերում ու վաղ արդի դարաշրջանում առանցքային դեր է կատարել համաշխարհային առևտրում:*

մահմուդի – *1) արծաթե դրամ Սեֆյան Իրանում: Հատվել է շահ Մուհամմադ Խոդաբանդայի (1578-1587) հրամանով և կոչվել նրա անունով՝ մոհամմադի: Համարժեք էր 100 դինարի կամ 2 շահիի, 2) հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս, որի խեժն օգտագործվում էր փորկապության համար նախատեսված դեղամիջոց պատրաստելիս (լատ.՝* convolvulus scammonia): *Հատուկ է Միջերկրական ծովի արևելյան ափական երկրներին:*

մաղազ, *արաբ.* maghāza – *պահոց, պահեստ:*

Մանիլայ – *քաղաք Հարավարևելյան Ասիայում, Ֆիլիպինների ներկայիս մայրաքաղաքը: Տեղանունը՝* May-nilà, *ֆիլիպիններենից թարգմանաբար նշանակում է «որտեղ լեղակն է գտնվում»: Մանիլան 1571 թվականից անցել էր Իսպանիայի վերահսկողության տակ և դարձել իսպանական արևելահնդկական գաղութների կենտրոնը:*

մանղուռ, *պրսկ.* manghur – *պղնձե մանրադրամ: Ըստ «Աշխարհաժողովի»՝ հայ վաճառականներն այս անվան տակ նկատի են ունեցել իսլամական ֆլուսն ու իտալական կատարինան:*

մանջանի, *հնդկ.* munjandie – *ադամանդի կշռի միավոր Հնդկաստանում: Համարժեք էր մոտ 0,3 գրամի:*

Մաշատ – *Մաշհադ, քաղաք Իրանի հյուսիս-արևելքում:*

Մաջար, *պրսկ.* Majārestan – *Հունգարիա:*

մառչիլ, *իտալ.* marsili – *եվրոպական արծաթե դրամ: Սկսել է հատվել Իսպանական կայսրությունում 1497 թ. դրամական բարեփոխման արդյունքում և կոչվել պիաստր: Քանի որ Մարսել քաղաքի վաճառականներն առաջինն էին, որ պիաստրի մեծ քանակություններ էին բերում Զմյուռնիա և Լևանտի այլ նավահանգիստներ, այս դրամական միավորը մի շարք արևելյան ժողովուրդների շրջանում կոչվեց Մարսելի անունով՝ մառչիլ: Վաղ արդի դարաշրջանում տարածված էին մառչիլի մի քանի տեսակներ՝ ֆլորի, լաքրի, սվիլ, մշկէթ, թօքմայ, կէսվկէս և այլն, որոնց քաշը տատանվում էր 26,9-26,9 գրամի միջև: Ընդ որում, ֆլորին և սվիլն վերաբերում էին իսպանական, իսկ լաքրին և մշկէթին՝ մեքսիկական պիաստրներին:*

մասլայ, *արաբ.* maslaha – *ատաղձ, նյութ որևէ բան պատրաստելու համար:*

մատել – *մատչել, մոտենալ:*

մացայ, *հնդկ.* masha – *կշռի միավոր, որը հավասար էր 8 ռաթիի:*

մաքան, *արաբ.* makan – *տեղ:*

միամ – *դրամական միավոր Շարինովում (Թաիլանդ): 8 միամը կազմում էր 1 թիքալ:*

միզան, *արաբ.* mizan – *կշեռք:*

Մլթան – *Մուլթան, քաղաք Հարավային Ասիայում (ներկայիս Պակիստանում): Առանցքային դեր է խաղացել համաշխարհային առևտրի պատմության մեջ՝ հանդիսանալով իսլամական աշխարհի հետ Հնդկաստանի առևտրի կենտրոնը միջին դարերում:*

մշկէթ – *տե՛ս մառչիլ:*

մոմիայ, *պրսկ.* mumiyā – *դեղամիջոց վերքերի և կոտրվածքների համար, որը ստացվում էր բիտումից: Միջնադարյան բժշկագիտական ձեռնարկներում հայտնի էր «պարսկական դեղ» անունով: Այս անունը վերաբերում էր նաև կարմրավուն մի ներկի, որը մեծ տարածում ուներ հատկապես 17-18-րդ դարերում:*

մոր, *հնդկ.* mohur – *ոսկե դրամ Հնդկաստանում: Կշռում էր 10,95 գրամ: Համարժեք էր 13 արծաթե ռուփիի, թեև հընթացս ժամանակի լինում էին տատանումներ՝ «վախտի գօրայ՝ գայ եվել, գայ պակաս»:*

մուխիար, *արաբ.* mukayyar – *անգործական այծի մազ:*

Մուշլի բանդար – *Մասուլիփաթնամ կամ Մասուլիփաթամ, նավահանգիստ Հնդկաստանի արևելյան ափին: Թարգմանաբար նշանակում է «ձկան նավահանգիստ» (տեղի տելուգու լեզվով՝* masuli*՝ ձուկ,* patnam*՝ նավահանգիստ): Վաղ արդի շրջանում Հնդկաստանում հաստատված եվրոպացի վաճառականների հիմնական հենակետերից մեկն էր:*

մուշկ, *պրսկ.* moshk – *սև հոտավետ յուղ, որ օգտագործվել է և՛ որպես դեղանյութ, և՛ որպես օծանելիք: Առաջանում է որոշ կաթնասունների (մշկայծյամ, մշկամուկ) մշկագեղձերում:*

Մուքասար – *Մակասար, Սուլավես կղզու ամենախոշոր քաղաքը: Արևելյան Ինդոնեզիայի առևտրական կենտրոնի համբավ ունեցող այս քաղաքը վաղ արդի շրջանում բախվեց նախ պորտուգալացիների, ապա՝ հոլանդացիների ներթափանցումներին: 1667 թ. վերջիններս, նավահանգիստը գրավելով ու վերաշինելով, դրան տվեցին Ռոտերդամի նավահանգիստ անունը:*

մռջամ, *արաբ.* mardjān – *բուստ, մարջան:*

Մսինայ – *քաղաք Սիցիլիա կղզու հյուսիս-արևելքում: Իր տնտեսական ու մշակութային վերելքի բարձրակետին հասել է 17-րդ դարի կեսին՝ իսպանական տիրապետության օրոք:*

մսխալ, *արաբ.* mithqāl – *կշռի միավոր, որ գործածվել է թանկարժեք մետաղներ կամ համեմունքներ կշռելիս: Անունն առաջացել է արաբերեն* thaqala՝ *«կշռել» բառից: Վաղ միջնադարից սկսած 1 մսխալը հավասար էր 1 ոսկե դինարի կշռին՝ 4,25 գրամ: 17-18-րդ դդ. հայկական առևտրական աղբյուրներում ավելի հաճախ հիշատակվում է իրանական կամ «Աջամստանայ» մսխալը, որը հավասար էր 4,724 գրամի: Կոստանդ Ջուղայեցին հիշատակում է նաև Բութանդի կամ Գաթուրի մսխալը, որը հավասար էր իրանական մսխալի 80 %-ին, այն է՝ 3,779 գրամի:*

Մսր, *արաբ.* Misr – *Եգիպտոս:*

Մօվ – *Մհով (Մհովգաոն), բնակավայր Կենտրոնական Հնդկաստանում:*

յարաժամ – *միշտ, անդադար:*

յիլ, *պրսկ.* hel – *կարդամոն, կոճապղպեղների ընտանիքի մի քանի բույսերի սերմերից ստացվող համեմունք: Օգտագործվում է սննդի և բժշկության մեջ, ինչպես նաև՝ ծխախոտների արտադրությունում: Երրորդ թանկարժեք համեմունքն է աշխարհում՝ զաֆրանից և վանիլից հետո:*

յուն, *հնդկ.* hun – *ոսկեդրամ Հարավային Հնդկաստանում: Շրջանառվում էր այս դրամական միավորի 2 տեսակ, որոնք համարժեք էին համապատասխանաբար 3,5 և 5 ռուփիի:*

յուտ, *պրսկ.* ud – *այսեի ծառափայտը, որի խեժն օգտագործվում է խնկի և օծանելիքի արտադրության մեջ (լատ.՝* aloexyluma gallochum*):*

յօղա, *թուրք.* okka – *կշռի միավոր Օսմանյան կայսրությունում: Համարժեք էր 400 դրամի կամ մոտ 1,2 կիլոգրամի:*

Նազարաթ, *իտալ.* lazaretto – *մեկուսացման վայր և հակահամաճարակային հիվանդանոց: Առաջին այսպիսի հաստատությունները հիմնվել են Վենետիկում նախ՝ 1423 թվականին Հին Լազարետտո կղզում (Սբ. Ղազար կղզուց հարավ), ապա 1456 թվականին՝ Վենետիկից հյուսիս-արևելք գտնվող Նոր Լազարետտոյում, իսկ այնուհետև արագորեն տարածվել են միջերկրածովյան այլ քաղաք-նավահանգիստներում: Հանրային առողջապահության քաղաքականության մեջ կենտրոնական տեղ զբաղեցնող այս հակահամաճարակային հիվանդանոցների նպատակն էր Վենետիկ այցելողներին նախապես բժշկական հսկողության տակ դնելն ու, այդպիսով, քաղաքը վարակիչ հիվանդություններից զերծ պահելը: Վիրուսային հիվանդությունների կասկածանքով լազարետտոներում մեկուսացնելու քառասնօրյա ժամկետը իր կնիքն է թողել այդ երևույթի անվան վրա՝ կարանտին (իտալ.՝* quaranta *– քառասուն):*

Նազարաթանայ – *արոշակի գումար, որ վճարում էին հակահամաճարակային վայրերում՝ լազարետտոներում, մեկուսացման մեջ գտնվող վաճառականները՝ իրենց ապրանքներն ու գույքն ապահով պահելու ու գողության տարածված դեպքերը կանխելու նպատակով: Ըստ «Աշխարհաժողովի»՝ Լիվոռնո մուտք գործել պատրաստվող վաճառականները վճարում էին պահպանության հանձնվող ապրանքի 2 %-ի չափով: Լազարետտոներում արգելափակված վաճառականները ստիպված էին կատարել նաև այլ ծախսեր, ինչպես օրինակ՝ սննդի ամենօրյա գնումները:*

Նազլուղար – *հվնրր. թանկարժեք քարի տեսակ:*

Նաղար, *պրսկ.* naqqāre – *երաժշտական հարվածային գործիք, դափ: Կազմված է փայտյա կլոր շրջանակից, որի ներսի կողմից կախված են ձայնահան պարագաներ: Նվագում են ձեռքի ափերով:*

Նաղարայխանայ, *պրսկ.* naqqārekhane – *Միջնադարյան Արևելքում տարածված վայրեր, որտեղ հարվածային գործիքներով նվագում էին ավանդական երաժշտություն: Իրանում այս անունով էին հայտնի նաև այն վայրերը, որտեղից ավանդական երաժշտության ուղեկցությամբ հայտարարում էին կարևոր նորություններ:*

Նաղդ, *արաբ.* naqd – *կանխիկ դրամ:*

Նաֆիր, *պրսկ.* nafir – *թութակ (երաժշտական գործիք):*

Նէգր, *իտալ.* negro – *գործածված է որպես մարջանի տեսակ: Թարգմանաբար նշանակում է «սև»: Մարջանի այս տեսակը, որը հայտնի է նաև «փչոտ մարջան» անունով, իր անունը ստացել է կմախքի սև գույնից:*

Նիմռանգ, *պրսկ.* nimrang – *կեսգույն:*

Նոր աբբասի – *արծաթե դրամ Սեֆյան Իրանում, որը համարժեք էր 5 շահիի կամ 250 դինարի՝ ի տարբերություն 4 շահիանոց կամ 200 դինարի համարժեք աբբասիների:*

Նուբար – *տարվա առաջին պտուղը, երախայրիք, որևէ հաղվագյուտ բան:*

Նուկի – *կշռի միավոր: Ըստ «Աշխարհաժողովի»՝ տարածված էր հատկապես Երևանի, Նախիջևանի խանություններում ու հարակից տարածքներում և հավասար էր մոտ 630 դրամի:*

Նվիսանդի, *պրսկ.* nevisanda – *քարտուղար, դպրագիր, Սեֆյան Իրանում ապրանք արտահանելիս կամ ներկրելիս քարտուղարին տրվող հարկ:*

Նովլ, *պրսկ.* novl – *նավով ապրանք փոխադրելու համար տրվող վարձ: Ըստ «Աշխարհաժողովի»՝ Լիվոռնոյում նովլը կազմել է կես մառչիլ ապրանքի ամեն լիտրի դիմաց:*

շաբանդար, *պրսկ.* shāhbandar – *նավահանգստի պետ, որ ապահովում էր կարգուկանոնը նավահանգստում ու հարկ հավաքում եկումուտ անող վաճառականներից:*

Շագառ – *Սագառ, նահանգ և համանուն քաղաք Կենտրոնական Հնդկաստանում:*

շաղայ - *կշռի միավոր: Ըստ «Աշխարհաժողովի»՝ տարածված էր հատկապես Երևանի, Նախիջևանի խանություններում ու հարակից տարածքներում և հավասար էր մոտ 470 դրամի:*

շաթիր, *արաբ.* shater – *սուրհանդակ, ինչպես նաև՝ արքայի կամ եկեղեցական առաջնորդի առջևից գնացող գավազանակիր:*

Շանգատափուռ – *Շահջահանփուռ, քաղաք Հյուսիսային Հնդկաստանում:*

շայի, *պրսկ.* shāhi – *արծաթե դրամ Սեֆյան Իրանում: Համարժեք էր 50 դինարի: Շրջանառության մեջ գտնվող ամենամեծ արծաթե դրամն էր մինչև մահմուդիների ու աբբասիների թողարկումը 16-րդ դարի վերջին – 17-րդ դարի սկզբին:*

շալ, *հնդկ.* shal – *բրդյա կտոր:*

շարաֆի – *տե՛ս աշրաֆի:*

շարբաֆ, *պրսկ.* sharb bāft – *բարձրորակ մետաքսի մանվածք:*

Շարինով – *Թախլանդ (Սիամ): Թախլանդի պատմական մայրաքաղաքներից մեկը՝ Լոպբուրին, մի քանի լեզուներում ստացել էր «Նոր քաղաք» անունը (օրինակ՝ սանսկրիտ՝* Nava-Pura*), որով հիշատակվում էր նաև օտար երկրը: Քաղաքի վերարերյալ «Աշխարհաժողովի» Շարինով տարբերակը*

գալիս է պարսկերենից (shahr-e nou՝ նոր քաղաք): Վաղ արդի շրջանի եվրոպական ուղեգրություններում երկիրն ավելի հաճախ հիշատակվել է Սիամ անունով:

շիլինգ, անգլ. shilling – արծաթե դրամ, որը Անգլիայի հիմնական դրամական միավորներից մեկն էր վաղ արդի դարաշրջանում: Ի հայտ է եկել դեռևս 796 թ. Կառլոս Մեծի (768-814 թթ.) դրամական բարեփոխման արդյունքում՝ որպես 20,3 գրամ կշռով արծաթե դրամ: Անգլիական առաջին շիլինգը հատվել է Էդվարդ VI-ի (1547-1553 թթ.) օրոք: Ըստ «Աշխարհաժողովի»՝ 4,5 շիլինգը համասար էր 1 մառչիլի:

շմար, պրսկ. shomār – հաշիվ:

չաշմի բլբուլ, պրսկ. chashm-e bolbol – սիսեռի տեսակ (լատ.՝ vigna unguiculata), որը հայտնի է սևաչքանի սիսեռ անունով՝ վրան առկա սև կետերի համար:

չարգազ, պրսկ. chārkazi – գործվածք, բառացի՝ 4 գազանոց:

չարեք, պրսկ. chaharyek – քառորդ:

չարսու, պրսկ. chahārsu – շուկա, հրապարակ:

չաքրդակ – կշռի միավոր: Ըստ «Աշխարհաժողովի»՝ որոշ վայրերում 0,2 գրամին համարժեք զիրեթն այսպես էին անվանում:

չդամ – դրամական միավոր Հնդկաստանում: 4 չդամը համասար էր 1 փաքայ փեսայի:

չինի, պրսկ. chini – չինական:

չլիկ, թուրք. chelik – պողպատ:

չուխա, թուրք. chukha – բրդե հագուստ:

չվիլ – դրամական միավոր Հարավային Հնդկաստանում: 32 չվիլը կազմում էր 1 յուն:

չօքրայ, հնդկ. chokrā – ութնյակ: Որոշ ապրանքներ վաճառվում էին չօքրայով, այսինքն՝ 8 հատանոց կապոցներով:

պալմում, թուրք. balmumu – մեղրամոմ:

պատ – հինդ. չարք, չարան: Գործածվում է որպես մարջանի, գողլուի և նազլուղարի չափման միավոր:

պարանգօն, իսպ. parangón – մարջանի տեսակ: Բառացի նշանակում է «սահմանդարտ, չափանիշներին բավարարող»:

պրիմ, իտալ. primo – առաջին:

Պուրուպ – հինդ. քաղաք Հնդկաստանում, որն ընկած էր Սիրոնջ և Դոլլաթաբադ քաղաքների շրջակայքում:

Ջալալփուր – քաղաք Հյուսիսային Հնդկաստանում:

Ջահանապատ – Շահջահանաբադ (Հին Դելի): 1639 թ. Շահ Ջահանը, որոշելով մայրաքաղաքը Ագրայից տեղափոխել, սկսեց նոր քաղաքի

կառուցում, որը կոչվեց իր անունով՝ Շահջահանաբադ: Այն մնաց որպես Մեծ Մողոլական կայսրության մայրաքաղաք ավելի քան երկու դար՝ մինչև 1857 թ.: Հետագայում՝ 1910-20-ական թթ., այս քաղաքի շրջակայքում բրիտանական նախագծով կառուցվեց Նոր Դելին:

ջավզ, արաբ. djawzi – մշկընկույզի համեմունք:

Ջաքաթրայ – Ջակարտա, քաղաք Ճավա կղզում, Ինդոնեզիայի ներկայիս մայրաքաղաքը: Նախկինում Sunda Kelapa անունը կրող այս քաղաքը վերանվանվել է Ջայակարտա (սանսկրիտ՝ Jaya Krta՝ հերոսական արարք) 1527 թ. պորտուգալացիներին հաղթելուց հետո: 1619 թ. հոլանդացիները վերակառուցել են այն ու տվել Բատավիա անունը՝ քաղաքը դարձնելով իրենց արևելահնդկական ընկերության տեղական կենտրոնը:

Ջզայիր, արաբ. al-Jazā'ir – Ալժիր:

ջիգարդար, պրսկ. jigardār – համարձակ, քաջ:

ջինս, արաբ. djins – ապրանքատեսակ:

ջղջղա, արաբ. jagjag'ā – արույրե փայլաթիթեղ զարդարանքի համար:

ջնդրալ, հոլանդ. generaal – գեներալ-նահանգապետ, Հոլանդական արևելահնդկական ընկերության (պաշտոնական անվանումը՝ Vereenigde Oost-Indische Compagnie կամ Միավորված արևելահնդկական ընկերություն) տեղական կառավարիչը, որի նստավայրը Բատավիան էր Ճավա կղզում: Այս պաշտոնյան ընտրվում էր Հոլանդական արևելահնդկական ընկերության վարչական բարձրագույն մարմնի՝ Heeren XVII-ի կամ 17 լորդերի խորհրդի կողմից: 1800 թ. արևելահնդկական ընկերության կազմալուծումից հետո գեներալ-նահանգապետը դարձավ Ասիայում նիդեռլանդական գաղութների կառավարիչը, որի ընտրության իրավունքը պատկանում էր միապետին կամ կառավարությանը: Գեներալ նահանգապետի նստավայրը՝ Բատավիան, կառուցվել էր 1619-1621 թթ. Ջայակարտա հին քաղաքի տեղում՝ որպես Ասիայում նիդեռլանդական տիրապետության տակ գտնվող տարածքների վարչական կենտրոն և կոչվել հին գերմանական բատավների ցեղի անունով, որոնք Հռոմեական կայսրության շրջանում բնակվել էին Հոլանդիայի տարածքում:

ջուայիր, պրսկ. javāher – թանկարժեք քար:

ջուլի, իտալ. giulio – դրամական միավոր Պապական պետությունում ու հարևան քաղաքներում: Կոչվել է Հռոմի պապ Հուլիոս II-ի (1503-1513 թթ.) անունով: 10 ջուլին համասար էր 1 սկուդոյի (ըսկուդ):

ջուխտ, պրսկ. joft – զույգ:

ջուպ, պրսկ. jib – գրպան:

ջօռ, հնդկ. djora – զույգ:

ռաթալ, արաբ. ratl – կշռի միավոր: Համարժեք էր 720 գրամի կամ մոտ 2,2 կիլոգրամի:

ռաթի, հնդկ. ratti – կշռի միավոր Հնդկաստանում: Անունն առաջացել է լոբազգիների ընտանիքին պատկանող մի բույսի (լատ.՝ abrus precatorius) հատիկներից, որոնք ունեն հաստատուն կշիռ, ինչի համար էլ օգտագործվում էին թանկարժեք քարերը կշռելիս: Համարժեք էր 1/8 գրամի: Ըստ որոշ տեղեկությունների՝ կշռի այս միավորը մինչ օրս օգտագործվում է հնդիկ ոսկերիչների շրջանում:

ռաղամ, արաբ. raqm, raqam – թիվ, թվանշան, հաշիվ: Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներում գործածված է թվաբանություն իմաստով:

ռանգ, պրսկ. rang – գույն, երանգ, ինչպես նաև՝ տեսակ:

ռուպ, պրսկ. rob' – քառորդ մաս:

ռուսում, արաբ. rasm՝ կարգ, սովորույթ, սահմանված հարկ, հոգն. rusum՝ տուրքեր – հարկատեսակ, որը տարածվում էր Սեֆյան Իրանից արտահանվող ապրանքների վրա՝ 1 թումանին 122 դիան հաշվով: Կոստանդ Ջուղայեցու այս տեղեկությունը հակասության մեջ է Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանի այն տվյալի հետ, ըստ որի՝ ռուսումը վճարվել է ոչ թե ամբողջ ապրանքի արժեքի, այլ ուշուր ու խուրուջ հարկատեսակների 12,2 %-ի չափով:

ռուփի, հնդկ. rupi – արծաթե դրամ: Ծագում է սանսկրիտ լեզվից (rupya՝ հատած արծաթ): Առաջին ռուփիները հատվել են դեռևս Ք.ա. III դարում Հին Հնդկաստանում, իսկ դրանց վերաթողարկումը կապված է Հնդկաստանի հյուսիսում հիմնված Սուրի կայսրության հիմնադիր Շեր շահի (1540-1545 թթ.) անվան հետ: Մեծ Մողոլական կայսրությունում լայն տարածում ստացան շահ Ջահանի թողարկած ռուփիները, որոնք կոչվում էին նաև շահջահանի: Շահջահանի ռուփին տարբեր ժամանակներում կշռում էր մոտ 11-11,6 գրամ արծաթ:

ռոտոլ, իտալ. rottolo – կշռի միավոր Հարավային Իտալիայում: Համարժեք էր 256 դրամի կամ մոտ 800 գրամի:

սադայ, պրսկ. sāda – հասարակ, հարթ, մաքուր, առանց գրվածքի:

սաղ, թուրք. sāgh – ամբողջ, լրիվ:

սաղատ, արաբ. sakat – պակասավոր, թերի: «Աշխարհժողովում» կիրառվում է ոչ մեծ քաշով վաճառվող ապրանքների վերաբերյալ:

սաղըզ, թուրք. sakız – ծամոն, մաստակ: Կոստանդ Ջուղայեցու գործածած «Սաղըզ ադուսին» բառերը վերաբերում են Քիոս կղզուն, քանի որ այն հռչակված էր հերձի կամ պիստակենի կոչվող ծառից ստացվող խեժով, որն օգտագործվում էր մաստակի արտադրության մեջ: Համապատասխանաբար՝ «Սաղզի ծով» արտահայտությունն էլ վերաբերում է Էգեյան ծովին, որտեղ գտնվում էր Քիոս կղզին:

սամուր, պրսկ. samur – սամույր, կզաքիսների ցեղին պատկանող կենդանի, որի մորթուց պատրաստում են թանկարժեք մուշտակներ:

սամթ, պրսկ. samt – կողմ, ուղղություն:

սամղ, պրսկ. samuq – աղտոր, աղտորազգիների ընտանիքին պատկանող բույս (լատ.՝ rhus coriaria), որի տերևներն ու արմատներն օգտագործվում են ներկերի արտադրության մեջ, իսկ կարմրավուն պտուղները չորացնելուց ու փոշիացնելուց հետո դառնում են արևելյան խոհանոցներում տարածված համեմունք:

սայեայ – գործվածքի տեսակ:

սանդալ, լատ. santalum – ճանդան, սանդալազգիների ընտանիքին պատկանող մշտադալար, արևադարձային ծառ: Միջին դարերում ու վաղ արդի շրջանում հռչակված էր սպիտակ սանդալը, որը տարածված էր հատկապես Հնդկաստանում: Սանդալի պահանջարկը պայմանավորված էր փայտանյութով և նրա խեժով՝ սանդալուղով: Սանդալի փայտը սրբագնացված էր հին հնդկական բժշկության մեջ՝ այուրվեդայում: Հին Հնդկաստանում այս փայտանյութից էին պատրաստվում ծիսական պարագաները, ընդ որում՝ այդ իրավունքը վերապահված էր բացառապես կրոնավորներին: Ծառատեսակի անխնա օգտագործման ու ոչնչացման հետևանքով այս պոպուլյացիան ներկայումս գտնվում է վերականգնման փուլում:

սանդալուզ, պրսկ. sandalus – սանդալ ծառից ստացվող խեժ, որն օգտագործվում էր տարբեր բնագավառներում: Հին հնդկական բժշկության մեջ գործածվում էր բորբոքումների, բարձր ջերմության և անգամ մտավոր խնդիրների դեպքում: Իր անուշահոտության շնորհիվ օգտագործվել է նաև կոսմետիկայում ու օծանների արտադրության մեջ և դուրս մղվել անհամեմատ բարձր գնի պատճառով: Սանդալուզից պատրաստվել են նաև լաքեր՝ հատկապես կավե իրերը փայլեցնելու ու ծակոտիները փակելու նպատակով:

սանդուղ, արաբ. sunduq – արկղ, սնդուկ: Որոշ ապրանքների համար հանդիսացել է կշռի միավոր:

սավդայգար, պրսկ. soudāgar – վաճառական:

Սարդին – Սարդինիա, Միջերկրական ծովի երկրորդ ամենամեծ կղզին:

սարֆ, արաբ. sarf – դրամի փոխանակման կամ դրամահատության համար արվող գումար:

սգոնդ, իտալ. secondo – երկրորդ:

սեր – կշռի միավոր: 1 սերը կազմում էր ղիտրի 1/40 մասը, հետևաբար՝ սերի քաշը պայմանավորված էր տվյալ վայրի ղիտրի քաշով: Թավրիզի ղիտրի դեպքում սերը կշռում էր 75 գրամ, «Աջամստանայ» ղիտրի դեպքում՝ 141,7 գրամ, իսկ Աքբարի ղիտրի դեպքում՝ 850 գրամ:

Սելան – Ցեյլոն կամ Շրի Լանկա:

սելան, արաբ., պրսկ. sailān – թանկարժեք քար, ցիրկոնի տեսակ՝ հատուկ Շրի Լանկային:

սեֆի դիտ – *կշռի միավոր Բասրայում: Համարժեք էր 12000 դրամի կամ մոտ 40 կիլոգրամի:*

սիայ, *պրսկ.* siāh – *սև:*

սլեմանի, *պրսկ.* soleimani – *եղեգնաքար, որից պատրաստում էին համրիչ:*

Սլնօռ – *Սոլոր, կղզի Հնդկական ու Խաղաղ օվկիանոսների միջև, մաս է կազմում Փոքր Զոնդյան կղզիխմբի:*

սխտեան, *պրսկ.* sakhtiān – *կաշվի տեսակ, որ հայտնի է մարոկկո կամ սաֆյան անուններով՝ խորհրդանշելով դրա առևտրի կենտրոնը՝ Մարոկկոն ու նրա քաղաքներից մեկը՝ Սաֆին: Արևելյան լեզուներում հիշատակվում է* sakhtiān *տարբերակով, որն առաջ է եկել* sakht *բառի «ամուր, կոշտ» իմաստից: Ավանդաբար օգտագործվել է կոշիկների, դրամապանակների արտադրության մեջ, ինչպես և՝ գրքերի կազմարարական աշխատանքներում: «Աշխարհաժողովում» հիշատակվում է այդ կաշվից պատրաստված փոքր պարկի իմաստով, որում վաճառականը կարող էր պահել իր առօրյա գործունեությանն առնչվող իրերը, ինչպես օրինակ՝ կշեռքը:*

սմբուլ – *փետրախոտ (լատ.՝* stipa*): Օգտագործվում է որպես անասնակեր, իսկ որոշ տեսակներ գործածվում են նաև թղթի արտադրության մեջ:*

սնեմաքի, *արաբ.* snemāki – *խոտաբույս, որից պատրաստվող թեյը օգտակար է ինչպես փորկապության, այնպես էլ ավելորդ քաշից ազատվելու համար: Հնագույն ժամանակներից հայտնի է եղել Հնդկաստանում և հատկապես Եգիպտոսում աճող սնեմաքին, իսկ Ալեքսանդրիայի՝ որպես այս խոտաբույսի առևտրի կենտրոն լինելու հանգամանքն իր ազդեցությունն է թողել լատիներեն անվանման վրա՝* senna alexandrina:

սնջեֆ, *պրսկ.* sanjāb – *սկյուռ:*

սուֆի, *արաբ.* sūfi – *բրդե:*

սվիլէ – *տե՛ս մուշկիլ:*

Սրհընդ – *Սիրհինդ, քաղաք Հնդկաստանի հյուսիսում: Տեղանունը թարգմանաբար նշանակում է «Հինդուստանի դարպաս»:*

Սրննջ – *Սիրոնջ, Հնդկաստանի հնագույն քաղաքներից, որն առևտրական ուղիներով կապված էր Գուջարաթ նահանգապետային քաղաքի հետ:*

սքէ, *պրսկ.* sekke – *կտրված, դրոշմված դրամ:*

սօլդի, *իտալ.* soldo – *դրամական միավոր Իտալիայում: Ի սկզբանե արծաթե դրամ էր, սակայն ժամանակի ընթացքում սկսեցին հատվել պղնձե սոլդիներ: 1 սոլդին հավասար էր 12 դինարի կամ 18 կատարինայի: 20 սոլդին կազմում էր 1 լիրա:*

սօմ – *արծաթե դրամ Ռուսական կայսրությունում: 14-րդ դարում Ոսկե Հորդայում սոմ էին կոչվում մոտ 205 գրամ կշռով արծաթե ձուլակտորները:*

սօպրայ սօպրաֆին – *մարջանի տեսակ:*

սօպրաֆին – *մարջանի տեսակ:*

Վալանդ, Holland – *Հոլանդիա, այստեղից էլ՝ վալադուց կամ վալանդից նշանակում է հոլանդական, հոլանդացի:*

վալիաթ, *պրսկ.* valiyāt – *նահանգ, շրջան:*

վաղիայ – *կշռի միավոր Օսմանյան կայսրությունում: Բաղդադում համարժեք էր 50 մսխալի, այն է՝ մոտ 240 գրամի: Բասրայում կշռում էր ավելի քան 6,5 անգամ ավելի:*

վեսայ – *կշռի միավոր Փեգուում (Մյանմար), որը համարժեք էր 1,57 կիլոգրամի:*

վիսայ - *ադամանդի կշռի մանր միավոր Հարավային Հնդկաստանում, որը համարժեք էր մանջանու 1/8 մասին, այն է՝ մոտ 0,04 գրամի:*

վուշ – *կտավատազգիների ընտանիքի խոտաբույսերի ցեղ, կտավատ: Մանրաթելն օգտագործվում է գործվածքների արտադրության մեջ, իսկ սերմերն ու յուղը՝ սննդի մեջ, ինչպես և՝ բժշկական նպատակներով (լատ.՝* linum usitatissimum):

Տանձկայ – *Գդանսկ (Դանցիգ), քաղաք Բալթիկ ծովի ափին:*

տառչին – *դարչին, համեմունք, որ ստացվում է դարչնածառի չորացրած կեղևից: Համաշխարհային պահանջարկի մեծ մասն ապահովում է Շրի Լանկան:*

Տարապանայ – *Տրապանի, քաղաք-նավահանգիստ Սիցիլիա կղզու արևմտյան ափին: Անունն առաջացել է* drepanon *հունարեն բառից, որը նշանակում է մանգաղ՝ խորհրդանշելով նավահանգստի կոր ափերը:*

տմբլպազ, *պրսկ.* tabl-bāz – *թմբուկահար:*

